



ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АРМЯНСКИЕ ПИСАТЕЛИ О ХУДОЖЕСТВЕННОМ ПЕРЕВОДЕ

Составление,
введение и комментарии
М. В. МАКСАПЕТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

ԴՄՅՅԵՏ ✓

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹՄՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեխար կազմեց, ներածությունը
և ծանոթագրությունները գրեց
Մ. Վ. ՄԱՔՍԱՊԵՏՅԱՆԸ

A II
72809



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Կ. Հ. Ճինգոզյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական
գիտությունների դոկտոր Ե. Ա. Ալեքսանյանը և բանասիրական գիտու-
թյունների թեկնածու Վ. Հ. Փարբամյանը

Մաքսապետյան, Մ. Վ.

Մ 413 Հայ գրողները զեղարվեստական թարգմանություն մա-
սին / Պատ. խմբ. Կ. Հ. Ճինգոզյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ
հրատ., 1985. 212 էջ:

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ.

Ժողովածուն առաջին փորձն է ի մի բերելու նոր շրջանի ակա-
նավոր գրողների (Խ. Աբովյանից մինչև Ա. Բակունց)՝ տարբեր
առիթուներով արտահայտած տեսական-քննադատական հայացքները
թարգմանության արվեստի վերաբերյալ, նրանց գրախոսականներն
առավել ուշագրավ թարգմանական աշխատանքների, դրանց հասա-
րակական հնչեղության մասին:

Հասցեագրվում է թարգմանական գրականության մասնագետներին
և ընթերցող լայն շրջաններին:

ԴԱՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ

«Ի՛նչ էլ որ սսեւն թարգմանության ոչ լիարժեքության մասին, այնուամենայնիվ, այն եղել և մնում է մարդկանց հաղորդակցման ամենակարևոր և նշանակալից միջոցներից մեկը»:

ԳՅՈԹԵ

Հայտնի է, որ շփումների, գրական առնչությունների շնորհիվ տարբեր ժողովուրդների գրականությունները փոխադարձաբար ներազդում են միմյանց վրա, նոր լիցքեր ստանում: Որքան ավելի լայն է տվյալ ազգային մշակույթի շփման ոլորտն այլ ժողովուրդների մշակույթների հետ, այնքան ավելի բազմազան են նրան սնող աղբյուրները: Իսկ շփումների, փոխազդեցությունների հիմքերի հիմքը գեղարվեստական թարգմանությունն է:

Վերջին տասնամյակներում, ըստ ամենայնի, ընդլայնվել է գեղարվեստական թարգմանության պրոբլեմների գիտական հետազոտությունների շրջանակը, թարգմանության տեսությունը դարձել է գրականագիտության և լեզվաբանության լիիրավ բնագավառ, որն իր ճանաչված ներկայացուցիչներն ունի մեզ մոտ և արտասահմանում: Տեսաբանների աշխատություններն ղգալիորեն առաջ են մղում մեր պատկերացումներն այդ, համեմատաբար երիտասարդ, գիտության հնարավորությունների մասին:

Այս ասպարեզում ուսումնասիրության առատ նյութ է պարունակում նաև հայ գրականությունը՝ հանձին դասական գրողների թարգմանական ժառանգության, որն ընդգրկում է թե՛ թարգմանական ստեղծագործություններ, և՛ թե՛ այդ արվեստի

պրորելմաներին, սկզբունքներին նվիրված տեսական ուսումնասիրություններ, քննական ակնարկներ, գրախոսականներ:

Հայ գրականությունն սկսվել է թարգմանություններով, երբ V դարում, գրերի դյուտից անմիջապես հետո, Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, իրենց հետևորդների հետ, ձեռնարկեցին և իրականացրին Աստվածաշնչի թարգմանությունը, որը հետագայում եվրոպացի հայագետների կողմից (Լակրոզ, Բուկանան և ուրիշներ) գնահատվեց որպես «թարգմանությանց թագուհի», և որը, նրանց կարծիքով, գերազանցում է Սուրբ Գրքի գոյություն ունեցող բոլոր փոխադրությունները, հիացնելով թե՛ ճշգրտությամբ, թե՛ լեզվի ճկունությամբ և ուժով:

Հիրավի, դա աներևակայելի դժվարին մի աշխատանք էր, եթե նկատի առնենք թարգմանիչների դեմ հառնած լեզվաշինարարական ակնհայտ բարդությունները, ավանդների իսպառ բացակայությունը: Թերևս միակ հենարանը Մաշտոցի՝ ասորերենից և հունարենից կատարած բանավոր թարգմանությունների փորձն էր, որի մասին հավաստում է Մովսես Խորենացին. «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր,— գրում է պատմահայրը,— ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը, և թե՛ թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում... ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել Հայոց լեզվի համար տառեր ստեղծել և աշխատանքի անձնատուր լինելով, զանազան փորձերով շարչարվում էր...»¹:

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» նշանաբանով V դարի «սուրբ թարգմանիչքը» հայ հոգևոր գրականությունը հարստացրին թարգմանական նաև այլ գործերով (Աթանաս Ալեքսանդրացու, Եպիփանոսի, Եփրեմ Ասորու, Եփեսեիոս Կեսարացու և ուրիշների գործերից, որոնց մի մասն այժմ սկզբնաղբյուրի արժեք ունի բնագրերի կորստյան պատճառով): Նրանք էին, որ հիմք դրեցին նաև հայ ինքնուրույն գրականությանը, գրելով շարականներ, ճառեր, հոգևոր բովանդակության բանաստեղծություններ:

¹ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 218:

V դարի երկրորդ կեսին հայերեն թարգմանվեցին նաև Արիստոտելի, Պլատոնի, Դիոնիսիոս Թրակացու և անտիկ աշխարհի այլ փիլիսոփաների երկերը:

Արժանին հատուցելով Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի և նրանց աշակերտների ստեղծագործական սխրանքին, հայ նոր գրականության հիմնադիր խաչատուր Աբովյանը դեռևս մեկուկես դար սրանից առաջ հանդես գալով նաև իբրև գրական քննադատ (թեև գրականագիտության այդպիսի բնագավառ մեկանում դեռևս գոյություն չունեի), նշում էր թարգմանությունների հասարակական դերն ու նշանակությունը ժողովրդի գոյատևման պայքարում: V—VI դարերում կատարված թարգմանությունների շնորհիվ է, որ հայերն արժանացել են համաշխարհային հասարակայնության ուշադրությանը, այդ գործերն են, որ հետաքրքրություն են առաջացրել մեր ժողովրդի մինչ այդ անժանոթ պատմության, գրականության, լեզվի նկատմամբ, քանի որ՝ «կարող էր արդյոք մի վայրենի, անկիրթ բնության վավակ այնքան պարզ, այնքան սուր, բազմակողմանիորեն մտածել ու պատկերացումներ ունենալ...», — գրում է Աբովյանը²: Թարգմանություններն են ժողովուրդների մերձեցման, նրանց մշակութիւնների փոխհարստացման ակունքը, այս տեսանկյունից էր մեծ լուսավորիչը գնահատում V դարի գործիչների կատարած աշխատանքը, այս մտահոգությամբ էր գրիչ վերցնում թարգմանելու Հոմերոսի, Գյոթեի, Շիլլերի, Ռուսսոյի, Կոլիովի և ուրիշների ստեղծագործություններից, խոստովանելով, որ եվրոպական գրականությանն ու արվեստին ծանոթանալուց հետո իր առաջին մղումն է եղել «լուսավորության իտկական լույսը» փոխադրել իր երկիրը, դրան հաղորդակից դարձնել հայրենակիցներին. «Ո՞վ չի ճանաչում այն երկնային, սիրտ ազնվացնող, հմայիչ ուժը, որ գտնվում է արվեստների մեջ, և ո՞ր հոգին կարող է ավելի զգայուն լինել նրանց հանդեպ, եթե ոչ արևելցու կրակոտ, երևակայությամբ հարուստ հոգին...»³:

² «Համառոտ ակնարկ հայերի մասին» ուսումնասիրությունից, 1834 (բնագիրը գոթատառ գերմաներեն է), (Ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 38):

³ Վ. Ա. Ժուկովսկուն գրած նամակից, 1835, հունվար (Ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1961, էջ 166—167):

Թարգմանվող գործերի արդեն ընտրությունն իսկ արտացոլում էր ոչ միայն գրող-թարգմանչի նախասիրությունները, այլև ժամանակի քաղաքական, հասարակական միջոցառումները, հասարակության գեղագիտական պահանջները: Այդ պահանջները, սակայն, միանշանակ չէին և տարերային բնույթ ունեին: Գրող-թարգմանչի պարտքն էր՝ ուղղություն տալ, ձևավորել մարդկանց բնական ընթացասիրությունը, խիստ ընտրություն վատարել նրանց՝ օտարալեզու գրողների ստեղծագործություններին ծանոթացնելիս: Սա՛ էր հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի թարգմանական գործունեության հիմնական ազդակը, այս միտքն է անցնում նրա հրապարակագրության միջով: «Մեր սիրտը և հոգին բաց է ամենայն ուշադրությամբ ընդունելու մի բանականության վաստակ այնպիսի վզեստով, որ հարմար է մեր ժամանակի և մեր կյանքի սլայմաններին», — գրում է նա⁴: Նալբանդյանն ուներ հայ դեմոկրատական-ոևալիստական գրականության դարգացման մի ամբողջ ծրագիր: Հայ իրականության սոցիալ-քաղաքական պրոբլեմներին էր նա նվիրում, հրապարակախոսությունից բացի, նաև թարգմանական մի շարք գործեր: Այս տեսակետից հատկանշական են Բերանժեից («Աղքատ կին»), «Վայր ընկնող աստղեր») և Հայնեից («Երազ») կատարված ազատ փոխադրությունները, որոնց նա ավելացրել է տասնյակ տողեր, սրելով նրանց սոցիալական բովանդակությունը: «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» քաղաքական պամֆլետը, որը ռուս լրագրող Օ. Սենկովսկին իր հերթին փոխադրել էր Բալզակի «Սատանայի կոմեդիան» պամֆլետից, Նալբանդյանը փոխադրել էր ազատ և ուղղել իր ժամանակի հայ ոևակցիոն ուժերի դեմ⁵:

Թարգմանվող ստեղծագործության ընտրության հարցում Նալբանդյանն անշափ սկզբունքային էր ու անզիջում: Նա հա-

⁴ «Կրիտիկա. ժողովրդական լեզվով թարգմանված և տպված Ռոբինզոնի պատմությունը» Գամառ Քաթիպայի աշխատութենով, ՄՊԲ, 1858, (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 284):

⁵ ՏԾ ս է. Զրբաշյան, Մ. Նալբանդյանը և արևմտ-ևկրոպական գրականությունը (ՊԲՀ, 1958, № 2, էջ 86—87):

մամիտ չէր նույնիսկ Ստ. Նազարյանի վարած թարգմանական քաղաքականությանը, երբ վերջինս 1862-ի առաջին կեսին թարգմանեց և իրար ետևից «Հյուսիսամիսյուն» տպագրեց ռեակցիոն ռոմանտիզմի ներկայացուցիչ և կամարթինի գրական նախորդ Շատոբրիանի «Աթալա», «Ռենե», «Անկարծելի պատահմունք» վիպակները: Նալբանդյանը զայրույթով ու կծու հեզնանքով էր գրում կամարթինի «Դաշնակներ» ժողովածուի գրաբար թարգմանության մասին (թարգմանիչ՝ Խորեն վ. Գալֆայան): Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով կամարթին-բանաստեղծին, Նալբանդյանն, այնուհանդերձ, գրտնում էր, որ նրա պոեզիայից բուրոդ միստիկականությունը ներկա փուլում հայ ընթերցողին մղում է հուսահատության գիրկը: «Մինչդեռ մեզ հարկավոր է կյանք և շարժողություն,— գրում է նա,— հարկավոր է հույս ունենալ մեր անձին և մեր ընկերին վերա, և առանց լքանելու ու վերացական բաների թողնելու մեր մասին հոգաբարձությունը, մեր ձեռքով վարել մեր հողը»⁶:

Գրականությունը համարելով մարդկային բանականության արգասիք, Նալբանդյանը գտնում էր, որ մի ազգի գրականության մեջ արտացոլվում են նրա հոգին, հայացքները, հասարակական կյանքը: Գրականություն շունեցող ազգը չի կարող քաղաքակիրթ համարվել: Այս տեսանկյունից նա բարձր էր գնահատում Մխիթարյան հայրերի գործունեությունը, որոնք մոռացությունից փրկեցին հայ հին գրականությունը և «կամենալով պահպանել կորստից հնախոս լեզվի հիշատակարանքը, ուրեմն և հին գրոց լեզուն, սկսեցին տպագրել, այո՛, և տպագրեցին ըստ մեծի մասին հինգերորդ դարու հեղինակների գործերը, որքան կարողացան ժողովել և ձեռք բերել... Բացի բուն հայ հեղինակներից, այո՛, թարգմանեցին ու տպեցին նոքա զանազան գործեր հին և նոր եվրոպական լեզուներից և այսպիսի թարգմանություններով մեծապես մշակագործեցին և ճոխացուցին հին հայկական դպրութունը...»⁷:

⁶ «Հիշատակարան», 1858—1860 (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1982, էջ 153—154):

⁷ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոգվածից, 1858 (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 271):

Այս ամենով հանդերձ, հեղափոխական-դեմոկրատ գրողը չէր կարող շեկատել Մխիթարյան հայրերի գործունեության կրթնական ուղղվածությունը, որոնց «պապական լինելը դրրկում էր նորանց ամենայն ստույգ լուսավորությունից»։ Անդրադառնալով, մասնավորաբար, էժեն Սյուրի «Թափառական Գրեա» վեպին, Նալբանդյանն ընդգծում է, որ Մխիթարյանները գիտակցաբար չէին թարգմանում և հրատարակում նման գործեր, որտեղ մերկացվում էր Հիսուսյան արեղանների «անբիւտոնյա և բարբարոս վարք ու բարքը», քանի որ իրենք կրթնակից և ջատագով լինելով հիսուսյաններին, բնականաբար, չէին կամենում իրենց հայրենակիցների աչքում մերկացնել նրանց։ Այսպիսով, Սյուրի վեպը Նալբանդյանին հետաքրքրում էր նախ և առաջ կաթոլիկ եկեղեցու, ճիզվիտների դեմ իր ուղղվածությամբ, և պատահական չէր, որ 1857-ին, իր իսկ թարգմանությամբ, նա այն ներկայացրեց (I հատոր) հայ ընթերցողի ուշադրությանը։ Թե՛ թարգմանությունը, թե՛ Առաջաբանը, և թե գրքին կցված Հիսուսյանը հրապարակախոսական շնչով դրված ուսումնասիրությունն արժանացան հայ առաջադեմ հասարակայնության ջերմ ընդունելությունը։

Հանրահայտ է գրական աշխարհաբարի համար մղված պայքարում և «Հյուսիսափայլ» ամսագրի հիմնադրման գործում Ստեփանոս Նաղարյանի երախտիքը։ Նաղարյանի համոզմամբ, «ժողովրդի ինքնաճանաչման նախապայմաններից մեկն այն է, որ նրա գրականությունը մշակվի աշխարհաբար լեզվով, այդպիսով միայն այն կարող է ցանկալի լինել ընթերցողի համար, ժանոթացնելով նրան այն ժողովրդի հետ, որին նա պատկանում է...»⁸։

Նաղարյանը մեղանում լայն ընթերցողներին ավելի պակաս հայտնի է որպես ուս իրականության մեջ իր ժամանակի խոշորագույն արևելագետներից մեկը, որպես ֆիրդուսի ագիտության հիմնադիրը Ռուսաստանում։ Նաղարյանի գրչին և պատկանում նաև Սաադիի «Գոլեսթանի» ուսերեն տառչին ամբողջական թարգմանությունը՝ «Розовый кус-гарник шейха Мусলেখеддин Саади Ширакского, слав-

⁸ Նամակ Խ. Լաղարյանին, 1858, ինքնագիրը ուսերեն է (Սա. Նաղարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 201)։

ный под названием «Гулистана», որը շուրջ քառորդ դար մնաց միակն ընդհանրապես և ավելի քան հարյուր տարի՝ միակ ամբողջականը: Ընդարձակ առաջաբանից բացի, որտեղ թարգմանիչը գնահատում է Սաադիի տեղն ու դերը պարսկական գրականության մեջ, ինչպես նաև «Գուլեսթանի» գեղարվեստական, ժանրային առանձնահատկությունները, Նազարյանը տվել է նաև դիցաբանական, պատմական բազմաթիվ անունների, հերոսների ծանոթագրություններ: Նրա աշխատանքը նշանակալի դեր է կատարել հետագա ավելի կատարյալ թարգմանությունների համար⁹:

Նազարյանի գրական ժառանգության մեջ V դարի թարգմանիչների գործունեությանը նվիրված ուսումնասիրությունից բացի, կան թարգմանական արվեստին, լեզվի կուլտուրային նվիրված աշխատություններ, որոնցում շոշափվող շատ հարցեր այսօր էլ գտնվում են թարգմանության տեսաբանների ուշադրության ոլորտում: Հայտնի է, օրինակ, որ մեր օրերում էլ քիչ չեն պատահում բառացի, «անշունչ» թարգմանություններ, երբ այլ լեզվի շարահյուսությունն իր կանոններն է պարտադրում անտեղյակ թարգմանչին, և նա հնազանդ ենթարկվում է դրանց, մոռանալով մայրենի լեզվի տրամաբանությունը, օգտագործելով հայերենի ոգուն օտար շարահյուսումներ: Այս իմաստով միանգամայն այժմեական են հնչում Նազարյանի՝ ավելի քան մեկ դար առաջ գրած հետևյալ տողերը. «Ես ցավելով զարմանում եմ կամ դարմանալով ցավում, որ Դուք մտածում եք ուսերեն և թարգմանում եք ուսերենից ամենեկին բառացի, առանց միտ դնելու ուս և հայ լեզվախոսության մեջ եղած մեծ տարբերությունը: ...Դուք անհավան եք տաճկահայերի սինտաքսիսին, բայց մոռանում եք ձեր ուսահայ սինտաքսիսը, մինը շար, քան զմյուսը... Եվ անբախտության աղբյուրն այն է, որ հայերը Տաճկաստանի մեջ մտածում են բուն տաճկերեն, իսկ հայերը Ռուսաստանում՝ բուն ուսերեն. լեզուն դարձել է այդպես մի լոկ

⁹ Տե՛ս Վ. Ներսիսյան, «Գուլեսթանի» ուսերեն տառչին թարգմանության հարցի շուրջ (ՊԲՀ, 1965, №1, էջ 236):

ժողովածու հայկական բառերի... առանց հայախոսության հոգու և ոճի...»¹⁰:

Հիրավի գեղարվեստական թարգմանություն ստեղծելու համար, որպես պարտադիր պայման, թարգմանիչը պետք է լինի նախ՝ գրական ձիրք ունեցող, բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն, նա պետք է նաև ոգեշնչվի տվյալ ստեղծագործության գաղափարով, մտքով գնա հեղինակի հայրենիքը, մոտենա այն աղբյուրին, որից նա խմել է: Այս համոզմունքին էր XIX դարի մեկ այլ ականավոր հայ բանաստեղծ և արձակագիր Ռափայել Պատկանյանը: «Թե ուզում ես, որ թարգմանությունդ ունենա նու՛յն իսկ զորությունը, որն ունի հեղինակը, — գրում է նա, — խորը քննե քու թարգմանելու առարկան, դորա համար պետք է՝ գիտություն...»¹¹:

Թարգմանական գործունեությունը Պատկանյանը զուգակցում էր թարգմանական արվեստի հարցերին նվիրված հոդվածներով, գրախոսականներով, շոշափելով նաև թարգմանական ստեղծագործության ընտրության և լեզվական փոխառությունների հարցեր: Իր մանկավարժական գործունեության մտահոգություններից դրդված, նա թարգմանել է Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն», որպեսզի այդ վեպը կարդալով, հայ մանուկները Ռոբինզոնի հետ կտրեն լայնածավալ ծովեր ու օտար երկրներ, ծանոթանան այլ ժողովուրդների կյանքին ու կենցաղին, առանց ճգնելու սովորեն աշխարհագրական, բնագիտական անուններ, «որ մի օր շատ կլեթեացնե նոցա դպրոցական ուսումը»¹²: Թարգմանչին ներկայացվող նրա պահանջներից էր՝ շարադրանքի պարզությունը՝ առանց ավելորդ մանրախնդրության, ինչպես ինքն է ասում՝ «քաղցր-մեղցր մերկության»:

¹⁰ Նամակ Փ. Վարդանյանին, 1876 (Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 450):

¹¹ «Լեզվի համար ի՞նչ օգուտ ունի թարգմանությունը» հոդվածից, 1857, (Ռ. Պատկանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 186):

¹² Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն» վեպի հայերեն թարգմանության Առաջաբանից, 1857 (Ռ. Պատկանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 184):

Պատկանյանը պայքարում էր նաև բառացի թարգմանությունների և դրանց մյուս ծայրահեղության՝ օտար բառերը բանավոր ու գրավոր խոսքում նույնությամբ օգտագործելու դեմ: Երախտագիտությամբ հիշատակելով Լազարյան ճեմարանի իր ուսուցչին, մշակութային ականավոր գործիչ, հայ իրականության մեջ Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների առաջին թարգմանիչ Մկրտիչ Էմինին, Պատկանյանը գրում է, որ իրենք, էմինի աշակերտները, առաջինն են եղել, որ հայ կենդանի լեզվի մեջ սկսել են «ամաչելով» ներմուծել դասատու, դասաբան, քեյ, սուրն, համալսարան, դասախոսություն և այլ բառեր, որոնք հետո միայն դարձան սովորական, իսկ մինչ այդ, հատկապես բանավոր խոսքը խճողված էր այսպիսի «խժղժաբանություններով». класс մտնել, пароход-ով ճանապարհորդել, протестовать անել, чай կամ кофе խրմել, бутылка-ն раскупоривать անել և այլն:

Հիրավի, ցավալի ու զարմանալի է, թե որքան երկարակյաց կարող են լինել ամեն տեսակի խառնախոսությունները, կամ, ինչպես Գամառ-Փաթիսյան է ասում՝ «խժղժաբանությունները», որոնք դեռևս գոյություն ունեն մեր՝ XX դարավերջին ապրողներիս բանավոր խոսքում:

Հայտնի է, որ ընթերցողը, ինչպես արվեստի ամեն մի գործ, գրական ստեղծագործությունը ևս ընկալում է սուբյեկտիվորեն. այստեղ իրենց դերն ունեն և՛ տվյալ անհատի հոգևոր փորձն ու ճաշակը, տարիքն ու անձնական ճակատագիրը, և՛ նրա ապրած ժամանակահատվածի հասարակական-քաղաքական մթնոլորտը ու այլ գործոններ: Իսկ քանի որ թարգմանիչը նույնպես ընթերցող է, նրա սուբյեկտիվ ընկալումներն արտացոլվում են նրա կատարած վերարտադրություններում: Այստեղից էլ՝ թարգմանչի ստեղծագործական անհատականության կնիքը թարգմանված գործի վրա:

Այս տեսանկյունից հետաքրքիր է զննել Պերճ Պոռչյանի՝ Լև Տոլստոյի ստեղծագործություններից կատարած թարգմանություններից մեկը, թեև հայ գրող-թարգմանիչը մեզ չի թողել տեսական-քննադատական հոդվածներ, որոնք օգնեին լույս սփռելու նրա թարգմանական գործունեության ազդակների,

այդ արվեստի վերաբերյալ նրա սկզբունքների վրա: Նման դեպքերում ուսումնասիրողին մնում է փորձել վերծանել այդ ամենը, ելնելով նրա կոնկրետ աշխատանքներից:

Պոռշյանի ստեղծագործական կողմնորոշումը դեպի ուսական հումանիստական մշակույթը աշխարհայացքային բընույթ ուներ: Դեռ 1891-ին նա թարգմանել էր Տոլստոյի «Մանկությունը», 1894-ին՝ «Կովկասի գերին», ինչպես նաև Գոգոլի «Ամուսնությունը», Օստրովսկու պիեսներից և այլ գործեր: 1899-ին նրա թարգմանութեամբ հրատարակվեց Տոլստոյի ինքնակենսագրական եռերգութեան առաջին և երկրորդ մասերը պարունակող «Մանկությունն ու պատանեկությունը», որտեղ հայ գրողը միանգամայն ստույգ էր մեկնաբանում բնագրի ինքնատիպ ինտոնացիան՝ դրամատիղմի և հումորի նրբերանգներով, ինքն իրեն ու շրջապատող աշխարհը ճանաչել ձգտող պատանու բանաստեղծական ընկալումներով: Հայերեն տեքստի «ներքին կյանքն» իր հիմնորոշ գծերով համապատասխանում էր բնագրի «ներքին կյանքին»: Թարգմանիչը ստույգ ու ներդաշնակ բառեր էր գտնում Տոլստոյի ոճը վերարտադրելու համար և հատկանշական այն է, որ դրանք չէին հիշեցնում նրա սեփական երկերի բառային «հանդերձանքը», որն, անտարակույս, այստեղ անպատեհ կլիներ:

Այս ամենը դրականով է բացատրվում «Մանկությունն ու պատանեկությունն»՝ թարգմանական գործի արտակարգ «երկարակեցությունը», որը մոտ մեկ դար է, ինչ հայ պատանիների մի քանի սերունդների շարունակում է հաղորդակից դարձնել ուս հանձարի ստեղծագործութեանը:

Պոռշյանն իր աշխատանքն անվանել է «ազատ» թարգմանություն: Այդ ազատությունը սակայն արտահայտվել է իր ժամանակի համար բավական զուսպ գծերով: Հայտնի է, որ այն տարիներին մեծ տարածում ունեին միանգամայն ազատ թարգմանությունները: Եվրոպայում և Ամերիկայում վերածնվում, վերապատմվում էին նույնիսկ Հոմերոսն ու Շեքսպիլը: Տոլստոյը ևս ենթարկվում էր ամենաաներևակայելի փոխակերպումների: Ցանկացած գրողի ստեղծագործութեանը դիմելիս թարգմանիչը, սեփական նկատառումներով, կարող էր կրճատումներ կատարել, հաշվի առնելով իր ընթերցողների գեղարվեստական գիտակցութեան մակարդակը, ազգային

կերտվածքի ինչ-ինչ հատկանիշներ, կրոնական դավանանքի հարցեր (որոնց նկատմամբ, ինչպես ասացինք, մեզանում հատկապես զգայուն էին Մխիթարյան թարգմանիչները), տարիքային առանձնահատկություններ և այլն¹³: Պոռշյանն իր թարգմանությունից բաց է թողել մի քանի գլուխ¹⁴ (ընդհանուր առմամբ՝ երեսուն էջ), որոնց իրար կապող լեյտամոտիվը դրժվար չէ բացահայտել. դա զգայական թեման է:

Այսօրվա դիտակետից միամիտ կտրականություն թվացող այդ կրճատումները կարելի է բացատրել միայն զննելով դրանք ժամանակի կոնտեքստում: Մեզ հավանական են թվում գրող-թարգմանչի հետևյալ նկատառումները. դեռահասի սիրելիին տվյալանքների ռեալիստական նկարագրությունը՝ պատանիներին հասցեագրված երկում, որպես գեղարվեստական սկզբունք ժամանակի համար նորություն էր ոչ միայն մեզանում, այլև համաշխարհային գրականության մեջ, և ռուս գրողի համարձակ, բայց և մտերմիկ անմիջականությունը, մեր կարծիքով, նրկմտանքի մեջ է գցել «Սոս և Վարդիթերի» հեղինակին: Նա նրբանկատորեն չի թարգմանել այդ մասերը, կամենալով, ըստ հնարավորին, ընդլայնել Տոլստոյի՝ հայ ընթերցողների տարիքային սահմանները, նկատի առնելով, որ շրփումը հանձարեղ գրողի ստեղծագործության հետ կաբող էր իրադարձություն լինել բոլոր տարիքների համար: Բացի այդ, Պոռշյանը դժանով հարստացնում էր մայրենի մանկապատանեկան դրականությունը, որը դրա կարիքն անպայման ուներ և որի շրջագիծը սահմանափակվում էր Աբովյանի, Պատկան-

¹³ Աբրող շխարհում լայնորեն հայտնի էին անգլիացի բանաստեղծ և քննադատ Չարլզ Լեմի (1775—1834) «Պատմվածքներ Շեքսպիրից» շարքը («Tales from Shakespeare»), որոնք Շեքսպիրի պիեսների վերապատումներն էին: Ի դեպ, արևելահայ մամուլում շեքսպիրյան առաջին հրապարակումը հենց այդ ժողովածուից էր՝ «Վենետիկի վաճառականը» պատմվածքը («Հյուսիսափայլ», 1861, №11):

¹⁴ 1947-ին Պոռշյանի այդ թարգմանությունը վերահրատարակվեց Ստ. Զորյանի լրացումներով ու խմբագրությամբ (3-րդ՝ «Երիտասարդություն» մասը Լ. Մուղմանյանի թարգմանությամբ): 1911-ին «Ուտանում»՝ (Կ. Պոլիս) Տոլստոյի եռերգությունից հատվածներ են տպագրվել Զարուհի Տեմիրճիպաշյանի արևմտահայ թարգմանությամբ:

յանի, Աղայանի անուններով: Այդ մտահոգությունն են վկայում նաև նրա մյուս թարգմանությունները՝ Չ. Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդը» (1897), Էլիզա Օժեշկոյի «Յասի արկածները» (1900) և այլ գործեր:

Լև Տոլստոյի ստեղծագործություններից կատարած Պոռոյանի լավագույն թարգմանությունները, գեղարվեստական արժեք ներկայացնելուց բացի, արտացոլում են հայ իրականության մեջ ուսումնական գրողի ստեղծագործության ընկալման ամենանախնական շրջանը:



Պատմական ճակատագրի բերումով, աշխարհով մեկ սըփրոված հայ ժողովրդի բեկորները կարողացել են ոչ միայն գոյատևել հողագնդի ամենատարբեր երկրներում, այլև ստեղծել մշակութային արժեքներ, նպաստ բերելով թե՛ սեփական ժողովրդի, թե՛ տվյալ երկրի արվեստին ու գրականությանը: Հնդկաստանից մինչև Ֆրանսիա, Լիբանանից, Եգիպտոսից, մինչև Իտալիա, Թուրքիա, Ռումինիայից, Բուլղարիայից մինչև ԱՄՆ և այլուր ապրել ու գործել են հայ մշակույթի համար նվիրական շատ դեմքեր՝ Մ. Թադիադյանը, Ղ. Ալիշանը, Ա. Բագրատունին, Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը, Պ. Դուրյանը, Գ. Զոհրապը, Մ. Մեծարենցը, Դ. Վարուժանը, Վ. Թեքեյանը, Ա. Զոպանյանը և շատ ուրիշներ, որոնց թողած ինքնուրույն և թարգմանական ստեղծագործական ժառանգությունը մեզ համար դասական արժեք ներկայացնելուց բացի, այսօր յուրովի մասնակցում է մեր գրական կենդանի պրոցեսին:

Հայ հասարակությանը համաաշխարհային գրականության գլուխգործոցներին ծանոթացնելու գործում Մխիթարյան հայրերի հետ անցյալ դարի երկրորդ կեսից անուրանալի դեր կատարեցին նաև զմյուռնահայ գրական շարժման ներկայացուցիչները՝ Մ. Մամուրյանը, Գր. Զիլինկիրյանը, Տետեյան եղբայրները, Գ. Կոստանդյանը, Ա. Հայկունին, Մ. Նուպարյանը և ուրիշներ, որոնց հեղինակությամբ լույս տեսավ ավելի քան երկու հարյուր հատոր թարգմանական գրականություն, չհաշված «Արևելյան մամուլ», «Ծաղիկ», «Արփի Արարատյան»

ամսագրերում հրապարակված թարգմանական աշխատանքները¹⁵:

11
109
108
107
106
105
104
103
102
101
100
99
98
97
96
95
94
93
92
91
90
89
88
87
86
85
84
83
82
81
80
79
78
77
76
75
74
73
72
71
70
69
68
67
66
65
64
63
62
61
60
59
58
57
56
55
54
53
52
51
50
49
48
47
46
45
44
43
42
41
40
39
38
37
36
35
34
33
32
31
30
29
28
27
26
25
24
23
22
21
20
19
18
17
16
15
14
13
12
11
10
9
8
7
6
5
4
3
2
1


Զմյուռնահայ գործիչներից Ա. Կ. Տետեյանն առաջինն էր, որ ելնելով լեզվի ու գրականության ժողովրդայնացման լուսավորական սկզբունքներից, 1853-ին Շեքսպիրի «Սխալների Պիոմեդիան» («Կատակերգություն սխալանց» վերնագրով) թարգմանել էր ընթերցողներին մատչելի գրական արևմտահայերենով: Մինչ այդ Շեքսպիրից կատարված թարգմանությունները գրաբար էին¹⁶:

A Արշակ Չոպանյանը ևս մեր մշակույթի այն նվիրյալներից է, որն ապրելով ու գործելով հայրենիքից հեռու, գրական ինքնուրույն ստեղծագործություններին զուգահեռ, թարգմանություններ է կատարել ֆրանսերենից, անգլերենից, թուրքերենից, իտալերենից՝ հայերեն, ինչպես նաև հայերենից՝ ֆրանսերեն: Չոպանյանի գրական դիմանկարն, իսկապես, աներևակայելի է առանց նրա բեղուն թարգմանչական գործունեության:

Չոպանյանի հայերեն թարգմանությունների շրջագիծն ընդգրկում է համաշխարհային գրականության մի շարք դասական անուններ՝ էսքիլես, Վիրգիլիոս, Դանտե, Շեքսպիր, Բայրոն, Շելլի, Հյուգո, Դյումա, Տլոբեր, Սքոթ, Պո, Տրանս, Լամարթին, Մալարմե, Վերլեն, Բոդլեր, Գոթիե, Վերհարն, Տասսո,

15 Բնագրերի լեզուներին գիտակ բանասերների նախանձախնդիր քննությանն են սպասում Մխիթարյաններից՝ Ա. Բագրատունու (թարգմանել է Հովհերոսի, Միլտոնի և այլ հեղինակների գործերից), Ղ. Ալիշանի (թարգմանել է Բայրոնի, Շիլլերի և ամերիկյան մի շարք բանաստեղծների ստեղծագործություններից), Զմյուռնիայի դպրոցից՝ Մ. Մամուրյանի (թարգմանել է Գյոթեի, Վոլտերի, Բոմարշի, Դյումայի, Սքոթի, Ժյուլ Վեռնի և ուրիշների ստեղծագործություններից), Գր. Զիլինկիրյանի (թարգմանել է Հյուգոյի, Մյուսեի, Սանդի, Պրևոյի, Լամարթինի և ուրիշների գործերից), թարգմանիչ-հրատարակիչներ Տետեյան եղբայրների (թարգմանել են Շեքսպիր, Մոլիեր, Հյուգո, Դյումա), արևելահայ թարգմանիչներից Մ. Սաղաթյանի, Գ. Բարսուղարյանի, Փ. Վարդանյանի և ուրիշների թարգմանական աշխատանքները: Երջանիկ բացառություն է կազմում Հովհ. Մասեհյանը, որի թարգմանությունները մանրագին հետազոտվում են շեքսպիրյան տարեգրքերում:

16 Տե՛ս Կ. Ճինգոզյան, էջեր 19-րդ դարի 50—60-ական թվականների Զմյուռնահայ գրական շարժման պատմությունից (ՊԲՀ, 1982, №2, էջ 61):



Անդերսեն, Դերժավին, ինչպես նաև՝ Խայամ, Սաադի, Հաֆիզ
և ուրիշներ:

Եթե օտար լեզուներից հայերեն թարգմանությունները Չոպանյանը կատարում էր առաջնապես ղեղադիտական մղումներով, հայերենից ֆրանսերեն իրականացված թարգմանություններին նա հասարակական-քաղաքական դեր էր ստանձնում՝ քաղաքակիրթ աշխարհում հետաքրքրություն առաջացնել իր ժողովրդի դարավոր մշակույթի հանդեպ, ըրդելով օգնություն ձեռք մեկնել Արևմտյան Հայաստանում կործանման եղբին կանգնած իր հայրենակիցներին: Բացատրելով հայ գրականության լավագույն արժեքները ֆրանսերեն թարգմանելու իր դրդապատճառները, Չոպանյանը գրում է. «Մեր ազգն իր ալժմյան դժբախտ ու անսխառնակ կացության մեջ սլեւոք ունի, որ գեթ իր անցյալի մեծությունը, իր գրական ու գեղարվեստական հանճարին կոթողները ցույց տանք նվրուպային...¹⁷: Այս մտահոգությամբ է նա թարգմանում հայ ժողովրդական և աշուղական երգերը, հայ հին և միջնադարյան գրողներին (Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Շնորհալի, Յրիկ, Կ. Երզնկացի և ուրիշ.) և իր ժամանակակիցներից՝ Դուրյանի, Բաֆֆու, Շիրվանշադիի ստեղծագործության լավագույն էջերից: Չոպանյանի այդ բարձրարվեստ թարգմանություններն արժանացան թե՛ ֆրանսիական առաջադեմ հասարակայնության, և թե՛ Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի պաշտոնական խրախուսանքին: Եվ Չոպանյանը չի թաքցնում գոհունակությունը, որ կարողացել է հասնել իր նպատակին, քանի որ՝ «Ինչ որ ֆրանսերեն լեզվով հաջողություն կգանե՛ աշխարհիս մեջ տարածվելու, ամեն տեղ ընդունելություն գտնելու ապահովությունն ունի... անհրաժեշտ կգտնեմ շարունակել ֆրանսերեն լեզվով մեր գրական ամենեն ինքնուրույն (իմա՛ մեծարժեք— Մ. Մ.) էջերու եվրոպական հասարակությանը ծանոթացնելու գործը, որին նվիրած եմ ուժերուս մեկ սովար մասը¹⁸»:

¹⁷ Չոպանյանի անտիպ նամակներից, նամակ Մ. Իզմիրլյանին, 1909 («Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 2, էջ 56):

¹⁸ Ա. Չոպանյանի անտիպ նամակներից, նամակ Սուբխաս արքեպիսկոպոս Պարզյանցին, 1912 (նույն տեղում, էջ 57):

Այսպիսով, Չոպանյանի, ինչպես և հայ շատ գրող-թարգմանիչների համար օրակարգի հարց էր ոչ միայն ի՛նչ և ինչպե՛ս, այլ ամենից առաջ՝ ինչո՞ւ թարգմանել հարցադրումը:

Թարգմանական բաղամայա հարուստ փորձը Չոպանյանին իրավունք և հնարավորություն էր ընձեռում հանդես գալու տեսական-քննադատական հոդվածներով, որոնցում շարադրված գեղադիտական շահանիշները մինչև այսօր շեն կերցրել իրենց արժեքը: Այս իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում ավելի քան ութ տասնամյակ առաջ գրված «Թարգմանությունների արժեք» հոդվածը, որտեղ Չոպանյանը դեմ էր դուրս գալիս ինչպես խիստ կաշկանդված, բառացի թարգմանություններին, որոնք կարող են հետաքրքրել միայն ֆոլկլորագետներին ու պատմաբաններին, այնպես էլ շահից ավելի ազատ թարգմանություն-փոխադրություններին, որոնք ի վիճակի շեն վերաբարձրել հեղինակի ստեղծագործական անհատականությունը: «Բնծի համար թարգմանությունը լեզու է մը ուրիշ լեզու: Ի մը փոխադրել է գրվածք մը, պահելով ոչ միայն անոր գաղափարները, այլև անոր «կենդանությունը», այսինքն ձևական հրապույցին բոցը, որին շիջումով ունի գրվածք դիակ կդառնա այլևս: Թարգմանությունը պետք է տա այն հասարակության, որուն համար կկատարվի, բացարձակապես այն նույն տպավորությունը, զոր բնագիրը կգործե զայն արտադրող ժողովրդի վրա. արդ, այդ արդյունքին հասնելու համար թարգմանիչը պարտավոր է բառական թարգմանութենե խորշի...»¹⁹:

Արժանին հատուցելով Չոպանյանի թարգմանական արգասավոր գործունեությանը, Գ. Չոհրապյն առանձնապես բարձր գնահատական է տվել նրա՝ հայերենից ֆրանսերեն կատարած թարգմանություններին: 1913-ին նա գրում է Չոպանյանին. «Միս մինակդ ըրիր ինչ-որ շատեր միացած չէին կրնար ընել. մինակդ,— սարերն ալ մինակ կըլլան... դուն հիանալի երկյուղածությամբ մը նվիրեցիր ինքզինքդ փշրանքներն ու նըշխարները հավաքելու մեր գրական անցյալին: Ճիշտ անո՞ր, որ ամենեն մոռացվածը և լքվածն էր»²⁰:

¹⁹ «Անահիտ», 1902, № 12, էջ 218:

²⁰ Գ. Յենեբյան, Արշակ Չոպանյան, Փարիզ, 1938, էջ 57:

Արշակ Չոպանյանի՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող արխիվում կան բազմաթիվ դեռևս շուտամենասիրված թարգմանություններ, հոգևածներ, քննական ակնարկներ, գրած ու ստացած շուրջ 32000 նամակ, որոնք հատուկ հետազոտությունների առատ ու շնորհակալ նյութ են պարունակում:



Հովհաննես Հովհաննիսյանի թարգմանական ժառանգությունը թերևս ամենահարուստներից մեկն է հալ նոր գրականության պատմության մեջ: Թարգմանական աշխատանքով նա դբադվել է իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում, թարգմանելով՝ հունարենից, իտալերենից, ֆրանսերենից, անգլերենից, գերմաներենից, ռուսերենից, լեհերենից, ուկրաիներենից: Բանաստեղծի ստեղծագործական զարգացմանը համընթաց փոխվել, ընդլայնվել է նրա գրական հետաքրքրությունների շրջանակը՝ Հոմերոս, Էսքիլես, Սոփոկլես, Սաֆո, Շեքսպիր, Հայնե, Հյուգո, Միցկևիչ, Ուլանդ, Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով, Նաբսոն, Պլեշչեև, Յակուբովիչ, Պետեֆի, Փշավելա, Ծերեթելի, Տիչինա և ուրիշներ:

Հովհաննիսյանն այն համոզմանն էր, որ ազգային մշակութային փոխհարստացման, որևէ ազգի բարոյական նկարագիրը, հոգևոր կյանքը ճանաչելու համար չկա ավելի մաքուր աղբյուր, քան նրա ազգային ստեղծագործությունն է, որ՝ «մի ազգ ճանաչելու ամենալավ միջոցներից մեկը նորա գրականությանը ծանոթանալն է»: Հասարակության բարոյական առաջընթացի գործում որոշիչ դեր տալով համաշխարհային գեղարվեստական արժեքներին, Հովհաննիսյանը գտնում էր, որ բոլոր ժողովուրդների հանճարները կոչված են իրենց ետևից տանելու «հասարակաց միտքը, ազգի ստեղծագործող զորությունը»: «Բանաստեղծության մեջ կան հսկաներ, — գրում է նա, — որոնց ազդեցության համար սահման չկա... ամենահարուստ գրականություններն իսկ իրենց աշխարհագրական կամ ազգային սահմաններից դուրս ծաղկած այդպիսի հան-

Ճարներին անպատճառ որդեգրում են և նոցանից էլ նոր կենսական ուժ ստանում»²¹:

Հայ մշակույթի զարգացման գործում Հովհաննիսյանն առանձնապես նշում էր ռուս գրականության դերը, հետևաբար և նրանից կատարվող թարգմանությունների նշանակությունը: Հովհաննիսյանի թարգմանական գործերը մեզանում բանասիրական մտածումների առարկա արգեն եղել են: Այստեղ փորձենք ներզգալ հեղինակի և թարգմանչի աշխարհայացքային-դեղագիտական հարազատության, շփման որոշ եզրեր, թեև, անշուշտ, գրողի ստեղծագործական անհատականության դրսևնորումներն ինչպես ինքնորույն գործերում, այնպես էլ թարգմանություններում միաշերտ, միանշանակ չեն, ուստի և հետազոտողի եզրահանգումները կարող են վիճարկվել:

Լերմոնտովյան մոտիվները հայ գրականության մեջ լսելի էին դեռևս XIX դարի կեսերից (Նալբանդյան, Պատկանյան, Շահաղիզ), սակայն առավել ուժգին ու որոշակի հնչեցին Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի ստեղծագործություններում: Հովհաննիսյանը Լերմոնտովից թարգմանել է «Մահու հրեշտակը» պոեմը և «Նս դուրս եմ գալիս մենակ ճամփու վրա» բանաստեղծությունը, որի դերը, բանաստեղծ-թարգմանչի ստեղծագործական կենսագրության մեջ, մեր կարծիքով, չի սահմանափակվում սոսկ թարգմանությամբ: Այն տպավորությունն է ստացվում, որ Լերմոնտովի հատկապես այս գործն է ազդակ հանդիսացել Հովհաննիսյանի լայն ժողովրդականություն վայելող «Ա՛խ, տվեք ինձ քաղցր մի քուն» բանաստեղծության համար, որը, չգիտես ինչու, դասվում է նրա սիրային ոտանավորների շարքը: Այդ բանաստեղծությունը Հովհաննիսյանը գրել է 1884-ին, Լերմոնտովյան իր թարգմանությունից մի քանի օր անց (օգոստոսի 26-ին՝ թարգմանությունը, սեպտեմբերի 18-ին՝ սեփական բանաստեղծությունը. սա իմիջիայլոց): Լեյտմոտիվների շփման եզրերը ներզգալու համար փորձենք կողք-կողքի դնել դրանք.

²¹ «Համլետի» հայերեն թարգմանության առթիվ» հոդվածից, 1895 (Հ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1965, էջ 57):

Ա՛խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն
Կյանքից հեռու՛ սլանամ,
Այն աշխարհը, ուր խնդու՞թյուն,
Ուր սե՛րն է միշտ անթառամ:

.

Եվ աշագեղ կույսն ականջիս
Յուր մեղեդին մե՛ղմ հնչե.
Եվ հերարձակ սիրով՝ վզիս
Փարե քնքո՛ւշ, փաղաքշե...

Լեռմոնով

... Ես աղատություն, ես հանգիստ կամիմ,
Ա՛խ, ես կուզեի մոռացվի՛լ, քնանա՛լ...

.

Որ գիշեր-ցերեկ ինձ անու՛յշ մի ձայն
Սե՛ր երգեր, դգվեր իմ լսողու՞թյուն...
Որ կանաչախիտ կաղնիին իմ վրան
Խոնարհած հաներ մի ախորժ շրջուն:

Հայտնի է, որ գրական ազդեցությունների ասպեկտը գրականագիտության ամենաբարդ բնագավառներից է, որը զգուշավոր ու նրբանկատ մոտեցում է ենթադրում: Սակայն նաև անժխտելի է, որ հիրավի բարձրարվեստ թարգմանության անհրաժեշտ նախապայմաններից է անխառն սերն ու հիացումը թարգմանվող հեղինակի հանդեպ, իսկ դրա անմիջական հետևանքն էլ հենց գրական ազդեցությունն է: Հազիվ թե հնարավոր է ազդվել մի գրողից, որի նկատմամբ պաշտամունք չունես: Տվյալ դեպքում Հովհաննիսյան բանաստեղծ-թարգմանչի ստեղծագործության ոգին, հուզական գունավորումը՝ լուսավոր թախծի շեշտերով, մեր կարծիքով, մեխձենում է Լեռմոնտովի պոետիկային:

Գեղարվեստական ստեղծագործության լեզվի, ոճի, ձևի, ուրիշակայի, նաև պատմականության զգացողություն՝ այս

ամենը հատուկ են Հովհաննէսիւյան-Թարգմանչի լավագույն գործերին: Գիտական հետաքրքրություն են ներկայացնում նրա՝ Թարգմանական արվեստի հարցերին նվիրված տեսական հոգ-վածները, գրախոսականները, ուսումնասիրությունները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ ունի Շեքսպիրին և նրա գործերի հայերեն թարգմանություններին նվիրված հոգվածաշարը:

Հովհաննէս Թումանյանի թարգմանություններն ըստ ար-ժանվույն գնահատվել են որպէս հայ գրականութեան դասա-կան արժեքներ, նույնպիսի «անհաս գագաթ», ինչպէս և գրողի ինքնուրույն ստեղծագործությունը:

Թումանյանի թարգմանական լավագույն աշխատանքներին թարգմանութեան տեսութեան այսօրվա տեսանկյունից նայե-լիս, կրկին ու կրկին հիացնում են ոչ միայն, ասենք, Պուշկի-նի հուղաշիւարհի վերարտադրութեան հարագատությունը՝ ի-մաստային խորը շերտերով ու մեղեդայնութեամբ, այլ և այն, որ Թումանյանը դրան հասնում է հավատարիմ մնալով բա-ռապաշարի «ժուժկալութեան» և հոգեբանական անկախութեան իր սկզբունքին:

Զգայուն վերաբերմունք ամեն մի բառի և նրա նրբերանգ-ների նկատմամբ՝ Թումանյան-Թարգմանչի ստեղծագործու-թեան մեջ սա՛ է, մեր կարծիքով, ենթակա ընդօրինակման, ուրեմն և վերլուծման, քանի որ մնացյալը տրված է «ի վե-րոստ», ուրեմն և անկրկնելի է: Իրենց անպաճույճ պարզու-թեան մեջ նրա բառերը զարմանալիորէն տարողունակ են ու պատկերավոր, ներկայանում են անսպասելի նոր հնչերանգ-ներով, բանաստեղծի կամքով նրանք թեւածում են, դվարճա-նում, ծաղրում, բայց ավելի հաճախ մտորում են ու թախծում, խոր տրամութեամբ վարակելով ընթերցողին: Եվ ամեն ան-գամ համահվում ևս այն հաստատ համոզմամբ, որ հենց դա՛ է տվյալ դեպքում միակ ստույգ բառը. փորձիր փոխարինել մեկ ուրիշով և ամեն ինչ կխաթարվի: «Մի բառը մի աշխարհ է» իր սկզբունքին միշտ հավատարիմ, բանաստեղծը կարողա-նում է ոչ միայն ճիշտ օգտագործել բառերը, այլ և ողջ ստեղ-ծագործութեան հյուսվածքում ցանկացած երանգը տալ նրանց, գտնելով դրանց միակ ճիշտ տեղը տվյալ կոնտեքստում: Եվ

այստեղ Թումանյանի համար մանրուքներ չկան: Ա. Կոլցովի բանաստեղծություններից մեկը թարգմանելիս, նրան մտահոգում է СЯДУ Я ЗА СТОЛ արտաքուստ պարզ նախադասության վերարտադրությունը հայերեն: Բնագրի քնարական հերոսը սեղանի մոտ է նստել իր ծանր կյանքի մասին մտորելու: Բառացի թարգմանության դեպքում կստացվեր, ինչպես Թումանյանն է ասում «նստել եմ սուիրա», մինչդեռ «խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը պատի տակն է», — գրում է Թումանյանը: Սակայն այս տարբերակն էլ չի բավարարում նրան: Այնուամենայնիվ, բնագրի հերոսը հայ չէ, և ճիշտ չէր լինի նրան «նստեցնել» պատի տակ: Վերջնական տարբերակում Թումանյանը գտնում է միակ ճշգրիտ, տարողունակ, համամարդկային իմաստ պարունակող բառը՝ շվար:

Նստել եմ շվար
 Ու միտք եմ անում,
 Թե ինչպես մենակ
 Ապրեմ աշխարհում:

Հեռանալով բառացի թարգմանությունից, հայերենի փոխադրելով բառերի ոչ թե արտաքին բովանդակությունը, այլ ներքին իմաստը, Թումանյանն այդպիսով առավելագույնս մոտեցել է բնագրին, միաժամանակ միանգամայն հարազատ մընալով իր ժողովրդի լեզվամտածողությունը²²:

Նման գեղարվեստական հայտնությունները բազմաթիվ են Թումանյան-թարգմանչի ստեղծագործական լաբորատորիայում և հատուկ հետազոտությունների առարկա կարող են լինել թե՛ լեզվի ու ութմիկայի, թե՛ գաղափարական բովանդակության անթերի վերարտադրման, թե՛ հոգեբանական տպավորության առումով: Այս վերջին իմաստով առանձնապես հատկանշական է Պուշկինի «Ջրահեղձի» թումանյանական թարգմանությունը: Առաջին իսկ տողերից այն հագեցած է

²² Թումանյանի այս թարգմանության մասին մանրամասն տե՛ս Ա. Եղիազարյան, Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, Երևան, 1977, էջ 125:

դրամատիկ լիցքով, և ներքին ռեթմիկայի օգնությամբ ընթերցողին է հաղորդում ներս վազող մանուկների հեքը, «լսելի» դարձնում նրանց ոտնաձայներն իսկ.

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հորն շտապ.
— Ապի, ապի, եկ, մեր թոռ
Մեռել հանեց գետի ափ...

Դժվար է ասել, թե թարգմանիչն ինչպես է կարողացել հաղորդել ուս հանճարի ստեղծագործության հոգեբանական տրամադրության նրբերանգները, ինչպես նաև հագիվ թե վերծանման հնարավորությունն են ընձեռում Թումանյանի ինքնուրույն ստեղծագործություններից ստացվող տպավորությունները. քառյակների խոր ու վսեմ փիլիսոփայական մտորումների մթնոլորտը, «Անուշի» նախերգանքում հնչող ողբերգության տագնապալի նախազգացումը, «Մի կաթիլ մեղրի» առերևույթ դրամատիկ իրադարձություններից ստացվող ծրծաղելի-ողբերգական տպավորության արտասովոր համադրումը: Եվ գուցե թումանյանական ստեղծագործություններին հատուկ այդ մթնոլորտի, նրանց հուզական տոնի անվերծանելիության «մեղքով» է, որ իր ամբողջ մեծությամբ Թումանյանը, ցավոք, բավականաչափ դուրս չի եկել ազգային գրականության սահմաններից, չի գտել իր համահանճար թարգմանչին, ինչպես հայ իրականության մեջ Պուշկինը «գտավ» իր մեկնաբանին, հանձին Թումանյանի:

Հայտնի է, որ հայ ընթերցողների մի քանի սերունդներ Պուշկինի պոեզիային հաղորդակից են եղել Թումանյանի թարգմանությունների շնորհիվ, կրկին ու կրկին անդրադառնալով նրանց նաև այն ժամանակ, երբ բնագիրն ինքն արդեն մատչելի էր դառնում ռուսերենի լայն տարածման շնորհիվ: Մինչդեռ Թումանյանն ինքը երբեք մինչև վերջ գոհ չէր մնում իր արածից, կասկածի տակ դնելով լիարժեք բանաստեղծական թարգմանության հնարավորությունն ընդհանրապես: «Ապակու տակ դրված վարդ էր» նրա կարծիքով նույնիսկ լավագույն չափածո թարգմանությունը, որն անկարող է տալ «բնագրի հարազատ բույրն ու հրապույրը»:

«Լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության», — սրանք նույնպես իր բառերն են, որոնք, ավելի, քան մեկ այլ դեպքում, այսօր կարող են բնորոշել ի՞ր իսկ թարգմանական գործերը, քանի որ պոեզիա թարգմանել, նշանակում է նախ և առաջ պոեզիա ստեղծել ազգային-լեզվական նոր միջավայրում: Ժամանակի քննություն բռնած թումանյանական թարգմանությունները հե՛նց այդպիսին են:

«Ո՞վ կարող է ուրանալ թարգմանական գրականության ահագին նշանակությունը ազգային գրականության զարգացման համար... Մեր գրականության զարգացման ամենամեծ գրավականը կլինի թարգմանական գրականության զարգացումը մեզանում...»²³: Այս և նման մտքերով են ներթափանցված Վահան Տերյանի հոդվածները, հրատարակչին զեկույունները, նամականին:

Իր ողբերգականորեն կարճատև կյանքի ընթացքում Տերյանը հասցրեց մնալուն էջեր թողնել ոչ միայն հայ պոեզիայում, այլև թարգմանական գրականության մեջ: Հաշտնի է, որ իր ղեկավարած «Պանթեոն» հրատարակչությունում Տերյանը մտադիր էր թարգմանել ու հրատարակել համաշխարհային գրականության գլուխգործոցները: Նա առանձնահատուկ նշանակություն էր տալիս հայ հասարակայնությանը ոռոս առաջադեմ գրականության ներկայացուցիչների ստեղծագործություններին ծանոթացնելու գործին:

Թեև Տերյանի թարգմանական ժառանգության մեջ բանաստեղծություններ կան Սաֆոյից, Թագորից, Ռուսթավելուց, Վերլենից, Ուալդից, Բողերից, Վերհարնից, Մերեթելուց, Բրյուսովից, Սոլոգուբից, Վյաչ. Իվանովից և ուրիշներից, այսուհանդերձ, նրա համար պոետական ամենամիջակական անունը կերմոնտովն էր, և այդ նա խոստովանում է բազմիցս՝ և՛ բնաբան վերցնելով նրա բանաստեղծություններից, և՛ անդրադանալով նրա պոեզիային իր նամակներում: Սովետահայ տերյանագիտությունը տարբեր տեսանկյուններից քանիցս հետազոտել է այս հարցը: Տերյանը երազում էր հրատարակել կեր-

²³ «Անունը կա, ամանումը չկա» հոդվածից, 1911 (Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 217):

մոնտովի երկերի հայերեն ժողովածուն և իր ընտրութեամբ
թարգմանություններ էր հանձնարարում հայ բանաստեղծնե-
րին:

Տերյան-Թարգմանչի ամենաքնորոշ առանձնահատկությու-
նը, մեր կարծիքով, այն է, որ բոլոր թարգմանական աշխա-
տանքներում նրա ստեղծագործական անհատականությունն
իր կնիքն է դնում թարգմանվող գործի վրա՝ թե՛ քնարական
հերոսի հուզական կերտվածքի, թե՛ լեզվամտածողության ա-
ռումով: Դժվար չէ կռահել, օրինակ, տերյանական տարերքը
Բրյուսովից թարգմանված հետևյալ տողերում.

Տխո՛ւր խավար, տխո՛ւր քամի—ծառերի շրշյուն.
Երեկոն իր հեռավոր երազն է հիշում...

կամ

Ես հոգնել եմ ապրելուց մարդկանց մեջ և օրերում,
Փոփոխումից խոհերիս, փոփոխումից ձգտումիս,
Ճշմարտության ձևերից, հանգերից իմ երգերում...
Ձանձրացել եմ ու հոգնել իմ անունի՛ց, անունի՛ց...

.....

Օ՛, մոռանալ ամեն ինչ, լինել ազա՛տ ու մենա՛կ
Դաշտերի մեջ լայնարձակ և լռանիստ, և անդորր.
Գնալ ճամփով մենավոր առանց իղձ ու նպատակ...
Եվ չհիշե՛լ, մոռանա՛լ և՛ անցյալ, և՛ գալիք օր...

«Տխուր երեկո» և «Կյանքի ձանձրույթը» բրյուսովյան բա-
նաստեղծությունների թարգմանությունները մեզ տանում են
Տերյանի պոետական աշխարհը, որտեղ «բյուրեղացած դգա-
ցումներ են անթերի ձևերի մեջ», և ուր քնարական հերոսը
նույնպես համակված է հեռացման, մոռացման իղձերով.

Մոռանալ, մոռանալ, ամեն ինչ

Ամենին մոռանալ.

Չըսիրել, չըխորհել, չափսոսալ—

Հեռանալ...

Պատահական չէ, որ Տերյանը ռուս բանաստեղծներից ամենից շատ Բրյուսովից է թարգմանություններ կատարել. դա ոչ միայն երախտագիտության տուրք էր ականավոր բանաստեղծ-բանասերին՝ հայ պոեզիայից կատարած նրա բազմաթիվ մեծարժեք թարգմանությունների, «Հայ պոեզիան...» հանրահայտ անթոլոգիայի, «Հայ ժողովրդի պատմական տարեգրությունը» ուսումնասիրության, և այն բանի համար, որ նա «չարշարանաց ահավոր ժամին եկավ այցելու իմ երկիրն անհույս...», այլև նրա համար, որ որոշակի հոգեհարազատություն կար երկու բանաստեղծների միջև:

Շարունակելով Բրյուսովի ավանդները՝ ընդլայնել ռուս հասարակայնության կողմից հայ ժողովրդի մշակութային արժեքների ընկալումը, Տերյանը ռուսերեն է թարգմանում Բաֆֆու «Կայծերը» (I հատոր), Շիրվանզադեի «Ցավագարը», հատվածներ «Սասունցի Դավիթ» էպոսից, Սունդուկյանի «Պեպոն»²⁴: Վերջինն առանձնապես մեծ դժվարությունների առաջ է կանգնեցրել բանաստեղծ-թարգմանչին:

Առաջին պահ կարող է թվալ, թե ունենալով թարգմանիչ-մեկնաբանի բացառիկ տաղանդ, բանասիրական գիտելիքներ, Տերյանին պետք է որ օգներ նաև այն պարագան, որ նրան ծանոթ էր ազգային, սոցիալական, հոգեբանական այն մըթնոլորտը, որտեղ ապրում ու գործում էին Սունդուկյանի հերոսները: Եվ այսուհանդերձ, «Պեպոն» այն ստեղծագործություններից է, որոնք «ընդդիմանում են» թարգմանությանը և ըզզալի կորուստներ կրում լեզվական, ազգային այլ միջավայր փոխադրվելիս: Իսկապես. ինչպե՞ս անկորուստ ռուսական միջավայր տանել, ռուսաց լեզվի ո՞ր շերտերին դիմել Սունդուկյանի թիֆլիսահայ բարբառի տարերքը վերարտադրելու համար: Իսկ առանց դրա աներևակայելի է մեծ թատերագրի ըստեղծագործությունը: Տերյանը փորձել է պահպանել սունդուկյանական կոլորիտը, թարգմանության մեջ տեղ տալով առանձին բառերի, արտահայտությունների: Այնուամենայնիվ,

²⁴ Թարգմանությունը կատարվում էր Մ. Գորկու համադորձակցությանը: Դա «Պեպոն» ռուսերեն թարգմանության երրորդ փորձն էր. առաջինը կատարել էր Սունդուկյանը՝ 1875-ին, Երկրորդը՝ Ալ. Մատուրյանն ու Յու. Վեսելովսկին՝ 1896-ին:

նա դժգոհ էր իր աշխատանքից. «...Իհարկե, ես հավակնել չեմ կարող կարծելու, որ «Պեպոն» արտահայտել եմ ուսերեն... «Պեպոն» անթարգմանելի է, ինչպես անթարգմանելի են այդօրինակ գրվածներն առհասարակ: Կուզեի ես կարդալ ЧЕХОВ-ի որոշ գրվածների անգլերեն, մանավանդ ճապոներեն թարգմանությունները, մինչև անգամ ֆրանսերենը²⁵: Ես կամեցել եմ միայն գաղափար տալ «Պեպոյի» մասին... Ուրիշ ոչինչ...²⁶:



Սովետահայ գրողներից Ստեփան Զորյանին էր վիճակվել Վահան Տերյանից անմիջապես հետո շարունակելու հայ թարգմանական արվեստի դարավոր ավանդույթները: Դեռևս 1916-ին Տերյանը նրան հանձնարարել էր և՛ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեալի հատորներից մեկի թարգմանությունը, երիտասարդ արձակագրի ստեղծագործական ներշնչանքներում արդարացիորեն տեսնելով ուսու դասականներից, առանձնապես Տոլստոյից ու Զեյսովից եկող ազդակներ: Տերյանի մտահղացումը սակայն հնարավոր եղավ իրականացնել միայն 1935—1940 թթ., երբ էպոպեան վերջապես լույս տեսավ Ստ. Զորյանի թարգմանությամբ²⁷:

²⁵ Բարբառների, դիալեկտիզմների թարգմանության հարցը մտածումների առարկա է նաև արդի թարգմանության տեսության ու դերժնականի համար: Այսպես Մ. Շոլոխովի ստեղծագործությունների՝ անգլիացի ժամանակակից թարգմանիչ Ռ. Գալլիշը գրելով իր գեմ հառնած զփլաբությունների մասին, նշում է. «Երբ խոսք է լինում Շոլոխովի անքստերի թարգմանության մասին, սովորաբար բարձրացվում է այն հարցը, թե ինչպես պետք է վարվել դիալեկտիզմների հետ: Կորուստներն այստեղ անխուսափելի են... Խնդիրն այն չէ, որ բառացիորեն հաղորդվեն Շոլոխովի լեզվի առանձնահատկությունները, այլ այն, որ ճիշտ հասկացվի ասելիքը և հեղինակի լեզվական յուրահատկությունները բացահայտվեն աշխույժ ու պարզ անգլերենով»: («Иностранная литература», 1980, № 6, с. 193):

²⁶ Նամակ Յ. Խանդաղյանին, 1916 (Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 436):

²⁷ Արևմտահայ թարգմանությամբ, որոշ կրճատումներով, Տոլստոյի վեպը լույս է տեսել 1911-ին, Կ. Պելում (Թարգմ. էդ. Ամասունի):

Հասարակական, քաղաքական, նաև գրական միանգամայն այլ իրադրություն մեջ էր վիճակված ապրել ու աշխատել Ստ. Զորյանին, թեև նախորդներից նրան բաժանող ժամանակահատվածը չափվում էր ընդամենը մի քանի տասնամյակով:

Տեղի էին ունեցել ոչ միայն պատմական տեղաշարժեր, փոխվել էին նաև բուն թարգմանական արվեստի գեղադիտական շափանիշները: Անցել էին ազատ թարգմանություն-փոխադրությունների, ինչպես նաև բառացի ճշգրիտ թարգմանությունների ժամանակները: Զգալիորեն խորացել էին թարգմանաբանական ստեղծագործությունների գեղադիտական-փիլիսոփայական շերտերի մեկնությունները: Օրվա հրամայականը գեղաբանական համարժեք թարգմանությունների ստեղծման հարցն էր:

Կար է՛ս մի էական տարբերություն. ազգային սովետական հանրապետությունում հազարավոր հայ ընթերցողների մատչելի էին ռուսերեն բնագրերը, հետևաբար անհաջող թարգմանությունները հասարակական հնչեղություն չէին կարող ունենալ: Սյս իրադրության մեջ Զորյանը ձեռնարկեց Տոլստոյի երկերի թարգմանությանը: Նրա ստեղծագործական հավատարմությունը ռուս հանճարին հարատևեց մի քանի տասնամյակ: 1926-ին նա թարգմանեց «Կազակները», 1928-ին՝ «Սևաստոպոլյան պատմվածքները» և այլ գործեր, քայլ առ քայլ հաղթահարելով Տոլստոյի բարդ ու բազմաշերտ տեքստերի հաճախ անհաղթահարելի թվացող դիմադրությունը:

«Պատերազմ և խաղաղություն» զորյանական թարգմանությունը միանգամից ընդունվեց և գրական նրևույթ դարձավ հայ իրականության մեջ: Թարգմանությունը շնչում էր ոչ միայն XIX դարասկզբի «բուլբուլով», այլև հագեցած էր հենց այն մթնոլորտով, որը մշտապես հատուկ է ամեն մի մեծ գրողի կոնկրետ ստեղծագործությանը և, որպես կանոն, թարգմանչի համար անորոշալի տարրալուծվում է տողերի, բառերի միջև ընկած տարածությունում: Զորյան-թարգմանչին ամբողջ պատումի ընթացքում հաջողվում է պահպանել պատմական հեռավորությունն առանց արխաիզմներով տարվելու և ճիշտ տեղաբաշխելով ինտոնացիոն շեշտերը, հասնել իմաստային ճշգրտության:

Հայտնի է, թե գեղարվեստական-սյուժետային բազմաշերտ հյուսվածքից և հոգեբանական-փիլիսոփայական խորքից բացի, որքան բարդ ու բազմաձայն է էպոպեայի հենց միայն լեզվական պարտիտուրը, իր ոճական-կերպարային անհատականացված բնութագրումներով: Պալատական, արիստոկրատիկ սալոնների ֆրանսաբանություններով²⁸ հագեցած «մեծավայելուչ» ոճը հանկարծ տեղը դիջում է ռազմի նկարագրությանը՝ իր բոլոր իրապաշտական մանրամասներով, ֆորկլորային տարերքը (Պլատոն Կարատանից մինչև գեղջուկներ, սայասավորներ, գին՝որներ)՝ հեղինակային խոսքին, որտեղ տեսանելիության աստիճան արտահայտվել է հերոսների ներաշխարհի լարվածությունը, նրանց զգացումների աստիճանական դինամիկան, Չերնիշևսկու արտահայտությամբ՝ «հոսու դիալեկտիկան», երբ Տոլստոյը «հետաքրքրությամբ դիտում է, թե ինչպես է տվյալ իրավիճակից կամ տպավորությունից անմիջականորեն ծագած ղգացումը, ենթարկվելով հիշողությունների ազդեցությանը և ղուգադրումների ուժին... վերաճում այլ ղգացումներին, կրկին վերադառնում նախկին ելակետին ու նորից ու նորից դեգերում, փոփոխվելով հիշողությունների ամբողջ շղթայի երկարությունը»²⁹: «Պատերազմ և խաղաղությունից» ճառագող էմոցիոնալ տպավորությունների ամբողջ զամմալի ստեղծման համար որոշիչ դեր է հատկացված հենց հեղինակային խոսքին, որի անխաթար վերարտադրումը, մեր կարծիքով, Զորյան-թարգմանչի աշխատանքի ամենահաջողված կողմն է: Դա է օգնել նրան հարազատ մնալ թե՛ երկի պոետիկային, թե՛ միայն Տոլստոյին հատուկ պատումի ներքին ուժին, թե՛ վեպի էպիկական մասշտաբայնությունը:

Եր ստեղծագործական լաբորատորիայում օգտվելով մայրենի լեզվի բազմաթիվ մոռացված արտահայտչաձևերից, Զոր-

²⁸ Խոսքը հատկապես ֆրանսաբանությունների մասին է, երբ ֆրանսերենի նմանողությամբ ուսուցիչներ միտումով ազավազվում էր, և ոչ թե ֆրանսերեն տեքստերի, որոնք Զորյանը թողել է անփոփոխ (տողատակում, բնականաբար, տալով թարգմանությունը) և հարազատ մնալով հեղինակին, այն դեպքում, երբ այլազգի շատ թարգմանիչներ դրանք թարգմանել են ուղղակի տեքստում, խախտելով ժամանակի կուլտուրը և երկի էական առանձնահատկություններից մեկը:

²⁹ Н. Г. Чернышевский, Избранные статьи, М., 1978, с. 216.

յանը, բծախնդիր ընտրութեամբ նկատի է առնում բառի «տարիքը», ստույգ ընտրված «հարևան» բառերի օգնութեամբ նոր լիցք, նոր երանգ հաղորդում դրան, զգուշանալով, որ այն դուրս չմնա նկարագրվող ժամանակահատվածի ընդհանուր մթնոլորտից, միաժամանակ ներդաշնակելով տվյալ կերպարի բնութագրին: Այդ արդյունքին գրող-թարգմանիչը հասնում է և՛ դիմելով մոռացված բառերի, և՛, անհրաժեշտության դեպքում, բառաստեղծման, այսուհանդերձ, անտեղի լրացումներով երբեք դուրս չգալով բնագրի սահմաններից, այն բնագրի, որի հեղինակի երկերը նա համարում էր «մարդկային ստեղծագործ մտքի ու ոգու նվաճում»:

Ստեփան Զորյանի թարգմանական ստեղծագործութեան բարձրակետը՝ Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» ոչ միայն նրա գրական ժառանգության անբաժանելի մասն է, այլև հայ դասական գրողների լավագույն թարգմանությունների կողքին մշտակայուն երևույթ է մեր ազգային մշակութային պատմության մեջ:

*

* *

Հայ գրականության ստեղծագործական բազմատեսակ շրփումները ձևավորվել են հարյուրամյակների ընթացքում, և եթե այդ պրոբլեմի որոշ շերտեր ենթարկվել են բանասիրական, տիպաբանական մանրադնին քննության, ապա այդ շրփումների հիմքը՝ թարգմանական գրականությունը դեռ սպասում է իր պատմության, ավանդույթների, զարգացման օրինաչափությունների հետազոտմանն ու գիտական արժեքավորմանը, որն, անտարակույս, նպաստ կբերի ազգային գրականության ավելի խոր ու համակողմանի ուսումնասիրությանը՝ պատմահամեմատական ասպեկտով:

Բանասիրական որոնումների ոլորտից դուրս են մնացել նաև հայ գրողների՝ թարգմանական գրականության նշանակութեանը, բանարվեստի հարցերին նվիրված սկզբունքային շատ գրույթներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում թե՛ գրականության պատմության, և թե՛ թարգմանության տեսության համար: Դրանք յուրովի լուսավորում են հայ թարգմանական գրականության անցած ուղին, որն ընթացել է համաշխարհային գրականության լավագույն արժեքներից կա-

տարված թարգմանությունների, նրանցից կրած բարբարազդեցությունների ուղեկցությամբ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող ժողովածուն (որի նյութերը առնված են հայ դասականների՝ տարբեր առիթներով գրած ուսումնասիրություններից, գրախոսականներից, առաջաբաններից, հուշապատումներից, նամականիից, արխիվային նյութերից, պարբերականներում տպագրված հոդվածներից) անդրանիկ փորձն է՝ նախ. ի մի բերել նոր շրջանի մեր գրողների առավել հետաքրքրություն ներկայացնող սկզբունքներն ու տեսակետները՝ ընդհանրապես թարգմանական գրականության նշանակության մասին՝ աղգային գրականության զարգացման, հասարակության գեղագիտական դաստիարակության, նրա բարոյական առաջընթացի գործում, երկրորդ. օտարալեզու այս կամ այն դրողի ստեղծագործությունը թարգմանված տեսնելու նրանց մտահոգության դրդապատճառները և երրորդ՝ հայ դասականների հայացքները թարգմանական արվեստի վերաբերյալ, կապված կոնկրետ ստեղծագործությունների հետ, ներառյալ բանավիճային կրթով գրված գրախոսականները:

Ծանոթագրություններում թվարկվում են տվյալ հեղինակի կատարած թարգմանությունները, որոնք ինքնին համողիչ ապացույց են գրողի գեղագիտական հակումների, գրական նախասիրությունների:

Քանի որ թարգմանության տեսությունն ու գործնականն անմիջաբար առնչվում են թե՛ գրականագիտության, թե՛ լեզվաբանության, թե՛ գրականության տեսության խնդիրներին, և դրանց իրարից բաժանող սահմանագիծը հաճախ խստորոշ չի ընդգծվում, ժողովածուում, բնականաբար, արժարծվում են հարցեր նաև այդ բնագավառներից:

Ընդգրկված նյութերում շոշափելի տրոփում է ժամանակի զարկերակը. մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը՝ քաղաքական, սոցիալական հրատապ պրոբլեմներով, աղգային գոյատևման և հոգևոր մշակույթի պահպանման մտատանջություններով, 1920-ից հետո՝ գրական կապերի ընդլայնման, աղգային գրականության զարգացման հոգսերով:

Ժողովածուի ժամանակագրական շրջանակն ընդգրկում է մեկ հարյուրամյակից ավելի՝ անցյալ դարի 30-ական թվականներին մինչև XX-ի դարակեսը, գրական աշխարհաբարի սկզբնավորման շրջանից մինչև մեր օրերը, սակայն, նյութի ընդգրկումն անհամեմատ լայն է նշված ժամանակահատվածից, քանի որ նոր շրջանի շատ գրողներ հետադարձ հայացքով արժանին են հատուցել մեր առաջին թարգմանիչներին՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Մխիթարյան հայրեր, զմյուռնահայ գրական շարժումից մինչև արևելահայ թարգմանիչները: Այս իմաստով հետաքրքիր են Ստ. Նազարյանի, Ղ. Աղայանի, Վրթ. Փափազյանի և ուրիշների ուսումնասիրությունները, որոնք հիմնականում պատմական բնույթի են: Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ա. Չոպանյանի, Շիրվանզադեի, Վ. Տերյանի, Ծ. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի հոդվածներն ավելի մոտ են տեսական-քննադատական ժանրին և իրենց հիմնարար սկզբունքներով առավելագույնս մոտենում են թարգմանության տեսության մերօրյա շափանիչներին, յուրովի պատասխանելով թարգմանության տեսության ու գործնականի բնագավառների այժմեական շատ հարցադրումների:

Այսպիսով, «Հայ գրողները գեղարվեստական թարգմանության մասին» ժողովածուն ոչ միայն տուրք է դասական ժառանգությանը, այլև նպատակամղված է թարգմանական մարզի արդի մի շարք պրոբլեմների լուծմանը:

Եվ, քանի որ դասական ժառանգությունը մշտապես նորոգվում է նոր փաստերով ու երևույթներով, ինչպես նաև փոխվում են թարգմանական արվեստի սկզբունքներն ու շափանիչները, նրան ներկայացվող պահանջները, ընդլայնվում են «տասներորդ մուսայի» հնարավորությունները, անկասկած, գիտական հետաքրքրություն է ներկայացնում նաև ժամանակակից սովետահայ գրող-թարգմանիչների, առանձնապես բանաստեղծների՝ Պ. Սևակի, Ս. Կապուտիկյանի, Գ. էմինի, Վ. Դավթյանի, Հ. Սահյանի, Հր. Հովհաննիսյանի և մյուսների թարգմանական փորձը, որը նույնպես ուսումնասիրությունների շնորհակալ նյութ է պարունակում:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ*
(1809—1848)

... Եթե ոչ մի բան՝ ո՛չ հուշարձան, ո՛չ էլ պատմական տվյալներ հիմք չլինեին ապացուցելու համար, որ Հայաստանում գոյութիւն է ունեցել մի հնագույն, քաղաքական և մտավոր տեսակետից ինքնուրույն, յուրահատուկ և ինքնատիպ նախնական սճակույթ, ապա դրան ցայտուն և կենդանի կովան կարող է հանդիսանալ այդ երկրի լեզուն...

Հայտնի է, որ հունական և հռոմեական փիլիսոփայական ու պատմական և բանաստեղծական երկերը բնագրերից ամենից հարազատ թարգմանվել են ա՛յս լեզվով: Այդ առումով հայտնի է Աստվածաշնչի թարգմանութիւնը: Որքա՛ն հարուստ է այդ լեզուն իր բազմատեսակ արտահայտութիւններով, դարձվածքներով ու պատկերներով, որքան զորեղ նրա հասկացողութիւններն ու դատողութիւնները, որքա՛ն բնական նրա պատկերները և փոխառումները, որքան կատարյալ՝ գիտական անվանումները: «Ուրախաճալ» բառի համար հայերենում կա 7—8 արտահայտութիւն, տխրելու համար՝ տասից ավելի, այդքան էլ կատարյալ, եթե հիշենք այն բառերը, որոնք կազմվում են առանց նախդիրների և ինքնուրույն ծագում ունեն: Նրա բարդ բառերը անթիվ են. «թեթե» բառով կազմված բարդութիւններից ես մի բառարանում հաշվեցի մինչև երեք հարյուր բառ: Եվ այդ այնուամենայնիվ մի՛ բառարանում էր: Կարո՞ղ էր արդո՞ք մի վայրենի, անկիրթ բնութիւնը զավակ այնքան պարզ, այնքան սուր, բազմակողմանիորեն մտածել և պատկերացումներ ունենալ...¹:

* Խ. Արովյանը՝ թարգմանութիւններ է կատարել Հոմերոսի, Գյոթեի, Շիլլերի, Ռուսսոյի, Թոմաս Մուրի, Կարամզինի, Կոլլովի, Խեմնիցերի և ուրիշների ստեղծագործութիւններից, թուրքերենից գերմաներեն է թարգմանել հայազգի աշուղ Քեշիշ օղլու տաղերը:

Այն օրվանից, երբ մենք ստացել ենք Եվսեբիոսի Ժամանակագրությունը, Փիլոնի մի քանի բանքերը և հնության այլ հիշատակարանների՝ Հայաստանում կատարված թարգմանությունները՝ մեր թվականության V և VI դարում, գիտնականների ուշադրությունը դարձել է նաև հայերի մինչև այժմ շափազանց արհամարհված գրականության և լեզվի վրա, այդ պատճառով էլ անհետաքրքիր չի լինի լայն հասարակայնության համար ծանոթանալու ա՛յն վայրի և ա՛յն հասարակության հետ, որից մենք ստացել ենք վերոհիշյալ հին գրականության և պատմության հարստացման աղբյուրները և դեռ շատ բաներ էլ պիտի ձեռք բերենք...²

... Երբ ևս բախտ ունեցա եվրոպական հողում առաջին անգամ տեսնելու այդ արվեստներն իրենց իսկական լույսով, ապա առաջին ցանկությունը, որ ևս ունեցա, այն էր, որ դրանք փոխադրեմ ասիական երկրները: Եթե Ասիան պիտի ստանա լուսավորության իսկական լույսը, ասում էի ևս իմ մտքում, ապա այդ բանը ոչ մի այլ միջոցով չէր կարող ամենից լավ և արագ կատարվել, քան դրանց միջոցով: Ե իմ այս կարծիքը, ավելի հաճախ, քան մեկ անգամ, հաստատվել է դրանք իմացողների կողմից: Ո՛վ չի ճանաչում այն երկնային, սիրտ ազնվացնող, հմայիչ ուժը, որ գտնվում է արվեստների մեջ և ո՞ր հողին կարող է ամենից ավելի զգայուն լինել նրանց հանդեպ, եթե ոչ արևելցու կրակոտ, երևակայությամբ հարուստ հողին...³:

... տասը լեզու սովորեցեր, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեր: Մեկ-դատարկ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ: Բաս շե՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր դրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ: Ի՛նչ կուզե ֆրանցուզերեն, նեմեցերեն գիտենանք, մենք չենք կարող էնպես բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենա, շունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մե՛րն՝ ուրիշ. մեկ էլ որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ո՛չ թիվ կա, ո՛չ

հեսար: Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարինք... Բաս ձեր սիրտը շի՞ ուզիլ, որ դո՛ւք էլ ոտանավոր գրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, որ այլազգք իմանան, թե մեր միջումն էլ ա էլել երեւելի գրող, ու մեր լեզուն դ՛հա ավելի սիրե՞ն...⁴:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Համառոտ ակնարկ հայերի մասին» ուսումնասիրությունից, բնագիրը հոթատառ գերմաներէն է, ամենայն հավանականութեամբ, գրված 1834-ին, Դորպատում (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 38):

2 «Դորպատյան օրագրերից», 1830—1835 (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, 1955, էջ 44):

3 Վ. Ա. Ժուկովսկուն գրած նամակից, 1835, հունվար, բնագիրը գերմաներէն է (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1961, էջ 166—167):

4 «Վերք Հայաստանի», Երևան, 1981, էջ 126, 128:

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ*
(1803—1858)

...Այժմ... ե՛կ նկատեսցուք, բարեկա՛մ, թէ՛ զի՞նչ ինչ Ազգեն յարդ աղքատ և յամենայնի կարօտաւոր հանգամանս նորա, մարթիցէ ի կիր արկանել իբրև զմիջոց կամ գործի և ևս պայծառացուցման նորա: Եթէ Ազգ մեր ո՛չ կարօտիր փոխ առնուլ յօտարաց՝ ասեմ, ի լուսաւորեալ և սքանչելի աղանցն արևմտականաց առ ի զիրսն հասուցանել աստիճանաւ ի շարս նոցա, այն ինչ նոյն արևմտականք իսկ կարօտ համարեն զինքեանս միմեանց սատարութեան, և փոփոխակի օրինակեն միմեանց. ուրեմն ամենապայծառ և ամենաբարեբախտ գրիւր յազինս մարդկան Ազգ Արամեանս, և ամենեջևան գուն գործէին զմեզ օրինակել: Եթե Անգղիացիք և Գաղղիացիք՝ ալդ երկու պայծառագոյն ազգք ի մէջ արդի Եւրոպականց, ո՛չ էին խոնարհեալ մինչ ի մանկութեան գրականութեան և արհեստից իւրանց՝ մուրանալ ի դրունս Հռովմայեցւոց և Յունաց, այլ շատացեալ իւրայնուք կամ «ամփոփեալ» զամենայն գիտութիւնս և գործս իւրեանց յազգ և յազգայինս՝ ոչ հասանէին աուրս գերազանցել իսկ քան զնոսա քան զղաստիարակիչս իւրեանց, և յամենայն ծագս աշխարհ հռչակիլ իբրև մարդիկ գերմարդկայինք: Ո՛չ, ո՛չ. թէպէտև բարի իցեն դիտմունք այդպիսի քարոզչաց, այլ ի հաւանեցուցանել զիս յարդինսն ելից, ապստամբին միտքս՝ որպես և բազմաց ունին:

Մեք շեմք այլադենք, փա՛ռք Աստուծոյ, ընդ լուսաւորեալ ազգաց և այլադենք անգամ երևին զարդիս ի ջանս շուելոյ

* Մ. Թաղիադյանը թարգմանություններ է կատարել Բայրոնի, ռուս գեկաբրիստ Պ. Ի. Պետեւի, Հ. Գրովտիոսի, Սաադիի բանաստեղծություններից: Սանսկրիտ բնագրից թարգմանել է «Գիտուն և արքայք ոչ ևս են հաւասար» բանաստեղծությունը և այլ գործեր, որոնք XIX դարի 40-ական թվականներին տպագրվել են «Ազգասէր» պարբերականում (Կալկաթա):

գհետ նոցա,— յորմէ ձախողապէս տիրեալ նախապաշարմանց
դմտօք մերովք՝ խոշընդոտ լինիւր ըստ ժանտ բնութեան իւրում
միշտ՝ յընթացս ո՛ր և իցէ յառաջադիմութեան: Քրիստոնեայ
եմք ըստ նոցա, և շիցէ՞ մեզ անվայել՝ զլալն ընտրել և զբարին
լեղբարանց մերոց, յօգուտ անձանց: Թերևս մեք բախտաւորա-
գույն համարիցիմք, այն ինչ ի ձեռս մեր է յաջողակութիւն
իբրև հետևողք կամ օրինակողք՝ ընտրողութեամբ վարիլ, այն
է՞ զբարի և վայելուչսն նոցա ընդունելով՝ զխոտանն արհա-
մարհել, խորշել ի մէնջ: Այլ ո՞ր քաղաքավարութիւն, ո՞ր
բարք, ո՞ր օրէնք, ո՞ր գրականութիւն, ո՞ր արհեստ ըստ բուն
և բարոյական գօրութեան բառիցդ,— քան զպատկանելսն ի
վեր յիշատակեալ գերահռչակ երկուց ազանցդ՝ կարէ Ազգ մեր
առնուլ ինքեան գաղափար, որով մա՛րթ իցէ նմա յուսալ
պայծառանալոյ, ա՛յլ, և երջանկանալոյ, և գուցէ ևս երբեմն
շարժելոյ յանձանց զայս լուծ գերութեան, փոխելոյ զայս վի-
ճակ նուաստութեան, եթէ նախանձախնդիր և եռանդուն ջա-
նիւք մատուցի ի գործածութիւն այնոցիկ: Զայս ասելով, ո՛չ
կամիմ՝ եթէ պարտիմք լքանել իսպառ զազգայինսն, և միան-
գամայն օտարանմանիլ, այլ ընդ հակառակն՝ որ ինչ ընտիրն
է ի մեզ և սեփհական առաքինութիւն Ազգի՝ թո՛ղ զառաջին
տեղի ունիցին ի սիրտս մեր և գործ, և զնոցունց խօսել և ճա-
ռել միշտ արժա՛ն է, ոչ միայն վասն հասարակաց մեր ժանօ-
թութեան, այլ և առ ի արծարծել ի մեզ զսէր և զեռանդն ազ-
գասիրութեան և հայրենասիրութեան: Սակայն առ ի բարւոք
ճանաչել ըզբարիսն զընտիրսն օտարայնոց և որդեգրել զնոսա,
մանաւանդ և հաւասարիլ (ջանիւք և համբերութեամբ), նոցին
ուսմանց և գիտութեանց, որոնց՝ շիք և ի մէջ ոք՝ հաւատամ,
ժխտիչ գերազանցութեան և հարազատութեան: Այլ որո՞վ եղա-
նակու մարթ է մեզ կատարել՝ քան թարգմանութեամբ պա-
տուական մատենից նոցա՝ թէ արհեստականց, թէ քաղաքա-
կանաց կամ պատմականաց, և թէ՞ մանաւանդ որում շատ
կարօտիմք— բանաստեղծականաց (բայց կրկին ասեմ ընտրո-
ղութեամբ). յորոց երիւք առաջնեօքն զօգուտ ընդհանրական
քաղել՝ յաւէտ առ առնուն և պայծառութիւն, և վերջնաւն զշահ
անհատական յաւետ առ բարոյականութիւն և երջանկութիւն:
Եւ ըստ որում, մեք այսքան զուրկ ու թափուր գտանիմք ի
քերթողականէն՝ որ նկարէ զաշխարհ և զմարդիկ, և որոց

զսովորութիւն, բարս և բնաւորութիւնս ուրոյն, զչարսն ի նոցանէ երևցուցանելով իբրև զհրեշ անլանդակ՝ զդուելի, զարհուրելի և խորշելի, իսկ ըզբարիսն՝ իբրև զհրեշտակ գեղեցիկ՝ ցանկալի, նախանձելի և հրապուրիչ, որոյ վասն կարի հարկաւոր է մեզ նախ փոխ առնուլ առ ժամանակ ինչ յորոց ունինն, առ ի դաստիարակիչ լինել մեզ ի նոյն արհեստ, և եկեսցէ ապա ժամանակ յոր յաջողութեամբ բարձրելոյն՝ յետ վճարեսցուք տոկոսիք, իբրև օտարազինք արժան վարկցեն պարապոյ, և դմերսն յեղուլ ի լեզու իւրեանց:

Ասիցե՞ս թէ գիտունքն ի մէնջ, յորոց կախի յառաջադիմութիւն ամենայն՝ քաջ հմուտ գոլով օտարազանդ լեզուաց, ընդէ՞ր ոչ ուսցին ի բուն քերթուածոց նոցա՝ զաշխատանս թարգմանութեան՝ նուիրել հեղինակութեան: Այդ այժմ ըստ կարճ տեսութեան իմոյ (յորում կարծիս գուցէ և դու միաբան գտցիս), չէ՛ կարևոր ընդ ամենայն գիտութեամբ և յառաջադիմութեամբ իւրեանց ցայս աստիճան (և այդ՝ շաղղատութեամբ չէ՛ նուազ կամ անշուք): Չկարծեմ ներկայ հասեալ իցէ Ազգ մեր ի շափ բաւականին ընդունակութեան վասն այդմիկ: Չերկբայիմ թէ ոգիք յամենայն ազգ և ազինս գտանին, քանզի բնութիւն՝ ըստ համեմատ հանգամանաց ազգի և կլիմայի բաւականին առատաբաշխ է ի ձիրս իւր առ մարդիկ՝ յամենայն ուրեք. սակայն միայն այն չէ՛. զի հոգ և գետին լիցին բերրի, ան մշակութեան պէտք են: Զի յո՞ր ճեմարանի, ո՞ր լուցկեօք մաշտենից կարէին վառել և վարժել զոգիս իւրեանց՝ Բայքն ոմն կամ սբբ Վալտր Ակոտ ոմն՝ ի մերս աշխարհի, այո՛, և յԱսիա ըզրուցն: Սմին իրի՛ թուի ինձ եթէ յաւէտ առ արդիւնս քան թէ յանուն նկատեսցեն՝ թարգմանութիւնք յարդի մանկական մակացութեան մերոյ, պարտի ի վեր քան զամենայն քաջալերիլ և գործել: Վտանգաւոր է ըստ իմ խոնարհ դատմանց՝ հեղինակութիւն, որ չև իցէ ի կատարեալ աստիճանի, զի պտուղք քաղեալ անտի՛ հետեապէս տհաս եղիցին, և շկարժե՞ս ամենայն պտուղ տհաս վնասելոց և զճաշակողն: Տե՛ս դու ի գիտնականսն մեր որ ի Վէնէտիկ, հազիւ տակաւին համարձակեցան ի հեղինակութիւն: Աշխատանք նոցա ցարդ գլխաւորապէս թարգմանութիւն են, և իրան խոհականք են դիտմունք նոցա. բայց և յուսամ ո՛չ անյայտ առ յապայսն հեղինակութեան: Այլ ըստ որում կոչումն նոցա ո՛չ թույլ տացէ յաշխարհայինս

երբէք մատչելի ի ստեղծաբանութիւն (և այս, հաւատամ, յաւէտ ծագի ի նախապաշարեալ կրօնէ պապականին), ուստի չպարտիմք յայդ ճանապարհ ականել վասն զբօսացուցիչ և ուսումնական քերթուածոց: Այլ եթէ կամիմք զայդ կարևոր և պատուական դիտութիւն և զայդ ճրագ ամենայն ազնուութեանց մարդկային զգացութեանց և ոգոց՝ բուսուցանել և ի մէջ մեր, նախ (ներեացեն նմանութեան) թո՛ղ խոնարեցիմք ի մէջնուրիւն. ապա՝ բարձրացուք ի Մարդուրիւն: Սովին վարութ՝ թէև շերեւցին գործք մեր ի սկզբան գլխովին ի ձորձ ազգայնոց, այլ մի՞թէ մեզք իցեն քեզ ծառայել օտարին, ուստի ակնունիս բազում արգեաց. որով կարես երջանիկ պահել զընտանիս քո, քան ժլատի ուրուք թէպէտև համազգի: Լա՛ւ է սիրել զԱյդ, քան զազգային:

Նշմարեմք զսիրելին ընդ հեռաւոր գլուխ ուղւոյն դէպ ի նոյն նպատակ ազգային յառաջադիմութեան նկրտիլ. և յոյս մեր լի է անմահութեամբ թէ իրար հանդիպեսցուք ի վերջակէտ նպատակին:

Զանազանութիւն միայն է, զի մեր ընտրեցաք մեր զուղին հարթ՝ ախորժ զբօսանօք ի ծանօթից յանծանօթս վերանալ, իսկ նա՝ յանծանօթից ի ծանօթս իջանել: Մեզ յօժարութիւն եղև օրինակոք քաջի գործոց նախահարց մերոց ընդաբոյս ազնուութիւն իմն սերմանել ի միտս ազգին, և ապա թողուլ նմա ինքնին յորդորիլ ի հաւասարութիւն անգր, եթէ չգերազանցիցէ ևս, քան հրաշալեօք օտարաց շլացուցանել զաշս մերոցն: Զոր ինչ Բայրն ոմն և սըր Վալտր Սկոտ ոմն կարեն ազդել Հայոց, նոյնչափ գոնէ՝ կարեն ազդել Սահակ Պարթև և Մեսրովբ: Թէպէտև բարին յամենայն ուրեք համբուրելի համարիմք, զբարին առնելն է գործ: Արա՛, թէ սմա՝ և թէ նմա հետևելով: Մինչ Բայրն և Սկոտ ոչ հայանայցեն՝ Հայոց օրինակ ո՛չ կարեն լինել. մեծ՝ որքան և իցեն. ուրեմն զի՞նչ ըստգիւտ, եթէ օրինակ տացուք նոցա ո՛չ միայն զարս ծանոթս՝ այլ նաև զՀարս գթածս ազգին՝ ասէ հին աւուրց բարեկամն¹:

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Թարգմանութեան մասին», 1847 («Գրական ժառանգութիւն», Գիրք 9, Մ. Թաղիաղյան, Ուղեգրութիւններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 323, 325):

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ*

(1812—1879)

... Հայերը IV և V դարու մեջ դիմում էին դեպի այն օթեւ-վանքը գիտութեան, ինչպես և XV—XVI դարում գերմանացիք դեպի համալսարանքը Իտալիայի... Այսպես կարող էին առաջանալ Հայաստանի մեջ նոր դպրոցներ և այսպես առաջացավ այն մեծ դպրոցը թարգմանիչ մարդերի: Սահակ Պարթևացին, Ներսես Մեծի աշակերտը, մի հոյակապ կաթողիկոս՝ V դարու սկզբումը, գիտութեամբ և իմաստութեամբ մեծ տղամարդ ամենայն կերպով առաջադեմ կացուց Հայերի կրթութեանը, և Մեսրոպ Մաշտոցը դարձ դնելով յուր նորագոյտ նշանագիրքը, հիմք ու արմատ տուց այդ կրթութեանը, և ասորի ու հույն գիտութեանը Հայերի մեջ կերպարանեց որպես ազգային հարադատութեան: Մեք տեսնում ենք այս իրողութեանքը սուրբ Մեսրոպի վարքագրութեանից, որ թողել է մեզ նորա աշակերտ Կորյուն Սքանչելին, նկարագրելով այն առանձին, թարգմանութեամբ առաջացած ուսումնական կյանքը Հայաստանի... Սահակ Պարթևացին և Մեսրոպը ձեռնարկեցին թարգմանութեանների և սեփական դրվածների... Սուրբ Սահակի և Մեսրոպի ձեռքի տակից անաջացան այն մարդիկը, որ գիտութեան պիս-պիս հանդեսների մեջ երևելի են կացուցանել յուրյանց անձը որպես թարգմանիչք և որպես ինքնորեն մատենագիրք, և այդպես ժառանգել են սուրբ թարգմանիչների անուն. դոցա թիվը եղել է ավելի քան 40. Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Եղնիկ Կողբացի, Խոսրովիկ, Մամբրե Վերծանող,

* Ստ. Նազարյանը թարգմանութեաններ է կատարել Շիլլերի, Լերմոնտովի, Լեսսինգի, Կալդերոնի, Հոֆմանի, Ալֆիերիի, Բերնարդեն դը Սեն Պիեռի, Բոքլի, Կիկերոնի, Բոնսարի, Սաադիի և այլ գրողների ստեղծագործութեաններից:

Ծղիշե Ամատունեաց եպիսկոպոս, Հովսեփ և Ղևոնդ եղբարք, Կորյուն Սքանչելի և այլն: Այս թարգմանիչքը դարձան նույնպես հայկական մատենագրութեան ընտիր հեղինակները. նոցա թարգմանութիւնքը, զոր օրինակ Աստվածաշունչ գրքի, յուրյանց մաքուր և անսեթեթ ոգով փառավորվում են մինչև այսօր որպէս ընտիր գաղափարք հնախոս հայկաբանութեան... սրբազան նյութը, որ մշակում են մեր թարգմանիչքը, առաջացուցել է նույնպէս մի համարձակ, ազատ և գեղեցիկ լեզու: Նույն պատճառքը առաջացուցել են նույն ներգործութիւնքը և մյուս ազգերի մատենագրութեան մեջ, զոր օրինակ գերմանական ազգի:

Առաջին գիրքը, որ հունական լեզվից թարգմանվել է դեպի հայ բարբառ, միտ դնելով ժամանակի որպիսութեանը և ժողովրդի անմիջական կարոտութեանը, պետք է լիներ աստվածաշունչ մատչանք: Ղազար Փարպեցու մեծակշիռ պատմագրութեան մեջ կարողում ենք ահա, որ երանելի տղամարդ Մաշտոց Տարոնացին, հայկական տառերի գլուտից առաջ, նվիրում է մի երկար ժամանակյա մտածութիւն ազգի պիտույքներին, և օր ու գիշեր տրտում է նորա հոգին, տեսանելի չափ Հայաստանի աշխարհի մանուկների շարշարանքը, որ մեծ ծախքով և հեռագնաց ճանապարհորդութեամբ և երկարատև ժամանակով մաշում էին յուրյանց օրերը ասորի գիտութեան դպրոցների մեջ. պատճառ, Հայոց քրիստոնեութեան առաջին դարումը, եկեղեցական ժամերգութիւնքը և սուրբ գրքի ընթերցուածքը, վանքերի և եկեղեցիների մեջ կատարվում էին ասորի լեզվով, և ժողովուրդը կարող չէր ոչինչ հասկանալ և օգուտ քաղել այդպիսի օտարախոս կրոնապաշտութիւնից...

Այսպէս ահա վերահաս եղան թե՛ ժողովուրդը և թե՛ նորա ուսուցիչքը, որ հարկավոր էր Հայոց քրիստոնեական դաստիարակութեան համար նախևառաջ թարգմանել աստվածաշունչ գիրքը հույն լեզվից դեպի հայ բարբառ... Մեծիմաստ, քաջ հունագետ Սահակ Մեծը կամավոր հոժարութեամբ տալով յուր անձը այդ գործին, օր ու գիշեր անվեհեր ջանալով, թարգմանում է Կտակարանքը... Այս մեծ հոգևոր վաստակը, որ Ղազար Փարպեցին ընծայում է Սահակ Պարթևացուն, Մովսէս Խորենացու պատմութեան մեջ (գիրք 3, էջ 498), ընծայվում է Մեսրոպ Մաշտոցին և նորա աշակերտ Յոհան Եկեղե-

ցայիսին և Հովսեփ Պաղնացուն... Աստվածաշնչի թարգմանությունը որի՛ վաստակն է ստուգությամբ՝ Սահակ Մեծի, թե Մեսրոպ Տարոնացու, ուրեմն չգիտենք ինքեանք Հայք և պիտո է դորան սեփականին, որպես ընդհանուր պարծանք յուրյանց «սուրբ թարգմանիչը» անունով հայտնի մարդերին: Մեր կարծիքն այսպես է, որ Հայոց Աստվածաշունչ գրքի թարգմանությունը մի մարդու աշխատության վաստակ չէ. այս խոսքը կարելի է ապացուցանել ոճի անհավասարությամբ՝ Աստվածաշունչ գրքի զանազան հատվածների մեջ, բայց թե որը որ հեղինակին է պատկանում, դժվար է վճռել այդ բանը, մինչև եղած չէ գիտնապես հիմնավոր քննություն և համեմատություն: Հայոց աստվածաշնչի թարգմանությունը լրանում է 410 թ. Քրիստոսից հետո, Վոսմշապուհ թագավորի օրերում և է՛ մինը ամենահին թարգմանություններից, զկնի ասորի թարգմանությունը, որին ասում են փեշիտո: Իտտողությամբ այն հայագետ Եվրոպացուց, որ փոքրիշատե ժանոթացել են մեր աստվածաշունչ գրքերի թարգմանությանը, համարվում է սա «հավատարիմ ավանդ, հայկական լեզվի մեջ թագուցած, այլև թագուհին բոլոր թարգմանությունների», և արդարև, ոչ մի լեզու այնպիսի խորին հավատարմությամբ կարողացել չէ առնույ յս: ր վերա 70 թարգմանիչների հելլենախոս Հին կտակարանի և ավելի նոր հունախոս նոր կտակարանի կնիքը, ինչպես հայկականը: Նյութը լինելով նուրբ և զգուշալի, հայոց թարգմանիչը ամենայն կարելի ճշտությամբ փոխադրել են հունական պաղափարը, բառաբառ թարգմանելով ամենայն բան, այնպես որ առանց հունական լեզվի գիտության անհնարին է կատարելապես հասկանալ Հայոց աստվածաշունչը. հիրավի, շատ օտար ոճեր այդ գրքի մեջ հանապազօրյա սովորությամբ ընտելացել ու հեշտացել են թե՛ հայ ժողովրդին և թե՛ հայագետ ուսումնականին, բայց զոցա աղբյուրը,— իմացած թե չիմացած,— մնում է միշտ հելլենականը, և հելլենացած սսիամիտ հրեականը:

... Երբ որ նորահաստատ եկեղեցու անմիջապես հարկավոր պիտոյքը լցուցած էին Աստվածաշունչ գրքի թարգմանությամբ, այնուհետև մեր սուրբ թարգմանիչը դարձուցանում են յուրյանց ուշադրությունը հունական եկեղեցու Հարց գրքվածների վերա և փոխադրում են դոցա մեծ մասը դեպի հայ

բան: Հայոց հոգևոր մատենագրութիւնը ճոխանում է, թարգմանելով գրվածքը Աթանասի Ալեքսանդրացու, Բարսեղի Մեծի, Հովհաննու Ոսկեբերանի, Կյուրղի Երուսաղեմացու, Դիոնիսիոսի Ալեքսանդրացու, Եպիփանոսի, Եփրեմի Ասորու, Եվագրոսի Պոնտացու, Եվսեբիոսի Կեսարացու... և մյուսների... Այս հեղինակների գրվածներից ոչ սակավքը անհետացած լինելով հունական բնագրի մեջ, հայերեն թարգմանութեամբ պահպան են մինչև այսօր, և այս պատճառով այդ հայկական թարգմանութիւնքը ստանում են առաջին հարգ և արժանավորութիւն:

... Հայոց գիտնական և իմաստախնդիր վարդապետքը հինգերորդ դարու, բացի եկեղեցական Հարց գրվածներից դարձուցանել են յուրյանց հայացքը և հեթանոս Հունաստանի ակաւնավոր մատենագրութեան վերա և շատ բաներ թարգմանել են դորանից, թե այս և թե հետագա դարերի մեջ: Հայկական եկեղեցու շրջանկատ հարքը թե հունաց և թե լատինական իմաստուն հարց պես, արհամարհել չեն մեծամիտ տգիտութեամբ բան ուսանել հեթանոս դարերի փիլիսոփաներից, պատմաբաններից, բնագետներից, ուսումնականներից, այլև բանաստեղծներից: Որպես հաղթող վկա մեր ասածներին, կանգնած են սչունների պես հայերեն թարգմանութիւնքը այդպիսի հեթանոսական վաստակների. այդ հաստատուն սյուները, որպես արձագանք հայկական ուսումնասիրութեան, անցած գնացած օրերի հոգևոր դասու մեջ, առաջ բերենք այստեղ որպես նույնքան արձանք ամոթու և նախատինքի մեր այժմյան օրերի հոգևոր դասի համար: Թող հեռու մնան այստեղ վենետիկյան աշխատասեր արեղայքը...

Հոմերոսի տաղերգութիւնքը լինելով այնքան հռչակավոր Հունաստանի մեջ և այնքան գործածական որպես ազգային դաստիարակութեան նյութ, ինչպես հայտնի է բանագետներին, գովասանվում են մեր հայոց մատենագրութեան մեջ «Հոմերական տաղեր», «Հոմերական հագներգութիւնք» անունով, և տարակույս չկա, որ նոքա հույն բնագրից թարգմանվել են դեպի հայ բարբառ, բայց չեն հասել մեր ձեռքը ժամանակների անիրավութեամբ. մեր նախահարքը անպատճառ պիտոյ է հայերեն կարդացած լինեին Հոմերոսի տաղերգութիւնքը. վասն զի, թող այն երեք տող նշխարը, որ մնացել է հայոց

մեջ Հոմերոսի Իլիականից... կա և մի հայկական բառարան, որի մեջ մեկնաբանվում են Հոմերոսի տաղերգություններին մեջ եղած դժվար հասկանալի բառերը, որոնց թիվը հասնում է մոտ 2000. այդ բառարանը մինչև այսօր պահվում է փարիզյան գրչագիր մատյանների գրանոցում... Ուրեմն, եթե կա մի բառագիրք, ուր հայերեն մեկնաբանվում են դժվար հասկանալի խոսքեր, որ գործ էին ածված Հոմերոսի թարգմանության մեջ, ապա պետք էր ոչ Հոմերոսի տաղերգությունները հնում թարգմանված լինեին, այլապես խորհուրդ չունի մի հավաքածու հոմերոսյան բառերի Հայոց լեզվով...

Մովսես Խորենացու «Պիտոլից» գրքի մեջ ցանուցիր հանդիպում են մեզ զանազան նշխարք հունաց ականավոր մատենագիրներից, այլև հատուկտոր բաներ այնպիսի գրվածներից, որ կորած են, զորօրինակ Եվրիպիդեսի ողբերգություններից, որ ունի այսպիսի մակագրություն՝ «Պելիասեանք»...

Ոմանք եվրոպացի քննիչք կամեցած են այս բանից եզրակացնել, որպես թե Եվրիպիդեսի «Պելիասեանք» անունով ողբերգությունը պիտու է բոլորամասն կերպով հայերեն թարգմանված լինի, ուստի Մովսես Խորենացին առաջ է բերում այն հատվածը, բայց, մեր կարծիքով, այդ մի թույլ ապացույց է. պատճառ, հունագետ Մովսես Խորենացին կարող էր դորան առաջ բերել նույնիսկ հելլենական բնագրից հայերեն թարգմանությամբ յուր «Պիտոլից» մեջ... Մի կարծիքական պարծանք հարկավոր չէ հայոց մատենագրությանը. դա ունի անտարակույս պարծանքներ:

Պղատոն և Արիստոտելես ականավոր փիլիսոփաների վաստակները գրավել են յուրյանց վերա և առավելապես ուշագրությունը Հայաստանի ուսումնական վարդապետների, և գտել են նույնպես բազմամասնյա մշակություն՝ թե հայերեն թարգմանվելով և թե՛ բացատրվելով. երանելի ժամանակ, որ հայոց ասիական հոգին, մի մաքուր փմաստափրությամբ վառված, կարող էր յուր մեջ օթևան պատրաստել այն, հնության ազգի ականավոր մարդերի մտածություններեն, որ շատ և շատ մասնով եղել է մարդկության ուսուցիչ և վարդապետ. թեպետ հեթանոսության խավար դարերի մեջ... Հայերեն թարգմանությունքը Պղատոնի և Արիստոտելի, ինչպես երևում է, ոչ ամենքը հասել են մեզ, և հասածքը ևս մինչև

այժմ պահվում են վենետիկյան կամ մյուս վանքերի խավար խորշերում, բացի Դավիթ Անհաղթի վաստակներից... ցանկալի է, որ Մխիթարյան աշխատասեր վարդապետքը այդ թարգմանությունքը դեպի լույս հանեին, որ լինելու են ոչ թե միայն պիտանի հայոց ուսումնականին, այլև գտանելու են մեծ շնորհակալություն եվրոպական հունագետ գիտնավորներից...

Ամենայն նոր մատենագրություն որևիցե ազգի մեջ սկսանվում է թարգմանությամբ և փոխառությամբ՝ ուսման և գիտության մեջ առաջադեմ եղած ազգերի աղբյուրից. քանի որ մի ազգ կամ մի մարդ կարող չէ ինքը մտածել, որովհետև ուսած չէր դեռևս, որովհետև տակավին նեղ ու փակ էր նորա տեսության շրջանակը, այդքան ևս պարտ է նա սնանիլ օտարի մտածությունքով և նայել աշխարհի վերա օտարի հայացքով, այլև մատենագրության մեջ կարող էր միայն կամ թարգմանել կամ թե փոխ առնուլ մյուսներից: Այստեղ հարկավոր էր սեփականել թե՛ օտար գիտությունը և թե՛ այդ գիտության արտաքին ձևավորությունը և կերպարանքը մատենագրության մեջ: Մի շատ բնական երևույթ է, որ այն լեզուն և՛ մատենագրությունը, որոնց ազդեցության տակ դաստիարակվել և կրթվել էր մի ազգ, դրոշմում է յուր կնիքը և այդ ազգի մատենագրության ոճի վերա. ով կարող է, զորօրինակ, ուրանալ ֆրանսիական և գերմանական լեզուների ազդեցությունը ուսաց ազգի մատենագրության թե՛ ներքին պարունակության, և թե՛ արտաքին ձևավորության վերա. քանի ֆրանսիական և գերմանական օտար ոճեր սեփականել է ուսաց լեզուն և զուգախառնելով յուր հարազատ ազգային նյութերի հետ, շինել է յուր հատուկ ճոխություն: Հայոց հին մատենագրությունը առաջացել է IV—V դարերում, Հայք, ստանալով յուրյանց կրթությունը կամ ասորի և կամ թե մանավանդ հունական դպրոցների մեջ, և այդպես ասորի և բյուզանդիոն մատենագիրքը եղած են միշտ օրինակ և առաջնորդ մեր հայերի համար մատենագրության ասպարեզի մեջ...

Հայերը ընտիր թարգմանությունների մեջ մշակելով յուրյանց լեզվի լոգիկական ձևերը, տալով նորան հաստատուն օրենք և կանոններ, այլև ճոխացնելով յուրյանց հոգին բազմամասնյա գաղափարներով, սկսում են նվիրել յուրյանց անձը

ազգային պատմագրութեան, ընդհանուր փիլիսոփայութեան և հոգևոր մատենագրութեան. բանաստեղծութեանը, այս զմայլեցուցիչ դուստրը քաղաքական աղատութեան, այս ծաղիկը, որ կարող է միայն գոյանալ ազատութեան հողի վերա, շունենալով յուր հարկավոր պայմանքը, ստանում է հայերի մեջ մի այլ միայնական ուղղութեան. քրիստոնյա Հայաստանի բանաստեղծները այլազգիների ծառայութեան լծի տակ դարձել են միայն եկեղեցական տաղերգութեան, միակ հանդեսը, որ բանաստեղծը կարող էր թռիչք առնուլ և սուրբ հոգեզմայլութեան մեջ զարկել սրտի քնարի լարերը, մեծացուցանելով Քրիստոսյան եկեղեցու նահատակները...

Արդարև, եղել է մի ժամանակ Հայոց պատմութեան մեջ, որ հայկական եկեղեցու պաշտոնայքը, ամենեկին անման յուրյանց այժմուս ժառանգավորներին, հասկանալով յուրյանց սուրբ և բարձր կոչումը, դարձել են նույնպես ազգային լուսավորութեան պարագլուխք, թարգմանիչք, մատենագիրք, ուսուցիչք և հովիվք փողովրդի: Կտեսնենք, որ Հայոց եկեղեցու նախահարքը հեշտութեամբ շեն վաստակել յուրյանց ականավոր վաստակները ազգի համար, այլ հազարավոր նեղութուններ տանելով, հեռավոր ճանապարհորդութունք, դառն գրկանք պանդխտութեան և օտարութեան մեջ հանձն առնելով, այժ, և յուրյանց հայրենի աշխարհի մեջ ևս չլինելով ազատ տմարդի հալածանքներից: Կտեսանենք, որ մեր երանելի հոգեվոր նախահարց մեջ եղել է մի ա՛յլ հոգի, մի ա՛յլ սիրտ, իմաստախնդրութեան և ուսումնասիրութեան...

Ո՛վ այն բարեհիշատակ դարուն, որի մեջ ծաղկել են մեր երանելի թարգմանիչքը, այդ օրհնյալ հոգիքը շատ անգամ մոռացել են յուրյանց մարմնական կարիքը, ուսանելու և մըտածելու համար. սուրբ և առաքինի միամտութեամբ դիմել են նոքա օտար ազգերի տուն, հավաքելու նոցա մեջ իմաստութեան ծաղիկները, որ դոցանով զարդարեն Հայաստանի շքավոր անդաստանը: Ով կարող է առանց քաղցր հիշատակի արտասուքի մտաբերել այն անօրինակ աշխատութեանքը, որոնց ենթարկել են նոքա յուրյանց անձը, ոչ թե ուսանելով, այլ սովատանջ կլանելով ուսումը հունական դպրոցների մեջ: Այն տխուր, դժոխային ֆանատիկոսութեան թունավոր վիշապը,

որ մեր օրերում ապականելով հոգևոր մարդերի սիրտը և հոգին, թույլ չէ տալիս մոտենալ եվրոպական ազգերի լուսավորությանը. դեռևս չէր բարձրացուցել յուր գլուխը... Մեր դարու հայոց հոգևորքը փախչում են եվրոպական լուսավորությունից, որպես թե օտար ազգերի ուսումը հերձվածողական էր, մնասական ազգին և եկեղեցուն: Մի՞թե այդպես են ընթացել մեր սուրբ թարգմանիչքը, այն հոյակապ մարդիկը հայոց ազգի և եկեղեցու, որ երբեք հասանելու չէին յուրյանց մեծության աստիճանին, եթե կերտված չլինեին: օտար հունական ուսմանը. և ինչպե՞ս կարող էին նոքա առանց ուսանելու, լուսավորության հիմնադիրք դառնալ: Ամենայն ոք մեր բանագետ հայերից գիտե, թե հայոց հին մատենագրությունը յուր առավել ընտիր գործերը թարգմանությամբ միայն հունական լեզվից առաջացուցել է, որով և դարձել է մեր հին հայկաբանության գանձը... Նոքա յուրյանց վաստակը արդարությամբ կատարել են և հանձնել են մեզ մի սուրբ կտակով, որ և մե՞ք շահեցնելով այդ մեծակշիռ քանքարը, բազմապատկությամբ հանձնեինք մեր զավակներին... Թող ամենայն բարեմիտ հայ վեր առնու մի քար և հագցնե ազգային շինվածքի վերա. այնուհետև այդ շինվածքը առաջ կերթա. կբարձրանա և կդառնա մի օր մի հոյակապ տաճար հայկական պարծանքի...¹:

... Մեր երանելի հայկական սուրբ թարգմանիչների հրաշալի վաստակը, որ այժմուս հողի տակ թաղված է հայ քրիստոնեի համար, ըստ որում, նա կարող չէ հասկանալ նորան... նախ կենդանություն կստանար մեր ժողովրդի մեջ, երկրորդ, կլինեին մեր բոլոր լուսավորության հաստարմատ և հավիտյան անդրդվելի հիմք: Եվ ինչպես մի ժամանակ աստվածաշնչի թարգմանությամբ հունական գաղափարից, հաստատվել է մեր հայազգի նախահարց մատենագրական լեզուն, նույնպես այժմ թարգմանությամբ հին հայկականից դեպի նորը, կստանա աշխարհաբառը մի ամուր և պինդ մատենագրական հաստատություն. պատճառ, որ ժողովուրդը գիշեր ցերեկ

ուսանելով այդ գիրքը որպես յուր սուրբ կրոնի աղբյուր և առաջնորդ, ամենևին կընտելանա և մի մաքուր նոր հայախոսության, և այդ լայն հիմքի վերա կարելի է այնուհետև կառուցանել մյուս շինվածքը նոր հայկական մատենագրության, ինչպես մի ժամանակ հին մատենագրության շինվածքը առաջացավ աստվածաշնչից հայկական թարգմանության վերա...²:

... Մեր թարգմանիչքը չեն եղած մեր լեզվի սկզբնական ճարտարապետքը, այլ միայն կատարելագործել են յուրյանց ազգից ժառանգած լեզուն. նոքա գործ են կատարել, ինչպես պիտո էր ամենայն հեղինակի գործ կատարել. այսինքն լեզվի սեփական նյութը առել են ժողովրդից և ղուգած ու զարդարած ետ են տվել նորան ժողովրդին: Այսպես ենք հասկանում մեք մեր թարգմանիչների վաստակքը...

Եվ մեր հայոց գեղեցիկ աշխարհաբառ լեզուն պիտո է յուր փոքր ի շատե անարատ դրության մեջ առաջ գնա, մի յոքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերա, օր ավուր լցուցանելով յուր պակասությունքը հին լեզվի ճոխ դանձարանից...³:

... Այժմ դարձուցանենք մեր ուշադրությունը «Թափառական Հրեա» գրքի վերա, որ հայկական զգեստով հանդես է հանել պ. Նալբանդյանը:

...Թարգմանիչը սկսանում է յուր գործը մի շատ գեղեցիկ առաջաբանով, որ արժանի է մեր ազգի բոլոր ուշադրության:

... Նալբանդյանցի և այլ բարեմիտ ազգասերների խորհուրդը այն չէ, որ այժմյան Հայք մոռացության տալին յուրյանց հնության հիշատակքը... Ոչ ոք բարեմիտ ազգասերներից երբեք ուրացած չէ հայկական հնության վաստակքը և պարծանքը... մի՞թե սիրելով յուր ազգի հնությունքը, յուր հին հեղինակների գրվածքը, պիտոյ է թշնամական և ատեցող աչքով նայել մեր նոր ժամանակների բազմաճյուղ գիտությունների վերա, որ հայոց հանճարի գյուտ չեն, այլ միայն եվրո-

պացոց իմաստունների մտածութեան և հոգու արարչագործութեանը, միթե պիտոյ է մի հայ մարդու այնքան անբանանալ, որ կարողանար ասել.— չէ, Մեզ, հայերիս հարկավոր չեն այդպիսի օտար եւլրոպական հոգու վաստակքը, մեզ բավական են մեր հին հեղինակների գործերը. ահա մեզ մեր Մովսէս խորենացին, մեր քաղցրախոս Եղիշեն, մեր հոնտոր Ղազար Փարպեցին, մեր հոգեպայծառ Շարակնոցը և այլն, և այլն, դոցանից ավելի բան հարկավոր չէ մեզ. ասել է, ինչ որ մեր ազգայինը չէ, անպիտան է մեր համար և անընդունելի. ասել է, պիտոյ էր մեզ համառ և կամակոր Չինեացու պես մնալ միևնույն աստիճանի վերա, որին հասած էին մեր նախահարքը հարյուրավոր դարերով առաջ...

...Ի՞նչ օգուտ մեր ազգին ֆրանսիական, գերմանական կամ ռուսական լեզվով թարգմանութեանը մեր հայոց հին հեղինակների. եթե կամին հայք այդ առանձին ճշուղը դպրութեան մշակել, տալ հայոց ազգին յուր ազգի պատմութեանը, թող ապա յուրյանց մեջ ընկերութեան կազմեն, յուրյանց հին հեղինակների գործքը աշխարհաբառ կերպարանքով տարածելու հայոց մեջ, ինչպես մինչև այժմ ամենայն լուսավոր ազգեր արած են յուրյանց հնութեան մասին: Այս կլիներ մի գործ, արժանի ամենայն գովասանութեան, և ոչ մի մարդ չէր լինելու սորան ընդդէմ: Այժմուս մեռած է հայի համար յուր սիրելի Մովսէս խորենացին, յուր քաղցրախոս Եղիշեն, յուր հոգիացած և հոգևորված Գրիգոր Նարեկացին. թող հայերը կենդանացնեն նորանց յուրյանց հայի համար...³:

...Հայոց թեատրոնական բեմը, կամենալով ընդհանուր դադափարք տալ հային և կրթել նորան այնպես, որ նա հասկանար յուր անձը և մարդկութեանը, որի մի ճշուղը և բաժինը բաղկացնում է և ինքը՝ իբրև մարդկութեան որդի, այդտեղ պիտոյ էր նորան զանազան թեատրոնական գրվածներ եւլրոպական ազգերի մեջ ընտրովի մշակել առանձնապէս և հարմարեցնել հայոց լսողի համար: Շիլլերը և Գյոթեն, այո՛, և Շեքսպիրը կարող էին յուրյանց զանազան դրամատիկական գործերով անդյունաբեր լինել հայոց թեատրոնական բանաստեղծին, միայն թե լինեին Հայոց մեջ այն շնորհալի մար-

դիկը, որ կարողանալին առնել այդ բանը, կամ թե ազգը այս մասին քաջալերություն մատուցաներ բանաստեղծին և վար-
թեցնէր քնած քանքարը...⁵:

Ուսյալ հասարակայնությանը հանձնելով Պարսկաստանի համբավավեր բարոյախոս-բանաստեղծ Սաադիի Գուլեսթանի ուսերեն առաջին թարգմանությունը, ևս շեմ թաքցնում, որ այս պահուս իմ հոգին լեցված է այն հոգեպարար հուզմունքով, որ հատուկ է գիտելիքների մարդի յուրաքանչյուր գործչի, երբ նա կարողանում է յուր ձեռքբերումները... եղբայրաբար կիսել ուրիշների հետ և հոգեկան վայելք պատճառելով մերձավորին, բազմապատկում է յուր ստացած հոգեկան բավարարութիւնը...

Մեր ժամանակներում գիտությունը հետաքրքրվում է բույսերի և երկրի արտադրանքի աշխարհագրական տարածման հարցերով. ինչու՞ հապա պատմությունը շհետևի այն ուղիներին, որոնցով մարդկային մտքի արտադրանքը մի երկրից անցնում է մեկ այլ երկիր: Իրադործե՞նք այդ, կարճառոտ շարադրելով Սաադիի վարդի թփուտի բացահայտման և վերաբնակեցման պատմությունը՝ Եվրոպայի գրական անդաստանում:

XIX դարասկզբից մինչև օրս, Գուլեսթանը բազմիցս թարգմանվել է Արևմտյան Եվրոպայի բոլոր հիմնական լեզուներով. անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն. այդ թարգմանությունների արժանիքները՝ ստեղծագործության ներքին իմաստի և և արևելյան արտաքին գունագեղության հարազատ վերարտադրման առումով, տարբեր են...

Սաադիի Գուլեսթանն արժանի է այն բանին, որպեսզի ամբողջութեամբ վերաբնակեցվի ռուս գրականության անդաստանում: Եթե եվրոպացիք նրան քաղաքացիության իրավունք են տվել իրենց նրբագեղ գրականության մեջ և ըմբռնչվում են պարսիկի հարևանությունը, որը պայծառատես ու իմաստուն դատողություններ է անում մարդու բարոյական կոչման մասին, մի՞թե միայն մենք, ռուսներս, որ այնքան դյուրընկալ ենք բարու և գեղեցիկի նկատմամբ, պետք է հրաժարվենք ականջալուր լինել արևելյան աշխարհի փորձառու

և իմաստուն նեւտորի պատմություններին ու ղրուլցներին...

Սաադին և պարսկական գրականությունը շատ ավելի համակրելի ու հասկանալի են մեզ, քան Արեւմտյան Եվրոպայի շատ երկրների...

Այս բնագավառում իմ համեստ աշխատանքը՝ Գուլեսթանի թարգմանությունը հայրենական լեզվով՝ որը պարսկական գրականությամբ ու լեզվով իմ դբաղումների ու տքնանքի արդյունքն է, թող խրախուսիչ օրինակ դառնա մեր երիտասարդությանը...

...Մի քանի խոսք մեր ուսերեն թարգմանության մասին: Մեր ուժերից վեր էր հնդինական մտքերն արտահայտել Գուլեսթանի նույն շարադրանքի ձևով: Մեր թարգմանությունը հիմնականում արձակ է, որն իր մեջ միավորում է նաև շափածո հատվածներ, որոնք միասին մի ամբողջություն են կազմում: Այս աշխատանքը կատարելիս, մեք մեր առաջ խնդիր էինք դրել հնարավոր հավատարմությամբ և սպառնալիք արտահայտել բնագրի իմաստը, հասարակայնությանը ծանոթացնելով ստեղծագործության բովանդակությանը: Արեւելյան երևակայության պատկերները մեք վերապատմել ենք նույն պատկերներով՝ անյտեղ, որտեղ այդ թույլ էր տալիս բուսերենի ոգին, առանց վիրավորելու նրբանկատ ճաշակը. ուսական լսողության համար չափից ավելի տարօրինակ պատկերները մեք փոխարինել ենք ուսական համազոր պատկերներով, և այն կարծիքին ենք, որ ոչ բոլոր կերպարները, որոնք թույլ են տրվում մի, մանավանդ արևելյան լեզվում, անպայմանորեն կարող են տեղափոխվել մեկ այլ լեզվի անդաստանը: Դա կնշանակեր հավասար պահանջներ ներկայացնել բոլոր լեզուներին, պարտադրել ձևեր, որոնք խորթ են տվյալ լեզվին, մի խոսքով, կամայական վերաբերմունք ցուցաբերել: Եթե գերմաներենն այդ իմաստով, խիստ ունիվերսալ է, կարողանում է հարմարվել ժողովրդական արտահայտությունների բոլոր հնարավոր ձևերին... ապա ուսերենը դեռ չի հասել այդ ունիվերսալությանը, թեև ապագայում նրա կատարելագործման հնարավորությունները՝ ընկալման պատենցիալի առումով, չափազանց ընդարձակ են:

Մեք ցանկացել ենք Սաադիին հնարավորություն տալ գրուցել ուսական շրջապատում, մաքուր ուսերենով, սակայն

ասիական գունագեղությամբ: Միշտ չէ, որ բառացի ենք
թարգմանել, այլ ձգտել ենք այն բանին, որ ըստ հնարավորին,
թողնենք նույն տպավորությունը, ինչ թողնում է բնագիրը:
Մեր թարգմանության համար հիմք են ծառայել... Սաադիի՝
1849 -ին թավրիզում հրատարակված լիակատար երկերը:

Թե որքանով ինքնուրույն է իմ աշխատությունը, ո՛ր աս-
տիճան բարեխղճորեն եմ ես ուսումնասիրել իմ կողմից թարգ-
մանվող հեղինակին, թող դատեն նրանք, ովքեր գիտակ են
պարսկերենին: Նրանց համար անտեղի և անօգուտ են իմ
հավաստիացումները: Սակայն հասարակությանը, որին
անմատչելի է պարսկերենը, շրջ, հետևաբար, իմիճակի չէ
համեմատել իմ աշխատանքը բնագրի հետ, կարող եմ միայն
ասել, որ ես չեմ ջանացել թեթևացնել իմ ինդիրը, այլ տքնա-
ջան ուսումնասիրել եմ պարսկերեն տեքստը, չզլանալով օգ-
տըվել իմ տրամադրության տակ եղած ձեռնարկներից...

Իմ աշխատանքը դրված է գիտության դատաստանի առաջ.
ևս փոքրագիտորեն չեմ հայցում ներողամիտ լինել, այլ սպա-
սում եմ ուղղամիտ, անաչառ քննադատության, որից կշահի
իմ կողմից թարգմանված արևելյան հեղինակի ընկալումը:

Թարգմանիչ⁶

...Հաւանեմ յոյժ երկասիրութեան Աշխատաւորիդ՝ առհա-
սարակ, վասն զի առ օգտակարս և արդիւնաբերս դայն ունիմ
մանւանդ, թէ որոց կամ իցե ունել մատեան առ ձեռն պատ-
րաստ ուսանիլ հայերեն ի հեղինակաց անտի մերոց և ի հայ
թարգմանչաց օտարադգի գրուածոց՝ յորս իբրև պսակ ամե-
նայնի տեսաք ի ձերում մատենի զԻԳ զլուխ Իլիականին Հո-
մերոսի, ուր նկարագրի հանդէս յուղարկաւորութեան Պատ-
րովեայ ըստ հեթանոսական կարգի, և մրցանք հելլենացի
քաջաց և ձիւնթացութեան ասպարիզի՝ վասն որոց նշանակեալ
առ ի յԱքիլեայ այլ և այլ վարձատրութիւնք՝ որպիսիք իւրա-
քանչիւր ոմեք ի նահատակացն արժանի: Զայս ի վաղուց
հետէ ընթերցեալ էր մեր ի յունականն և զթարգմանութիւն
նորին առ ի Ֆոս գերմանացոյ, բայց և ի հայումս գեղեցիկ
և շատ քան զգեղեցիկ կերպարանին երգք դիւցազնական բա-
նաստեղծին հեղենացոյ: Ի լինել իմ պարսպոյ՝ բաղդատեցից

զյոյն հեղինակն ընդ թարգմանչին առ ի գիտակցութեամբ մտաց զիմս հոչակել դատաստան ի վերայ Թօմաճեան անուն թարգմանչին: Հայաբանութիւն և հելլենաբանութիւն շեն ինչ հեռի ի միմեանց, կամ ուղիղ ևս՝ մի և նոյն են. որպէս խօսին հոյնք, խօսին և հայք՝ յամենայնի գովանի կապիկք հելլենացոց՝ որում վկայ են անհակառակելիք՝ ոճ Աստվածաշունչ մատենից առ հայս, բանք Մովսիսի Խորենացոյ, Եղիշէի, և այլոց բազմաց...⁷:

...Գրականությունը ազգային դարձնելու համար սրետք է մշակել նրան աշխարհաբար լեզվով, դրանով միայն գրականությունը կարող է ցանկալի լինել ընթերցողի համար, ծանոթացնելով նրան այն ազգի հետ, որին նա պատկանում է...⁸

...Հայոց լեզուն բավական հարուստ է, միայն թե օտար լեզվի ձայնը պիտո է ուղիղ և պայծառապես ըմբռնել, այնուհետև հեշտ է թարգմանել զայն⁹:

...Որպիսի և լինեին մշակելի նյութքը-իմ հայացքով մեր դարու հայոց մատենագիրը միտ դնելով մեր լեզվի այժմյան խանգարմանը և ամենեին ապականության տգետ և անճաշակ գրողների գրչի տակ, պարտ է խոհականությամբ գործք կատարել, հաստատելով և ընտրելով յուր համար մի կանոն և սիստեմա հայախոսության ժողովրդի հետ, որ լիներ հիմնած ազգային լեզվի հոգու վերա. և ոչ թե լոկ բառացի թարգմանություն թուրքական և ռուսական ոճերի, որպես անխտիր տեսնում ենք մեր «Մշակի» և «Մեղուի» հրատարակությունների մեջ: Մեզ պիտո էր, իբրև ուսած մարդերի, այնպես խոսել մեր ժողովրդի հետ, որ դա ժամանակով իբրև ազնիվ հայկական խոսք, ընդհանուր կանոն և օրենք դառնար ամենեցուն համար, որ կամեին մնալ բանականության և ազնիվ լեզվախոսության շրջանի մեջ. Le style c'est l'homme, ասած է Բյուֆոնը (ոճը դա մարդն ինքն է), և քաջ:... Ինչ-ինչ կատարելագործությունք հայկական խոսքի— իսկերա

հիման հիմն լեզվի— ցանկալի, մանավանդ թե անշուշտ հարկավոր են, եթե կամեին ավելի ճշտություն և համառոտություն տալ հայկական խոսքին. ինչ որ խորթ կթվեր սկզբում, գնալով գնալով կընտելանար, մեք չկամինք նորոգություն, այլ վերահաստատություն մի քանի հին ձևերի, որ պիտանի էին նրա լեզվաշինությանը¹⁰:

...նս ցավելով դարմանում եմ, կամ դարմանալով ցավում եմ, եր դուք մտածում եք ուսերեն և թարգմանում եք ուսերենից ամենևին բառացի, առանց միտ գնելու ուս և հայ լեզվախոսություն մեք եղած մեծ տարբերությունը: Չեմ գուրում զՁեզ այս մասին... Դուք անհավան եք տաճկահայերի սինտաքսիսին, բայց մոռանում եք Ձեր ուսահայ սինտաքսիսը. մինը շար քան զմյուսը... Եվ անբախտության աղբյուրն այն է, որ հայերը Տաճկաստանի մեք մտածում են բուն տաճկերեն, իսկ հայերը Ռուսաստանում բուն ուսերեն, լեզուն դարձել է այդպես մի լոկ ժողովածու հայկական բառերի... առանց հայախոսություն հոգու և ոճի...¹¹:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Հայոց ազգի լուսավորության կամ սուրբ թարգմանիչների դարը» հոդվածից, 1860 (Ստ. Նազարյան, Երկեր, հ. I, Թիֆլիս, 1913, էջ 145—187):

² «Նոր տարու մտածությունք» հոդվածից, 1860 (նույն տեղում, էջ 145—146):

³ «Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածից, 1858 (նույն տեղում, էջ 26, 36):

⁴ Կրիտիկա. «Թափառական հրեա» է. Սյուի պ. Միքայել Նալբանդյանցի աշխատութենով, 1857 գրախոսականից (նույն տեղում, էջ 64):

⁵ «Նկատողությունք, թե ինչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թեատրոն», 1859 (նույն տեղում, էջ 101, 112):

⁶ «Розовый кустарник» Шейха Муслехеддин Саади Ширазского. славный под названием Гулистана, пер. с персидского С. Назарянца, доктора восточной словесности, М., 1857. Предисловие.

⁷ Մ. Էմինին գրած նամակից, 1849: Խոսքը վերաբերում է 1849-ին Մ. Էմինի հրատարակած «Ընտիր հատուածք...» ձեռնարկին (տե՛ս Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1960, էջ 120-ի ծանոթագրութիւնը):

⁸ Խ. Լազարյանին գրած նամակից, 1858 (նույն տեղում, էջ 201):

⁹ Փ. Վարդանյանին գրած նամակից, 1869 (նույն տեղում, էջ 339):

¹⁰ Փ. Վարդանյանին գրած նամակից, 1876 (նույն տեղում, էջ 440—441):

¹¹ Փ. Վարդանյանին գրած նամակից, 1876 (նույն տեղում, էջ 448, 450):

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ*

(1820—1901)

Ճշմարիտ հաճութեամբ և շնորհակալու մտօք ընկալայ երեկ զնոր երկասիրութիւնդ, ղթարգմանութիւն Շարականաց մերոյ ի ռուս լեզու** , զոր թէպէտ ոչ իմանամ՝ առ ի վերայ հասանիլ յառաջաբանիդ և ծանօթութեանդ ինչ, սակայն զի այդպիսուց անխոնջ և քաջ ուսումնասիրի վաստակ է՝ պատուիմ և քաջալերիմ զհեղինակն, յանկուզ զպարծանս դպրութեան մերոց:

Զթարգմանութիւն հանգստեանն Հովհաննու ընկալաք ի ժամանակին, այլ ոչ ծանեաք զառաքողն և այժմ շնորհակալ լինիմ և վասն այնր...¹

...Աւուրբք առաջ ընթերցիալ էի ի Մշակ օրագրի, զի հրատարակել էք զթարգմանութիւն Արիստիդեայ և շատագովել ընդդեմ Ռընանայ***, յոյժ ուրախ եղէ, և մինչ խորհէի խընդրել ի Ձէնչ զգրուածդ, ահա ինքնին առաքիցեք, այլովք հանդերձ, ընդ որ ուրախութեամբ շնորհակալ եմ: Ցաւ է ինձ միայն, զի անգէտ գոլով ռուս բարբառոյ, ոչ օգտիմ ի բանասէր քննութենեցդ, բայց եթէ օժանդակութեամբ որոնց շատ կամ սակաւ ծանօթ իցէ լեզուդ:

* Ղ. Ալիշանը թարգմանություններ է կատարել Բայրոնի, Շիլլերի և ամերիկյան մի շարք բանաստեղծների ստեղծագործություններից:

** Խոսքը վերաբերում է Մկրտիչ էմինի՝ «Шаракан, богослужебные каноны и песни армянской восточной церкви», М., 1879, աշխատությանը:

*** Ակնարկում է Մ. էմինի «Отрывок из апологии Аристиды христианского апологета». աշխատությունը (տե՛ս Переводы и статьи Н. О. Эмина, М., 1897. էջ 249—255), որտեղ էմինը Արիստիդեսի թարգմանության և տեքստի վերծանման հետ կապված մի շարք հարցերի առթիվ բանավիճում է ֆրանսիացի պատմագետ էռնեստ Ռընանի հետ («Գրական ժառանգություն», գիրք 5, Երևան, 1969, էջ 215):

Ռւրախ եղէ և այն, զի գտեալ է միւս ևս օրինակ Արիւտի-
դեայ բանին, ոչ գիտեմ նշանակեալ էք ի թարգմանութենիդ
զթուական կամ զհնութիւն ձեռագրին, յորում գտէք զայդ:

Ոսկեբերանի մեկնութիւն այդր բանի Ծսայեայ գտանի և
ի մեր ճառընտիրս. այլ և զբովանդակ մեկնութիւն ունինք ի
հին թուագիր մատենի ուրեք ուրեք միայն թերի. զանգիւտն
մեծաւ մասամբ առ Յոբս իսկ, զոր տպագրեցաք և ահա
ետին թերթք ընդ մամլով են յորժամ աւարտեսցի խնդամիտ
սրտիւ առաքեսցուք օրինակ մի առ յարգողդ այսպիսեաց բա-
նից և շատագով դպրութեանս մերոյ ի միջի օտարազնեայք,
յորում և մաղթելով բարեկենդանութիւն...²:

... Ծս ոչ միայն հիացած եմ, այլև զարմացած մեր պատ-
միչների թարգմանութեան նկատմամբ Ձեր ցուցաբերած եռան-
դի վրա: Ձեզ անհրաժեշտ էր թարգմանելու համար գտնել մի
նոր շարք՝ մեր կորած պատմիչների շարքը. պատմիչներ, ո-
րոնց կորստի համար մենք այնքան ցավում ենք...³:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Նամակ Մ. էմինին, 1879, ապրիլ («Գրական ժառանգութիւն», գիրք
5, Ղ. Ալիշան, Նամակներ, Երևան, 1969, էջ 59):

² Նամակ Մ. էմինին, 1880, հուլիս (նույն տեղում, էջ 61):

³ Նամակ Մարիյ Բրոսսեին (1802—1880), ոոս պատմարան-արևելա-
բետ, ակադեմիկոս, ազգութեամբ ֆրանսիացի, որը ֆրանսերէն է թարգմա-
նել հայ պատմիչների մի շարք գործեր, գրելով նրանց մասին մեծարժէք
ուսումնասիրութիւններ, 1873, հոկտեմբեր (նույն տեղում, էջ 48):

ԳԱՌՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ*
(1825—1912)

... Հայ դերասանական խումբը անհետաձգելի պետք ունեցավ մի բեմական գրվածքի... և ես մի քանի օրվա ընթացքում ստիպված էի ֆրանսերենից փոխադրել Մուլիերի «Ժորժ Դանդեն» կատակերգությունը՝ Թիֆլիզի բարբառով, որ և ներկայացրին 1878 թ. ... Փոխադրությունս կրում է «Դանդեն Գեվո» վերնագիրը...

Ով որ լավ ծանոթ է Թիֆլիզի բարբառին, նա կխոստովանի, որ այդ բարբառը մեծ հարմարություններ ունի Մուլիերի սուր երգիծաբանությունները արտահայտելու, թեև նրան տեղտեղ պակասում են դարձվածներ ու բառեր, որոնց ստիպված էի փոխ առնել գրական լեզվից...¹:

... Հասկանալի է, որ շտապ կատարած թարգմանությունը թերություններից զերծ չէր կարող լինել. ես այդ զգում էի, ուստի ներկայումս... կարևոր համարեցի նորից թարգմանել անմահ թատերագրողի վերոհիշյալ երկը, պահպանելով, որքան ուժս ներում էր, Մուլիերի լեզվի և սճի նրբությունները և հարմարեցնելով նրանց Թիֆլիզի բարբառի ոգուն...²:

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Հայոց դրամատիկական ընկերության վարչությանը գրած նամակից, 1906 (Պ. Սունդուկյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 420, 421):

² Մուլիերի «Ժորժ Դանդեն կամ շիոթված ամուսինը» կատակերգության հայերեն հրատարակության Առաջաբանից (1903, Թիֆլիս):

* Մուլիերի ներթոհիշյալ կատակերգությունից բացի Սունդուկյանը թարգմանել է նաև «Պեպոն»՝ ռուսերեն, վրացերեն և այլ գործեր:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ*,

(1829—1866)

... Հայ գրականության ուսումնասիրությունը, գրականություն, որ ունի Սուրբ Գրքի**, եկեղեցու հայրերի ստեղծագործությանց, Պլատոնի, Արիստոտելի և հունական, ասորական և պարսկական այլ գրողների երկերի վարձանալի ճիշտ թարգմանությունները, վերին աստիճանի կարևոր է հիշյալ աշխատությունների շատ մութ կետերը բացատրելու, արտագրողների աղճատած բնագրերը մաքրելու համար:

Հայ գրականությունը պահել է սուրբ հայերի ստեղծագործություններից շատ երկեր և հատվածներ, որոնց բնագրերը այլևս գոյություն չունեն: Այսպես. վերջերս նրա հետ ունեցած ծանոթությանն ենք պարտական Եվսեբիոսի Ժամանակագրության Փիլոնի: հատվածները, ս. Եփրեմի, Հովհան Ոսկեբերանի և այլոց գործերի գլուտով, գործեր, որոնք անդարձ կորած էին համարվում: Քանի որ իսկականները կորած են, ուստի այդ թարգմանությունները, որոնք խոր հնությունից են գալիս, համարվում են թանկարժեք: Այդ թարգմանությունների ճշտության մասին՝ բացի հունարենի վերաբերմամբ հայերի ունեցած խոր հմտության, երաշխավորում է և ինքը-հայ լեզվի մեխանիզմը, հարուստ՝ բառագիտական տեսակետից և

* Մ. նայրանդյանը թարգմանություններ և փոխադրություններ է կատարել Պուշկինի, Լերմոնտովի, Հայնեի, Բերանսեի, Կլեմանս Ռոբերտի, Ֆ. դը Օլիվիեի, Սենկովսկու, Դելատրի, Սյուի և այլ հեղինակների շարածո ու արձակ ստեղծագործություններից:

** Եվրոպական գիտնականների կարծիքով այդ թարգմանությունը գերադանցում է Սուրբ Գրքի ղոչություն ունեցող բոլոր փոխադրությունները: Լակրոզը այն կոչում է «թարգմանությանց թագուհի»: Անգլիացի գիտնական Կլավդիոս Բուկանանը զարմանում է այդ թարգմանության ճշտության վրա, որին, անկասկած, նպաստել է հայ լեզվի ճկունությունն ու ուժը (ծան. հեղ.):

քերականական ձևերով, շարահյուսության ճկունությամբ և մի առանձնահատկությամբ, որ հնարավորություն է ընձեռում վերին աստիճանի բարձրագույն ու բարդ բառակազմության:

Հայ գրականությունը մեծ ծառայություն է մատուցում նաև ասորական գրականությանը՝ ինչպես քաղաքական, նույնպես և եկեղեցական պատմության վերաբերյալ, քանի որ քրիստոնեական կրոնը Հայաստան մուտք գործելու օրից ասորական հոգևորականությունից շատերն անցան այնտեղ, ուր հիմնեցին վանքեր և վարում էին զանազան եկեղեցական պաշտոններ, այնպես որ Հայաստանի ամբողջ հարավարևմտյան մասը, որ ընկած էր Եփրատի և Տիգրիսի միջև, ասորի եպիսկոպոսներ ուներ և ենթակա էր Անտիոքի պատրիարքին, ինչպես և մինչև հայերեն տառերի գյուտը և Սուրբ Գրքի հայերեն փոխադրությունը, ժամասացությունն ու գրքերը ասորական լեզվով էին և գործ էին ածվում ասորերեն գրեր:

Ուստի դեռ V դարում հայերն ունեին սբ. Եփրեմ Եղեսացու ստեղծագործությունների թարգմանությունները, Հակոբ Մծբնա հայրապետի քարոզները և Ասորիքի նշանավոր գրողների ստեղծագործությունները: VI դարում իրենց կարծիքների համար հայրենիքից վտարված ասորական քահանաները բնակություն հաստատեցին Հայաստանում և թարգմանեցին Մանեսի, Թեոդորոս Մոպսուեստացու հերձվածական գրքերը, նեստորականների երկերը, կեղծ հին և նոր կտակարանների գրքերը: Հետագայում թարգմանվեցին շատ ուրիշ աստվածաբանական գործեր: XIII դարի կեսին է վերաբերում Անտիոքի հակոբյանական պատրիարք Մխիթարյի Տիեզերական պատմության թարգմանությունը: Այս երկի մասին մեծ գովասանքով է խոսում Գրիգոր Աբուլ-Ֆարաջն իր ասորերեն լեզվով գրած տիեզերական պատմության մեջ: Այս թարգմանությունը շատ հետաքրքրական է մանավանդ այն պատճառով, որ իսկական բնագիրը կորած է համարվում: Հայ գրականության մեջ կարելի է նույնպես և ավելի դրական տեղեկություններ ձեռք բերել հին պարսիկների՝ Զրադաշտի հետևորդների ուսմունքի մասին, քանի որ V դարում հայկական միապետության անկումից հետո, մոզերը օգտագործելով պարսից թագավորների ազդեցությունը, աշխատում էին Հայաստանում տարածել իրենց կրոնը, ինչու և հայ աստվածա-

բանները ստիպված էին ժողովուրդը գալթակղությունից հետու պահելու համար աստվածաբանական խորհրդածություններ գրել՝ ի պաշտպանություն քրիստոնեության...

Մենք շունենք բավականաչափ տվյալներ, որպեսզի լիովին գնահատենք հայ գրականության հարստությունները, քանի որ շատ ձեռագրեր անհայտ պահվում են վանական գրադարանների փոշու մեջ, շատերը չեն հրատարակված և թեպետ դրանց աննշան մասն է մատչելի եվրոպական գիտնականներին, բայց այդ տվյալներով իսկ մենք որոշ հավանականությամբ կարող ենք ենթադրել, որ հայ գրականության ուսումնասիրությունն անչափ շահեկան կլիներ եվրոպական գիտությանը՝:

Մեր սիրտը և հոգին բաց է ամենայն ուշադրությամբ ընդունելու մի բանականության վաստակ, այնպիսի զգեստով, որ հարմար էր մեր ժամանակի և մեր կյանքի պայմաններին: Այսպիսի ուրախ հոգով ողջունեցինք այս օրերիս Ռոբինզոն Կոուզոյի հայերեն թարգմանությունը, Գամառ-Քաթիպայի աշխատությամբ լույս հանած և շինած ազգային ժառանգություն: Ընթերցասիրելով այդ գիրքը զվարճացանք հոգեպես, որովհետև դորա աշխարհ հայտնվիլը ևս բարի խորհուրդ ուներ մեր ազգի համար: Մեք տեսած ու կարդացած էինք վաղուց ահա, գուցե քսան տարի առաջ, մի այդպիսի գիրք պ. Բժշկյանի թարգմանությամբ, որ տարբերվում էր այս նոր տպածից, որպես յուր լեզվովը, նույնպես և բովանդակությամբ, թեև իդեան և բանի խորհուրդը նույն էր: Այս պատճառով մեք ավելորդ ենք համարում, այդ նոր տպածի բովանդակության վերա նրկար խոսել մեր կողմից. դորա ընդհանուր արժանավորության վերա պիտո է այսքան ասել, որ դա շինած է երեխաների դաստիարակության համար, ցույց տալով նեղությունները և տառապանքը՝ առաջացած անհնազանդությունից ծրնողների կամքին: Փորձով գիտենք, որ այդ գիրքը շատ սիրելի կլինի մեր ազգի մտացի մանուկներին, որոնք յուրյանց ազգությունը շուրացող ծնողների զավակ լինելով, ուսել էին գոնե ինչպես և իցե ժողովրդական կենդանի լեզուն և գիտեին կարդալ հայերեն:

Հոգով և սրտով ցանկանում ենք, որ ամենայն ծնող փոխանակ մի խաղալի բան պարգևելու յուր զավակին, Ռոբինզոնի պատմությունը ընծայեր նորան, որ և՛ զբուսեցուցիչ, և՛ օգտակար կլիներ նորա երեխային...

Ներկա աշխատության մեջ... Եթե սերան համեմատենք նորա տետրակների հետ, տեսանում ենք, որ հեղինակը փոքրի շատե ուշը դարձուցել է լեզվի վերա. այնուամենայնիվ, պիտի խոստովանել, որ նորա լեզվի մեջ անխտիր երևում են տարերքը երկու գլխավոր ժողովրդական բարբառների, այսինքն, Հայաստանի և Տաճկաստանի:

... Պ. Գամառ-Քաթիսյան հետաքրքիր է ասում Ռոբինզոնի վարքը. այդ հետաքրքիր բառը իբրև ածական գործածված անշունչ իրի համար, սխալ է, որովհետև հետաքրքիր կարող է լինել մի ներգործական էակ, մարդը, որ կամք ունի և քննում է կամ քրքրում է մի բան, իսկ մի կրավորական-անշունչ էր, որ ոչինչ կերպով չէ կարող ցույց տալ յուր մեջ մի ներգործականություն, չէ կարող քննել ուստի և ոչ քրքրել. այլ միայն արժանի լինել, որ զորան ուրիշները քրքրեին և քննեին, այդ կարող է, վասն որո և մեր լեզվի մեջ ասվում է, գործ կա խընդիր, արժանի հարցասիրության, ա՛յս է բուն կլասիկական բառը, որ և Մովսես Խորենացին է գործ ածում:

Բայց, ինչպես երևում է, պ. Գամառ-Քաթիսյան և ուրիշ մարդիկ սխալվում են այդ բանի մեջ, հետևելով ռուսաց «ЛЮБОПЫТНЫЙ» բառին, — որ նշանակում է և՛ հարցասեր, և՛ հարցասիրելի. բայց զանազանությունը մեր և ռուսաց մեջ այս բառի գործածության ժամանակ այն է, որ մերը ունի ներգործական միայն զորություն, իսկ ռուսացը՝ երկո՛ւսը ևս. այսինքն, ներգործական և կրավորական, ըստ բրում «ЛЮБОПЫТНЫЙ» ասվում է և՛ մարդը, որ հարցասիրում է, և՛ գործը, որ հարցասիրվում է: Այս և նմանապիսի սխալանքը բավական հաճախ պատահում են Ռուսաստանի հայերի մեջ...

Մեր ժողովրդական լեզուն այնքան աղճատված չէ, ինչպես թվում էր մի մարդու առաջին անգամ. այն ավերանքը, որ առաջացել են իտալականի և մյուս հռովմեական ասված լեզուների մեջ՝ նայելով լատինականի ամբողջությունը, չկա մեր ժողովրդական լեզվի մեջ, համեմատելով մեր հին լեզվի ամ-

բողջութեան հետ, եթե մեք շատրկանանք որևիցե գավառական բարբառի:

Գրել ժողովրդական լեզվով առանց ծառայելու գավառական բարբառներին, միևնույն ժամանակ ամբողջ պահելով լեզվի ժողովրդականութիւնը, մշակել այդ լեզուն, ներս բերելով դորա մեջ նոր մարդավայել և արժանի եվրոպական անունի գաղափարներ, ահա՛ այն մի հատիկ գործը, որով պիտո է պաշտպանին հոգիազգեաց հեղինակները և թարգմանիչքը մեր ազգի՝ ու՛ր և իցե՛:

Վերջացնելով մեր խոսքը, հայտնում ենք պ. Գամառ-Քաթիպային մեր սրտի անկեղծ շնորհակալութիւնը. կցանկանալինք, որ օգտակար լինեին նորան մեր բարեմիտ փոքր ի շատե ծանոթութիւնքը նորա աշխատութեան վերա, նորա ասպագա ասպարեզումը՞:

...Մխիթարյան միաբանութիւնը, այդ մեզանից ընկած հատվածը, օտարութեան մեջ, պատերազմելով բազմադիմի նեղութիւնների հետ, քունը կտրել է Հայոց հին լեզուն մշակելու և ծաղկեցնելու համար. և եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը Մխիթարյանց շնորհքով...

Մխիթարյանք... մշակագործեցին ու ծաղկեցուցին հայոց հին լեզուն և վեր քաշեցին նորան այն ողորմելի վիճակի միջից, ինչ վիճակի մեջ մնացած էր մեր հոգևորների անփութութիւնից...

Մխիթարյանք, գիշեր ու ցերեկ աշխատելով, շինեցին ու տպեցին հայոց լեզվի համար բառարաններ, զանազան ձևերով և զանազան խորհրդով: Բացի բուն հայ հեղինակներից, այո, թարգմանեցին և տպեցին նոքա զանազան գործեր հին և նոր եվրոպական լեզուներից, և այսպիսի թարգմանութիւններով մեծապէս մշակագործեցին և ճոխացուցին հին հայկական գլորութիւնը: Թողունք, որ շատ բան ևս թարգմանված է Մխիթարյանց ձեռքով՝ բոլորովին անխորհուրդ և առանց որևիցէ ազնիվ նպատակի... Մխիթարյանց պապական լինելը զրկում էր նորանց ամենայն ստույգ լուսավորութիւնից...³:

Մեր պատմելի հայրենակիցքը շատ անգամ լսելով ազնվամիտ հեղինակների առ ի սրտե ճշմարտասեր ու ցավակցական խոսքերը ազգի անուսումնասիրության և անգրասիրության մասին, վիրավորվում են, ցույց տալով յուրյանց, ինչպես երևում է, արդարացի պատճառները. առաջին, թե նոցա գրածները հին ու մեռյալ լեզվով լինելով, անմոտենալի էին ազգին. երկրորդ, թե մեծ մասով գրվածքը լինում են փիլիսոփայական կամ հնասիրական խնդիրների վերա, որ ժամանակի որպիսությանը արհարմար լինելով, չեն զարթեցնում ազգի հոգու մեջ եռանդ դեպի գրասիրության, վասնորոք և մնում են սորա և նորա տանը ընկած առանց անգամ և բացվելու, կամ քանի մի հին լեզու իմացողների ձեռքում:

Այդ խոսքերի վերա ինձ քաղցր եղավ դուրս տալ Եվթեն Սյու պարոնի «Թափառական հրեա» անունով վիպասանության հայ թարգմանությունը այն լեզվով, որ ժողովրդին հասկանալի էր: Եթե փորձով երևի, որ ժողովրդի գանգատին արժան է իրավունք տալ, իհարկե, մեր պատմելի հեղինակքը յուրյանց ընթացքը կհարմարին ժամանակի որպիսությանը, և կաշխատին այնպիսի բաներով սլարապեցուցանել ընթացողները, որ և հասկանալի լինեին նոցա, և ազդեցություն ունենային նոցա հոգեղեն զարգացման վերա...

Ես ազգային խոսքի շինության մասին խոսակցությունս կնքում են սորանով, թե մինչև նոր լեզուն չլինի առհասարակ մատենագրական լեզու, մինչև գրվածքների իմաստը ըմբռնելի և հասկանալի չլինի ժողովրդին... սու՛տ է ամենայն լուսավորություն...

Մեր ազգայիններից, որ ծանոթ էին ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներին, արդեն կարդացած կլինին «Թափառական հրեա» վիպասանությունը և ճանաչած նորա ազնիվ և սուրբ խորհուրդը, ուրեմն և արժանավորությունը. վասնորոք ավելորդ համարելով այս մասին երկար բարակ քարոզ կարդալ, պարտականություն եմ համարում միայն այսքան ասել, որ, եթե մեր Մխիթարյան գերապատիվ հարք չեն կամեցել այս բանը հայերեն թարգմանել և տպել, պատճառը կարոտություն չունի մեկնության: Եվթեն Սյու, մարդկության քարեկամ պարոնը, այս աշխատության մեջ նկարագրում է հիսուսյան արեղաների անքրիստոնյա և բարբարոս վարք ու

բարձր. Մխիթարյան գերապատիվ հարք ինքյանք ևս կրոնա-
կից և ջատագով լինելով հիսուսյաններին, հավանական է և
շատ բնական է, որ նոցա ձեռքը չէր համարձակվելու այս-
պիսի գործ կատարել, մանավանդ որ տեր պապը նզովել է
այս աշխատութեան հեղինակը և կարգացողը, ուրեմն, և
թարգմանողը: Եվ ճշմարիտը պիտո է խոստովանել. ինչպե՞ս
կարելի է, որ մի պապական աբեղա հակառակվի այնպիսի
մի մարդու, որ աստծո փոխանորդ էր արքայութեան դուռը
բացող և փակող... (մի՞թե) Գոհ եմ աստծուց, որ պապական
չլինելով, ունիմ ազատութուն գրել և թարգմանել այն բանը,
որ ջատագով էր ճշմարտութեան, որ պախարակում էր Քրիս-
տոսի օրենքին ընդդեմ գործերը և նկարագրում էր ամենայն
ինչ մաքուր խղճմտանքով. և այս երկար աշխատութեան մեջ,
ամենայն քայլափոխումս նոր քաջալերութուն եմ զգացել,
որովհետև պիտո է բարձրացնել ճշմարտութեան դրոշակը:

...նս իմ այս աշխատութեան մեջ գործ դրել եմ ամենայն
ջանք, որ իմ գրածը պարզ լինի և հասկանալի և որքան կա-
րելի է մոտ ժողովրդի կենդանի լեզվին. բայց արդյոք հասն՞լ
եմ նպատակիս, այդ խնդիրը իմ գործ չէ լուծանել:

Նոր լեզուն դեռևս մանուկ է. դեռ շատ և շատ դժվարու-
թյունք կան այս լեզվով գեղեցիկ և հաջող խոսելու. այդ կհո-
գա ժամանակը, երբ նոր լեզուն հեղինակների գրչի տակ ճա-
խարակվելով, կստանա յուր այրական հասակը, մանավանդ
որ այժմ դեռ շատ բաներ կան, որոնց մասին, հայերը ամե-
նեին գաղափար ևս չունենալով, չունին հետևաբար և այն
անոթները, այսինքն այն ոճերը և դարձվածները, այո, շատ
անգամ և բառերը, որոնց մեջ կարելի էր պարունակել նոր
մտքերը, որ մինչև այժմ չկային հայերի մեջ...⁴:

...Հյուսիսափայլի լեզվի թերութունքը, այդ լեզվով գրող-
ների անձնական պակասութունը չէր, այլ մանավանդ նոր
լեզվի մանկութեան պակասութունը: Եվ երբ նոր լեզուն, տա-
կավին անմշակ, չուներ այն հատկութունքը, որ անշուշտ
պետք էին հիմնավոր և կանոնավոր կերպով ամեն բանի վերա
խոսելու համար. երբ Հյուսիսափայլի գրիչը այս կամ այն
գաղափարի հայտարար ձևը ժողովրդի մեջ չփոխելով և ժողո-

վրրդին հայտնի բառերով գործ էին դնում մի ձև՝ բուն հին լեզվի ոգուն հավատարիմ մնալով,— Հյուսիսափայլը գերմանախոս է դառնում!! Հին և նոր լեզվի ընդդեմ մեր սքանչելի հայկաբանների անխտիր գործ դրած բառերը և ոճերը, երբ մենք գործ չէինք դնում, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

...Երբ ֆրանկի moyen, ռուսի средство և տաճկի վաքըթ բառերը մեր սքանչելի հայկաբանքը ընդհանրապես և սովորաբար միջոց էին թարգմանում՝ հին ու նոր լեզվի ոգուն ընդդեմ, երբ մենք հայկական ոգուն հավատարիմ մնալով, նույն բառերը թարգմանում էինք հնաճ, ինչպես մեր նախնիք գործ էին ածել և ինչպես այժմյան սերունդը գործ է ածում, Հյուսիսափայլը գերմանախոս է դառնում!!

Երբ ֆրանկի partager, ռուսի разделять բայերը վերացական գաղափարների վերաբերությամբ բաժանել էին թարգմանում— օրինակ՝ je partage votre opinion, я разделяю ваше мнение— ես բաժանում եմ ձեր կարծիքը և այլն, այսպիսիք անխտիր և մինչ մենք հարազատ մնալով մայրենի լեզվի ոգուն, գրում էինք կամ՝ ես ընդունում եմ ձեր կարծիքը, կամ համամիտ եմ ձեզ, կամ մասնակից եմ ձեր ուրախության, ցավին և այլն, և այլն, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

Երբ ֆրանկի communiquer, ռուսի сообщать բայերը անխտիր և ընդհանրապես թարգմանվում էին հաղորդել, հայկական ոգուն ընդդեմ բաղդասելով, ինչպես լուր հաղորդել, նամակ հաղորդել և այլն, և այլն, և երբ մենք, հավատարիմ մնալով լեզվի ոգուն, չէինք գործածում այս օտար ձևը, այլ դորա փոխանակ տեղին հարմար գրում էինք լուր տալ, իմաց տալ, տեղեկություն տալ, մասնակից անել այսինչ բանի և այլն, և այլն, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

Երբ ֆրանկի curieux, ռուսի любопытный բառերը անխտիր հետաքրքիր թարգմանելով, գրվում էին հետաքրքիր բան, հետաքրքիր գիտություն և այլն, և այլն, և երբ մենք, հարազատ մնալով մայրենի լեզվին, հետաքրքիր ածականը տալիս էինք մարդուն, իսկ անշունչ առարկաների վերաբերմամբ գրում էինք՝ արժանի հարցասիրության, Հյուսիսափայլը գերմանախոս էր դառնում!!

Հյուսիսափայլը հարյուրներով ունի այս տեսակ գերմանախոսությունք, խոստովանում ենք. և ոչ միայն այսքան, այլև հայտնում ենք, որ բնավ չենք ցանկանում այս տեսակ սքանչելի հայկաբանություն, որի մի քանի օրինակը ցույց տվինք, որովհետև, ճշմարիտը խոսելով, մենք այդ հայկաբանության վրա նայում ենք— ինչ եք կարծում— ոչ ավելի, ոչ պակաս, որպես բաբելաբանության վրա, եթե միայն ներելի է ex uso in abuso գործ դնել այս բառը:

... Լեզու հասկանալը բառ հասկանալով միայն չէ լինում. գաղափարների նորությունը և անծանոթությունը մեծ արգելք է ժողովրդին հասկանալ մի գիտական կամ կանոնավոր կերպով գրած բան. սորա ապացույցը տեսնում ենք մեք և կարող ենք ցույց տալ մեր ընդդիմախոսներին նաև նոցա անոճ և խղճուկ գրությունց մեջ, երբ նոքա թարգմանում էին մի որպիսի և իցե ֆրանկի կամ ռուսի աշխատություն:

... Մեր ընդդիմախոսքը օրագիր հրատարակելով կամ գիրք թարգմանելով, երբեք ուշադիր չեն եղած լեզվի մշակության, որպես թե այդ կամ հարկավոր չէր, կամ թե կատարյալ լինելով մշակության կարոտ չէր: Ասացինք, որպես թե, որովհետև իրողապես այդ բոլորը նոցա վերջին աստիճան մայրենի լեզվի մեջ խեղճության արդյունք էր, հայտնի է, թե տալուց առաջ պիտի ունենալ, իսկ այն գրիչը, որ տակավին իր լեզվի ուղղագրությունը չգիտե... այդպիսի պարոնից ինչ պահանջես:

... Մեր կարծիքը և սրտի հաստատ վկայությունը այսպես է, թե, մի օրագիր երևալով մեր ազգի մեջ, պարտական է ոչ թե ձախ ու ծուռ թարգմանությունք, դարերով հետ մնացած գաղափարք և խավար ֆանատիկոսություն տալ նորան, այլ մշակել նորա լեզուն, գնալ ժամանակի հետ, փարատել կույր և մարդատյաց ֆանատիկոսության խավարը և դորա տեղ քարոզել սեր, խղճի ազատություն, մարդկային բանական արժանավորություն:

Ինչպես այժմ, առաջ էլ այս սկզբունքի տեր էինք, ուստի և դարմանք չէ, այլ շատ բնական, որ Հյուսիսափայլի մեջ երեվում էին եվրոպական այլ և այլ լեզուներից թարգմանված աշխատությունք, որոնց մի լավ բաժինը հասնում էր ընտիր վեպերի: Բայց ինչպես առաջ էլ ասացինք, մեր ողորմելիքը

ասում էին, թե այդ վեպերը մեռ ազգին վերաբերություն չունին: Մենք հավատացած ենք, որ ընտիր մի գրվածք, ազատ հայեցվածներով, ընտիր ճաշակով, գեղեցիկ բարոյականությամբ, ինչ լեզվից և թարգմանած լինի, այնուամենայնիվ, մեծ և մեծ խորհուրդ ունի նորոգելու և կենդանացնելու թե՛ ճաշակը, թե՛ քաղաքային վամ ընկերական հարակցությունքը, մի ազգի, որ միջնադարյան մշուշով պատած կամ ոչինչ չէ կարողում վամ թե ժողովածու և ՊՂՆՁՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: Կավ որ այս վերջին ժամանակներում հայերը երկու օրինալոր վիսլասանություն ստացան՝ ՎԵՐՔ ՀՍ.ՅՍ.ՍՍՍՆԻ և ՍՈՍ և ՎԱՐԳԻԹԵՐ, բայց դոքա, սրտանց խոստովանելով նոցա արժանավորությունը, ասում ենք, ոչ միայն ինչ-որ մարդկության հարկավոր էր, բոլորը շասացին չպրծան, այլ երկուքն էլ մասնալոր խորհրդով գրված լինելով, բնավ իսկ ընդհանուր հասկացողությունց կամ ընկերական հարաբերությունց չմոտեցան:

Այս օրվա օրս Եվրոպայի մեջ գրեթե թագավորյալ մատենագրությունը վիպագրությունն է. ինչ օրագիր, ինչ լրագիր կամ ինչ թերթ ասես, որ առանց վեպի օր անցնե, թողնում ենք այն բազմահատոր վիպասանությունքը զանազան հեղինակների և զանազան ազգերի: Ամեն մի ընտիր վաստակ, ինչ լեզվով ևս լինի գրված, այնուամենայնիվ, միշտ օգտակար է բոլոր մարդկության. մանավանդ եթե նեղսիրտ ազգական հասկացողությունքը հանդես չունենան այդպիսիների մեջ, մանավանդ եթե աշխատության խորհուրդը է գեղեցիկ մի պատմություն կարգացողների ճաշակը և հասկացողությունը ազնվացնել⁵:

... Արժանապատիվ հորեն վարդապետը այս օրերումս դուրս տվեց Լամարթին ֆրանսիական բանաստեղծի Les Harmonies* մակագրով տաղերգությունների հայ թարգմանությունը հին լեզվով: Ազգային բանասերքը մինչև այժմ չկարողացան հասկացնել մեր բոլոր հեղինակներին, թե մի հին և մեռած լեզու, որ կորուսել էր յուր իրավունքը ընկերա-

* Դաշնակներ:

կան կյանքում, չէ կարող միջնորդ լինել կենդանի ժողովրդի մեջ գաղափարք ներս բերելու համար: Անտարակույս, ավելի հեշտ է հին լեզվով թարգմանել, մանավանդ ոտանավորը, բայց միթե հեղինակի նպատակը պիտի լինի հեշտ կերպով կատարել մի գործ, երբ այդ եղանակը անօգուտ էր ժողովրդին:

... Հայր հորենին չէ հաջողվել ընտրությունը՝ թարգմանելու գործի մեջ...

...Ոչ ոք չէ տարակուսում, որ պ. Լամարթինը մինն է արժանավոր բանաստեղծներից, և թե նորա գործերը արժանացած են լուսավորչալ աշխարհի համակրությանը, բայց... Լամարթինի գործերը առաջին հարկավոր բաները չեն մի ազգի համար, որի մատենագրական շքավորությունը բարձրացած է մինչև ի Կոկյուսոն հայոց: Որևիցե անդաստիարակ ժողովուրդ միշտ անձնատուր է գտանվում միստիկականության, այսպես և հայոց ազգի մեջ, որքան մինչև այժմ հաջողել է մեզ քննել նորա հոգեբանական կողմերը, շատ առատացած է միստիկականությունը, որ միշտ խափան և արգելք է լինում ճշգրիտ լուսավորության, վերացնելով, կորզելով մտքերը այս աշխարհից, ուր պահանջվում է գործունեություն և շարժողություն, և ձգելով մի գաղտնածածուկ վերացականության մեջ, ուր դադարած էր ամենայն կյանք և շարժողություն, և ուր խատովանված կյանքը էր մի անշարժություն և անզգայություն:

Լամարթինի Les Harmonies տաղերգությունների յուրաքանչյուր տողից փշում է միստիկականություն, որ ոչ միայն օգտակար չէ, այլ շատ և շատ վնասակար է, եթե առողջ բանականությամբ աչքի տակ ձգենք մեր ազգի վիճակը: Մեզ հարկավոր է կյանք և շարժողություն, հարկավոր է հույս ունենալ մեր անձին և մեր ընկերի վերա, և առանց լքանելու և վերացական բաների թողնելու մեր մասին հոգաբարձությունը, մեր ձեռքով վարել մեր հողը: Միստիկականությունը սեփականություն է հղսահատ մարդերի. շատ անգամ երևելի մարդիկ անհաջող գտանվելով որևիցե նշանավոր գործերում, փոխում են յուրյանց մտքերի տրամադրությունն ամենևին անգիտակից, բնական ազդեցությամբ և ընկնում են որոնել յուրյանց ցավի ճարը վերացականության մեջ: Այս մի հոգու բարոյական հիվանդություն է, որով վարակվելով, կորուսա-

նում են այնուհետև հույս և հավատը յուրյանց վերա, հանդիսացնում են մի ողորմելի պատկեր մտավորական մեռելության, մինչև զգացող մարդերի արտասուքը շարժել...

Այսպիսի հեղինակի գործը լինում է միշտ միստիկական, բայց մեր ազգին հարկավոր է հեռի մնալ: Մեզ օրինակ չէ այս դիպվածում եվրոպացին, նորա բարոյական և լուսավորության ոտքերը ադամանդից են շինված, և միստիկականությունը տեղ չէ գտանելու հասարակաց սրտի մեջ, իսկ մեր ազգը կավեղեն ոտքերով թավալգլոր ընկած շարաշար կործանության անդունդի մեջ, արդեն իսկ լցրել է խելապատակը այդպիսի գաղափարներով. կրակի վերա կրակ հավելացնելը մոտենում է Հոմեոպատների խելագար առածին *similia similibus curanter**:

... Մեր ներկայությամբ դուրս եկավ այդ տպարանից** մի գիրք Փելլիֆս և Պավլինե, պ. Թորոսյանի ձեռքով իտալական բնագրից թարգմանված: Բացի շնորհակալութենից ուրիշ բան չունինք ասելու պարոն թարգմանողին. ներողամիտ աչքով նայում ենք, թե լեզվի և թե թարգմանության թերութենների վերա. հարգելով նորա ազնիվ ձգտողությունը, յուր ձեռքի եկածի շափ հարստացնելու մեր ժողովրդական աղքատին դպրությունը: Բայց չէ կարելի մի քանի խոսք շասել այն մասին, թե հեղինակը այդ գործի, զուր տեղը աշխատել է մի քանի բան այլապես փոխելով. ավելի լավ էր բառ առ բառ օրինակել Բեռնարդեն դը Սան-Պիեռի Պավլոս և Վիրգիլենե, քան թե նույն բանը, բայց ավելի անշուք կերպարանքով հանդես հանել որպես մի նորություն. գոնե ավելի հաճություն մը կարգաչինք դորան: Ամենայն մարդ, որ կարդացած էր Պավլոս և Վիրգիլենե անունով Բեռնարդեն դը Սան-Պիեռի գործը, Փելլիֆս և Պավլինեի մեջ պիտի տեսանե մի կույր նմանողական ձգտողություն, ոչ թե միայն գաղափարքը միևնույն, այլև շատ անգամ խոսակցության նյութը ևս: Այստեղ ևս երևում են երկու անբարխտ գերդաստանք, երկու աղքատ և անմեղ սիրահարք և վախճանը գործի, մի փոքր այլապես ըն-

* նմանը նմանին բուժում է (լատ.):

** Խոսքը ձ. Արամյանի՝ Փարիզի տպարանի մասին է:

թացք տալու համար, կատարված ավելի կուպիտ և անբնական կերպով:

Այդ գործը (բնագիրը) շունի ոչինչ մատենագիտական արժանավորություն: Աղաչում ենք մեր եղբայրակիցքը թարգմանություն ժամանակ ուշ դարձուցանել այն լբանի վերա, որ բնագիրը ունենա մի հաստատահիմն արժանավորություն⁶:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը» աշխատությունից, 1860, ինքնագիրը ուսուսերեն է (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1982, էջ 261—263):

² «Կրիտիկա. ժողովրդական լեզվով թարգմանված և տպված Ռոբինզոնի պատմությունը, Գամառ-Քաթիպայի աշխատությունով, ՍՊԲ, 1857 (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 284—288):

³ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոդվածից, 1858 (նույն տեղում, էջ 271, 273):

⁴ «Թափառական հրեայ», գործ եւթեն Սիւ Ֆրանսիացու... Միքայել Նալբանդյանցի աշխատությունով, հ. 1, Մոսկվա, 1857, Հոռաչաբան, էջ 1, 2, 3, 14:

⁵ «Երկու խոսք, թե ինչպես է մեր հայացքը մի օրագրի պաշտոնական տարության մասին» անտիպ հոդվածից, 1863 (Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 463—468):

⁶ «Հիշատակարան», 1858—1860 (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 153, 165):

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ*
(1830—1892)

Թարգմանությունը հարստացնում է լեզուն: Որովհետև մեկ ազգ մյուսից ջոկված, բաժանված է երկրով, քաղաքական կառավարությունով, բարքով, պեսպես ծեսերով և այլն, նոցա լեզուներն էլ անպատճառ շատ կամ սակավ պիտի տարբերին մին մյուսից. ահա այդտեղ խիստ օգնում է թարգմանությունը, որ մեզ ծանոթացնում է օտար ազգերի գաղափարներու և այն նշաններու հետ, որոնցմով հայտնում են նոքա իրանց միտքը: Թարգմանության միջոցով լեզվի մեջ կամացկամաց մտնում են զանազան դարձվածներ, ձևեր, ոճեր, որ առաջին անգամ խիստ օտար են թվում մեզ, բայց հետո ականջներս ընտելանում են, և վերջապես լեզուն սեփականում է նոցա:

Եթե մի լեզու այնքան հարուստ է, որ կարողանում է հեղինակի ամենայն գաղափարներին յուր հյութերից սնունդ տալ, այդ ժամանակ ավելորդ է, և միանգամայն ծիծաղելի բան է, երբ որ հեղինակը ուզենա 'գլխից' յուրահնար դարձվածներ դուրս տալ. այդ վնշանակե, որ նա ունայն տեղը ծանրաբեռնում է լեզուն: Ընդհակառակն, երբ որ մենք ուզում ենք օտար լեզվից մի բան թարգմանել, ջանք պիտի դնենք որքան կարելի է մոտենալ ոչ թե միայն թարգմանելի հեղինակի ցամաք բռներու նշանակութանցը, այլ նորա ամենամանր իմաստները պարզ և հասկանալի կերպով թափել մեր լեզու ամենևին չբխանգարելով նորա հստակությունը և միշտ հետևելով նորա ընդհանրապես ընդունած կանոններուն:

* Ռ. Պատկանյանը թարգմանություններ և փոխադրություններ է կատարել Բատյուշկովի, Լոմոնոսովի, Պուշկինի, Լերմոնտովի, Բերանժևի, Եզովպոսի, Նեկրասովի, ԴեՖոյի և այլ հեղինակների շփածո ու արձակ ստեղծագործություններից:

Հեղինակը նման է ժրաջան հանքահանին, որ թեև առժամանակ ստանում է յուր հանքերից առատությամբ ոսկին և արծաթը, բայց պիտի մտածե այն օրը, երբ որ պիտի վերջանա մեռաղը. բայց թարգմանչին կարելի է նմանեցնել այնպիսի վաճառականի, որ առուտուր է անում օտար ազգերի հետ, որի վաստակը (դատումը) ոչ թե քամում է յուր աշխարհի հարստությունը, այլ ընդհակառակն՝ օտարինը ևս նորա մեջ է բերում:

Թարգմանչի առաջին գործը այն պիտի լինի, որ իրա թարգմանությունով կարդացողի վերա այն ազդեցությունը ունենա, ինչ որ նախագաղափարը ունեցել է իրա վերա: Այդտեղ թարգմանիչը նման է պարտապանին, որ եթե չի կարող պարտքը հատուցանել նույն իսկ դրամով, որն որ ստացել է, գոնե պիտի հատուցանե նույն գումարը:

Եթե թարգմանիչը չի կարող պահպանել այս կամ այն ձևը, թող իմաստը պարզ հայտնե. եթե չի կարող թարգմանել խաղացկուն դարձվածը, թող նույնը մի խելացի կերպով ասե. թե չի կարող զորություն տալ (խոսքն էլ ունի զորություն), թող ուշք դարձնե դեպի դաշնակալորությունը, թե չէ կարող կարճառոտ ասել, թող միտքը ճոխ հայտնե, թե մի տեղումը թույլ է, թող ուրիշ տեղումը ուժեղ լինի, մեկ խոսքով, մի տեղի վնասը անպատճառ ուրիշ տեղ պիտի վարձատրե շահով:

Այսպես թարգմանելու համար բավական չէ թարգմանչին հեղինակի հոգևով ոգևորվել և մտքով երթալ նորա հայրենիքը, այլև պետք է մոտենալ նույն իսկ աղբյուրին, որից հեղինակը ինքը խմել է, այսինքն բնությանը: Թե ուզում ես, որ թարգմանությունդ ունենա նույն իսկ զորությունը, որն ունի հեղինակը, խորը քննե քու թարգմանելու առարկան. դորա համար պետք է... գիտություն¹:

... Պատմությունեն մեզ հայտնի է, որ շատ հռչակավոր մարդիկ աշխարհիս վերա մեծամեծ դերեր խաղացել են ոչ այնքան դպրոցների մեջ ստացած գիտությամբ, որքան ընթերցանութենեն շահված ինքնազարգացմունքով. բավական է, թե որ հիշենք միայն այս անունները՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Շեքսպիրը, Ֆրանկլինը, Նապոլեոն I-ը և այլք:

Եթե կուզեք, որ հայը միշտ մնա հայ, պարտավոր ենք նորա ձեռքեն հայերեն գիրքը անպակաս անելու: Գրականություն ունեցող ազգը երբեք չի կորչիլ աշխարհիս երեսին... Մատենադարանը ազգի և գրականության համար այն է, ինչ որ է բերդը՝ պատերազմող և սահմանները պաշտպանող զորքի համար... Հիմնենք և բազմացնենք հայկական մատենադարանները...²:

... Փ. Վարդանյանի երախտիքը մեր գրականության մեջ այն եղավ, որ նա փորփրեց, գտավ Հոմերոսի հասկացողին և նորա գրվածքի բովանդակությունը ճիշտ արտադրողին և նույնը թարգմանորեն վերածեց հայ, այնպես հաջողած, որ բնիկ գերմաներեն գիտցող հայն ևս այսուհետև հավասարապես, առանց ծկլայության (ինքնագոհության), առանց ստեղծու կարող է ասել, որ կարդացի և հասկացա Հոմերոսին, ուրեմն և նախնի հույնի կենցաղի մասին գաղափար ունեմ:

Օրինավոր թարգմանության համար կան շատ կարևոր պայմաններ, որոնց կատարումեն կախված է առաջադրյալ նպատակին հասնելը: Թարգմանիչը ամենեն առաջ պիտի իմանա, թե ինչ է ուզում հասկացնել հեղինակը. հետո նա պիտի իմանա, թե նպատակին հասնելու համար ինչ հնարներ գործ դրել է նա (հեղինակը), վերջապես, ինքը՝ թարգմանիչը ինչ հնարներով պիտի հասկացնե կարդացողներին իրեն հասկացածը: Ինքն իրեն հասկացվում է, որ այստեղ քերականությունը և բառարանը շատ տկար օժանդակներ են թարգմանչի ձեռքում. նորան պետք են ուրիշ միջոցներ: Ոչ առանց պատճառի, Սուրբ գրոց մեջ թարգմանությունը դրված է ի շարս աստվածապարգև շնորհներուն:

Թերևս, հեգնորեն ասեն ինձ՝ «Ի՞նչ համեմատություն կա կլասիկական, հարուստ մշակած հունարենի և անմշակ, աղքատին աղճատած նոր հայոց լեզվի մեջ»:

... Փ. Վարդանյանի հմտությունն էլ այն էր, որ այդ աղքատին և անմշակ հայերենով նա կարողացավ այն անել, ինչ որ այլք իրենց մշակած, ճոխ բարբառովն միայն կարողացել են անելու:

... Յուր մայրենի լեզվով Հոմերոս ունենալ, այս որ ազգի համար էլ որ ասես մեծ բարոյական օգուտ է: Մեր պատանիներն այժմ ունին կարդալու գրքեր: Կարդալով, նոքա և մտքերը կհարստացնեն գեղեցիկ գաղափարներով, և թե կընտելանան գեղեցիկ, ընտիր նոր հայկական ոճին³:

Ռոբինզոն Կրուզոյի հետաքրքիր պատմությունը ամենին հայտնի է, պատճառ, որ՝ գրեթե ամեն ազգ թարգմանած ունի յուր լեզվով այդ գիրքը...

Ռոբինզոնի վարքը խիստ հետաքրքիր է մանավանդ երևեսայոց համար, որոնք կենդանի օրինակով տեսնում են անհնազանդության դառը հետևանքը և կարոտության հնարագիտությունը: Բայց այսքան չէ Ռոբինզոնի ընթերցանության օգուտը. այս գիրքը կարդալով երեխայք տեղերից շի շարժած անցնում են Ռոբինզոնի հետ միասին լայնածավալ ծովեր և օտար երկրներ և ծանոթանում են աշխարհիս շատ հանգամանաց հետ. անզգա կերպով սովորում են ուսումնական և մանավանդ աշխարհագրական և բնագիտական անուններ, որ մի օր շատ կթեթեացնեն նոցա դպրոցական ուսումը:

Նույն բարի նպատակն է, որ մեզ ևս ստիպեց թարգմանել մեր սիրական ազգի մատաղերամ մանկանց համար այս հետաքրքիր և զբոսեցուցիչ գիրքը: Մեր նախագաղափարը գաղիերեն էր, որ համառուտել է և երեխայոց համար հարմարել է մի անհայտ աշխատասեր: Թարգմանության ժամանակ մենք աշխատեցանք որքան կարելի է պարզ հայտնել մեր միտքը, որպեսզի կարդալով, երեխայք շոժվարանան հասկանալու: Թեև մենք, Կարամզևի խրատին հետևելով, աշխատեցանք «գրել այնպես, ինչպես խոսում են», բայց այս բարի խրատեն երբեմն կամա ակամա ստիպվեցանք (հրածարիլ) ևս այն պատճառով, որ մեր խոսակցական լեզուն ամեն գավառներումը միաձև չէ, և նորա մեջ գտնված օտարազգյաց բառերը միանգամայն խանգարում են լեզվի մաքրությանը: Մենք գլխավորապես աշխատեցանք այդ օտարազգի բառերը դուրս ձգել մեր աշխատությունից և նոցա տեղ գործածել բուն հայոց խոսքերը: Բայց այստեղ էլ կար մի անհարթություն. այդ նորամուտ բառերը, թեև հայոց բաղմու-

թյանը հայտնի չեն, ուստի կարող են դժվարացնել նոցա հասկանալու: Մենք աշխատեցանք այդ դժվարությունը ևս հեռացնել, գրքի (վերջում) ավելացնելով փոքրիկ բառարան, ուր մեկնեցինք դժվար բառերու նշանակությունները⁴:

Գամառ-Քաթիպայի տետրակները յուր մեջ պարունակում են ամեն կերպ շարադրություններեն, որոնք կարող են շար-
ժեկ երիտասարդաց հետաքրքրությունը, հարստացնելու: Նո-
ցա միտքը ուսումնական ու բարոյական գիտություններով,
դյուրին կերպով զազափար տալ ներկա դարուս ամեն ազգի
հառաջագիմություններով և այլն: Դորա համար մենք առա-
վել, քան թե հինգ տարի, հոգս ենք տարել հավաքել օտարազ-
գյաց հռչակավոր մատենագիրների ընտիր շարադրություն-
ներն, մեր կարողությանը շափ և ճիշտ և ամենադյուրին ճճով
թարգմանել ենք այն: Ուրեմն, մեր տետրակներն ու գրքերը,
հետզհետե ընծայվելով և տարածվելով ազգի մեջ, գլխավոր-
րապես պիտի արժարժեն մեր մատաղերամ մանկանց մեջ
ընթերցանության սերը, քաղցր և մարդասեր խոսքերով պիտի
խրատեն նոցա, զվարճացնելով պիտի սովորեցնեն այն, ինչ
որ նոքա միայն դառն փորձերով պիտի իմանային արդեն
չափահաս տարիքում⁵:

... Երկու շաբաթից կստանաս մեր գեղեցիկ Ռոբինզոնը,
որի ИЗДАНИЕ-ն հազարապատիկ ավելի գերազանց է ոչ թե
ռուսից, այլև գաղղիացիի և գերմանացվո. կդարձնե՞ն արդ-
յոք հայերը յուրյանց ուշքը գրքի գեղեցկության վերա. ներքին
պարունակության մասին ես դատավոր լինել չեմ կարող, բայց
այնքան միայն կասեմ, որ ես ամեն տողը գրելիս առաջիս
ունեի ясность изложения без прикормной наготы և այլն
(շարադրանքի պարզություն, առանց քաղցր-մեղր մեքու-
թյան). ես թարգմանության ժամանակ և, առհասարակ, հա-
յերեն շարադրելու ժամանակ, մի գաղտնիք ունեմ, կամ
собст<венные> методы, որին ես կարծում եմ միակ հնար
պարզ հայերեն գրելու, այսինքն, ես միշտ երևակայում եմ
առաջիս մի թիֆլիզեցի, մի նախիջևանցի և մի հաշտարխան-

ցի, իբր թե ամենս միասին մի հարկավոր առարկայի վերա խոսում ենք, կամ թե ես նոցա պատմում եմ. բոլոր գաղտնիքը состоит в том, чтобы приискать такие фразы, которые в одно и тоже время հասկանալի լինենին այդ երեքին. իհարկե, որ այդպիսի գրությունը խիստ դանդաղ է առաջանում, բայց բարոյական օգուտը այն է, որ ամենին հասկանալի է լինում...»:

...Մենք պետք չէ շինենք լեզու. լեզուն կա և այնքան պատրաստ է... որ առանց դժվարության կարող է մեր գաղափարները հայտնելու, ինչպես որ ճարտարապետի գործն է պատրաստ նյութերից մի շինված կանգնեցնել և ոչ նոր ի նորոք քար տաշել, ծառ տնկել, որ բսնի և ատաղձ ստացվի, այնպես էլ մենք՝ գրողներս ջանք պիտի դնենք հավաքել ծակուծակերից աղգային, կենդանի, խաղացկուն պարբերությունները և նոցանով կամ նոցա կազմությանը հետևելով, շինել ամբողջ հոդվածներ, գրքեր⁷»:

Կեսգրագետները ինձ ասում էին, թե միակ հնարն է բառ առ բառ բարգմանել օտարի լեզվեն և այդ օտարոտի դարձվածները աշխատել բռնաբար սեփականել տալ ժողովրդին: Ես անհամարձայն էի այդ անհիմն կարծիքին, բայց և հնար չունեի նոցա կարծրացած ուղեղի մեջ հեղափոխություն անելու⁸»:

... Մեր թատերասիրաց խումբը ներկայացուց պ. Սունդուկյանցի «Պեպոն»՝ Նախիջևանի բարբառով թարգմանած...

Պարոն Խանդամյանը թարգմանել էր «Պեպոն» այնպիսի դեղեցիկ տեղական բարբառով, որ ըստ ամենայնի արժանի էր բնագրի բանաստեղծական, խաղացկուն ու հուժկու լեզվին. նույն գեղեցկահոս և իմաստալից նախադասությունները և խոսքերը, նույն, ժողովրդի սրտի խորքեն բխած առածները և ասացվածները... Բայց ինչ շահ, ոչ մարդիկն էին մեր տեղի մարդիկը և ոչ նրանց վարք ու բարքը մեր տեղիներ: Իմ կարծիքով, եթե «Պեպոն» չթարգմանվեր, հեղինակի գրած բար-

բառովն ներկայացվեր, ազգեցությունը ավելի կլիներ, վասընդի հայտնի բարբառի հետ միասին մարդս երևակայությամբ թռչում-գնում է այդ բարբառը ի կիրարկանող ժողովրդի մեջ-կարճ— լեզուն և ոճը օգնում են կատարյալ դարձնելու անցքի ստորագրության (նկարագրության) այս ազգեցությունը⁹:

... Հայի տեղական բարբառները... ամենեն շատն են: Այս բանը շատ լավ նկատել էին մեր նախնի հեղինակները, և երբ որ պետք եղավ նոցա՝ Սուրբ Գիրքը թարգմանելու ժամանակ ընտրել մեկ լեզու, որ բաղմաթիվ հայ ժողովրդին հասկանալի լիներ, նոքա ընտրեցին Տարոնի բարբառը, բայց թե ինչու այդ ընտրեցին, մենք չգիտենք. երևի պատճառն այն էր, որ այդ բարբառն ոստանիկ էր, այսինքն մայրաքաղաքի լեզու:

Երբ որ Սուրբ Գիրքը թարգմանվեցավ, նորա լեզուն եղավ ամեն հայի համար գրականական լեզու. շիմանաք, որ նոքա հեշտությամբ կհասկանային, ոչ. մեր պապերու համար ևս այդ լեզուն այնքան մութ, դժվար, մեռած, անհարմար էր, որքան մեզ համար¹⁰:

... Մեր օրոք «քլաս մտնել», «փառախոտով ճանապարհորդել», «փոթթեսթավաթ անել», «չայ կամ քոֆե խմել», «բովթիլքան ռասքուփոփվաթ անել» և այլն, և այլն, և այլն, արդեն համարվում են կոշտ խժդժաբանություն և մենք, էմինի¹ աշակերտքս, առաջինն էինք, որ ամաչելով (իբր թե արածներս աններելի մեկ հանցանք էր), սկսանք հայ կենդանի բարբառի մեջ մուծանել դասատուն կամ դասարան, թեյ, սուրճ, համալսարան, դասախոսություն և այլն բառերն, որք հետո մեր հետնորդների համար դարձան սովորական գործածելի բառեր, և այժմ մինչև անգամ հայաբնակ քաղաքների ամենացածր դասակարգի մեջ մուտք են գործած¹¹:

* Խոսքը Մկրտիչ էմինի մասին է, որին Պատկանյանը աշակերտել է լազարյան ճեմարանում՝ 1843—1849 թթ.:

¹ «Լեզվի համար ինչ օգուտ ունի թարգմանությունը», 1857 (Ռ. Պատկանյան. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 186):

² Նամակ Նոր Նախիջևանից, 1882 (նույն տեղում, էջ 350):

³ Հոմերի «Իլիականը» և Հոմերի «Ոդիսականը», հեղ. Յ. Շմիդտի, թարգմանություն՝ Փ. Վարդանյանի գրախոսականից, 1886 (նույն տեղում էջ 380):

⁴ Դ. Դևֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպի հայերեն հրատարակության Առաջաբանից. թարգմ.՝ Ռ. Պատկանյան, 1858, ՍՊԲ (նույն տեղում, էջ 184):

⁵ «Հայտարարություն Գամառ-Քաթիպայի», 1856 (նույն տեղում, էջ 183):

⁶ Գ. Քանանյանին գրած նամակից, 1857, օգոստոս (Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1970, էջ 173):

⁷ Գ. Քանանյանին գրած նամակից, 1855, սեպտեմբեր (նույն տեղում, էջ 62):

⁸ Գ. Քանանյանին գրած նամակից, 1859, նոյեմբեր (նույն տեղում, էջ 229):

⁹ Նամակ Նոր Նախիջևանից, «Մշակ», 1881, № 233:

¹⁰ «Ազգային լեզվի մասին» հոդվածից, 1874—1875 (Ռ. Պատկանյան. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 404):

¹¹ «Մանկական հիշողություններից», 1886 (նույն տեղում, էջ 165):

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ*

(1830—1901)

... Եթե ազգի մը գրականությունն նույնին մտքի ու վիճակի, բարքի ու վարքի, ըղձի ու վշտի հայլին է, ո՛հ, քանի՛ հավատարիմ է ուրեմն մեր հին և նոր գրականության հայլին. ներքին և արտաքին պատճառներ կներգործեն անոր վրա և զայն՝ ինչպես որ է՝ կներկայեն մեզ:

... Եվ ինչպե՞ս կարելի է, որ հայ գրականությունն մեծավ մասամբ այս օտարոտի կերպարանը շունենա, ինչպե՞ս կարելի է, որ առաջադեմ ազգաց մտավոր գանձերուն ետեեն չվազե և ճարակ չփնտրե, քանի որ ինքն իր բախտին և պարագայից տերը չլինելով՝ քաղաքական շրջանավոր հեղաշրջումներու ենթարկեր, իր հնությանց համբարները՝ քանի մը գրավոր և անգիր նշխարներե զատ՝ այրեր քանդեր, մերթ ասորի, մերթ հույն, մերթ արապյան աղբյուրներու դիմեր է իր մատենագրությունն արդյունավորելու, քանի որ ներսեն վրդով ու շփոթ, նախարարական պառակտումներ, դրսեն հարձակումներ՝ զինքն անընդհատ հուզման մեջ պահեր, և իլերջո հալածում կրելով՝ մերթ բուռն, մերթ կամավոր գաղթականության մեջ դոյլ ու հանգիստ է գտեր:

... Ամենուն հայտնի է, թե որևէ ժողովրդյան մը գրականությունն ինքնին շժագիր, մանավանդ շղարգանար. շատ անգամ օտարամուտ սկիզբ մը կամ տարր մը կ'ունենա, սակայն հարկ է, որ այս տարրն աննշմարելի դառնա բնատիպ հանգամանք:

Հին Հունաստան Փյունիկեան և Եգիպտոսեն փոխ կառնու

* Մ. Մամուրյանը թարգմանություններ է կատարել Գյոթեի, Լեսսինգի, Վոլտերի, Բոմարշեի, Սքոթի, Դյումայի, Ժյուլ Վեռնի, Սյուի և այլ գրողների ստեղծագործություններից:

իր այբուբենն, իր դիքն, իր կրթությունը, բայց իր վառվռուն, ճարտար և հիանալի երևակայությամբն ինչպե՞ս իր հատուկ դրոշմն անոնց կկոխե: Հոռո՞մ՝ Հունաստանի աշակերտը՝ չատանար, Հոմեր, Թյուակիտիտես, Քսենոֆոն կարդալով ու թարգմանելով, ինքն ալ Վիրգիլիոսներ, Օվրատիոսներ, Պլինններ, Տակիտոսներ կատեղծե և իր ոգին բնիկ գրականության կհաղորդե: Նույնպես վերջեն Իտալիա բոլոր հյուսիսային ազգերու նոր մտային մղում մը տալովը՝ Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա կուրորեն անոր շնորհեցան, իրենց ազգային հանձարը շկորուսին, նամանավանդ անգրագարձ ներգործեցին իրենց դրացիներուն վրա, ինչպես որ եվրոպական գրականության փոքր ի շատե հմուտ լինողը կրնա վկայել: Ուրեմն եվրոպական ազգերու գրականությունն իրարմով կգործեն ու կզարգանան, առանց յուրաքանչյուրն իր ազգային ոճը, ձևը, ոգին ու հակումը այլակերպելու: Երկար կլինի նշանակել աստանոր, թե ինչպես մեն մի ազգ իր հատուկ հանձարներուն միջոցով նշանավոր հեղաշրջումներ պատճառեց ոչ միայն իր, այլև օտար երկիրներու մեջ՝ և ինչպես իմաստասիրության, պատմության, երաժշտության, ճարտարապետության, նույնպես գրականության նոր թվական, նոր դպրոց, նոր ուղղություն բացավ:

...Օտարեն առնուլն ինչ-որ գիտությանց և արհեստից սահմանին մեջ է, օտարեն առնուլն ինչ որ դարեր անբավ ճիգ ու քիրտ թափելով ձեռք ձգված է և դյուրագին, օտարեն քաղելն այն հանրական ճշմարտություններն՝ որ բոլոր մարդկային սեռի սեփականություններ են՝ բնավ մեղադրելի, վընասակար և անբնական գործ մը չէ...

Բայց միթե թարգմանության մեջ ալ կարելի չէ ընտրություն մը ընել, միթե հարմար կամ անհարմար ինչ որ մեր առջևը ելնե թարգմանելով՝ հասարակության միտքը չվնասի՞ր: Միթե չկա՞ն բարեկիրթ ազգեր, որոնց վեպերը մեր ազգին կացության, ոգվոյ ավելի պատկանին: Իհարկե, ամեն ազգի մեջ կան, և կմնա միայն շատ մը հոռի, փտուն նյութեր դուրս ձգելով՝ լավագույնն ու օգտակարը գտնել: Ազգ մ՞որ վեպերուն մեջ միայն խանդալիք և մտածին սեր, միայն բուռն կիրք, միայն սնտոի պատրանք և խաղ կփնտրե՞ շրջմուլի լուսի մ՞ետե են վազող ուղևորին կ՞նմանի, որ՝ իվերջե անդունդ կը

գլորի: Այսպիսի վեպեր իր նախնի պարզությունն ու բարոյական ուժը պահող ժողովրդյան մը համար վնասաբեր են: Մեզի հարմարագույն կթվի այն վիպական պատմություններն, որ հռչակավոր հեղինակներու գործ լինելէ զատ՝ մեր վիճակին, մեր կենաց գեթ անուղղակի նկարագիրն ընծայեն և իլավ անդր դիմելու մեզ գրգիռ ու հրապույր տան:

Քանի որ արդեն հայ ականջներ Ֆրանսիայի անմահ և մերթ անշահ վիպասաններու գործերով լցված են, քանի որ արդեն մեր միտքն ու սիրտը բավական սնան և մոլեցան, երբեմն գեղեցիկ իմաստներով՝ ստեպ սիրահող անսպառ զրույցներով՝ քանի որ Ա. Դյումա, Վ. Հյուգո, է. Սյու, Լ'Ապպե... քիչ շատ հայացան և իրենց հնարագետ, վեհ, նուրբ, ազատական հանճարին ճաշակը մեզ տվին, թեև ուրիշ գալլիացի վիպասաններ՝ իրենց ոճին հետ՝ ընդածին հատկությունն ալ կորուսելով՝ Բայրոնի ըսածին պես՝ չէ թե քարգմանյալ այլ ծպտյալ կամ այլակերպ ներկայացան մեզ, ուստի հանդեսիս մեջ հետզհետե տպելու մտոք, արժան դատեցի այս անգամ ալ մերազնեից շատերուն անունով ծանոթ, այլ գործով անծանոթ վիպասան մը թարգմանել. այս է Վոլթր Սքոթ¹:

...Գյոթե հատուկ ազգի մը դրոշմը շունի, անձնավորություն շունի, թեև կբամբասովի իբրև անձնասեր, և իր գործերը, մասնավորապես Վերբերը, որ ամեն առաջադեմ ազգերու չեզվով թարգմանված է, զրված է նաև այն հայերուն համար, որ այս դարուս մեջ կապրին, որ առաքինությունը իբր անուն մը չեն անգոսներ, որ ճշմարիտ, անկեղծ այլ թշվառ սիրո լեզի բաժակը ըմպած են կամ գեթ անոր սև սուզը կհարգեն՝ այն հայերուն համար, որ մարդկային սեռին թեև հին և սակավաթիվ, այլ արթուն և զգայուն մասը կկազմեն և որչափ որ դարե ի դար կհեծեծեն և իրենց արտասովաց աղբյուրը շորցեր է, դեռ իրենց սրտին մեջ բնության, անարատ սիրո, ճշմարտության և ազատության համար հառաչանք մը, արտասուք մ'ունին...²:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Վ. Սկոտի «Իվանոն» («Այվենհո») վեպի հայերեն թարգմանության Առաջաբանից, թարգմանիչ՝ Մ. Մամուրյան («Արևելյան մամուլ», 1871, № 1, էջ 33, 34, 35, 37, 38):

² Գյոթեի «Վերթեր» վեպի հայերեն թարգմանության Ներածությունից, թարգմանիչ՝ Մ. Մամուրյան, Չմյուռնիա, 1868, էջ 7:

ՐԱՖՖԻ*
(1835—1888)

... Մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը: Իսկ ընթերցասիրությունը ամբոխի մեջ տարածելու գլխավոր միջոցներից մինը բանաստեղծական և վիպական գրվածքներն են...¹:

Թարգմանելով ռուսաց լեզվից Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» (Карабагский астролог) անունով վեպը, մեր նպատակն է եղել ծանոթացնել հայ հասարակությանը այդ գեղեցիկ աշխատության հետ, որի նյութը առնված լինելով Ղարաբաղի մեկիքների կյանքից, հարկավ, մեզ, հայերիս համար պետք է շատ հետաքրքիր լինի:

...Ներկայացնելով «Ղարաբաղի աստղագետը» մեր ընթերցող հասարակությանը, մեր ցանկությունն է՝ ոչ միայն ծանոթացնել նրան մի գեղեցիկ վիպական ստեղծագործության հետ, որի մեջ արևելյան կյանքը նկարված է իր պարզ, նահապետական գույներով, այլ առավել թանկագին է մեզ համար այդ գիրքը այն կողմից, որ իբրև մի պատմական արձանագրություն, բավական ճիշտ կերպով պատկերացնում է մեզ այն աղետալի հանգամանքները, որոնք Ղարաբաղի հայկական իշխանությունների քայքայման և անկման պատճառը դարձան: Եվ ինքը, հարգելի հեղինակը, այդ նպատակով է գրքել իր վեպը, և դրա համար էլ կոչում է նրան «Անդրկովկաս-

*Րաֆֆին թարգմանել է Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը, և Ջախեր-Մազոխի «Կայննի կտակը» վիպակների ժողովածուն, բանաստեղծություններ՝ Հայնեից, Հյուգոյից: Փոխադրություններ է կատարել «Աղբյուր» մանկական ամսագրի համար. Տուրգենևի «Աղավնիներ» պատկերը, Օվսյաննիկովի «Ֆրիգոլսի» պատմվածքը, «Ամպը» անգլիական զրույցը (Թարգմ. ռուսերենից) և այլ գործեր:

յան պատմական վեպ» (Исторический закавказский роман)...²:

...Մեր թարգմանած երեք վեպիկների մեջ Ջախեր-Մազոխը առաջ է բերում Կայենի ժառանգություններից մեկը, որ կտակել է նա ապագա սերունդին, դա է՝ կնոջ և տղամարդի սերը: Այդ սկզբունքը պատկերացնում է նա հիշյալ վեպիկների մեջ, բայց պատկերացնում է իբրև շարության տարր, իբրև պատճառ մարդկային բոլոր դժբախտությունների և իբրև մի շարիք, որ սարսափելի կերպով ոչնչացնում է այն բոլորը, ինչ որ մարդիկ սովոր են համարել բարիք, մի խոսքով՝ իբրև Կայենի կտակը իր թշվառ ժառանգներին...³:

...Լեզուն թեև փոփոխվում է, բայց իր փոփոխության մեջ ավելի կյանք է ստանում, զարգանում է և կատարելագործվում է: Մի մարդ կարող է ոչ մի եկեղեցու չպատկանել և մինչև անգամ անկրոն լինել, բայց չէ կարող որևիցե լեզվով չխոսել: Խոսքը միշտ կմնա, որքան ապրում է մարդկությունը. նա հավիտենական է...⁴:

...Մի ազգի լեզուն աճում է և զարգանում է ներդաշնակաբար նույն ազգի կյանքի և մտավոր զարգացման հետ: Որքան ընդարձակվում է նրա գիտությունը և արհեստը, այնքան ավելի առարկաների հետ ծանոթանում է նա և այնքան ավելի անուններ ու բառեր է հնարում: Այդ է պատճառը, որ վայրենի ազգերը հազար անգամ ավելի քիչ բառեր ունեն, քան թե քաղաքակրթված ազգերը:

Մեր գրաբար լեզուն ժողովրդի բերանով մեզ հասած կենդանի լեզուն չէ, եր կարողանար աճել, մշակվել և կատարելագործվել նրա կյանքի պայմանների հետ: Մեր գրաբար լեզուն մի քանի տասնյակ դարերով առաջ մեռած լեզուն է, որ հասել է մեզ՝ դրված հին մատենագրության դագաղների մեջ: Ուրեմն նա արտահայտություն է ա՛յն ժամանակվա դրության, որպես մտածում էր և գործում էր հայր... Նույն գրքերը, որոնց միջոցով հասել է մեզ գրաբար լեզուն, չեն պարունակում նկարագրեր իրանց ժամանակի կենսական բոլոր երե-

վույթների: Մեր հին մատենագրությունը կազմված է պատմական և կրոնական գրքերից, որոնց պարունակությունն այնքան միակողմանի և համանման է, որ միևնույն բառերին հանդիպում ես ամեն տեղ: Նրանց մեջ պակաս են, օրինակ, բառեր տնտեսական և ընտանեկան կյանքի, նրանց մեջ շատ չկան գիտնական, արվեստագործական և հոգու ըզգացմունքներ արտահայտող բառեր, որովհետև այդ առարկաների մատին խոսվում է կամ խիստ սակավ, կամ ամենեին ոչ:

Բառերի մի փոքր ընդարձակ հավաքածու է տալիս մեզ Աստվածաշնչի թարգմանությունը, որովհետև նրա պարունակությունն ավելի բազմակողմանի է:

Իսկ ժողովրդական լեզվի մեջ մեծ մասամբ կարելի է գտնել այն բառերը, ինչ որ պակասում են մեր հին գրքերից հավաքած բառարաններում: Մտի՛ր գյուղացու խրճիթը, նրա տնտեսական բոլոր կահ-կարասիքը նրա լեզվում ջոկ-ջոկ անուններ ունեն: Գնա՛ երկրագործի մոտ, նա յուր գուլթանի և արորի բոլոր պարագաների անունները կասե քեզ. նա կասե քեզ ժամանակների անունները, երբ նա ցանում է, նա կասե քեզ այս և այն հատկություն ունեցող հողերի անունները: Ուզում ես ծառերի, թփերի, պտուղների անուններ գիտենալ, գնա՛ անտառների մեջ բնակվող շինականի մոտ, նա բոլորը կասե քեզ: Ուզում ես ծաղիկների և խոտերի հետ ծանոթանալ, հարցրո՛ւ խաշնարած հայից, նա կասե քեզ՝ ոչ միայն յուր սարերի և դաշտերի բույսերի անունները, այլև նրանց բլծրչկական հատկությունները: Մի խոսքով, դու գյուղացի հայի լեզվի մեջ կգտնես նրան շրջապատող բնության շատ առարկաների անունները և կլսես նրա կարծիքը յուրաքանչյուրի մասին...⁵:

...Թողնենք օտարազգիների մեջ զանազան ձևերով եղած տպագրական ընկերությունները, թողնենք Կ. Պոլսի մեջ նույն նպատակով կազմված մի քանի ընկերություններ, հիշենք միայն Վենետիկի և Վիեննայի հայ աբեղաների միաբանությունները: Նոքա ոչ միայն աղատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանի վանքերի խորշերում փտելուց, այլև

ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ: Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրություն, ծանոթացրին եվրոպական գիտությունների հետ, մյուս կողմից, հարստացրին յուրյանց վանքը...⁶:

...Գրաբար բառեր գործ ածելը հեշտ է, բայց մարդ պետք է ճաշակ ունենա նրանց ընտրելու համար, պետք է երաժրչտական լսողություն ունենա, որ ըմբռնի, ո՛ր բառը որտե՛ղ կարող է քաղցր հնչել և որտե՛ղ անախորժ: Այս կողմից ինձ համար ատելի են մանավանդ մի քանի թարգմանիչներ: Անցյալ օրը ձեռքս վերցրի թերթելու մանկավարժ Փիլիպոս Վարդանյանի մի նոր թարգմանած գիրքը: Այդ մարդը աշխատասեր է... նա էլ է ուղում օգնած լինի հայոց գրականությանը... Բայց գիտեք, նա ինձ ինչ է հիշեցնում.— գյուղից քաղաք տեղափոխված և շուտով հարստացած մի վաճառականի: Նրա կոշիկները եվրոպական են, արխալուղը ասիական, իսկ գդակը ոչ այս, ոչ այն: Նրա սեաքած և կոշտ մատները զարդարված են ադամանդյա մատանիներով: Ինչպես երևում է, մանկությունից հայերեն լեզուն նրա համար խորթ է եղել: Հետո սկսել է հայերեն սովորել և հանկարծ ընկել է գրաբարի աշխարհը և այժմ ինչ որ գրաբար բառեր գիտե, խցկում է ամեն տեղ: Երբ կարդում եմ նրա թարգմանությունները, ինձ թվում է, որ ատամներովս ավազ եմ ծամում: Երևակայեցեք այն բանաստեղծի դրությունը, որի երկերը ավազոտ լեզվով են թարգմանվում: Ինձ մեղադրում են, որ ես գրելիս ռուսերեն եմ մտածում... Եթե իմ լեզվի մեջ երևում են ռուսերենի նման դարձվածներ, այդ չի նշանակում, որ ես նրանց ուղղակի ռուսերենից եմ թարգմանել, այլ որովհետև հայոց լեզուն ուրիշ ձև շունե այս կամ այն միտքը արտահայտելու և միակ հայկականը իմ գործածածն է: Զարմանալին այն է, որ ռուսաբանության մեջ ինձ մեղադրում են նույնիսկ այն մարդիկ, որ իրանք իմ քառորդի չափ հայերեն չգիտեն: Իրենք չեն թմաշում գերմանաբանությունը խառնելով ռուսաբանության հետ, ստեղծել մի հավաքական անճոռնի քարբառ, իսկ ինձ մեղադրում են հակահայկաբանության մեջ, ինձ, որ ծնվել եմ բուն

ժողովրդի մեջ, սնվել էմ այնտեղ և մանուկ հասակիցս սկսած անգիր սովորել հինգերորդ դարի գրականությունը...

Ահա հայ վիպասանի դրությունը... մի կողմից նա պետք է դադարարի և ձևի մասին մտածի, մյուս կողմից մի աղքատ լեզու մշակելու համար գրուի տրաքացնի: Լուսավորված ազգերի մեջ ամեն մի առարկա իր որոշ անունն ունի, իսկ մենք դեռ նոր ենք զբաղվում առարկաների անուններ ստեղծելով: Ասում են, գրաբար գրքերում շատ առարկաների անուններ կան: Մեր ժամանակակից կյանքը այնքան տարբերվում է պատմական կյանքից, որ գրեթե ոչինչ նմանություն չէ մնացել ոչ մեր կերակրների, ոչ մեր հագուստների և ոչ տան կահ-կարասիների մեջ: Ինչպե՞ս գրաբար անունները հարմարացնես այժմյան առարկաներին: Մի դժոխային աշխատություն է մեղանում վեպ գրելը: Դեռ հրապարակախոսը կարող է մի երկու հարյուր բառով յուր գրույսը պահել... Երբ ես թարգմանում էի Զախեր-Մազոխի «Կայենի կտակը», այնպիսի խոչընդոտների էի հանդիպում այս կամ այն առարկայի անունը հայերեն թարգմանելիս, որ կատաղում էի...⁷:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Փունջ», հ. 1, Թիֆլիս, 1874, էջ 8:

² Պլ. Զուբովի հիշյալ վեպը Բաֆֆին թարգմանել է 1882-ին՝ իր «Խամսայի մեղիությունները» աշխատության լույս ընծայումից անմիջապես հետո, կցելով նրան «Թարգմանչից» վերնագրով ընդարձակ առաջաբանը, որից այսանդ հատվածներ են բերվում: «Թարգմանչից» հոդվածը կրկրորդ անգամ հրապարակվել է 1906 թվ., վեպի կրկրորդ՝ վիեննական հրատարակության հետ (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 7):

³ Զախեր-Մազոխի «Կայենի կտակը» Բաֆֆին թարգմանել է ուսերենից, 1883-ի Ժայիսին, տնային բանտարկության ժամանակ: Թարգմանությունը նախ հրապարակվել է «Մշակում», ապա առանձին գրքով, 1884-ին, Թիֆլիսում, որին կցված է եղել վերոհիշյալ «Առաջաբանը» (տե՛ս Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 288):

⁴ «Ինչո՞վ ենք մխիթարվում» հոդվածից, 1879 (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 512):

⁵ «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ» հոդվածից, որ Բաֆֆին գրել է Գ. Սրվանձությանի համանուն գրքի լույս ընծայման առթիվ, 1874 (նույն տեղում, էջ 96):

⁶ «Հեղինակների վիճակը» հոդվածից, 1874 (նույն տեղում, էջ 88):

⁷ Ալ. Երվանդազե, Բաֆֆիի կյանքից, 1895 («Կյանքի բովից. Հուշեր», Երևան, 1982, էջ 451—452):

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ*
(1837—1907)

...Խորին հարգանքով ստացա Ձեր պատվական աշխատասիրությունը՝ «Армянские беллетристы»:

Ըստ ամենայնի համակրելով Ձեր տկսած գործին և վստահ լինելով նորա օգտավետութեանը, չեմ կարող չգովել Ձեր երիտասարդական վառ եռանդը:

Ձեր գիրքը մեծ հետաքրքրութեամբ և սիրով կարդացվում է ամենքից, թարգմանությունները կատարված են մեծ խնամքով և բարեխղճաբար: Թեպետ ինքս քաջ ուսագետ չեմ, բայց շատ շատերի հետ միացած՝ կասեմ, որ կտորներ կան, մանավանդ իմ հողվածներից, որ բնագրի շափ աղգային բնավորութիւն են արտահայտում:

...Լավ ուսումնասիրել պետք էր նույնպես և թարգմանած հողվածի բովանդակութիւնը. գոնե իմ նկարագրած կյանքերի մեջ անճշտութիւններ պատահում են. օրինակի համար ՔՈՒՐՍԻ թարգմանած է РОД ДИВАНА, որ ճշմարիտ չէ, նույնպես և ԳՋԻՐ յուր բուն նշանակութիւնը չունի և այլն:

...Ներեցեք պարզութեանս,՝ այս բարեմիտ նկատողութիւններն ես անում եմ հետևյալ գրքերի լույս տեսնելն աչքի առաջ ունենալով, ապա թե ոչ, ինքն ըստ ինքեան Ձեր աշխատութիւնները մեր դարու նշանավոր պիտանի գործերից միին են: Ես համաձայն չեմ լրագրաց՝ ոմանց վարժիքին՝ իբր թե հատվածաբար չէր հարկ թարգմանել, այլ ամբողջովին: Ընդհակառակն, ճաշակ տալու համար դուք այնպիսի կտորներ եք ընտրել, որոնք հեղինակին կենդանի պատկերացնում են և մի ամբողջութիւն են պարունակում...¹

* Պ. Պոռոյանը թարգմանութիւններ է կատարել Տոլստոյի, Գոգոլի, Օստրովսկու, Դիկենսի, Օժեշկոյի և այլ հեղինակների ստեղծագործութիւններից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Նամակ Յու. Վեսելովսկուն և Մ. Բերբերյանին, 1893, հունվար (Գրական ժառանգութիւն», գիրք 1, Երևան, 1940, էջ 332, 333):

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ*
(1840—1911)

...Գրաբարի բառերը հայերեն լինելով այդ բառերի ձևափոխություն-հոլովմունքը, խոնարհմունքը, համաձայնությունը,— մեկ խոսքով քերականությունը հայկական շէ, այլ օտար և արվեստավոր, ուրեմն և՛ բարբառների համեմատությամբ՝ նորամուտ մի լեզու է: Քերականության արվեստավոր լինելը մի անհրաժեշտ պայման էր համարվում Սուրբ Գիրքը ճիշտ և անսխալ թարգմանելու համար: Այսպես էին վարվում այն ժամանակ ձեռնարկած գործին հմուտ թարգմանիչները: Սուրբ Գիրքը օտար լեզվից թարգմանելով սրբազան պարտականություն էր համարվում բնագրի քերականության և նրա համաձայնության օրենքները պահպանել, ինչպես և պահպանեցին թե մեր լեզվով թարգմանելիս, և թե վրաց, որոնց խուցարի ասվածը նույնպես արվեստավոր է, ինչպես և մեր գրաբարը:

Այս հանգամանքը ոչ միայն խոթի շախտի համարենք, այլ առավել պիտի դարմանանք, որ այդքանն էլ արել են, այսինքն համարձակվել են թարգմանել Սուրբ Գիրքը, թեկուզ բնագրի քերականությունով, որ հետո դառել է սրբազան լեզու: Ս. Գրքի թարգմանությանը ոչ միայն ընդդեմ պետք է լինեին ասորիք, և թե հույնք, այլ նույնպես հայերն էլ պիտի մեղք համարեին, եթե ավելի կրոնական լինեին, քան թե էին, ինչպես մեղք էր համարում լատինական եկեղեցին Սուրբ Գիրքը թարգմանել եվրոպական լեզուներով, ինչպես ներկայումս Մխիթարյանք և

* Ղ. Աղայանը արձակ և շախտո թարգմանություններ է կատարել Շեքսպիրի, Շիլլերի, Հայնեի, Պուշկինի, Սվիֆտի, Տոլստոյի, Կոխլովի ստեղծագործություններից:

էջմիածնեցիք մեղք են համարում գրաբարից աշխարհաբարի վերածել Սուրբ Գիրքը: Եթե բանն այսպես չլիներ, էլ ինչ մեծութուն և բարձրություն կունենային Սահակն ու Մեսրոպը, էլ ինչ մեծություն կունենար նրանց գործը: Դրանք այնպիսի մի գործ են կատարել, որ ամբողջ Ասիան անհուն դարերի ընթացքում կատարած չէ: Այսպիսի մի մեծ գործ կատարելու համար կարելի էր և հանճարավոր շիհներ, այլ միայն սուրբ, պարզ և ազատ ամեն տեսակ կրոնական մոլեռանդությունից, և հենց այսպես էլ էին: Բայց մենք այդ հատկությունների հետ այդ մեծ մարդկանց մեջ միացած ենք տեսնում և խորին հեռատեսություն, և բարձրագույն հանճար: Այս երևում է նրանց տված պտղից, նրանց աշակերտներից, որոնցից գըլխավորը՝ Խորենացին իր մեծ վարժապետի համար ասում է. «Ոչ որպես արվեստ ուսուցաներ, այլ իբրև զհոգի առաքելաբար աշակերտացն տայր»: Այսպես կարող է լինել միայն բնածին, պարզ և հանճարի տեր մարդը...

Հեշտ ձեռնարկություն չէ Ս. Գրքի թարգմանությունը և ոչ հասարակ մահկանացուների գործ: Թարգմանել օտար լեզվից կարելի էր մեկ այնպես, ինչպես ուր հայը կասեր նույնը, մեկ էլ այնպես, ուր հայն էլ այնպես ասեր, ինչպես բնագրումն է ասված, և միևնույն ժամանակ հասկանալի լիներ նրան և շատ էլ խորթ չլիվար: Ինչ ասել կուզի, որ այս երկրորդ եղանակը շատ դժվար էր և պահանջում էր մեծ հմտություն: Մեր թարգմանիչները այս երկրորդ և դժվար եղանակն ընտրեցին Ս. Գիրքը թարգմանելիս: Եվ հենց այս դժվարությունն էր պատճառը, որ երկու անգամ (առաջ ասորերենից և հետո հունարեն ընտիր բնագրից) թարգմանելուց հետո էլ գործը շատ պակասավոր գտնվեցավ: Այս մասին Խորենացին ասում է բացահայտ խոսքերով. «Բայց քանզի անպետք էին մերում արվեստի, ի բազում մասանց թերացյալ գործն գտանյուր»:

Այս ի՞նչ արվեստ էր, որին անգեոֆ էին Սահակն ու Մեսրոպը և նրանց անդրանիկ հելլենաբան աշակերտները, որոնք մասնակցել էին «ի բազում մասանց թերացյալ» երկրորդ թարգմանությունը:

Այս խնդիրը նույնպես պարզաբանում է Խորենացին, նույն ասածի վրա ավելացնելով. «Վասն որո առյալ մեծին Իսահակա և Մեսրոպա զմեզ (Խորենացուն և իր ընկերներին)

առաքեցին յԱղեքսանդրիա, ի լեզու պանծալի, ի ստույգ յոգանալ ճեմարանին ՎԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ»...:

Այստեղից պարզ երևում է, որ վերաբանությունը մի արվեստ էր, որով պիտի հմտանային թարգմանելու գործին, պիտի սովորեին վերաբանել-թարգմանել, պարզաբանել, համեմատել, վերլուծել, վերածել, նմանակերտել...

...Վերաբանությունն աշակերտների համար լեզուն մի արվեստ էր, այդ արվեստով նրանք լեզուն քերթում էին, կերտում էին, որի մեջ հմտագույնը անվանվում էր քերթող: Այդ վարպետներից ավագագույնը հորենացին է և այս պատճառով էլ նա անվանվեց Քերթողահայր: հորենացու լեզուն արվեստավոր է, բայց ոչ չափազանց խորթ հայի ականջի համար, իսկ նրա ընկերներին, ինչպես Դավթինը, խորթութուն շատ ունի: Սուրբ Գրքի լեզուն միատեսակ չէ, նա ավելի սրբագրված է երևում, քան երրորդ անգամ նորից թարգմանած: Նրանում երևում էր, որ առաջին թարգմանությունը ժողովրդի լեզվին շատ մոտիկ է եղել: Եվ ուրիշ կերպ էլ չէր կարելի սպասել Մեսրոպի և Սահակի նման ժողովրդասեր մարդկանցից, որոնք նպատակ չունեին մի արվեստավոր լեզու ստեղծել, այլ թարգմանել եկեղեցու արարողությունները և Սուրբ Գիրքը ժողովրդին հասկանալի լեզվով, որ այլևս թարգմանի կարոտ չլինի...¹:

... Ի՞նչ դժվարություն կարող էր առաջ գալ Սուրբ Գիրքն այսպիսի մի լեզվով թարգմանելու համար, մինչդեռ այսօր իսկ ավետարանի տարածողները ոչինչ դժվարության չեն հանդիպում ավետարանը թարգմանելիս կիսավայրենի և կիսակիրթ ազգերի լեզվով:

Այն դժվարությունը, որ այս առիթով առաջ են բերում մեր պատմաբանները, և նույնիսկ հորենացին, որ ասում է. «Փանգի անգետք էին մերում արվեստի, ի բազում մասանց թերացյալ գործն գտանյուր»․ այս խոսքը մեզ համար այն է պարզում այսօր, որ Մեսրոպն ու Սահակը արվեստավոր լեզվով չէին թարգմանում, այլ բուն ժողովրդական, բուն հայերեն...

Կրտսեր թարգմանիչների մեջ ամենից երևելի հանդիսացողը, ամենից շատ ապրողը Մովսես հորենացին է: Շատերը...

կարծում են, որ Մովսեսը Սուրբ Գրքի թարգմանությունը մասնակցած չէ: Բայց դա խոշոր սխալ է. ապա ո՞վ պիտի կատարելագործեր, իր ասելով «ի բազում մասանց թերացյալ գործը», քանի որ հենց դրա համար էլ ուղարկել էին նրան Աղեքսանդրիա, «ի լեզու պանծալի, շի ստույգ հոգանալ ճեմարանին վերաբանության»: Մեկ տեղ էլ ինքը հիշեցնում է Սահակ Բագրատունուն, թե ինքը՝ «այր մի է ծերացյալ և թարգմանությանց պարապյալ»:

Երևակայենք մեզ, որ Մովսեսը՝ նախքան բարձր ուսման գնալը, ոչ միայն քաջ հմուտ էր իր մայրենի լեզվին և իր վարդապետների բոլոր գիտությունը սեփականացրած, այլև անհատապես օժտված վառ երևակայությամբ և բանաստեղծ բնության հատուկ ձիրքերով, որով նա ամփոփված էր իր մեջ մանկությունից լսած ժողովրդի բանավոր գրականությունը: Այս մարդն ահա քաջ հմտանալով Աղեքսանդրիայի ճեմարանում այն ժամանակվա ճարտասանական և հռետորական արվեստին, հանդես եկավ մեր նորածիլ գրականության մեջ մի բոլորովին նորածե լեզվով, ստեղծեց մի բոլորովին նոր դրուպոս, որի ազդեցությունը ենթարկեց թե ցայնժամ և թե այնուհետև եղած դպրության լեզուն: Այս լեզվով ոչ ոք կարող չէր գրել, մինչև լավ շտվորեր այն արվեստը, որով գրված էր, և այդ բավական չէր դեռևս, պետք է գիտենար և նույնիսկ հունական լեզուն, որ այնուհետև ըմբռներ նրա բառերի դասավորության եղանակը և համաձայնությունը: Սրա համար էլ այդ լեզուն մնաց այդ մեկ դարումն ամփոփված, սրբանալով Սուրբ Գրքով և դառնալով եկեղեցական լեզու...²:

...Հինգերորդ դարում մի քանիսի և այն էլ մի քանի տարում արած թարգմանություններն ու շարադրությունները մի քանի դարերի համար կենսատու պաշար դարձան: Այս մի պատմական օրենք է: Մի ազգի քաղաքական ընդմիջումները, ընդհատումները կարող չեն մահացու լինել, եթե նա անցյալից ստացած մի սննդարար բարոյական և մտավոր պաշար ունի...³:

...Հինգերորդ դարում Աստվածաշունչը թարգմանելիս վարվեցին այնպես, ինչպես ընդունված էր իրենց ժամանակ. իսկ այն ժամանակ լեզուն համարվում էր մի արվեստավոր շենք, գրողի ճաշակից կախված և ոչ թե մի գործարանական մարմին՝ բնական աճելության և զարգացման ենթակա: Կարելի չէ ասել, որ լեզվի մշակության գործում գրողի ճաշակը ոչ մի դեր չէ խաղում, բայց եթե ճաշակը բնականից շեղվում է դեպի արվեստականը, երբ թողնում է հարազատը ու ազգայինը և ստորին ու խորթին հետևում, նա այլևս ճաշակ չէ, այլ բռնազբոսություն...

Նվրոպական լուսավորության հոսանքը դեպի մեզ՝ առիթ դարձավ մեր նոր գրական լեզվի ծաղկելուն, իսկ հաղորդակցության դյուրությունը այդ լեզուն տարածեց մեր բոլոր խավար խորշերում: Ոչ միայն գրաբարը դուրս մղվեց գրական ասպարեզից, այլև բարբառները կորցրին իրանց նշանակությունը, տեղի տալով գրական լեզվին...

...Ես Աստվածաշնչի վրա նայում եմ միայն լեզվի տեսակետից: Եթե Աստվածաշնչի վրա նայվի սոսկ բարոյական տեսակետից, իսկ լեզվի տեսակետն արհամարհվի, այնուհետև թարգմանիչները կարող են լեզվի կանոնավորության վրա ոչ մի ուշադրություն չդարձնել, ինչպես շեն դարձնում ո՛չ բողոքականները, և ո՛չ կաթոլիկները, որովհետև նրանց նպատակն այն չէ, որ մեզ ուղիղ հայերեն սովորեցնեն, այլ որ՝ կրոնական տեսակետից՝ իրանց ուղած ճանապարհովը տանեն մեզ, թեկուզ դրա համար մեր լեզուն աղավաղեն:

Եթե Աստվածաշնչի թարգմանությամբը պետք է սրբագործվի մեր գրական լեզուն, ապա պետք է ամենայն սրբությամբ էլ մոտեցվի նրա թարգմանությանը: Թարգմանիչներն ազատ պետք է լինեն ամենայն տեսակ կանխակալ կարծիքներից, փարիսեցիությունից, մոլեռանդությունից, հնամուլությունից, այլ միայն աշխարհիկ լեզվի սրբագործված օրենքները պետք է հարգեն ու նրան միայն հպատակեն:

...Ի վերջո ավելորդ չէր լինի, եթե թարգմանիչները, հենց իրանց մեջ լեզվի միություն պահելու համար, նախ և առաջ մի հրահանգ կազմեին, թե ինչպիսի ձևերից պիտի խորշեն և ինչպիսի ձևերի պիտի նախապատվություն տան, իսկ այդ հրահանգը հրատարակեին... Քննադատության բովից անց-

նելուց հետո, նորից կտրեագրեին և ապա կսկսեին թարգմանությունը, կամ թարգմանածի սրբագրությունը, նույն հրահանգի համաձայն⁴:

...եթե ինձ հարկ լիներ իդեալականացնել մի հեղինակի, ևս այդ պատիվը չէի տալ ոչ մի հայ կամ ոռուս հեղինակի, քանի որ նրանցից անհամեմատ խոշոր հսկաներ կան ընդհանուր գրականության մեջ, և որոնցով հարուստ է ոռուսաց թարգմանական գրականությունը, որին ես շատ եմ պարտական իմ մտավոր զարգացումովս⁵:

1864 թվականի վերջին և 1865 թվականի սկզբի ամիսները Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնության ամենաթունդ ժամանակն էր... Արևմտյան Եվրոպայի լուսավոր մտքերի առջև դրված թումբը քանդվելով, այդ քաղաքը հեղեղվեց նորանոր գաղափարներով: Դա էր առավելապես թարգմանական գրականությունը, որ յուրաքանչյուր օր տասնյակ հատորներով էր դուրս գալիս: Մարդ շշկվում էր, չգիտեր որը կարդա և որը թողնի, քանի որ մեկը մյուսից զարգացուցիչ էր, մեկը մյուսից գրավիչ...⁶:

...Ժողովրդի մեջ ընդունված և տարածված մի հատիկ պատվական գիրքը հրաշագործ դաստիարակի պաշտոն է կատարում, նրա միջնորդությամբ բյուրավոր անհատներ սերտ սիրով կապվում են միմյանց հետ, միակերպ խորհում, միակերպ գործում, միակերպ հառաջ ընթանում դեպի կատարելություն...⁷:

Մեր թարգմանողներից միայն պ. Փ. Վարդանյանն է հասկացել, թե որպիսի գրքեր պետք է տալ ժողովրդի ձեռքը, որ թե՛ գրավիչ լինեն և թե՛ օրինակելի: Նա արդեն տվել է մեզ Ֆրանկլին, Վաշինգտոն, Իլիական, Ողիսական, Ռոբինզոն, Հուս, Լուսեր, Մահմեդի կյանքը, պատրաստի ունի Սմայլսի ինքնօգնությունը, Գրուբեյի Պատմական պատկերները, Կորչի, Վոլ-

Թերի կյանքն ու գրվածները, Շիլլերի Ավաղակները և մի շարք վեպիկներ, Արևելյան Վիպաշխարհ, և էլի ուլ գիտե ինչ պատվական ծաղիկներ պիտի ընտրե ընդհանուր գրականության հոտավետ բուրաստանից, բայց այժմ տվածներն էլ մի գեղեցիկ առտնին մատենադարան է... պ. Վարդանյանը իր լեզվի մշակութունը վերին աստիճանի կատարելագործության է հասցրել: «Բնավորության» լեզուն իր առաջին թարգմանություններից անհամեմատ պարզ է, սահուն և կոկ...⁸:

Պ. Վարդանյանից հետո մեր թարգմանիչների մեջ աչքի է ընկնում պ. Գրիգոր Շահբուդյանը իր ընտիր թարգմանություններով: Նրա «Բնավորության կրթությունը», որի հեղինակը... մի իտացալի է (Անդրեաս Գաբրիելի), մի շատ ընտիր և պատվական գիրք է և օգտակար ձեռնարկ ամեն կրթողի և կրթվողի համար: Սրա նման կրթական նշանակություն ունին և նրա թարգմանած Ջոն Ստյուարտ Բլեկիի «Մտավոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթության մասին», Ժ. Բամբոսոնի «Մայրական դաստիարակությունը բնության օրենքների վրա հիմնված»: Իսկ մանուկների համար — Բաուենի՝ «Փայլուն ոսկին», էդգար Պոլի՝ «Ոսկի բլեզը», Անդերսենի՝ «Անդամալույծը», «Պապի ձեռնոցները»: Մենք թարգմանիչներ շատ քիչ ունինք, իսկ եղածների մեջ է՛լ ավելի սակավ են լավ թարգմանիչներ: Այդ լավերը արժանի են ամեն տեսակ խրախուսանքի... Մեր գրականությունը մի մանուկ է դեռևս, ուրեմն և կարոտ մեծ խնամքի...⁹:

...Ինձ համար թարգմանելու բաներ ուղարկիր... միայն լա՛վ բաներ, ժամանակի պահանջի համեմատ, ազատված ազգերի կյանքից առած...¹⁰:

...Եթե ես գիտենայի, թե որպիսի հեքիաթներ լսելով է զարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների երևակայությունը, ես նույն հեքիաթ-

ները կտայի և իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեին ավելի ևս ահռելի և զարհուրելի...¹¹։

...Հանճարավոր երգիծաբան Սվիֆթը ի դեմս լիլիպուտների ուղենալով ծաղրել իր ժամանակի անգլիական ատենատեղերում տիրապետող անճոռնի լեզուն, իր հերոսի մեղադրության ճառը այդ պաշտոնական լեզվովն է հորինում։ Այդտեղ կրտեսանենք միևնույն դարձվածի ստեպ կրկնություն՝ նախադասություններն ու պարբերությունները իրար խառնած, առանց միջակետի և վերջակետի։ Մի խոսքով, Սվիֆթը վարվել է այնպես, ինչպես վարվում են բոլոր ժամանակների և բոլոր ազգերի երգիծաբանները։ Իսկ ես իբրև թարգմանիչ ինչպե՞ս պիտի վարվեի այս դեպքում։ Իհարկե, ծաղրը թարգմանել իբրև ծաղր, ինչպես լուրջը թարգմանում ենք իբրև լուրջ...¹²։

...Մեր գրական լեզվի մեջ շատ անուններ կան թարգմանած, հայացրած, ինչպես՝ ծխախոտ, քթախոտ, հեշտաեռ կամ ինքնաեռ, կրկնակոշիկ, անդրավարտիք, մահճակալ, գետնախնձոր (իբր կարտոֆիլ)։

Թարգմանությունները միշտ հաջող չեն լինում և չեն ընդհանրանում ժողովրդի մեջ։ Կարելի է ասել ունևաման, գլխարկ, վեբարկու, բայց դրանով չեն որոշվիլ ոտնամանների, գլխարկների և վերարկուների տեսակները, որոնք ջոկ ջոկ անուններ ունին և գործ է դնում ժողովուրդը։

Առարկաների անունները բոլոր ազգերը կարող են և չբիոխել, և չեն էլ փոխել նույնիսկ հնումը։ Հին անունները վաղուց արդեն մտած լինելով և քիչ թե շատ փոփոխված, այլևս օտար չեն թվում մեզ։ Օրինակ՝ վարդ ծաղկի անունը միևնույն է հայերեն, վրացերեն և պարսկերեն։ Ստուգելու համար, թե ով ումից կլինի փոխ առած, պետք է ստուգել, թե յլարդի թուփը որ երկրից է տարածվել։ Եթե վարդի թուփը ամեն երկրում էլ եղած լիներ, ամեն տեղ ջոկ ջոկ անուն կունենար, բայց

նա մի տեղից տարածվելով, իր անունն էլ հետն է տարածել... Թուրքի ծառը... իբրև կերակուր շերամի որդի համար... նույնպես Չինաստանից է տարածվել: Բայց մեզ համար քուր բառը այնքան հին է, որ շենք ասում հայերեն չէ: Այս տեսակ շատ բառեր կան: Սակայն այն երկրները, որոնք ուրիշ երկրներից իրանց կլիմայով շատ են տարբերվում և ուր շեն աճում երկրի բույսեր, նրանցում ավելի թվալի են այդ տեսակ օտար անունները:

Այսպես. ինչ պտուղ որ չի բուսնում Ռուսաստանի ցուրտ երկրում, նրա անունն էլ շունին, և եթե ունին՝ ռուսերեն չէ: Այսպես, նրանք մեր հունին ասում են կիզիլ, որ թաթարերեն է, ձմերուկին՝ աբրուզ: Գինին ամեն տեղ գինի է, փոքր ինչ փոփոխված, ինչպես՝ վինո, վեյն, դվինո, ինոս, վինոմ և այլն, և ո՞վ իմանա, ինչ ծագումն ունի:

Այն բառերը, որոնք, իրանց նշանակությանը նայած, շատ հին են, նույն բառերն են ահա, քիչ թե շատ փոխված, իրար նման են շատ լեզուներում: Օրինակ՝ մենք ասում ենք կատու, վրացիք՝ կատա, ռուսը՝ կոտ, կոշկա, ուրիշ լեզուներում՝ կատուա, կաթո: Ահա այս նմանությունը ցույց է տալիս, որ այդ կենդանին գաղթականները տարել են միևնույն տեղից, իրանց բնիկ երկրից, որ Հնդկաստանն է համարվում: Օրինակ՝ աչք բառը Հնդկաստանում եղել է աչքի կամ աքշի, մենք ասում ենք աչք, ռուսները՝ օչի, օկո, լատիներեն՝ օկուլուս: Այսպես շատ անուններ կան, որոնք մոտավորապես իրար նման են:

...Կրթվող սերնդի լեզուն խանգարում են մանավանդ հայերեն ուղիղ շխոսող վարժապետները և վարժուհիները և անճոռնի լեզվով թարգմանած գրքերը: Դրանք այնպիսի շարիք են, որոնցից անկարելի է ազատ մնալ: Մեր գրական լեզուն դեռ մի տհաս մանուկ է, նոր է զարգանում, և անհնարին է, որ զարգանա առանց խոշոր սխալներ անելու: Սխալվելն ամոթ չէ, բայց սխալը համառությամբ պաշտպանելը մեծ ամոթ է: Շատերը գիտեն, որ սխալ են գրում, բայց շարունակում են իրենց սխալը համառությամբ¹³:

...Վաղուց է, որ բոլոր եվրոպական մեծ ազգերը թարգմանած ունին խորենացին, բայց մեզանից ոչ ոք չէր վստա-

հանում նույնը թարգմանել և մեզ համար: Եթե եվրոպացոց համար այդ գիրքը միայն պատմական և ուսումնական նշանակություն ունի, մեզ համար բացի դրանից ունի և բարոյակրթական նշանակություն... Բավական է, որ ժողովրդի համար մի շատ կարևոր գիրք, որ առաջ անմատչելի, անըմբռնելի էր, այժմ խոսում է իր լեզվով և հասկացնում է նրան իր ազգի ծագումը և զարգացումը մոտ վեց հազար տարվան ընթացքում...¹⁴:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ «Գրաբար և աշխարհիկ լեզուների տարբերությունը» հոդվածից, 1890 (Ղ. Աղայան, Երկեր, հ. Գ, Երևան, 1940, էջ 338—341):
- ² «Հայոց գրի մասին» ուսումնասիրությունից, 1892 (նույն տեղում, էջ 366—367):
- ³ «Իմ հիշատակարանից», 1890 (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1974, էջ 282):
- ⁴ «Մեր աշխարհաբար լեզուն» հոդվածից, 1894 (Ղ. Աղայան, Երկեր, հ. Դ, Երևան, 1950, էջ 438, 441—443):
- ⁵ Յու. Վեսելովսկուն գրած նամակից, 1903, հոկտեմբեր (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 542):
- ⁶ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», 1893 (նույն տեղում, էջ 361):
- ⁷ «Մատենախոսություն. «Բնավորություն», թարգմանություն գերմաներենից՝ Փ. Վարդանյանի», 1888 (Ղ. Աղայան, Երկեր, հ. Գ, էջ 293, 294):
- ⁸ Նույն «Մատենախոսության» ծանոթագրությունից (նույն տեղում, էջ 293):
- ⁹ Փ. Վարդանյանի ֆրանսերենից կատարած թարգմանությանը նվիրված գրախոսականի ծանոթագրությունից, 1890 (Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 235):
- ¹⁰ Նամակ Մ. Բարխուդարյանին, 1891, փետրվար (նույն տեղում, էջ 485):
- ¹¹ Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին, 1890 (Ղ. Աղայան, Երկեր, հ. Գ, էջ 335):
- ¹² Նամակ խմբագրության, «Մշակ», 1898, № 109:
- ¹³ «Հայոց լեզու» ուսումնասիրությունից, 1890 (Ղ. Աղայան, Երկեր, հ. Դ, Երևան, 1950, էջ 338, 339, 343):
- ¹⁴ «Մատենախոսություն» (Մ. Խորենացու Հայոց պատմության աշխարհաբար թարգմանության մասին, թարգմանիչ՝ Խորեն վարդապետ Ստեփանն, 1889 (նույն տեղում, էջ 430—431):

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ*
(1843—1891)

Խորեն արքեպիսկոպոս՝ որ հունարեն շգիտեր, հույն բնագրե Հոմերոսի Իդիլիականն հայերենի կը թարգմանե աշխարհաբար լեզվով... յուր առջև ունենալով Իդիլիականին հայերեն գրաբար թարգմանությունն հայր Արսեն Բագրատունու և ի ձեռին ունենալով հիշյալ գործին ֆրանսերեն՝ թարգմանությունը:

Սույն թարգմանությունը Մասիսին մեջ կը հրատարակվի և այն շափերն զորս կը գործածե թարգմանիչն յուր ոտանավոր թարգմանության մեջ բոլորովին անծանոթ են հայ բանաստեղծներուն: Բառերն երբեմն այնքան կը սղին և երբեմն այնքան կ'երկարին, որ կարծես թե Աքիլլեսն կաղինի կեղևին մեջ կը մտնե և ճանճն առյուծ կը դառնա:

Գերապատիվ թարգմանիչը միայն այն ատեն քննադատություն ընդունելու հանձնառու կը լինի, երբ քննադատողն լավ հմուտ լինի հայերեն և հունարեն լեզուներու, սակայն երբ այս երկու լեզուներն՝ որոնց մինը շգիտեր գերապատիվ թարգմանիչը, լավ գիտցող մեկը քննադատե յուր թարգմանությունն և անոր սխալներն ցույց տա՝ գերապատիվ թարգմանիչն այն ատեն պայման կը դնե, որ յուր գործն քննադատողն պետք է որ կուսակրոն լինի և Վենետիկի կամ Վիեննայի վանքերեն միույն մեջ դաստիարակված:

Ուստի անոնք, որ կը փափագին գերապատիվ թարգմանչին հայերեն և ֆրանսերեն գործը քննադատելու, նախ հունարեն սորվելու են, երկրորդ՝ վարդապետ ձեռնադրվելու, և եթե ամուսնացած են, կինը թողլով կուսակրոն լինելու են,

* Հ. Պարոնյանը հունարեն բնագրից թարգմանել է Լուկիանոսի «Խոսակցությունք մեռելոց» երկը:

ապա թե ոչ՝ իրավունք չունին ո՛չ այս աշխարհին մեջ և ո՛չ հանդերձյալին մեջ նորին գերապատվության գործը քննադատելու... Խեղճ գրաշարներ, թարգմանիչներու բոլոր սխալներուն պատասխանատվությունը ձեր վրա կը ծանրանա:

Ո՛վ գերապատիվ թարգմանիչ հայր, այս տպագրական խոշոր սխալն հունարեն բնագրեն թարգմանած չլինի՞ք, լավ խորհեցեք, եթե ֆրանսերենե կամ հայերենե թարգմանած եք, փոխեցեք, ուրեմն ձեր գրաշարներն, որ տարօրինակ Իդիական մը շունենանք... մեղք է Հոմերոսի դյուցազուններուն...¹:

Դարձյալ թարգմանչաց դարուն մեջ...^{*}

Օրագրո ներքին լուրերուն մեջն ենք. «Հորդանանեն դարձյալ կաթոլիկ ուխտավորները դրոշակներով և հրազինաձգությամբ Բեթղեհեմի տաճարին երկաթյա դռնեն ներս մտնել ուղած ատեննին իշխանության կողմանե արգելք տեսնելով զապթիկներուն և մյուտիրին** վրա կը հարձակին»:

Այս լուրը սխալ թարգմանված ըլլալու է. եթե մյուտիրին վրա պիտի հարձակեին, ինչո՞հ համար հրազեննին ձգեր են, առանց հրազենի ինչպե՞ս կրցեր են հարձակիլ, և մյուտիրը ինչո՞հ համար ասոնց ձգած հրազենները առեր չէ պահեր ու կռիվի տեղի տվեր է:

Ո՛վ բառեր, դուք ալ կորսնցուցիք ձեր ոսկեղեն դարը, երբեմն ձեր նշանակությանը հետ սիրով և համաձայնությամբ կը վարվեիք, իսկ հիմա մեզի պես իրարու հետ անմիաբանությամբ կ'ապրիք. դուք ալ մեզի պես երկաթյա դարու մեջ եք...

Աչքերս չպոցած գոնե օր մը, գոնե վայրկյան մը Օրագրո մեջ չպիտի կրնամ տեսնել ձեր ոսկեղեն դարը, ո՛վ բառեր...²:

^{*} Հայ խոշորագույն երգիծաբանը «Թարգմանչաց դար» արտահայտությամբ իր ժամանակի խմբագիրների տգետ թարգմանությունները հակագրում է V դ. դասական թարգմանություններին (տե՛ս Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, Երևան, 1965, IV հատորի ծանոթագրությունները):

^{**} Մյուտիր՝ պաշտոնյա, զապթիկ՝ ոստիկան (թուրք.):

Վերջերս երկու նոր թարգմանություններ ալ ունեցավ հայ ազգը, ի զարդ և ի փառս հայկական թանգարանի:

Այս թարգմանությանց առաջնունն թարգմանիչը մեծապատիվ Միսաքյան էֆենտին է, իսկ երկրորդինը՝ մեր նվաստությունը:

Պարտ անձին կը համարինք հոս հիշել, որ այդ թարգմանությանց երկուքին ալ փառքը Միսաքյան էֆենտիի կը վերաբերի, որովհետև մենք իրեն հետևելով թարգմանած ենք, և շենք ուզեր Միսաքյան էֆենտիին փառքը հափշտակել:

Ի ծանոթություն ազգայնոց հոս կը ծանուցանենք այդ թարգմանությունները:

ՀՆԱՐԱՎԱՆ*

ԹԱՐԳՄԱՆԵՑ Ի ՏԱՃԿԵՐԵՆՆ ԽԱԶԱՏՈՒՐ ԷՖԵՆՏԻ ՄԻՍԱԹՅԱՆ

Թարգմանչին ունեցած համրավը՝ թարգմանչալին օղասուն և ծովահայաց դիրքը ամենուն քաջածանոթ ըլլալով շենք ուզեր երկար գովեստներ կարդալ սույն թարգմանության գլխուն վրա:

Թարգմանիչը այնչափ հավատարիմ մնացած է բնագրին, որ իր թարգմանութենեն ո՛չ թե բառ մը, այլ տառ մը չես կրնար հանել. տառ մը հանելուդ պես բառը կը քայքայի:

Թո՛ղ Մամուրյան և Զիլինկիրյան էֆենտիները ստվար հատորներ թարգմանեն, ահա ասանկ Միսաքյան էֆենտի մը կ'ելնես և մեկ բառով, մեկ շընշով ամբողջ թաղ մը կը թարգմանն:

Մեր թարգմանությունը գալով կրնանք ըսել, որ Միսաքյան էֆենտիի րրած թարգմանության եղբայրն է, այն է՝ Բարևավան, որ Սելամիեի բուն թարգմանությունն է...

Ասկե մեկ երկու տարի առաջ՝ Փունջ ձյունասառն թարգմանած էր քարբուզը:^{**} Որու՞ մտքեն կ'անցնէր, որ Փունջ երկու տարիե ետքը իր եղբայրը պիտի գտնե...³:

* «Հնարավան» — հայերեն բառացի թարգմանությունը Կ. Պոլսի Իճատիե (իճատ՝ հնար) թաղամասի անվան: Ծաղրելով Միսաքյանին, Պարոնյանը թարգմանել է հայերեն Սկլամիե (սկլամ՝ բարև) թաղամասի անունը՝ Բարևավան:

** Քարբուզ՝ ձմերուկ. թուրքերեն բարդ բառ է, կազմված քար (ձյուն) և բուզ (սառույց) բառերից: «Փունջը» թուրքերենի հետևութեամբ թարգմանել է հայերեն՝ ձյունասառն:

Հանճարն ոչ ազգութիւնն ունի և ոչ կրոնք և իբրև ոսկի
յուր արժեքը կը գտնէ ամեն տեղ: Հանճարի ծնունդ եղող բա-
նաստեղծութիւնն մը լավ ընդունելութիւն կը գտնէ Անգղիա-
յեն, որչափ ալ անոր հեղինակն Սլավ ըլլա...⁴:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Լուսարարի նամակներից», 1881 (Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու,
հ. IV, Երևան, 1965, էջ 505, 506):

² «Սուլլ», 1874—1875 (Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. VII,
Երևան, 1969, էջ 159):

³ «Խայթվածք», 1873 (նույն տեղում, էջ 83—84):

⁴ Հ. Պարոնյան, Անհայտ էջեր և աֆորիզմներ, Երևան, 1964, էջ 168:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱԴԵ*
(1858—1935)

Ես ստացա Մաքսիմ Գորկու խմբագրությամբ Պետրոգրադում՝ Парусъ ընկերության հրատարակությամբ լույս տեսած «Сборник армянской литературы» անունով մեծահատոր գիրքը:

...Առաջին անգամը չէ, որ հայ երկերը թարգմանվում են ռուսերեն և լույս տեսնում, բայց առաջին անգամն է, որ մի նշանավոր ռուս հեղինակ, այն է՝ Մաքսիմ Գորկին, ինքնաբերաբար ոչ միայն հետաքրքրվում է հայ գեղեցիկ գրականությամբ, այլև աշխատում է հետաքրքրել նրանով և ռուս հասարակությանը:

Ես «ինքնաբերաբար» բառը ընդգծեցի դիտմամբ, վասնզի միանգամայն այլ հայացք ունեմ վալերի Բրյուսովի հայ բանաստեղծությունների ժողովածուի մասին, որ նույնպես պիտի շուտով լույս տեսնի: Այդ ժողովածուի ձեռնարկությունը հայկական է և ոչ անկախ, ինքնաբեր: Մոսկվայի Հայկական Կոմիտեին և Պողոս Մակինցյանի ջանքերին ենք գլխավորապես պարտ լինելու հայ քնարերգության նմուշների ռուսերեն լույս տեսնելը, դրանք են, որ հետաքրքրել են ռուս բանաստեղծին և թևավորել նրան:

...Ժողովածուի («Сборник армянской литературы») կազմման մեջ մեծ մասնակցություն է ունեցել մեր համակրելի բանաստեղծ Վահան Տերյանը, որի թարգմանությունները, կարող եմ ասել, ոչ միայն հարազատ են, այլև գեղեցիկ ու գրեթե հիանալի: Պակաս աշխատանք դործ չեն դրել ժողովա-

* Շիրվանզադեն թարգմանություններ է կատարել Գոգոլի (ձեռագիրը չի պահպանվել), Դոստոևսկու, Կորոլենկոյի, Շչեգրինի, Իբսենի, Օստրովսկու և այլ գրողների ստեղծագործություններից:

ծուի վրա և պ. Պողոս Մակինցյանը և Լևոն Քայանթարը, որոնց աջակցությունը նույնպես արժանի է բարոյական գնահատման...¹։

Մեր ժամանակի բնորոշ հատկանիշներից ամենագլխավորը պարունակվում է այն բարձր գաղափարի մեջ, որ քարոզում է ազգերի համերաշխություն։

...մենք տեսնում ենք, թե ինչպես ֆրանսիացին ոգևորվում է անգլիացու հանճարով և կամաց-կամաց սկսում է համակրել իր դրացի ազգին, կարգալույզ դիցուք Շեքսպիրի, Բայրոնի ստեղծագործությունները, թե ինչպես նույն փոխադարձ համակրությունը և սերը դեպի ֆրանսիացին ղարթնում է անգլիացու մեջ, երբ նա ծանոթանում է իր դրացու գրականական և գեղարվեստական հանճարի ստեղծագործությունների հետ... Նույնիսկ մենք, հեռավոր Ասիայում ապրողներս, ինչ տարրերի միջոցով ենք այսօր ավելի համակրում եվրոպացուն և հիանում նրա հանճարով, եթե ոչ դարձյալ գիտություն, գրականության և գեղարվեստների միջոցով։

Մենք ֆրանսիացուն ճանաչում ենք նրա Վոյտերով, Բասինով, Հյուգոյով, Լամարթինով, Շատոբրիանով, գերմանացուն՝ նրա Գյոթեով, Շիլլերով, նույնիսկ մեր ամենամոտիկ ռուսին՝ նրա Լերմոնտովով, Պուշկինով, Գոգոլով... Նրանց հանճարի միջոցով ենք մենք ծանոթանում ազգային հանճարի ուժի հետ։ Արդարև, այսօր ոչինչ այնքան հայտնի չէ եվրոպացիների կյանքից, որքան նրանց գրականությունը, և մի Ֆլոբերի, Բալզակի, մի Զոլայի, մի Դոդեի գրվածները ավելի են անում իրենց ազգի հոշակի համար, քան ամբողջ ազգի տասնյակ տարիների քաղաքականությունը։ Ո՞վ գիտեր Նորվեգիայի պատմությունը մեզանում, ո՞վ էր հետաքրքրվում Շվեդիայի այժմյան կյանքով ոչ միայն մեղանում, այլև գուցե ամբողջ եվրոպայում։ Բայց բավական էր Իբսենը, Բյոռնսոնը, և այսօր խոսվում է և գրվում է նրանց ազգի մասին այնչափ, որչափ հազիվ թե երբևէ խոսված ու գրված լիներ... և մենք... սկսում ենք սիրել ու համակրել մի ազգ նրա բացառիկ ձիրքերի շնորհիվ։ Իսկ այդ հա-

մակրությունը մի ամուր հիմք է ազգերի ապագա փոխադարձ համերաշխության համար: Այդչափ մեծ է գրականության ուժը իբրև միավորիչ տարրի:

...Այն երևույթը, որի մասին ակնարկեցինք... հայ գրականության հետ օտարներին ծանոթացնելու ձգտումն է, որ վերջին տարիներին արտահայտվեց մի քանի թարգմանական ձեռնարկություններով... ամենից ավելի ուշադրության և խըրախուսանքի արժանի պետք է համարել Մոսկվայում Յուրի Վեսելովսկու խմբագրությամբ լույս տեսած «Арм. беллетристы», որ արդարև մի լուրջ գործ է:

...Ռուսերեն լեզվով հրատարակված հայ գրականական երկերի նույնիսկ մի այնպիսի համառոտ ժողովածու, որպիսին է «Арм. беллетристы», ավելի կարող է անել, քան թե մեր տասնյակ տարիների ճոռոմաբանությունը... Մանոթանալով մեր գրականական երկերի հետ, օտարը կծանոթանա և մեր բարոյական ընդունակությունների հետ... Ահա ինչու մենք մեծ նշանակություն ենք տալիս օտարներին մեր գրականությանը ծանոթացնելու բոլոր ձեռնարկություններին... Ինչպես գիտությունը, գեղարվեստները, նույնպես և գրականությունը միջնորդ են ազգերի փոխադարձ համերաշխությանը²:

...Ժողովրդական բարբառները պետք է լինեն մեզ համար լոկ հում նյութ, ուրիշ ոչինչ, երբ նրանցից կամենում ենք օգտվել գրականական բարբառը հարստացնելու համար: Ես դեմ եմ այն բանաստեղծական գրվածներին, ուր ոչ միայն գործող անձինք, այլև հեղինակը խոսում է ամբոխի, իր տեղական ժողովրդի լեզվով... Թարգմանվելով օտար լեզվի, նրանք մեծ մասամբ զրկվում են իրենց հրապույրից: Ով ուսերեն կարդացել է «Պեպոն», նա կարող է զարմանալ, որ այդ սքանչելի երկը որքան թուլացել է և կորցրել իր գեղեցկությունը, շնայելով, որ թարգմանությունը կատարված է հմուտ ձեռքով: Մի քանի տարի սրանից առաջ նույն «Պեպոն» ներկայացվեց Կ. Պոլսում՝ պոլսականի փոխադրված: Եվ մեր պոլսեցի հայրենակիցները չգտան նրա մեջ այն գեղարվեստը, որ մենք ենք տեսնում:

Այսպես է այն գրվածների վիճակը, որոնց հրապույրը ամփոփված է մեծ մասամբ տեղական բարբառի սահմանափակ շրջանում: Եթե պ. Սունդուկյանը կարողանար խույս տալով վիրականից, հետևել ընդհանուր ժողովրդականին, դրանով ոչ թե կզրկեր իր երկերը գեղարվեստական նրբությունից, այլև ավելի գեղարվեստական կդարձներ՝ ավելի ընդհանրացնելով երկերի հրապույրը: Եվ նրանց ներքին գեղեցկության, տիպերի ճշտության հետ թարգմանության մեջ կպահվեր և արտաքին գեղեցկությունը: Թարգմանեցեք Տուրգենևի վեպերը գեղեցիկ հայերենի, և նրանք կպահպանեն թարգմանության մեջ իրենց ամբողջ գեղեցկությունը. թարգմանեցեք, դիցուք, Ուսպենսկու ժողովրդական բարբառով գրվածները, որքան հաջող ևս գիտեք թարգմանել, նրանք կկորցնեն իրենց գեղեցկության մի նշանավոր մասը...³:

Պ. Հովհաննես Թումանյանցը ընդունակ է բարձր բանաստեղծություններ թարգմանելու, բայց մեր խորհուրդն է, երբեք հանձն չառնել թարգմանել այնպիսի երկեր, որոնց բնագրի լեզվին ծանոթ չէ: Նա կարող է խոշոր սխալներ անել: Բայրոնի հայերեն թարգմանությունը ցանկալի է, իհարկե, բայց մեզ համար ավելի ցանկալի կլիներ, որ նա թարգմանվեր մի անգլիագետ հայի ձեռքով, սակայն այնպիսի անգլագետի, որ, իհարկե, ունենար և բանաստեղծական ավելուն:

Բայց քանի որ այդ չկա, մնում է մեզ գոհ լինել Հովհ. Թումանյանցի ներկա թարգմանությամբ: Ընդհանրապես վերցված, այդ թարգմանությունը մեզ շատ հաջող է թվում ոտանավորների սահունության և թեթևության կողմից: Եթե ուշադրություն չդարձնենք մի քանի մասնավոր թերությունների վրա...⁴:

...Ինչո՞վ կարող են երկու ազգություններ միմյանց ուսումնասիրել և ճանաչել, եթե ոչ իրենց մտավոր բերքերով: Եվ ո՞րն է այդ բերքերից ամենամեծը, եթե ոչ գրականությունը:

Արդ, մինչև այսօր մենք նույնիսկ մոտավոր գաղափար չունենք վրաց գրականության մասին: Համոզված եմ, որ շուտիս նույնը և վրացիները մեր գրականության մասին:

Մենք լսել ենք և լսում ենք տեղական ոուս լրագիրներից, որ մեր հարևաններն ունին Օրբելիանի, Բարաթաշվիլի, Ճավ-ճավաձե, Ակակի Մերեթելի և մի շարք ուրիշ հանգուցյալ և կենդանի բանաստեղծներ՝ անսահման հարգված իրենց ազգից ու գնահատված: Բայց մինչև այսօր մենք չունենք հայերեն թարգմանությամբ նրանցից և ոչ մեկի գործերը, բացի մի քանի մանր-մունր կտորներից, որոնցով, իհարկե, ոչ մի հասկացողություն չի կարելի կազմել վրաց բանաստեղծության մասին: Անկասկած, վրացիները նույնչափ, գուցե ավելի պակաս տեղեկություն ունին մեր Աբովյանի, Դուրյանի, Պեշիկ-թաշվյանի, Բաֆֆու, Գամառ-Քաթիպայի, մանավանդ նորերի մասին:

...Մեզ համար ցանկալի, նույնիսկ շատ կարևոր է, ծանոթանալ նաև վրաց նոր բանաստեղծության հետ: Բավական է ինչքան կերակրվեցինք լրագրական տեղեկություններով: Մենք ինքներս ուզում ենք վայելել մեր հարևանների մտքի և զգացումների արտագրությունները⁵:

Վերջերս հայոց թատրոնական խումբը Բաքվում ներկայացրեց երկու սիրուն պիեսներ... Խոսքս Հաուպտմանի «Կառապան Հենշել» և Ռոպետտի «Բարեկամներ» գրամաների մասին է:

... Պետք է շնորհակալ լինել պ. Հովհաննես Աբելյանից, որ թարգմանել է այդ պիեսները և ներկայացրել:

...«Հենշելի» և «Բարեկամների» թարգմանությունները կատարված են անխնամ: Ոճը լի է սխալներով և ոուսաբանությամբ, բայց սարդ է և ամբոխի համար հասկանալի: Ամբոխի համար հասկանալի՞ ո՞ճ՝ ահա մի բան, որին ես դեմ եմ հոգով ու մտքով. ի՞նչ ասել է ամբոխ: Ինչու՞ պիտի մենք մեր ճաշակը ընտելացնենք նրա ճաշակին, ինչու՞ պիտի բեմը խոսի նրա գոեհիկ և սխալ ոճով: Բեմը պարտավոր է հասարակությանն անգամ լեզու սովորեցնել և ոչ թե համակերպվել ամբոխի ճաշակին ու բարբառին: Բեմի լեզուն պիտի լինի զուտ գրականական, ազատ ժողովրդական լեզվի սխալներից ու գրեթե հակությունից: Գեղարվեստը սիրում է գեղեցիկ արտահայ-

տություն: Ոճը գեղարվեստական երկի զարդն է: Չպիտի կարծել, թե հանդիսականները գրականական լեզու չեն հասկանում, ուրեմն, պիտի նրանց հետ խոսել ամենահասարակ ոճով: Այդ սխալ է... Թարգմանիչները չպիտի հայ լեզվի էական շահերն ու գեղեցկությունը զոհեն ամբոխի շգիտությանը, եթե իրավ լեզվի վերաբերմամբ այնքան տգետ է այդ ամբոխը: Բայց, կրկնում եմ, Բաքվում ամբոխն անգամ ծանոթ է գրականական լեզվին: Բաֆֆիից սկսած մինչև մեր ամենանոր գրողները արդեն մաքրել են նրա բարբառը, լեզու սովորեցրել: Մահացու հանցանք է երեք-չորս տասնյակ տարիների մեր գրողների արածին վնասել:

...Սխալ է այն կարծիքը, թե այն ոճն է բեմական, որ հասարակ է: Ո՛չ, ընդհակառակը, այն ոճն է բեմական, որ մաքուր է, զորեղ և գեղեցիկ: Տվեք մեզ մաքուր հայ գրականական ոճ և մի հոգաք բեմականի մասին: Որքան քաղցր է ոճը, այնքան ազդու է, ուրեմն և բեմական⁶:

...Հարկավ, ամեն մի հեղինակ ազատ է գրելու այն ոճով, որ իրեն է հատուկ ու սիրելի, բայց կան որոշ պահանջներ, որ բեմը անողոքաբար դնում է յուրաքանչյուր դրամատուրգի առջև: Առաջին տեղն են բռնում այդ պահանջների մեջ ոճի պարզությունն ու սղությունը: Որքան հնարավոր է կարճ դարձվածներով արտահայտվել, ահա դրամայի ոճի առաջին պահանջը:

Այս բոլորն աչքի առաջ պիտի ունենան մանավանդ մեր թարգմանիչները: Մեզանում պիեսներ թարգմանում են աջ ու ձախ ամենքը. և նա, ով լեզու գիտե, ոճ չունի, և նա, ով ոչ մեկը գիտի, ոչ մյուսն ունի: Եվ խեղճ հայ դերասանը հաճախ ստիպված է լեզու սովորելու փոխարեն, գիտեցածն էլ մոռանալ, ունեցածն էլ աղավաղել...⁷:

... Եթե լեզուն մի կենսունակ տարր է, եթե նա կապ պիտի ունենա ժողովրդի կյանքի հետ, եթե նա պիտի ծառայի հասարակական ու ընկերական կյանքում իբր մտքերի փոխանակման միջոց և ոչ իբր քմահաճույք մի քանի գրամոլների,

ուրեմն նա պիտի զարգանա այդ մտքերի զարգացման հետ
զուգընթացաբար: Ի սեր աստժո, մի կաշկանդեք նրան մի
մեռչալ բարբառի փտած թելերով, տվեք նրան թարմ օդ ու
նոր ոգի, հակառակ դեպքում մի օր կգանեք մահացած, ինչ-
պես այն սնահավատ հիվանդին, որ ոչ մի դեղ չէր ընդունում,
գիտությունը մոլեռանդ սատանայական գործ համարելով:

Դուք բողոքում եք նաև ուսահայ բարբառի մեջ օտար բա-
ռեր ներմուծվելու դեմ: Բայց որքան ևս բողոքեք, մեր աշխար-
հաբարը ընդունելու է օտար բառեր և պիտի ընդունի, և այն
օրն, երբ դադարի ընդունել, կսկսի տկարանալ ու հետզհետե
մեռնել: Ասացեք խնդրեմ, ինչու՞ անգլիական, ֆրանսիական,
գերմանական, ռուսական և բոլոր լեզուները ընդունում են
համաաշխարհային դարձած բառերը, իսկ մենք պիտի բացա-
ռություն կազմենք և անպատճառ պիտի գործածենք այնպի-
սի շինովի, կեղծ և անճոռնի, ինչպես հեծանիվ, ձայնախոս և
այլն... Հավատացեք, ուսահայ գրողները նույնչափ, եթե ոչ
կրկնակի ավելի, գիտեն գրաբարը, որքան և տաճկահայերը,
բայց զգուշ չեն վերաբերվում դեպի գրաբար բառերը, ան-
խտիր չեն բարդում բառ-բառի վրա: Եվ ես գովում
եմ նրանց այդ զգուշությունը, գովում եմ նաև օտար, ան-
թարգմանելի բառեր ներմուծողներին⁶:

ՄԱՆՈՒՍԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Մի նոր գիրք», 1916 (Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1962, էջ 541):

² «Գրականությունը իբրև միավորիչ ուժ», 1893 (նույն տեղում, էջ 162):

³ «Պետք է լեզուն մաքրել», 1897 (նույն տեղում, էջ 227):

⁴ Մատենախոսություն. «Շիրիոնի կալանավորը» Բայրոնի, Թարգմանու-
թյուն Հովհ. Թումանյանցի, Թիֆլիս, 1896 (նույն տեղում, էջ 197):

⁵ «Պետք է շարունակել», 1910 (նույն տեղում, էջ 443):

⁶ «Հայոց Թատրոնական խումբը», 1900 (նույն տեղում, էջ 257):

⁷ «Հայ Թատրոնի մասին», 1913 (նույն տեղում, էջ 513):

⁸ Ա. Չոպանյանին գրած նամակից, 1898 (նույն տեղում, էջ 673):

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ

(1861—1915)

...Մեր ժողովրդական լեզուն պիտի զարգանա ուրեմն ինչպես կը զարգանան ուրիշ ամեն լեզուներ՝ ոչ թե հինին դառնալով, այլ այդ լեզուն խոսող հասարակության իմացական կարողության համեմատությամբ... Լեզուները մարդոց պես են, իրենց հատուկ ճակատագիրը ունին և պետք է ունենան. հառաջադիմությունն ատով կը ձևանա. աշխարհաբարը գրագետներու ջանքով շինվեցավ... գրական մարդիկ կը հպատակին և ոչ թե կը տիրեն անոր, թերևս իրենք իսկ չզգալով, և ժողովուրդն է միայն որ կը դարբնէ լեզուն կյանքի ամենօրյա սալին վրա. իր կամքին, պետքին, զգացումներուն ու հաճույքին համեմատ¹:

...Թարգմանությունները, մանավանդ ոտանավոր քերթիվածոց համար, կլիմա փոխած ծաղիկներու կը նմանին: Սովորաբար իրենց փոխադրված նոր հողին մեջ՝ ոչ առջի գույնը և ոչ առջի հոսը կրնան պահել...²:

...Ես ալ կըզամ, որ Զուլային մահվան առթիվ բան մը գրելու եմ: Հայերը չեն ճանչնար զինքը և ինչպե՞ս կուզեք որ ճանչնան, քանի որ անոր գործերեն ոչ մեկը հայերենի թարգմանված է: Այդ պործերը իրենց ֆրանսերեն բնագրին վրայեն կարդացող և չկրցող հասկցող մեկ քանի հոգի՝ այս մեծ մատենագրին անբաբոյակուն հեղինակի համբավ շինեցին մեր մեջ և մեր հասարակությունը անկե զգուշացնելու ելան...³:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Լեզվական խնդիր» հոդվածից, 1892 (Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962, էջ 314—315):

² «Ֆրանսուա Քրիփե» (Մեր պատկերը) հոդվածից, 1893 (նույն տեղում, էջ 372):

³ «Ութը տարի Լտքը» հոդվածից, 1902 (նույն տեղում, էջ 457):

ՎՐԹԱՆՆՍ ՓԱՓԱԶՅԱՆ*

(1864—1920)

... Ահա այդ երկերից մեկը, Վիրգիլիոսի հայտնի «էնեական» դյուցազներգությունը՝ թարգմանած աշխարհաբար, չափածո... և առանց որևէ կրճատումի... Թե որքա՞ն մեծ հաճույքով է, որ կարգում եմ այդ թարգմանությունը, ծածկել չեմ կարող: Վարպետ կերպով կատարված է հայացումը Վիրգիլիոսի այդ դյուցազներգության, լեզուն շատ մատչելի է, թուրքահայ սյարդ, սիրուն աշխարհաբար է:

... Եվ այդպես ահա Վենետիկյան և Վրեննայի հայրերը կլինին հալ գրականության համար դասական մեծ գործերի թարգմանություններ տվողները:

... Զէ որ արդեն Վենետիկն սնցյալում տվել է գրաբար և այժմ էլ սալիս է աշխարհաբար շատ թարգմանություններ դասականներից:

Ահա աչքիս առաջ են, օրինակ, հենց Դանտեի «Աստվածային կատակերգության» երկու առաջին հատվածները («Դրժոխք» և «Քալյարան») աշխարհաբար, չափածո թարգմանությունները, կտն Օսսիանի «Քերթվածները»: Նոր ստացա նաև հայտնի իտալացի մեծ բանաստեղծ Լեոպարդի «Երգերի» աշխարհաբար թարգմանությունը, նույնպես ոտանավորով... Ու այդ ամենի թարգմանիչն է հ. Ղազիկյան, այդ ամենը տպվել են ու տպվում են Վենետիկ: Մի՞թե դարմանալի կլինի, եթե վաղը մյուս օր ստանանք Հոմերոսի «Ողիսականի» և «Իլիականի», Միլտոսի և ուրիշ դասականների աշխարհաբար թարգմանությունները...¹:

* Վ. Փափազյանը թարգմանություններ է կատարել Տոլստոյի, Դոդեի, Թագորի, Մերյեի, Էրկման-Շատրիանի, Նարիմանովի և ուրիշների ստեղծագործություններից:

...է՞ր այլևս Գ. Բարխուդարյանի հիաշքնադ թարգմանություններն չեն ազնվացնում հայ ընթերցողի նաշակն ու զգացմունքը: Ինչու՞ պնամահ Շիլլերի «Վիլհելմ Տելլին», «Դոն Կարլոսին», «Օրլեանի կույսին», «Զանգակի երգին» և այլն, չեն հաջորդում նորա «Վալենշտայն», «Զրոպանք» և այլն²:

...Զիլինկիրյանը Վիկտոր Հյուգոյի հետ էր ծանոթացնում հայ հասարակության, Մամուրյանը՝ Ալեքսանդր Գյոմմայի բազմահատոր վեպերը, շատ սիրուն և մատչելի լեզվով սրփուում էր մինչև Կովկաս, մինչև Պարսկաստան... Ապա իրար նմանվելով, իրար գերազանցելով՝ թարգմանվում էին Վալտեր Սկոտից, Ալֆրեդ դՄյուսեից, նույնիսկ՝ Շեքսպիրից, Գյոթեից... և այդ ամենը կարգացվում էր խառն կրոնաբարոյական թարգմանած կամ ինքնուրույն գրվածքների հետ³:

Հնդիկ այդ բանաստեղծը*, որի քնքուշ էջերից մի քանի կտորներ թարգմանաբար տալիս ենք այստեղ, իր ինքնատիպ, այնքան զգայուն և մեղմ թախիծով համակված երգերով, իրավամբ, գրավել է ամբողջ գրական աշխարհի ուշադրությունն ու ջերմ համակրությունը: Նրա երգերը թարգմանվել են եվրոպական բոլոր լեզուներով: Կան նաև ոուսերեն. մի քանի էջեր թարգմանված են հայերենի՝ լրագիրների մեջ:

Արևելյան գունագեղությունը, որ այնքան վայելչորեն գիտե բանաստեղծը տարտղնել իր էջերի մեջ, տալիս է երգերին ցայտունություն, կորով է ներշնչում զգացմունքների բոլոր արտահայտություններին և, միաժամանակ, անուշ մի թախիծ դնում նրա նվագային տողերի յուրաքանչյուր խաղի վրա:

Արժեր հատկապես թարգմանել և գրքերով ծանոթացնել հայ ընթերցողներին հնդիկ այդ բանաստեղծի գոնե երկու ժողովածուները՝ «Զոհաբերություն՝ երգերով» («Հիթանջալի») և «Պարտիզական» (Սիրո և կյանքի քնարական երգեր)⁴:

* Խոսքը հնդիկ մեծ բանաստեղծ Ռարինդրանաթ Թագորի (1861—1941) մասին է:

Ես ինքս մտադիր եմ Տոմսոնի կենդանիների կյանքից զըրված քեռից մի քանիսը փոխադրել «Հասկերի» համար: Կարդացե՛լ ես դու Տոմսոնը: Ռուսերեն շատ բավ թարգմանություններ կան և արժե որ կարդաս: Նոր ստացա նաև մի ֆրանսիերեն գիրք. բանից դուրս է գալիս, որ կենդանիների կյանքից քա և մի զրոզ Ֆրանսիայում, Լուի Պերգու: Բավական հաջող կտորներ ունի, երևի նրանից էլ կթարգմանեմ⁵):

...Ընթերցանության աճեցուն ծարավը հագեցնելու համար տասնյակներով թարգմանվում էին և հրատարակը ողողում էվրոպական անվնաս բազմահատոր վեպեր՝ Դյուամա, էոթեն-Սյու... Ավելանում էր այն, որ տասնյակ տարիներ հայ միտքն այսուհետև պիտի կերակրվեր Սյուսի «Թափառական հրեաներով», և կամ Դյուամայի «Երեք հրացանակիրներով»: Եվ եթե պատահամաք մեկն ու մեկը հանդգներ «Մետեորայի» նման անդեաներ լույս ընծայել, կամ Սվաճյանի «Մեղդի» նման խայթիչ երգիծանքներ ուղղել տիրող դասակարգերին, քաղքենիությանը և կրոնավորության— ժամանակի այդ իշխողները ոչինչ չէին խնայում, նրանց բերանը փակելու համար՝ լինե՞ր տնտեսական ճնշումներով, լինե՞ր նույնիսկ պետության րոնի ուժով:

...Մարդ չի կարողանում հասկանալ, թե ինչու՞ է վճռել Բենիկ հայր-սուրբը... զգպզելու ելնել Կնուտ Համսոնի սքանչելի «Վիկտորիան» և կամ ինչպե՞ս է վճռել իր բոբիկությունը ցույց տալու թե հայ, և թե ոուս լեզուների մեջ: Ամեն տեղ չի բանիլ ճոռումաբանությունը: «Վիկտորիան» ամբողջովին երաժշտություն է, սիրային մի հմայիչ հովվերգություն, որ պահանջում է նու՛յնքան էլ երաժշտական, նվագային թարգմանություն և ո՛չ թե այնպիսի՝ լեզվական այլանդակություններ, որոնց նմանները դուր կհանդիպեք Բենիկ վարդապետի «Թարգմանություն» մեջ՝ ամեն րայլին:

...Կարդացեք մեկ այդ «սքանչելի» թարգմանությունը և կապշեք այն հանդգնության վրա, որ փշացնելու է ելել այնքան շքեղ մի հեղինակություն...⁷:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Գրական ակնարկ», 1910 (սվ. Փափազյանը գրականության մասին», Երևան, 1962, էջ 105, 106):

² «Ռուսահայ պանդխտին նամակաները» հոգվածաշարից, 1886 (նույն տեղում, էջ 16—18):

³ «Թուրքահայ գրականությունը մինչև 90-ական թվականները», 1916 (նույն տեղում, էջ 235):

⁴ «Գործ», 1917, № 7—8 (նույն համարներում տպագրվել է նաև Ռ. Թազորի «Պարտիզանը» արձակ սրտմաների ժողովածուից տասներկու պոեմ՝ վրթ. Փափազյանի թարգմանությամբ, որի մասին մանրամասն տե՛ս Մ. Մախոպետյան, Ռ. Թազորը հայ չրական մտքի զնահաւումամբ, Երևան, 1975, էջ 69—83):

⁵ Նամակ Ռ. Գարրիելյանին, 1911, հոկտեմբեր (սվ. Փափազյանը գրականության մասին», էջ 120):

⁶ «Թուրքահայ գրականությունը մինչև 90-ական թվականները» հոգվածաշարից, 1916 (նույն տեղում, էջ 232):

⁷ «Գրական ակնարկներ», 1912, «Ղարաբաղ», № 14:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

(1864—1929)

...«Իլիականն» ու «Ողիսականը» թարգմանելը շատ ազգերի թարգմանիչների համար ամբողջ կյանքի գործ է եղել. համենայն դեպս, ամեն մեկն առանձին մի քանի տարվա լուրջ, հարատև աշխատանք է պահանջում, եթե խոսքը կանոնավոր, գեղարվեստական թարգմանության մասին պետք է լինի և, հարկավ, հունարեն բնագրից:

Հոմերոսն իմ սիրո առարկան է եղել դեռ աշակերտական նստարանի վրա և համալսարանում. տարիներ հունաց գրականության պատմություն եմ ավանդել ճեմարանում և մասնավորապես Հոմերոսով զբաղեցրել եմ ունկնդիրներին (մի կարճ ժամանակ նույնիսկ հունարեն բնագրով), վերջապես, փորձել եմ թարգմանել աշխարհաբար «Իլիականը» և եկել եմ այն եզրակացության, որ մեր գրական լեզվի արդի վիճակը և մանավանդ թե մեր տաղաչափությունը հնարավորություն չեն տալիս այն թարգմանությունը տալու, որ յուր աշխատությունը զնահատող և գիտակցող թարգմանիչը զո՞ մնա յուր արածից...»:

... Բանաստեղծության մեջ կան հսկաներ, որոնց ազդեցության համար սահման չկա, որոնց նշանակությունը հայրենի շունի. ամենահարուստ գրականություններն իսկ իրենց աշխարհագրական կամ ազգային սահմաններից դուրս ծաղկած

* Հ. Հովաննիսյանը թարգմանություններ է կատարել ութ լեզվից՝ Համերոսի, Էսքիլևսի, Սեֆոկլեսի, Սաֆոյի, Շեքսպիրի, Գյոթեի, Շիլլերի, Հայնեի, Պուշկինի, Լերմոնտովի, Հյուգոյի, Միցկևիչի, Ուլանդի, Նադսոնի, Պլեշչևսկի, Պետեֆիի, Ցակուբովիչի, Փշավելայի, Մերեթիու, Յուզկևիչի, Տիչինայի և ուրիշների ստեղծագործություններից:

այդպիսի հանճարներին անպատճառ որդեգրում են և նոցանից էլ նոր կենսական ույժ ստանում: Եվ մենք, որ մինչև այժմ խորթ զավակներն ենք մուսանների, մենք՝ անում ենք, սիրելի պիտի համարենք ամեն փորձ, որ նպատակ ունի մեզ այդպիսի համաշխարհային հանճարների հետ ծանոթացնելու:

Շեքսպիրն այն անգուգական հեղինակներից մեկն է, որոնց բոլոր քաղաքակիրթ ազգերն իրենց հարազատն են ճանաչում, և «Համլետը» նորա այն շնորհաբեր հիվ գործն է, որ սիրելի է ամեն մի լուսավորված անհատի՝ առանց ազգության խտրության...

Առավել ևս ցանկալի մի գործ է մեզ համար Հ. Խան Մասեհյանի աշխատությունը, որպես «Համլետի» հայերեն անդրանիկ բանաստեղծական թարգմանություն...

«Համլետի» այս թարգմանությունը մեզ վրա գեղեցիկ տրպավորություն է թողնում նախ այն պատճառով, որ հենց մի քանի էջ կարդալուց հետո, մարդ խոստովանում է, որ թարգմանիչը քաջ գիտե յուր մայրենի լեզուն և վստահությամբ օգտվում է յուր գիտությունից, մի առավելություն, որին կարող են նախանձել մեր շատ անուն հանած հեղինակներն ու թարգմանիչները. երկրորդ, այդ լեզուն ճոխ է, և բանաստեղծական, որ մի անհրաժեշտ պայման է անշուշտ, Շեքսպիրի նման հեղինակների գործերի թարգմանության համար: Այնուհետև. Մասեհյան խանի թարգմանությունն այն ամենամեծ արժանավորությունն ունի, որ կատարված է անգլերեն բնագրից. այս կողմից այս թարգմանությունը մեզանում առաջինն է և միակը Շեքսպիրի գրվածքների թարգմանություններից. մանավանդ որ Մասեհյան խանը հմուտ է անգլերենին, որ ապացուցանվում է թարգմանության զարմանալի նմանությունները բնագրին և նույնիսկ շափազանց ճշտությամբ: Վերջին հատկությունն շնորհիվ, մինչև իսկ զոհված է տեղատեղ հայերենի պարզությունն ու գյուրըմբռնելի լինելու արժանիքը...²:

...Թատերախաղը թարգմանված է ռուսերենից, որի թարգմանիչը պետք է շատ ստրկորեն վարված լինի, որովհետև գերմանաբանություններ շատ լսեցինք... որ, հարկավ, թարգ-

մանիչն առել է յուր բնագրից: Նվազ չէին և ռուսաբանութունների թիվը, որոնք օրըստօրե ավելի և ավելի են մուտք գործում մեր լեզվի մեջ, շնորհիվ հայատառ և օտարալեզու հրատարակությունների...³:

«Կապիտանի աղջիկը», իրավամբ, Պուշկինի արձակ լեզվով գրված ամենալավ գործն է համարվում... Մանավանդ գեղեցիկ է նորա լեզուն յուր դեղարվեստական պարզությամբ և այն նկարչական ոճը, որ հատուկ է մեծ բանաստեղծին: Հայտնի է, որ ոչ մի ռուսական ընթերցարան (хрестоматия) չէ հրատարակվում առանց այդ վեպից ընդարձակ հատվածների:

Անշուշտ, «Կապիտանի աղջկա» հայերեն թարգմանությունն էլ կկարգացվի, և այդ իսկ պատճառով չենք կարող շքավել, որ Կարապետյանի թարգմանությունը մեր թարգմանիչների մեծ մասի սովորական բոլոր թերություններն ունի: Ստրկաբար ռուսերեն բառերը հայերեն դարձնելը թարգմանություն չէ հարկավ, և պ. Կարապետյանը, դժբախտաբար, այդպես է վարվում. շատ տեղ էլ ուղղակի ռուսերենը չհատկանալու ապացույցներ ենք գտնում այս թարգմանության մեջ...⁴:

...Մի գրական-գեղարվեստական գործի թարգմանության համար որքան ճիշտ թարգմանելն է կարևոր (այս պահանջը, հարկավ, վերաբերում է ամեն տեսակ գրվածքների թարգմանության), նույնքան, գուցե և ավելի նշանակություն ունի ինչպես թարգմանելը:

Միևնույն նդանակով չի կարելի թարգմանել Մետեուլինկի «Պել (իաս) և Մելիզանդը» և Յուլյեիչի «Քագավորը». առաջինը մի զուտ բանաստեղծական գործ, ոչնչով կապված չէ իրական կյանքի հետ, բացի այն նույր հոգեկան զգայություններից, այն անշոշափելի տրամադրություններից, որ առաջ է բերում հեղինակը ընթերցողների մեջ: Որոշ երկրում, որոշ կենսական պայմաններում, որոշ ժամանակում ապրող մարդիկ չեն «Պել (իաս) և Մել (իզանդի)» գործող անձինք, ոչ Ալմոնդ երկիր է եղել ու կա, ոչ Արքել թագավոր. վերջապես,

դրանք կարող էին թագավոր ու արքայազններ էլ չլինել, և բանք շատ չէր փոխվի: Այդ իսկ պատճառով «Պել (Իաս) և Մել- (Իզանդի)» գործող անձինքը շունին իրենց առանձնահատուկ լեզուն և շեն էլ կարող ունենալ. նրանց լեզուն հեղինակի լեզուն է, և ուրիշ ոչինչ:

Այլ է Յուշկեիշի գրվածքը. գործողությունը կատարվում է Ռուսաստանում, այդ դեռ ճիշտ որոշումը չէ, կատարվում է Կիևում, Քիշնևում, Օդեսայում, հարավ-արևմտյան Ռուսաստանի մի մեծ քաղաքում. ժամանակը՝ 1905—1906 թթ., գործող անձինք, բացի երկու բանվորից, բոլորն էլ հրեա են, դրամատոսեր, բանվոր, կրթված, անկիրթ և այլն. դրանց լեզուն շատ ու շատ հեռու է հեղինակի լեզուն լինելուց (խոսքը անկիրթների մասին է). այդ լեզուն ուսերեն էլ չէ, այլ Ռուսաստանի հրեաների ժառգունը. պիեսի մեջ խոսում են այնպես, ինչպես իսկապես տանը նստած կխոսեին, և այլն, և այլն:

Հիմա այս բոլորը պետք է հայացնել. նախ ընդհանուր պահանջ՝ ամեն լավ թարգմանություն ինքն իրեն պիտի չըմատնի, երևան չհանե, ըստ կարելիության, յուր թարգմանություն լինելը. հետո՝ լեզվի վերաբերությանը էլ թարգմանիչը հեղինակի ստեղծագործական մտադրությանց թարգմանը պիտի հանդիսանա, ամեն գործող անձի բերանը իրեն հատուկ ու համապատասխան լեզու դնելով: Կամենում եմ ասել, թե միևնույն լեզվով, միևնույն ոճովն ու բառերով շեն կարող խոսել և հայերեն թարգմանության մեջ էրշն ու Ռոզենովը, վարցն ու բանվոր Դավիթը, էտելն ու յուր ժենյան ու Մաշան և այլն, նույնիսկ Միրոնը և մյուս բանվորները: Գործող անձանց մեծագույն մասի լեզուն ամենահասարակ, նույնիսկ գոեհիկ խոսակցական լեզու է: Այդ տպավորությունը պիտի ստացվի և հայերեն թարգմանությունից. բայց այստեղ շափի զգացումը մեծ դեր ունի կատարելու. մի զավառաբարբառով թարգմանել շենք կարող, մաքուր գրական լեզուն էլ խիստ արհեստական բան պիտի լիներ էրշի, էտելի... և մյուս բանվորների բերանում: Ծս հետևել եմ այս եղանակին (հաջող, թե անհաջող, դատավորը ե՞ս չեմ). պահել եմ դրական լեզվի քերականական ձևերը, ամենայն ազատությամբ օգտվել են ժողովրդի կենդանի խոսակցական լեզվից. օտար բառերը

գործ. եմ ածել միմիայն ամենաանհրաժեշտ դեպքերում, երբ համապատասխան հայերեն բառ չեմ կարողացել գտնել, գործ եմ ածել ժողովրդականից (մե՛ր՝ Արարատյան բարբառից) բառեր, որ, թերևս, ընդունված չեն (որովհետև գործ չեն ածված) ու շատերի համար առայժմ անհասկանալի են, խուսափել եմ, սակայն, վերջերս ընդհանրացած օտար բառերից: Ասողներ կլինեն, անշուշտ, թե շատ բան, որ սովորական է երևանցու, վաղարշապատցու, օշականցու համար, անհասկանալի կարող է լինել տփխիսեցու, դարաբաղցու և ուրիշների համար: Ես կպատասխանեմ. ապա ինչու՞ բողոքող չկա այն հարյուրավոր ու հազարավոր օտար բառերի գործածության դեմ, որ վերջին տարիները հեղեղել են մեր գրական լեզուն: «Թագ (ավորի)» Ա արարվածի մեջ մի այսպիսի նախադասութուն եմ գրել. «Ականջիս տակին թնդանոթ էլ պցեն, հավատա (ժողովուրդն արտասանում է՝ ավատա) շսեմ», այստեղ ոչ մի օտար բառ չկա, բայց եթե շատերին խորթ թվի այս դարձվածը, ես մեղավոր չեմ: Իմ գրածը մաքուր հայերեն է. ով չի իմանում, թող սովորի, ես ինչ անեմ: Իմ արածին հակառակ, դուք, հայ լրագիր ու գիրք հրատարակողներ, կարծում եք, թե ես, մի օտար լեզուներ շիմացող հայ մարդ, պարտական եմ հատկանալ, թե ինչ ասել է «... խնդրին մոտեցել է ինչ-որ գենետիկ մեթոդով, թեև այդ մեթոդը տարբերվում է հայ գրականության մեջ ընդունված մեթոդից միայն արտաքին ֆրագենտոգիայով»: Դուք կասեք, թե այդ լեզվով խոսողը բարձր նյութերի մասին է խոսում, որ ինձ՝ տգետիս մատչելի չեն առհասարակ: Շատ բարի. ապա ի՞նչ գործ ունին Նոր Բայազետից կամ Խաթունարիից մի դավառական փոքրիկ թերթում տպված թղթակցության մեջ ֆալսիֆիկացիա, մասսա, միսսիա, դեիզ, մոմենտ բառերը, երբ թղթակցության մեջ էլ խոսքը տիրացուի, գյուղական գրագրի, տանուտերի մասին է:

...Բառերը մի կողմը. ապա որ հայերենի շարահյուսությունն էլ է մոռացվում ու հայերեն բառերով ուսերեն են դրում շատ անգամ, ա՞յդ ինչպես պետք է լինի:

Երբ մեր ընթացիկ գրական լեզուն այս վիճակի մեջ է, հավանական եմ համարում, որ իմ թարգմանության մեջ պա-

տահող շատ բաներ ու դարձվածներ անսովոր կամ մինչև
իսկ անհասկանալի երևին...⁵։

...Ամեն մի օտար բառի տակ հայերենը դնելով և այն-
պես իրար հետևից շարելով, սուանց ուշ դարձնելու, թե որ-
քան այդ հատուկ է հայի մտածողության ու խոսելու եղանա-
կին, մենք դեռ թարգմանություն արած չենք լինի... լսում
էինք հայերեն բառերով ասած օտար առածներ, որ հայի հա-
մար ոչինչ իմաստ չունին... Չէ՞ որ ամեն լեզու ունի յուր
հատուկ ընդհանրացած փաղաքշական բաներն ու խոսքերը,
որ ոչ մի կերպով չեն կարող նույն նպատակին ծառայել մի
այլ լեզվի մեջ...⁶։

Օտար լեզվով թարգմանված լինելն ամեն մի պիեսի համար
ամենալավ փորձաքարն է և, պետք է ասել, որ շնայելով յուր
բոլոր կենցաղական առանձնահատկություններին, շնայելով
երկխոսությանց աղ ու հոտի ուսերեն թարգմանելու անկա-
րելիությանը՝ «Պեպոն» ամենահաջող կերպով դիմացավ փոր-
ձությանը։ Բնավորությունների դարգացումը, գործողության
կենդանությունը և հետզհետե սաստկացող հետաքրքրակա-
նությունը, աղնիվ աղբատության և անպատկառ հարստության
մաքսուման հաստակ գաղափարը՝ «Պեպոյին» միշտ ժամա-
նակակից լինելու արժանավորությունն են ընծայում⁷։

...Արդ՝ պպ. Մատուրյանն ու Վեսելովսկին ընդհանուր աշ-
խատությանը ծանոթացնում են ոուսաց հասարակությանը
մեր համակրելի թատերգակ Գ. Սունդուկյանի լավագույն կա-
տակերգության՝ «Պեպոյի» հետ և այդ գործի համար նոքա
արժանի են մեր շնորհակալությանը։ Մի ազգ ճանաչելու ամե-
նալավ միջոցներից մեկը նորա գրականությանը ծանոթանա-
լըն է, և այդ տեսակետից մի ազնիվ պաշտոն է ստանձնել պ.
Յու. Վեսելովսկին հայոց վերաբերությանը, աշխատելով ոուս
հասարակության մեջ հայ ազգի մասին ճիշտ տեղեկություններ
տարածելուն նպաստել...⁸։

...Վերջիվերջո, ճիշտ են ասում նրանք, ովքեր գրում են, որ ընհանրապես բանաստեղծությունը անբարգմանելի բան է, եթե պահանջվում է և՛ արտահայտել հեղինակի ոգին, և՛ պահպանել բնագրի գեղարվեստական ձևը: Բայց ես ուզում էի Տիշինայից գոնե որևէ բան, ինչ որ ձևով, հրամցնել հայերեն լեզվով: Մի՛ մոռացեք, որ առաջին անգամն է հայերեն լեզվով, հայերեն տառերով մամուլում լույս տեսնում «Պավլո Տիշինա» անունն իսկ... Թող դա՛ լինի իմ ծառայությունը...⁹:

...Մեր թարգմանիչների մեծագույն մասը թարգմանություն ասելով հասկանում է օտար բառի տակ հայերեն բառ դնելն ու այնպես շարելով անցնելը: Շատ անգամ հայերեն գրածը, եթե ուսերենից է թարգմանած, պիտի նորից ուսերենի շուռ տաս, որ հասկանա, թե ինչ է ուզում ասել գրողը...¹⁰:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերության վարչությանը գրած նամակից, 1910 (Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 142):

² «Համլետի» հայերեն թարգմանության առթիվ, 1895 (Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1965, էջ 57—59):

³ Հ. Զոդեբուման, «Պատիվ» գրախոսականից, 1882 (նույն տեղում, էջ 279—280, 285):

⁴ Ա. Պուլկին, «Կապիտանի ազդիկը» հայերեն թարգմանության գրախոսականից, 1896 (նույն տեղում, էջ 229—230):

⁵ Ս. Յուշկևիչի «Թագավորը» պիեսի հայերեն թարգմանության Առաջաբանից, Թիֆլիս, 1912, էջ II, III:

⁶ Պ. Նևեժինի «Ընկերակիցները» կատակերգության ներխույաղման մասին («Արձագանք», 1892, № 125):

⁷ Գ. Սունդուկյանի «Պեպոն» ուսաց բեմի վրա, 1894 (Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 304):

⁸ «Перо», бытовая комедия в 3-х действиях Габриела Сундукяна, 1896 (նույն տեղում, էջ 230—231):

⁹ Պավլո Տիշինային գրած նամակից, 1929, մայիս (նույն տեղում, էջ 253):

¹⁰ Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերության վարչությանը գրած նամակից, 1912 (նույն տեղում, էջ 61):

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐՅԱՆ*
(1865—1917)

Ներկայումս ես զբաղված եմ մի մեծ և ծանր աշխատու-
թյամբ, սր կրելու է «Ռուս բանաստեղծներ» խորագիրը...
Նպատակս է՝ մի որոշ շափով գաղափար տալ հայ հասարա-
կության ուսաց ճոխ և լայնածավալ բանաստեղծական գրա-
կանության մասին. նմուշներ տալով այդ ճյուղի հայտնի ներ-
կայացուցիչներին՝ սկսած Պուշկինից և վերջացրած ժամանա-
կակից բանաստեղծներով: Կարծում եմ... այդպիսի մի գործ
անշահ չի լինի հայերիս համար: Այդ միտքը ես վաղուց է որ
փայփայում եմ: Այդպիսի մի գործ կարող է նպաստել և մեր
ճաշակի նրբացման, և մեր սրտի ու հոգվո զարգացման և
սղնվացման: Թեպետև, զգում եմ, մի անհաստի ուժի համար
լավականին ծանրաբեռն է այդպիսի մի գործը, սակայն, հույս
ունիմ, ամեն եռանդ գործ դնելով, մեկ կամ երկու տարվա
մեջ գլուխ բերել այն և լույս ընծայել...¹:

...Գալով Պուշկինի «Մոցարտ և Սալիերի»-ին՝ դա շատ լուրջ
գործ է... և ձեռաց թարգմանելու բան չի, այն էլ զակագով:
Ես չափազանց շատ եմ սիրում Պուշկինին, որպեսզի կարողա-
նամ այդպիսի մի անպատվություն հասցնել նրան՝ ձեռաց
թարգմանելով նրա գեղեցիկ և զորեղ ստեղծագործություն-
ներից մեկը: Դու, իբրև գեղարվեստագետ-ստեղծագործող...
լավ կհասկանաս իմ միտքն ու զգացմունքը²:

* Այ. Մատուրյանը թարգմանություններ է կատարել Պուշկինի, Լերմոն-
տովի, Բայրոնի, Հայնեի, Հյուգոյի, Տոլստոյի, Ելեգրինի, Լոնգֆելլոյի, Ուլան-
դի, Նեկրասովի, Կոլցովի, Նադսոնի, Նիկիտինի, Մայկովի, Պլեշչեևի, Խեմ-
նիցևի, Տուրգենևի, Գարշինի, Հարտմանի, Պրյուդոմի, Լաշամբոդի, Ֆրուգի
և այլոց շափածո ու արձակ ստեղծագործությունների:

...Լերմոնտովի «Ангел смерти» պոեմը... միայն նորերս վերջացրի, և մեջքիցս, կարծես մի ծա՛նր քար ընկավ... Հո, գիտեք... որ Լերմոնտովին թարգմանելը հանաք մասխարուլություն չի՞... նրան թարգմանելիս իր հսկայական տաղանդով էնպես է վրադ ծանրանում, որ քիչ է մնում տակին ճխլվես...³:

...Ալֆոնս Դոդեի նման մի նշանավոր և ժողովրդականացած հեղինակի աշխատությունը հայերեն թարգմանել— դա շատ գեղեցիկ միտք է: Բայց որքան օգուտ և որքան բավականություն կստանա հայ ժողովուրդը նրա «Տարասկոնցի Տարտարենի անսովոր արկածները» աշխատությունից— դա փոքր ինչ կասկածելի է... որովհետև այն աղբ, այն համն ու հոտը, որ պարունակում է յուր մեջ այդ գիրքը, երբեք չեն կարող այնչափ քաղցրաճաշակ և հրասլուրիչ լինել հայ մարդու համար, որչափ որ նրանք են տարասկոնցիների համար... Վերջապես, ասելս այն է... որ Դոդեի այդ աշխատությունը հաղիվ թե կարողանա հայ ժողովրդի մտավոր կյանքին մի զգալի օգուտ տալ, որովհետև այդ գրվածքի ինտերեսն ավելի մասնավոր է, քան ընդհանուր, համամարդկային... Դոդեի «Սաֆո», «Ժարր» նույնպես գեղեցիկ աշխատություններ են, բայց ինչ կասես, որ նեղալուծ նրանց հայերեն թարգմանելը և հայ ժողովրդին ներկայացնելը, իմ կարծիքով, մի անխորհուրդ բան կլիներ: Ինչ բարոյական սնունդ, ինչ խրատական և օրինակելի դասեր կարող է առնել հայ ժողովուրդը Պարիզի արկածալից և բաղամագույն վարքուբարքի կենդանի նկարագրությունից...⁴:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Չոպանյանին գրած նամակից, 1899, սեպտեմբեր («Գրական ժողովուրդ», գիրք 1, Երևան, 1961, էջ 51—52):

2. Նար-Դոսին: գրած նամակից, 1911, փետրվար (նույն տեղում, էջ 84):

3. Յ. Խանգաղյանին գրած նամակից, 1913, ապրիլ (նույն տեղում, էջ 109). Լերմոնտովի «Մահու հրեշտակը» Ալ. Սատուրյանի թարգմանությամբ

լույս է տեսել Նոր Նախիջևանում հրատարակվող «Գաղութ» շաբաթաթերթի 1914 թվ. № 30-ում:

4 Մ. Բարխուդարյանին գրած նամակից, 1888, օգոստոս, հավանորեն Բարխուդարյանը Մատուրյանին առաջարկել է թարգմանել Ա. Դոդեի «Տարաւեկոնցի Տարտարներ» իր «Հանդեսի» համար: Դոդեի այդ վեպը առաջին անգամ բնագրից հայերեն թարգմանեց Տ. Զաքարյանը. որի թարգմանութիւնը լույս տեսավ Թիֆլիսում, 1891-ին («Գրական ժառանգութիւն», դիրք 1, էջ 16—17):

ՆԱՐ-ԴՈՍ*
(1867—1933)

...Եթե գոյութիւն չունենար գրողների փոխադարձ ազդեցութիւնը, նրանց ստեղծագործութիւնը կլինէր չափազանց աղքատ, և մանավանդ, եթէ տարբեր ժողովուրդների գրողները միմյանց վրա չազդեին, ապա շուտ կցամաքեր և ընդհանուր գրականութիւնը, որովհետեւ գրականութեան զարգացումը պայմանավորված է առանձին ցեղերի շփման օրենքով...¹:

...Ի՞նչ իրավունքով թարգմանիչը Պաբոնյանի «Մեծապատիվ մուրացկաններից»՝ գրքում զետեղված գլուխները կրճատել է. թարգմանիչը կարող է ամբողջական գլուխներ բաց թողնել, բայց, իմ կարծիքով, իրավունք չունի գրքի առանձին գլուխներից մի բառ անդամ ջնջելու, ու՞ր մնաց ամբողջ կտորներ բաց թողնել. այդպիսի թարգմանութիւնը խեղաթյուրումն է նշանակում և ոչ թէ թարգմանութիւն. այդ միեւնոյնն է, ինչ որ, օրինակ, «Մայր Արաքսի» բանաստեղծութեան առաջին տան մեջ ջնջեմ «Բայլամուր», «ղարուց» և «այլաց մեջ» բառերը...²:

¹ Կար Դոսը թարգմանել է Դոստոևսկու «Խեղճ մարդիկ», Տոլստոյի «Կենդանի դիակ» պիեսը և այլ գործեր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Կամակ Յու. Վեսելովսկուն, 1908 («Գրական ժառանգութիւն», գիրք 1, Երևան, 1961, էջ 243—244):

² Կամակ Մ. Բերբերյանին, 1893 (նույն տեղում, էջ 162):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

(1869—1923)

Շեքսպիրը դարձել է մի շափ ազգերի գարգացման աստի-
ճանը սրտշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմա-
նում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տը-
հաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է:

Այս տեսակետից մենք կարող ենք ասել, թե հառաջադի-
մություն ենք արել, որ, սակայն, ինձ թվում է մի թոխչք, մի
հանկարծակի թոխչք:

... հանկարծ աստվածային Շեքսպիրին խոսեցրին հայոց
լեզվով, իրար ետևից թարգմանություններից թարգմանելով
«Շելլոկ», «Օթելլո», «Արքա կիր», «Համլետ» և այլն: Եվ իհար-
կե, այդ բոլոր գործերն իրանց վրա կրելով ժամանակի ան-
կարողության կնիքը, թարգման չդարձան Շեքսպիրի և մեր
մեջ, չդիմացան հասարակ քննադատության դատաստանին և
չմնացին ընթերցողի սեղանի վրա, ինչպես վայել էր Շեքսպի-
րի ձեռքի գործերին:

Այս դրության մեջ էր շեքսպիրյան գրականությունը մեր
մեջ, երբ երկու տարի առաջ Թիֆլիսի Հայոց Հրատ. ընկերու-
թյունը հրատարակեց «Համլետ», անգլիերենից թարգմանեց
Հովհաննես Խան Մասեհյան:

Պետք է ասել, որ այդ գրքին նախընթաց մի ավետավոր

* Հովհ. Թումանյանը թարգմանություններ և փոխադրություններ է կա-
տարել Պուշկինի, Լերմոնտովի, Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի, Հայնեի, Շելլիի,
Բյորնսի, Լոնգֆելլոյի, Տոլստոյի, Տուրգենևի, Մյուսեի, Միցկևիչի,
Ռյուկերտի, Ֆիրդուսու, Խաբանի, Լի Թայ Պի, Ժուկովսկու, Նեկրասովի,
Նադսոնի, Բարաթաշվիլու, Թագորի, Ճավճավաձեի, Թերովալլուվայի, Հի-
մենսի, Կոլցովի, Մամին-Միբիրյակի, Գորկու, Բլոկի, Ռասպեի, Թոմաս Հու-
դի, Գրիմ Եղբայրների և այլ գրողների չափածո և արձակ ստեղծագործու-
թյուններից, ինչպես նաև՝ ուսական բիլինաներից, սերբական ժողովրդա-
կան էպոսից, հնդկական վեղերից: Ուսական, ճապոնական, իտալական,
հնդկական, իսլանդական ժողովրդական հեքիաթներից:

լուր էր պատսվում Թիֆլիսի գրականական շրջաններում, թե՛ Շեքսպիրի մի տաղանդավոր թարգմանիչ է դուրս եկել, և անհամբեր սպասում էինք գրքի լույս տեսնելուն: Լույս տեսավ գիրքը և հիրավի, մի շատ սրտալի ընդունելութուն գտավ թե մամուլի, և թե՛ ընթերցողների կողմից. նրան համեմատեցին մեր ամենալավ թարգմանութունների հետ, իբրև օրինակ առաջարկեցին:

Ես էլ այդ գրքին սրտատրոփ դիմավորողներից մեկն էի: Սրտատրոփ ասացի, որովհետև առաջուց շատ էին գովել թարգմանչի տաղանդը, հրատարակող ընկերութունը ձեռագիրը. քննել էր հմուտ մարդկանց ձեռքով, համեմատել էր բնագրի հետ, վերջապես, այդ մի թարգմանչի աշխատանք էր, որ անգլիերեն բնագրից մեզ տալու էր ամբողջ Շեքսպիրը հայերեն, մի շատ նշանավոր գործ, որ այսքան եռանդով հետզհետե կատարում է պ. Մասեհյանը: Եվ արդեն լույս են տեսել «Համլետից» հետո «Ռոմեո և Զուլիետ», «Ինչպես կուղեք» և տպագրվում է «Լիր թագավորը»*: Բայց խոսքը «Համլետի» մասին էր:

Պ. Մասեհյանի «Համլետը» թերթելով, իսկույն աչքի է ընկնում երկու բանի պակասութուն, և եթե դրանց չլինելը պակասութուն էլ չի, լինելը նպատակահարմար և ցանկալի էր. մի հառաջաբան, որի մեջ պատմված լիներ նյութը և առաջ բերած մի կամ մի քանի հայտնի քննադատի կարծիք, ինչպես առհասարակ անում են, օր. ոռւս թարգմանիչները, մեկ էլ մութ ու դժվար հատկանալի տեղերի մեկնութունները, որ կարևոր են թարգմանչի համար, որ ցույց տա, թե այս ինչ տեղն ինչու այսպես է թարգմանել և ոչ այնպես, և թե, մանավանդ, ընթերցողի համար, որ կարողանար Շեքսպիրին պարզ հասկանալ: Այո՛, կան այ. Մասեհյանի գրքի էջերում ժանոթութուններ-բացատրութուններ, բայց քիչ են դրանք և մի քանիսն էլ՝ բնագրի շափ մութը...

* Ի դեպ. ասում են, որ Հրատ. ընկեր-ը մերժել է պ. Մասեհյանի թարգմանած Մակբեթը, առարկելով, թե արդեն մի անգամ տպել է պ. Մալխասյանի թարգմանութունը: Ես կարծում եմ, այն Մոֆյուններն են, որ երկու անգամ չի կարելի թարգմանել ու տպել և ոչ թե Մակբեթը, մանավանդ որ պ. Մասեհյանը, տալիս է մի ամբողջ գործ՝ ամբողջ Շեքսպիրը (ժանոթութունը Հ. Քումանյանի):

Սակայն, կրկնում եմ, որ սրանք չեն կարող թարգմանության պակասությունը համարվել. ոչ ապաքեն Շեքսպիրը մեկնություններ չի գրել, այլ ողբերգություն. թարգմանչից էլ պետք է այդ ողբերգության թարգմանությունը պահանջել և նայել, թե նա որքան հավատարիմ է մնացել բնագրին, որքան ճիշտ է ըմբռնել ու հայտնել հեղինակի միտքը:

Հառաջաբանի մեջ պ. Մասեհյանն ասում է. «Ի լույս ընծայելով այս աշխատությունը, թարգմանիչը ամենևին հավակնություն չունի բնագրին արժանի մի թարգմանություն տրված լինելու». թե այդ գործը պահանջում է ավելի մեծ գրական հմտություն, թե այդ թարգմանությունը ձեռնարկել է մի քանի բարեկամների հորդորանքով և քաջալերված այն մըտքով, «որ մի թարգմանություն» բնագրից՝ անհամեմատ առավելություններ ունի մի երկրորդական թարգմանությունից»:

Թեև «երկրորդականը» մութ խոսք է, և շատերը կարող են «անհաջողի» մտքով հասկանալ, և «բարեկամների հորդորանքն էլ» վնասում է գործի լրջությանը, այսուամենայնիվ, այդ բոլորը մի տեսակ կաշառք են թե՛ ընթերցողին, թե՛ քննադատին, որ ներողամտություն են խնդրում: Բայց շարունակություն մեջ ասում է. «Մինչև այժմ մեր մեջ երևացած մեկ երկու թարգմանությունները փոխադրված են ֆրանսերենից, այնինչ նույնիսկ ֆրանսիական թարգմանությունները անհաջող են՝ այդ լեզվի ոճի և ոգու պատճառով: Շեքսպիրի մտածողությանց հեղեղը չէ կարող ամփոփվել Կոռնելլի լեզվի գեղածիժաղ, բայց նեղ ափերի մեջ»: Այստեղ դուք ակամայից հարցնում եք. ուրեմն ինքը՝ բնագրից թարգմանելով, ինչպես և որքան է այդ հեղեղն ամփոփել հայոց լեզվի այս անկարգ հոսանքի մեջ, որ իսկի ափեր էլ չունի, որի պակասավորությունը, թարգմանչի ասելով, իրեն շատ ավելի է զբաղեցրել, քան նույնիսկ թարգմանությունը, և որը չի տալիս շափաբորություն մի «նախարնթաց օրինակ», որ գործին հարմարվեր:

Այսուամենայնիվ, նա կատարում է իր թարգմանությունը և այն էլ պահպանելով բնագրի ձևը, որ գործը դժվարանում է տասնապատիկ, միաժամանակ մեծացնելով և արժանիքը: Եվ, հիրավի, այս մի նշանավոր աշխատանք է, արժանի լուրջ քննադատության, որ տարաբախտաբար, տակավին չկա...¹:

Թարգմանությունը ապակու տակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ Թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիս մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ Թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրենց խոր նշանակությունն ու հաստատ տեղը: Այսօրինակ գործերից է Շեքսպիրի «Համլետը»...²

...Թարգմանություններ: Իսկ էստեղ ի՞նչ է պետք: Ճաշակով ընարություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն (Շեքսպիրի բառերից ամեն մեկը նշանակ ունի): Էս երեք պայմանը պետք է ունենանք:

...Ինչպես են Թարգմանում և ինչպե՞ս են հրատարակում: Նայենք հերթով:

... Առնենք Հրատարակչական Ընկերության հրատարակություններից երկուսը՝ «Համլետ» Շեքսպիրի, անգլերենից Թարգմանեց Հովհ. Խան-Մասեհյան և «Մակբեթ» նույն հեղինակի, քնագրի հետ-համեմատ [ելով] գերմ[աներենից] Թարգմանել է պ. Ստ [եփան] Մալխասյան:

Սա էս գործերն են առնում առանձին սիրով, նախ որ Շեքսպիրը [իմ շատ սիրած] գրողն է, երկրորդ՝ Թարգմանիչները քաջ հայագետ են ու բարեխիղճ մարդիկ, երրորդ, որ նրանց քննության գործը Հրատ [արակչական] Ընկերությունը կատարել է առանձին զգուշավորությամբ, ու շորորդ՝ տպագրությունը արել է առանձին խնամքով:

Իմ լիսսիրտ հարգանքը պ. Հովհ. Խան-Մասեհյանին, որ արնոյ: հայերենի է վերածում Շեքսպիրը, [որ] հայկական աղբատ հողում պատվաստում է, Գյոթեի խոսքերով ասենք, էն հսկայական կաղնին, որի մոտ միանում ու որից բաժանվում են գրականության բոլոր ճյուղերը: Սվ առանձին հաճույքով պետք է ասեմ, որ իր գործերը [էնպես] կտորներ ունեն, էնքան կորովի ու թափով, որոնց հետ ուսական լավագույն Թարգմանությունները դժվար թե համեմատվեն: Ի՞նչ գեղեցիկ է ասած Լաերտի խոսքը քրոջը՝ Օֆելիաին, որ հաստատում է,

թե՛ Համլետի սերը [մի] դատարկ բան է, անհաստատ հա-
ճույթ, արյան ավյուն, մի քնքույշ մանուշակ նորածին բնու-
թյան, կանխահաս, բայց վաղանց [այլև վտանգավոր]...

Շեքսպիրի գործին արժանի մի լեզու, անբռնազբոս ու հա-
րուստ...

...Ի՞նչ արժանավայել ճոխությամբ է խոսում հայոց լե-
զուն։ Դանիայի արքայազնի բերանում, ի՞նչ ուժով կարողա-
նում է տալ Շեքսպիր կոչված տիտանի երկար շունչն ու մը-
ռունչը...

Պ. Մասեհյանի Շեքսպիրից արած թարգմանությունները և
հատկապես «Համլետի» թարգմանությունը մեր մեջ համար-
վել է օրինակելի և (հաճախ) կլասիկ գործ են անվանել։
Բայց, դժբախտաբար, էսքան տարվա ընթացքում, ոչ մի
(գործին) հմուտ մարդ մտիկ չարավ դրանց, ճիշտ որ գործին
վայել լրջությամբ։

Տարիներ առաջ ես «Տարագում» տպեցի իմ նկատողու-
թյունները, որ արել էի ուսերեն մի քանի թարգմանություն-
ների հետ համեմատելուց հետո։ Ոմանք իմ... քննածը գտան
անխոհեմ, հատկապես նրա համար, որ ես առանց անգլիերեն
իմանալու, ցույց էի տալի անգլիերեն բնագրից արած թարգմ.
սխալները։ (Իմ բարեկամներից մինը, պ. Մ. Տեր-Անդրեաս-
յանը իր ժամանակին իմ նկատողություններն ստուգել էր
անգլիերեն բնագրի վրա ու գտել ճիշտ)։ Այնուհետև, ես ձեռք
բերի անգլիերեն Շեքսպիրը և այժմ առաջվա նկատողությու-
ներիս ավելացնելով նորերը (դնում եմ հրապարակ)...

Բայց առաջուց ընթերցողին հիշեցնում եմ, որ մենք գործ
ունենք Շեքսպիրի հետ, մի գրողի հետ, որի ամեն մի խոսքը
չառ է հաստատ ու իր իմաստն ունի...³։

...Թեպետ և «Поэзия Армении»-ի թարգմանությանը
մասնակցել են ուսաց գրեթե բոլոր առաջնակարգ բանաս-
տեղծներն ու թարգմանիչները, բայց գործը հեշտ գործերից
չի և միանգամից, էն էլ էս ծավալով, գլուխ չէր գալու ան-
թերի։

Թե ինչ առավելություններ կամ ինչ թերություններ ունեն
ոուս բանաստեղծները էս գրքի մեջ, անշուշտ, ցույց կտան ու

կգնահատեն արժանավոր կերպով մեր մամուլի մեջ, բայց ես ուզում եմ խոսել մի թերության մասին, որ մեզանից՝ հայերից, հայ թարգմանիչներից է առաջ գալիս: Մեր հին բանաստեղծության մեջ շատ բառեր ու ոճեր կան, որ մինչև էսօր մնում են մութն ու անհասկանալի, և կամ սխալ են մեկնած: Շատ աղավաղված տեղեր կան, որ մինչև օրս մնում են անվերծանելի: Էդ պատճառով, շատ տեղ հենց մենք ինքներս ենք թարգմանիչներին ձգել սխալների մեջ՝ էդ տեսակ տեղերն ու տողերը սխալ թարգմանած նրանց ձեռքը տալով:

...Եթե ես ասում եմ էս ինչ տեղը բար պետք է լինի, ոչ թե բառ. էդ հո չի նշանակիլ, թե հայոց բանասերներն ու գրողներն իսկույննեթ ասելու են՝ աչքներիս վրա. էդպես էլ կընդունենք: Դրան ապացույց հենց էն հանգամանքը, որ էս նկատողությունների մի մասը արեյ եմ դեռ գիրքը տպվելուց առաջ, մի երկուսն ընդունվել են և գրքի մեջ ուղղվել, մյուսները, ինչպես որ կային, էնպես էլ մնացել են:

Այժմ իմ արած նկատողությունների միտքը սա է... պետք է հմուտ մարդկանց ձեռքով սրբագրել և գիրքն ազատել գոնե էն տեսակ սխալներից, որոնք միանգամայն փոխում են բանաստեղծության իմաստը և նսեմացնում են էս հոյակապ գործի արժեքը:

...Թերությունները պետք է նկատել, բայց բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պիտի գընահատել: Եվ էս ճշմարիտ է ոչ միայն ինքնուրույն գործերի համար, այլև թարգմանության: Չէ՞ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոս, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժվար ու հավաքյուտ բան: Բանաստեղծության՝ նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձեր կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքա՞ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձեր ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՞ն սեր...⁵:

Գրականության միջոցով հոգեկան կապ է հաստատվում հայ ու ռուս ժողովրդի միջև, և էն անարյուն, բարոյական նվաճումները, որ անում է և պիտի անի հայ ժողովուրդը՝ թե՛ Ռուսաստանում, թե՛ Ռուսաստանի «համաններից» դուրս՝ նոր են ու, անկասկած, շատ թանկ: Եվ լուրջ է գործի սկզբնավորությունը:

— Ռուսաց գրողներից շատերն այժմ զբաղված են հայոց գրականության ուսումնասիրության ու թարգմանության գործով: Օրեցօր ավելի ու ավելի են ճանաչում ձեր բանաստեղծությունն ու ձեզ... — ասում է ռուս մեծանուն բանաստեղծը Վ. Բրյուսովը, որ էդ գործի գլուխն է կանգնած: Մոակվայում, և հայտնում է ռուս իշանավոր գրողների կարծիքները՝ լիքը հրճվանքով ու սիրով...⁶:

«Русская мысль» ամսագրի սեպտեմբերի №-ում* տպված են մեր Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի երգերից՝ մի քանիսի թարգմանությունները, որ կատարել է ռուսաց նշանավոր բանաստեղծ Վ. Բրյուսովը: Հարգելի թարգմանիչը իր թարգմանություններին կցել է մի հառաջաբան, որի մեջ մեծ սիրով ու հարգանքով է խոսում հայ ազգի և նրա հին գրականության վրա...

Ռուսաց բանաստեղծներից, եթե շեմ սխալվում, առաջինը Պոլոնսկին է եղել, որ ուշք է դարձրել Սայաթ-Նովայի վրա ու հիացել... Նրանից հետո էլ են մի քանի անգամ ռուսերեն թարգմանել, բայց առաջին անգամն է, որ պ. Բրյուսովը թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հարթել գրեթե անհաղթելի արգելքներ և՛ ինչպես Սայաթ-Նովայի, էնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճանաչելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու երանգը, և նրանց գործերը անվանելով հայ ժողովրդի ազնվականության վկայական:

Այո՛. ճշմարիտ է՝ գեղեցիկ գրականությունը, իբրև հոգու պարզ ու կատարյալ արտահայտություն, ժողովուրդների ան-

* «Русская мысль», книга IX, М., и Пг., 1915, с. 1—8. «Песни ашугов», перевод с арм. В. Брюсова.

խարդախ վկայականն է, և ինչքան բարձր է գրականությունը, էնքան բարձր վկայական է մի ժողովրդի կուլտուրականության, բայց միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների մեջ:

Մենք ունեցել ենք էդ բարձր վկայականը, բայց էդ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ շունենք էն մեծ փոխադարձ շաղկապը ուրիշ ժողովուրդների հետ: Մենք ենք միայն օտարների հանճարները ճանաչել, սիրել ու սրտով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար էլ մեզ ոչ ոք չի գնահատել, չի սիրել ու հոգեպես չի կապվել մեզ հետ:

Խոսքիս ամենապերճախոս ապացույցը հենց ռուս ամսագրի էս համարն է, որի մեջ ռուս բանաստեղծը հրճվանքով է նկատում, որ մեր երգիչներն էլ են սավառնում էն «եթերային բարձունքներում», ուր Հաֆիզն է սավառնում: Իսկ «եթերային բարձունքը» էն երջանիկ աշխարհքն է, որ բոլոր հայրենիքներն ու կրոնները միացնում է գեղեցկության, ճշմարտության ու արդարության մեջ, ուր բոլեւ խտրություն չկա և ամենքից հավասար սիրվում է ամեն մեկը, ով էնտեղ կրահանի:

Վերջապես ժամանակն է, թող իմանան մեր ռուս եղբայրները, էնպես էլ ավելի հեռուները թող իմանան, որ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի շեն եղած հայի հոգուն, որ հայի հանճարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում, թեև նա ինքը՝ հայը միշտ լուռացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էնպես, ինչպես մի Սայուրթ-Նովա⁷:

...Քանի որ մի ժողովուրդ հազար ու մի ձևերով հարաբերություն ունի ուրիշ ժողովուրդների հետ, քանի որ նրա կյանքը զարգանում է նաև արտաքին ազդեցությունների տակ, քանի որ մեծանում է, էնքան էլ ազդեցություններ է կրում և նրա լեզուն, հարստանում, ճոխանում ու զարգանում: Նորանոր պաղափարների հետ նորանոր ոճեր ու բառեր է ընդունում, և մինչդեռ դուք բողոքում եք, թե չի կարելի հայերեն լեզվի մեջ գործածել դարդ, ջան, շու, գիլ ու նման բառեր, մյուս կողմից ներս են հոսում ինտելիգենտ, կուլտուրա, լե-

գենդ, սոնետ, պոեմ, պոեզիա, օպերա, զիզգագ, պրոպագանդ և այլն. Դուք կարծում եք միայն նրանով պիտի ճոխանանք ու բավականանք, ինչ որ հայի միտքն ու հանճարն է տալի...

... Եթե մեր լեզվից հանենք ձեր հալածած «ջանը», որ շինական է, թե մոնղոլական-թաթարական, ինչով կփոխարինեք: Մի քիչ մտածեցեք, կտեսնեք մի բառ եք վտարում, որի տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ դնել չեք կարող: Դրա նման և շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն: Եթե էդ օտարամուտ բառերի փոխարենը դուք ունեք— ինչ խոսք: Եթե ձեր լեզուն ընդունակ է հարազատ թարգմանելու կամ հարմար բառեր շինելու, տեղեֆոնին հեռախոս ասացեք, տեղեգրաֆին հեռագիր կամ վելոսիպեդին հեծանիվ, բայց հո չի կարելի ամեն բան էլ թարգմանել կամ շինել, էքսպրոպրիատորը՝ ճշգրտարիստ, ինչպես արել են մեր պոլսահայերը, տրամվայը քարշակ անվանել, հանգ. Գամառ Քաթիպայի նրման, խավիարը ձկնկիթ կամ ֆրակը պոչազգեստ...

Ո՛ր, թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոփոխությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է դեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա՛ է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու...³:

...Եվ միշտ ավելի լավ է շունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պոչազգեստ, կոտլետը՝ կողիկներ կամ ռահատ լոխումը՝ հանգստապատառ:

Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունը: Հաճախ կտեսնեք, որ մեզանում նույնիսկ просвещение, цивилизация, культура թարգմանում են միևնույն բառով— լուսավորություն:

Եվ էսպիսով լեզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառ-

նում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են աղղում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոփա առնելիս թե թարգմանելիս զգուշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծադործություն է ու մի ամբողջ աշխարհք...⁹:

...Շոթա Ռուսթավելին մեծ գրող է. նրա գրվածքը շատ է գեղեցիկ, պատկերներով լիքը, սահուն հոսում է մեծ ու խաղաղ գետի նման, բայց Բալմոնտը հաջող չի թարգմանել, թեև նա վիրտուոզ է, խոսքի վարպետ... կարողանում է հանգեր սարքել, իրար գցել, բայց հոգին, շունչը չի տվել, չկա, մեռցրել է:

Կավ թարգմանիչներ մենք չունենք, Սադաթյանը «Դևի» ոգին, շունչը տվել է, բայց եթե բառացի հետևելու լինենք, կսեանենք, որ է՛ն չի. տխալ թարգմանած տեղեր ունի:

Մտքումս կա եթե ոչ բոլորը, գոնե մի քանի հասված թարգմանելու Շոթա Ռուսթավելուց և Ֆիրդուսու «Ռուստամ ու Զոհրաբից»¹⁰:

...Անցյալ օրը տեղում (առավոտը) թարգմանեցի КОЛЬЦОВ-ի մի ասանավորը— «Сяду я за стол»— ուղարկեցի «Տարազին»: СТОЛ-ը շինել եմ գիտե՞ս ինչ— պատի տակ, և այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով: Եթե սեղան թարգմանել-նստել եմ սեղան— այդ հայերեն կնշանակեր՝ նստել եմ սուփրա: Եթե գրեի՝ սեղանի մոտ— տգեղ էր: Վերջապես բանաստեղծուհիները հայերեն չէր լինի: Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը— պատի տակն է...¹¹:

...Եվ ահա Ձեզ ամենայն անկեղծությամբ ասում եմ, որ Ձեր լեզուն վատ է, կարգին հայերեն չգիտեք: Էդ հայերենով չի կարելի գեղարվեստական գործեր թարգմանել: Եվ շատ եմ ցավում, որ էդքան աշխատանք եք արել, «Ռուդիինի» նման մի ահագին վեպ եք թարգմանել: Էն էլ պետք է ասեմ, որ ուղղելն էլ դժվար է:

Առհասարակ լեզու ուղղելը դժար բան է: Ինչքան ուղղեք, կմնա վատ լեզու: Ուրիշ բան է, եթե միայն սխալներ լինեն մեջը. բայց ուսերեն է Ձեր հայերենը, և հայերեն դարձնելը հեշտ չի: Հենց ձեր պիեսի թարգմանությունը շատ վատ է: Իհարկե, էս տեսակ լեզվով տպած շատ գրքեր ունենք ու դեռ էլի կունենանք. բայց հրպես չի կարելի: Դուք պետք է աշխատեք Ձեր լեզվի վրա...¹²:

...Ֆրանսերենից արած թարգմանությունը էլ ինձ չհրապուրեց. մեղկություն է շնչում, թուլամորթի մեղկություն: Տուփանք է ուզում, որ աշխարքի շարունակությունը մոռանա: Չարն ու չարչարանքը մոռանալու այն միջոցը դժբախտաբար ես լավ գիտեմ... Հիվանդական երևույթ է և այժմյան գեղարվեստը բնորոշող: Ինձ էլ դուր չեն գալիս դրանք: Ննջարանի հոտ է գալիս: Չգիտեմ, ում խոսքերն են, այստեղ միտս եկան, ասում է — ջարդեցե՛ք պատուհանները, այդ ծանր օդից դուրս եկեք մաքուր օդը, պարզ երկնքի տակ...¹³:

«Թարգմանությունը լավ ճյուղ է... սակայն նա պատահական բնույթ չպետք է կրի: Այս գործը մեզանում պետք է խորանա: Նրա միջոցով հարևան ազգերը պետք է ճանաչեն միմյանց, ծանոթացնեն իրար իրենց կուլտուրական հարստությանը, գրականությանը, արվեստին, պետք է հասկանան միմյանց ցավն ու ուրախությունը...»¹⁴:

...Լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության¹⁵:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Համլետ»՝ ողբերգություն Շեքսպիրի, անգլերենից թարգմանեց Հովհաննես Խան Մասեհյան, Քիֆլիս, 1894, գրախոսականից (Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 25):

² Շեքսպիր, «Համլետ», թարգմանություն Գարեգին Զ. Բաբազյանի, Վիեննա, 1899, գրախոսականից (նույն տեղում, էջ 69):

³ «Քարգմանությունները և հրատարակությունները մեղանում» անտիպ հոդվածից (Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 122):

⁴ «Поэзия Армении» գրքի 2-րդ տպագրության առթիվ, 1917 (Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 383):

⁵ Խոսք՝ ուղղված Վ. Բրյուսովին, 1916 (Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 151):

⁶ «Հայոց պատմությունը» հոդվածից, 1916 (Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 332):

⁷ «Քուչակ նահապետի և Սայաթ-Նովայի ուսերին թարգմանությունների առիթով», 1915 (նույն տեղում, էջ 320, 325, 326):

⁸ «Լեզվական փոխառությունները», 1910 (նույն տեղում, էջ 120—121):

⁹ «Հայոց գրական լեզվի խնդիրը»՝ 1916 թվ. նոյեմբերի 25-ին Հայ գրողների ընկերության երեկույթում կարգաքանդ զեկուցումից (նույն տեղում, էջ 374, 375):

¹⁰ Նվ. Քումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 207—208:

¹¹ Փ. Վարդանյանին գրած նամակից, 1899, սևպտեմբեր (Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 154—155):

¹² Նամակ Ս. Արտեմյանին, 1911 (նույն տեղում, էջ 345): Ի. Տուրգենևի «Ռուդին» վեպը՝ Ս. Արտեմյանի թարգմանությամբ այդպես էլ չհրատարակվեց:

¹³ Նամակ Փ. Վարդազարյանին, 1902, օգոստոս (նույն տեղում, էջ 204—205):

¹⁴ Նվ. Քումանյան, Հովհ. Քումանյանը և ուսուցողականությունը, Երևան, 1956, էջ 119:

¹⁵ նույն տեղում, էջ 122:

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ*
(1872—1954)

...Ֆրանսերենի, ռուսերենի և եվրոպական քանի մը այլ լեզուներու թարգմանություններ այս հեղինակներեն**, ինչպես օրինակի համար՝ հայ բանաստեղծներու ռուսերեն թարգմանության ծաղկաքաղը, զոր ի լույս ընծայեց Վալերի Բրուսով, իմ հրատարակած հավաքածուներս, Chants populaires Arménies (Հայ ժողովրդական երգեր), Poèmes arméniens anciens et modernes (Հայ հին և արդիական բանաստեղծություններ), Les Trouvères arméniens (Հայ աշուղներ) ու երեք հատորները La Roseraie d' Arménie-ի (Վարդենիք Հայաստանեաց), ինչպես և Ֆրեդերիք Մաքլերի հրատարակած մատենաշարը՝ Petite Bibliothèque Arménienne (Հայկական փոքր Մատենադարան, թարգմանություններ Զարդարյանի, Ահարոնյանի, Պարոնյանի և այլ. գործերու), և Բաֆֆիի Մամուել վեպին թարգմանությունը, ամենամեծ հաջողություն

* Ա. Զոսյանյանը կազմել և ֆրանսերեն է թարգմանել «Հայ հին և արդիական բանաստեղծություններ» ժողովածուն (1902), «Հայ ժողովրդական երգեր» ժողովածուն (1903), «Հայ աշուղներ» (1906), «Վարդենիք Հայաստանի» եռահատոր ժողովածուն (1918, 1923, 1929— Հայ միջնադարյան պոեզիան և աշուղական արվեստը)։ Ֆրանսերենից արևմտահայերեն է թարգմանել Հյուզոյի, Ֆրանսի, Լաֆոնտենի, Մյուսեի, Բողլերի, Լամարթինի, Շատոբրիանի, Միսթրալի, Դյումայի, Դյոթիեի, Վինյեի, Վերլենի, Լըբոնթ Դը Լիլի, անգլերենից՝ Շեքսպիրի, Բայրոնի, Լոնգֆելլոյի, Շելլիի, Սքոթի ստեղծագործություններից, թարգմանություններ է կատարել նաև հույն, լեհ, բելգիացի և այլ ազգի գրողներից։

** Նկատի ունի, իր բառերով ասած, հայ մշակույթի նշանավոր դեմքեր՝ Աբովյանին, Ալիշանին, Բաֆֆուն, Սերենցին, Բազրատունուն, Պեշիկ-Քաշլյանին, Դուրյանին, Պարոնյանին, Օտյանին, Սունդուկյանին, Վարուժանին, Մեծարենցին, Հովհաննիսյանին, Թումանյանին, Տերյանին, Իսահայանին, Թեքեյանին, Շանթին և ուրիշներին (Մ. Մ.)։

գտան և հայ գրականության ինքնատիպությունը, ճոխությունը և այլազանությունը ապացուցեցին...¹։

...Որևէ գրվածքի իրական արժեքը ճշտելու համար, ես սովորություն ըրած եմ ֆրանսերենի թարգմանել. այդ հոյակապորեն հստակ ու վերջնական կատարելության հասած լեզվին մեջ՝ ամեն, ինչ որ շփոթ է և չհաջողած կամ կիսկատար որոշ կերևա, ինչպես հայելիի մեջ. անվրեպ փորձաքար մըն է այդ ինձի համար. կարդացեք այդ փորձը, և կարծեմ դուք ալ պիտի հաստատեք թե նկատողություններս սխալ չեն։ Սակայն ձեր քերթվածը պիտի հրատարակեմ նույնությամբ, իր նույնաձևին մեջ, շատ ազվոր է ան, և նկատողությունները զոր ըրած եմ nuance-ի* խնդիրներ են²։

...Մեր ազգը իր այժմյան դժբախտ ու անփառունակ կացության մեջ պետք ունի, որ գեթ իր անցյալի մեծությունը, իր գրական ու գեղարվեստական հանճարին կոթողները** ցույց տանք Եվրոպային և մեր ազգին պատիվը բարձրացնենք³։

...Ես արդեն հրատարակած եմ հայ ժողովրդական, երգերու մասին ֆրանսերեն ընդարձակ հատոր մը, որ մեծ ընդունելություն գտավ և ֆրանսիական ակադեմիայեն պսակվեցավ։ Հրատարակած եմ նաև հայ աշուղներու մասին (Նահապետ Քուչակեն մինչև Զիվանի) ֆրանսերեն հատոր մը, որ նույնպես շատ մեծ գովեստներով ընդունվեցավ ֆրանսիական մամուլին կողմե։

Առաջ Եվրոպացիք հաճախ այն կարծիքը կհայտնեին, թե հայոց գրականությունը ինքնատիպ չէ, հետևողական է, անգույն։ Այս երկու հատորներս հաղթականորեն ապացուցեցին այդ կարծիքի սխալ ըլլալը, և այժմ ամենը կընդունին, թե հայք ունին ինքնուրույն և գեղեցիկ բանաստեղծություն։

* nuance—երանգ (ֆր.)։

** Խոսքը «Հայոց հին բանաստեղծության» (Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Շնորհալի և այլն) ժողովածուի ֆրանսերեն հրատարակության մասին է։

Ֆրանսերեն լեզուն աշխարհիս ամենեն սիրված լեզուն է, և ինչ որ ֆրանսերեն լեզվով հաջողություն կը գտնեն՝ աշխարհիս մեջ տարածվելու, ամեն կողմ կողմ ընդունելություն գտնելու ապահովություն ունի: Ատոր համար ես անհրաժեշտ կգտնեմ շարունակել ֆրանսերեն լեզվով մեր գրականության ամենեն ինքնուրույն էջերու եվրոպական հասարակությանց ծանոթացնելու գործը, որուն նվիրած եմ իմ ուժերուս մեկ ստվար մասը⁴:

...Պետք է ջանանք, որ ոռւս մամուլին մեջ հայանպաստ հոգվածներ հաճախ երևան, որ մեր գրականությունն ու արվեստը ոռւսական բարձր շրջանակներուն ծանոթացվին (ամոթ է, որ դեռ Աբովյանի գործերը՝ այնքան տեսակետներով շահեկան, ոռւսերեն թարգմանված չըլլան): Պետք է ոռւս տարրին մեջ վերազարթեցնել սերը զոր ան ունեցավ ատենով հայ ցեղեն համար... Փռենք ոռւս հասարակության առջև հայ ցեղին ծով ցավերը. հիշեցնենք, ինչ-որ ոռւսը անցյալին մեջ ըրած է հայուն համար և ինչ որ հայը դեռ կրնա ընել ապագային մեջ⁵...

...Իմ նպատակս տառական ստրուկ և անհոգի թարգմանություն մը տալ չէ, այլ ֆրանսերեն լեզվով երգել տալ մեր աշուղներուն, իրենց ամբողջ բնիկ հրապույրը պահպանելով: Դյուրին չէ: Կհուսամ, սակայն, որ գեթ մեծ մասին մեջ հաջողած եմ ուզածս իրագործելու: Կտորներու ընտրութենես գոհ եմ, հատորը պիտի ըլլա շատ հրապուրիչ և բացարձակապես «հայ»⁶:

...Chants populaires Arméniens* հատորս հորինելու և անոր ներածությունը գրելու ատենս ոչ ֆուլբորագետի, ոչ ալ պատմաբանի դեր էր, որ առաջադրած էի կատարել, այլ՝ ամեն բանն առաջ՝ գեղեցկագիտական գործ մը. իմ նպա-

* Հայ ժողովրդական երգեր (Ֆր.):

տակս էր ֆրանսիական լեզվով վերակենդանացնել հայ աշուղներու քերթվածները՝ այն ձևով, որով ես զանոնց կըմբռնեմ, և ներածութեանս մեջ՝ զիս մղող ձգտումն էր լայն համապատկերով մը թարգմանել իմ անձնական «տպավորութիւնս» հայ ցեղին նկարագրին, պատմական դերին, գեղեցկագիտական հոգեբանութեանը վրա:

...Բանասեր մը, ֆուլքլորագետ մը բառ առ բառ պիտի թարգմաներ բնագիրը, որովհետև անոր նպատակն է այդ բնագրին մեջ արտահայտուած «գաղափարները» նույնութեամբ ճանչցնել իր հայրենակիցներուն կամ անոնց մեջ ցոլացած բարքերը, ավանդութիւնները ուսումնասիրել, անոնց մեջ երեցած հատկանշական ասութիւնները վերլուծել. այդ տարբեր գործ է... թարգմանութեանը լեզուն մը ուրիշ լեզուի մը փոխադրել է գրվածք մը, պահելով ոչ միայն անոր գաղափարներն, այլև անոր «կենդանութիւնը», այսինքն ձևական հրասպարիս բոցը՝ որուն շիջումով ուէ՛ գրվածք դիտել կարողնա այլևս: Թարգմանութեանը պետք է տա այն հասարակութեան, որուն համար կկատարվի բացարձակապէս այն նույն տպավորութեանը, զոր բնագիրը կգործէ զայն արտադրող ժողովրդին վրա. արդ, այդ արդյունքին հասնելու համար թարգմանիչը պարտավոր է բառական թարգմանութեանն խորշիլ. բնագիրը, երբ մանավանդ ոտանավոր է կամ կշռավոր արձակ,— ինչ որ գրեթէ նույն բանն է,— ունի իր գաղափարներուն հրասպարիս հետ, իր տաղաչափական երաժշտութեանն ալ, իր բնիկ բառերու դիտումնավոր գուգադրութեաններով առաջ եկած ձայնական կամ պատկերական խաղերը, իր լեզվական ինքնաբոլիս և բառական թարգմանութեան մեջ անփոխանցելի շնորհը. ասոնք բոլորը դատապարտուած են ջնջվելու՝ մեքենական թարգմանութեան մը մեջ. կան դարձվածքներ, պատկերներ, բառերու զուգադրութեաններ, որոնք բնագրին մեջ սիրուն են, դյուրըմբռնելի և հաճելի են զայն արտադրող ժողովրդին, որովհետև այդ ժողովրդին մտքին մեջ հիշատակներ կարթնցնեն, անոր բարքերուն կհամապատասխանեն, անոր լեզվին մասնահատկութեանները կներկայացնեն. կան տողեր ալ, որոնք շնորհիվ տաղաչափութեան հրասպարիս կամ բառական հյուսքի սիրունութեան՝ գեղեցիկ են բնագրին մեջ, մինչ տառապէս թարգմանվելով օտար լեզվի

մը՝ իրենց քերականական թերության կամ գաղափարի տկարության ներքին արատը երևան կհանեն (և ասիկա մեր գրականության մեջ մասնավորապես շատ հաճախադեպ երևույթ մըն է)։

Այս բոլորը պետք է ի նկատի ունենա թարգմանիչը (երբ արվեստագետ մըն է). պետք է հաշվե ինչ որ կկորսնցնե բնագիրը օտար լեզվի մը փոխադրվելով, և այդ կորսվածին «տեղը լեցնե», որպեսզի բնագիրը՝ իր նոր լեզվին մեջ՝ իր ինքնուրույն կյանքը և ուժը պահպանե. փոփոխություններ, հավելումներ, հապավումներ պե՛տք է ընել ուրեմն, և ատոնք անհրաժեշտ են՝ «նույնիսկ հավատարմության տեսակետով», որովհետև տառական թարգմանությունն է, որ բուն անհավատարիմն է, մինչ թարգմանությունը՝ ես կըմբռնեմ, միակն է, որ հարազատ կարենա համարվիլ։ Տառական թարգմանությունն կնմանի սպանված և զմոված անասուններու, զոր բընական գիտությանց մուսեոններու մեջ կցուցադրեն. անոնք կծառայեն գիտական ուսումնասիրությանց, բայց անկենդան են և չեն հետաքրքրեր այն, որ կյանք կփնտրե. իսկ որևէ կենդանի (մարդն ալ մեկտեղ հաշվելով), որ մեկ կլիմայե ուրիշ կլիմա, մեկ միջավայրե ուրիշ միջավայր կփոխադրվի, ստիպված է փոփոխություններ կրելու, որոնք զինքը հիմնապես չեն կրնար այլակերպել, բայց զինքը կներդաշնակեն նոր միջավայրին հետ՝ նույն իսկ իր կյանքը պահպանելու համար։

Այս ձևով կատարված թարգմանություններ շատ քիչ կան,— որովհետև ճշմարիտ արվեստագետ մը քիչ անգամ հանձն կառնե իր ուժերը թարգմանության մեջ գործածել. բայց այն թարգմանությունները, որ այս ձևով կատարված են ճշմարիտ արվեստագետներե հոյակապորեն հաջողած են։ Եվ այդ պարագային կարելի է նույնիսկ անձիշտ գտնել «բնագիրը թարգմանության մեջ միշտ կկորսնցնե» առածը. օրինակ, էդգար Պոյի գործը՝ Բողլերեն թարգմանված, Բողլերի Ֆրանսերենը բացարձակապես հավասարած է Պոյի անգլերենին։ Հայնրիխ Հայնե, ինքն իսկ թարգմանելով իր գործերեն մեկ քանին, հարկ տեսած է փոփոխություններ ընելու՝ կյանքը պահպանելու համար (և ատոր համար է, որ Հայնեի գործերուն թարգմանությունները այնքա՛ն կենդանի են)։ Փոփոխությունները, զոր անհրաժեշտ կնկատիմ, անշուշտ, սահ-

ման մը և շափ մը ունին, և այդ սահմանն ու շափը կտարբերվի թարգմանված գործին տեսակին համեմատ: Երբ թարգմանվածը ինքնատիպ ու գիտակից մեծ հեղինակի մը գործն է, ինչպես Շեքսպիրի մը, Միլտոնի մը, Ռասինի մը, Դանթեի մը, Լեոպարտիի մը, Գյոթեի մը գործը, — թարգմանիչը կարելի եղածին շափ պետք է շանա «վերարտադրել» հեղինակին ոճը (որովհետև այդպիսի հեղինակներու մոտ ամեն ինչ շահեկան է, նույնիսկ՝ թերությունները), ու պետք է թարգմանության մեջ ցոլացնեն հեղինակին անձնական ոճին բոլոր մասնահատկությունները, առանց նկատի ունենալու, թե անոնք համաձայն են կամ ոչ՝ բարձրուն կամ ճաշակին այն հասարակության, որուն լեզվովը կթարգմանվին. պետք է միայն խորշիլ տառապես թարգմանելե ինչ որ բնագրին մեջ՝ լեզվական բնիկ ասություններ կամ զայն արտադրող ժողովրդին մեջ սովորական դարձած բացատրություններ ու պատկերներ են և հեղինակին անձնական ստեղծագործությունը չեն. ատոնց տեղ պետք է դնել լեզվական այն ասությունները, բացատրությունները և պատկերները, որոնք ատոնց բուն համարժեքը կկազմեն այն լեզվին մեջ, ուր այդ գործը կթարգմանվի: Այս տեսակետով՝ արևելյան բանաստեղծներու եվրոպական, մանավանդ ֆրանսական, թարգմանությունները ընդհանրապես շատ հոռի են, որովհետև այդ թարգմանությունները կատարողները ընդհանրապես շափազանց կփոփոխեն բնագիրը, զայն իրենց հասարակության ճաշակին բոլորովին համաձայնեցնելու համար՝ անկից կհանալեն այնպիսի մասեր, որոնք թեպետ առերևույթ տարօրինակ ու եվրոպական հասարակության համար անսովոր, իրենց հատուկ գեղեցկություն մը ունին սակայն, և բնագրին ինքնուրույն գույնը կազմող անհրաժեշտ տարրեր են. այսպես, օրինակի համար, Խայյամի ֆրանսերեն թարգմանությունը... և անգլերեն թարգմանությունը... շատ վար են բնագրեն, որովհետև անոր շատ մը գեղեցիկ պատկերները, ուժեղ ու ցայտուն ասությունները (որոնք բանաստեղծին հոգի են բխած են և ոչ թե պարսկաբանություններ լոկ) իրենց կողմե հնարված շինծու (և դրժգույն) բացատրություններով փոխանակած են (ինչ որ իրավ է՝ թե հաճախ իրենց պարսկագիտության տկարությունեն ալ առաջ եկած է):

Իսկ երբ անկատար, անավարտ, անորոշ, խառնակ գործեր են, որ կթարգմանվին, ինչպես՝ ժողովրդական բանաստեղծություններ, թարգմանիչը պարտավոր է իր կողմն շատ բան դնել, որպեսզի թարգմանությունը կենդանի ըլլա:

...Իրարու վրա ետքեն բարդված և առանց տրայմաբանական կապի իրարու խառնված երգեր շատ կան մեր հավաքածուներուն մեջ. ամեն ինչ, որ հայկաբանություն է կամ մեր մեջ հասարակ տելիք դարձած բացատրություն (որ՝ նույնությունամբ թարգմանված անհասկանալի պիտի ըլլար օտար հասարակության մը) համարժեք ֆրանսական ասություններով եմ թարգմանած. տաղաչափական, լեզվական բնիկ հրապույրներուն կորուստը դարմանելու և անոնցմե զրկվելով հաճախ շատ վտանգավոր տափակություն մը երևան հանող տողերը պարտկելու համար՝ ըրած եմ ամեն ինչ, որ կարելի է, որպեսզի այդ բանաստեղծությունները իրենց ֆրանսական տարազին մեջ ունենան ձևական ներդաշնակություն (թարգմանությունս մեջ ոտանավորի փոխարեն հաճախ կշռավոր արձակ, երբեմն անհանգ ոտանավոր եմ գործածած), վառ և կենսունակ ոճ ունենան, թարմ ու տրեփուն ըլլան վերջապես՝ որպես թե հղացած ըլլային հայ աշուղներե, որոնք հայերեն մտածած, բայց ֆրանսերեն արտահայտած ըլլային: Բոլոր այս աշխատության մեջ, որ զիս, թերևս, ավելի հոգնեցուցած է, քան ինքնուրույն աշխատություններես շատերը, երբեք չեմ հապաված ինչ որ՝ բնագրին մեջ ինքնատիպ, հայադրոշմ համն ու գույնը կկազմե. փոփոխություններս այդ հայկական և աշուղական դրոշմին մի՛շտ հավատարիմ են մնացած ու եթե երբեմն բնագրին սեղմ մեկ ասությունը բացատրած եմ ավելի քան կաղապարած, այդպես եմ ըրած, որովհետև բառապես թարգմանվելով՝ այդ տեսակ ասությունները անհասկանալի պիտի ըլլային կամ տգեղ, տափակ, անհամ պիտի երևային,— և իմ նպատակս ըլլալով ցույց տալ հայ մտքին արտադրությանց «գեղեցկությունը», չէի կրնար հանձն առնել այդ տեսակ մը դավաճանությունը թե՛ իմ նպատակիս դեմ, և թե՛ նույն իսկ թարգմանած հեղինակներուն դեմ:

Իմ բուն նպատակս էր, կկրկնեմ, համոզել եվրոպական ամենեն նրբաճաշակ գեղագետները, թե հայկական «ինքնու-

րույն» բանաստեղծություն մը կա, և թե այդ ինքնուրույն բանաստեղծությունը ունի բարձր գեղեցկություններ. այն անկեղծ ու փաղաքշական կարծիքները, զոր հայտնեցին շատ հեղինակավոր եվրոպացի գեղագետներ, որոնք թե՛ ինքզինքնին խորապես հրապուրված զգացին այդ բանաստեղծությանց ձևական գեղեցկությունեն, և թե՛ անոնց մեջ գտան մինչև ցայդ ծանոթ արևելյան բանաստեղծություններեն տարբեր, ինքնուրույն, «հայադրոշմ» նկարագիր մը, կխրախուսեն զիս մտածելու, թե ճիգը, զոր թափած եմ, բոլորովին ձախողակ չե՞...:

Գրական հրաշակերտներու թարգմանությունը մեծապես դժվար աշխատանք մըն է, որ քիչ անգամ լիովին կը հաջողի: Չի բավեր, որ թարգմանիչը երկու լեզուները լավ գիտնա, պետք է ինքն ալ ըլլա բանաստեղծ, կամ գրագետ, կամ գրական քննադատ (ճշմարիտ քննադատ մը՝ գրագետ մըն է դարձյալ) և կամ գոնե մին այն նուրբ և իրազեկ գրահմուտներեն, որ ինքնուրույն գործ արտադրելու անկարող են, բայց խորապես կըմբռնեն գրական երկերը (գրական քննադատն ու նրբաճաշակ գրահմուտը, մերթ, ավելի ճիշտ կըմբռնեն վարպետներուն գործը քննադատական զգացումեն զուրկ, չափազանց ինքնատիպ խառնվածք ունեցող գրագետներ ու բանաստեղծներ):

Բնագիր մը հասկնալը շի նշանակեր հեղինակին ոգին զգալ, ոճին մասնահատկություններն ըմբռնել, իմաստներուն խորքը թափանցել, իսկ լեզու մը ուղիղ կերպով գրելու և գրագետի պես գրելու միջև ահագին տարբերություն կա: Ատոր համար՝ այն բոլոր թարգմանությունները, որ լեզվագետ բանաստեղծներու կողմե եղած են, անկենդան են ու ցուրտ ու իմաստի խեղաթյուրումներով, գույնի եղծումներով լեցուն, այդպես են դժբախտաբար արևելյան գրականություններե եղած ֆրանսերեն թարգմանությունները մեծ մասամբ:

Ու ոչ միայն թարգմանիչը գրագետ մը կամ գրահմուտ մը ըլլալու է, այլև ունենալու է քննադատական զգացում, վերլուծող միտք, որպեսզի ուրիշ երկրի, ուրիշ դարու, ուրիշ ցեղի, ուրիշ խառնվածքի հեղինակներու հոգեբանությունը ու ճաշակն ըմբռնելու կարող հանդիսանա, և կամ թարգմանվելիք

հեղինակին հետ խառնվածքի հանգիստություն, զգայնություն ու ճաշակի մոտիկություն ունենալու է: Շեքսպիրի բազմաթիվ ֆրանսերեն թարգմանություններեն ոչ մին ֆրանսացած Շեքսպիր է, բացի Համլետի թարգմանութենե մը, զոր կատարած է Մարսել Շվոպ և Արքա Լիրի թարգմանությունով մը... Բայրոնի, Գյոթեի ֆրանսերեն թարգմանությունները ողորմելի են: Իսկապես, լավ ֆրանսերեն թարգմանությունները մատի վրա կհամրվին, որովհետև ինքնատիպ գրագետներն ու բանաստեղծները քիչ անգամ հանձն կառնեն թարգմանության ծանր աշխատանքը, որ անձնական գործ մը արտադրելե ավելի դժվար է հաճախ, ու նվազ հաճելի, անձնասիրության նվազ գոհացում տվող...

Հաջող թարգմանությանը մը իրականացման համար լավագույն սկզբունքներուն, լավագույն կանոններուն և մեթոդներուն բանաձևումը շատեր փորձած են, ըստ ոմանց՝ հարազատության ձգտումը, տառական հավատարմությունը լավագույն մեթոդն է, ըստ այլոց համարժեքներու գյուտը, ոգվոյն պահպանումը՝ տառին ստրկաբար չենթարկվելով: Այս մասին Հովհաննես Խան Մասեհյան իր Համլետի նոր թարգմանության առաջաբանին և պ. Պ. Մակինցյան իր Զրասուլդ զանգի վերջերս լույս տեսած թարգմանության նախաբանին մեջ կը գրեն հետևյալը. «Մեր առաջին թարգմանությունները,— կըսե Մասեհյան,— կատարված էին Վիկտոր Հյուկոյի ազդեցության տակ, որ սրբապղծություն էր համարում որևիցէ խոտորում շեքսպիրյան «սուրբ գրքի» բառից և տառից: Բայց երբ մենք ծանոթացանք ավելի հաջող թարգմանությունների հետ, իմիջիայլոց Շլեգելի գերմանական թարգմանության հետ, տեսանք, որ լավ թարգմանիչները ղեկավարվել են բոլորովին ուրիշ սկզբունքով, և իրավամբ մտածել են, որ գեղարվեստական թարգմանությունը շատ անգամ պահանջում է որոշ խոտորում բնագրի բառական հանդերձից՝ ոգին ու իմաստն ավելի հարազատորեն տալու համար:

«Հին վեճ կա թարգմանական արվեստի մասին,— կըսե Մակինցյան,— ոմանք ասում են. թարգմանել մի երկ, միևնույն է, թե բույս մի երկրից փոխադրել այլ երկիր: Ինչպես ուրիշ երկրում, հողի, ջրի և արևի այլ պայմաններում փոխադրված բույսը փոխում է և իր կերպարանքը, գույնը, մե-

ծությունը, պտուղի համը, այնպես էլ թարգմանված երկը պիտի հարմարվի այդ լեզվի ժողովրդի հասկացողություններին, արտահայտական համապատասխան եղանակներին: Գերմանացիք այդպես էլ ասում են թարգմանել — գերմանացնել, verdeutschten: Իսկ մյուսները պնդում են — թարգմանել կնշանակի այլ լեզվով ներկայացնել բնագրի պատճենը: Ընթերցողը պիտի կարդալուց ղգա, որ գործ ունի օտար միջավայրի երկի հետ: Թարգմանությունը ոչ թե պիտի մի լեզվի ըմբռնումներն ու ղգացումները ուրիշ լեզվով, այլ պատկերներով արտահայտի, թեկուզ համապատասխան, թեկուզ համանման, այլ պահպանի տեղական գունավորումը, couleur locale, այն բնորոշն ու օտարոտին, որ հատուկ է բնագրին»:

Ըստ իս, այդ երկու ներհակ բանաձևերը իրենց կտրուկ բացարձակությամբ հավասարապես անճիշտ, անկատար են. լավագույնը անոնց յուրաքանչյուրին ճարտար կիրարկումն է՝ թարգմանվելիք հեղինակին կամ գործին որոշ բնույթին համեմատ, և մերթ՝ բաղմատարր գործերու թարգմանության մեջ, ղուգախառնումը երկու մեթոդներուն: Ավելի ճիշտ, չկա ու չի կրնար ըլլալ թարգմանության լավագույն մեթոդի գիտական ճշգրտությամբ վճռական միակ բանաձև մը. թարգմանությունն ալ արվեստի մեկ ճյուղն է, արվեստի մեջ հմտությունը, կանոններու գիտակցությունը, մեթոդի մը հետևումը իր որոշ դերը կը կատարե և անհրաժեշտ է, բայց էական դերը կը կատարե տաղանդը, բնաղղական այն ներքին բնածին ուժը, որ անբացատրելի և անփոխանցելի է և առանց որուն իրական արվեստի գործի մը երկնումը անհնար է: Յուրաքանչյուր գործ իր մասնավոր կաղմն ու գույնն ունի, որուն համեմատ թարգմանիչը հատուկ սիստեմ մը պետք է հնարե՝ բնագրին կյանքը, դրոշմը, շեշտը իր լեզվին մեջ փոխադրելու համար: Այն գործերը, որոնց մեջ բառերը ինքնին՝ իրենց երաժշտությամբ, տաղաչափությունը՝ իր կշռույթով ու հանգերով մեծ դեր կը խաղան, անհնար է թարգմանել տառական հավատարմությամբ. անհնար է նույնպես բառական հարազատությունը պահել այն գործերուն, ուր բնագրին լեզվին հատուկ ասությունները, ժողովրդական դարձուածքները, ֆուլբլորական տարրերը գերակշիռ են. այդ պարագաներուն

մեջ, թարգմանիչը պիտի ջանա բառերու համարժեք երաժըշ-
տություն մը գտնել՝ բնագրին տառական բովանդակությունը
ինչ ինչ փոփոխություններու ենթարկելով, կամ (այն
լեզուներուն համար՝ ինչպես ֆրանսերենը, ուր ոտանավոր
գրվածքներու տաղաչափյալ թարգմանությունը գրեթե ան-
հնար է առանց ծայրահեղ ու խաթարիչ շեղմանց ու այլա-
փոխմանց) պիտի նախընտրեն ներդաշնակ քնարական արձա-
կով մը արտահայտել բնագրին իմաստն ու երաժշտությունը,
իսկ ժողովրդական ասությանց, ֆոլքլորական դարձվածքնե-
րուն (որ հաճախ անթարգմանելի են) պիտի ջանա համար-
ժեքները գտնել այն լեզվին մեջ, որուն կը փոխադրե բնա-
գիրը: Երբ բնագիրը արտադրությունն է անձնական ուժեղ
խառնվածքի մը, որ ինքն իսկ իր լեզուն ու ոճը ստեղծած է
(էդգար Փո մը, Բողեր մը, Օսքար Ուայլդ մը, Գոնկուր մը),
թարգմանիչը պետք է ջանա կարելի եղածին չափ բառական
հարազատություն պատել, իր սեփական լեզվին մեջ բնագիրը
գրեթե նույնությամբ վերարտադրել՝ ուշադիր ըլլալով ան-
շուշտ պահպանելու իր տոհմային լեզվին հատուկ ոգին, մաք-
րությանը:

Մեր մեջ սքանչելի թարգմանիչներ եղած են մեր Ոսկեդա-
րու գրագետները: Հրաշալիք մըն է Աստվածաշունչի թարգ-
մանությունը: Զեռագիրներու տարբերության հետևանքով կամ
ինչ ինչ հատվածներու մեջ թարգմանիչներուն կողմե իմաստի
թյուր ըմբռնումով կարելի է հոն մերթ գտնել անճշտություն-
ներ, բայց ինչքա՞ն ճիշտ է այդ վսեմ գրքերու էական հատ-
կանիշին, անոնց ներշնչեալ և ոգելից բանաստեղծության,
անոնց խորունկ ոգվոյն ըմբռնումը և այդ մեծ քերթողներուն
բարձր ոճին արժանի հայերենով մը վերարտադրումը. ի՞նչ
զորեղ, կենդանի գնացք մը տված են իրենց լեզվին, ի՞նչ
նվագավոր ու քաղցր, կամ ջղուտ ու կորովի նախադասու-
թյուններ գիտցած են հյուսել՝ որպեսզի հասնեին Իսրայելի
մարգարեներուն ձայնը իր բոլոր զորությամբ լսելի ընել հա-
յերենի մեջ: Իսկ եկեղեցվո հայրերն ոմանց, ինչպես Ոսկեբե-
րանի գործերուն թարգմանության մեջ, մերոնք մերթ հաջո-
ղած են նույնիսկ գերազանցել բնագիրը: Հայտնի է, թե անոնք

ոչ միայն հմուտ լեզվագետներ, այլ մանավանդ նրբաճաշակ արվեստագետներ, ներշնչյալ գրագետներ էին, ինչ որ արդեն ապացուցած ալ են իրենցմէ ոմանք (Եղնիկ, Կորյուն և այլն), իրենց ինքնագիր գործերով:

Հետագա դարերուն կատարված թարգմանությունները հեռու են այդ կատարելությունն ունենալէ. Գրիգոր Մագիստրոս Եղնիկին չափ ու թերևս ավելի հմուտ էր հելլեն դասական մատենագրության և բյուզանդական գրականության, բայց իր հայերենը հունամուլ, անհարազատ ու խրթին, այլանդակ է:

Մերօրյա շրջանին բավական թվով հայերեն թարգմանություններ եղած են թե՛ արևմտյան, և թե՛ արևելյան հայոց մեջ, բայց ատոնցմէ քչերը արժեքավոր են ու շատ քչերը կրնան կատարյալ նկատվիլ: Հոյակապ են հ. Արսեն Բագրատունիի թարգմանությունները Հոմերի, Սոփոկլի, Վերգիլի, Ռասինի և այլ դասական հեղինակներու. թերևս ատոնց մեջ չափազանց հայացած են այդ օտար քերթողները, իրենց ատտիկյան կամ ֆրանսական նրբութենեն ու պարզութենեն բան մը կորսնցուցած, բայց Հայկի երգչին պերճ ու կորովի հայերենին մեջ նոր շեշտ մը և զօրություն մը ստացած. կատարյալ է Միլտոնի «Դրախտ կորուսյալ»-ին թարգմանությունը: Շնորհալի ու քաղցրաճաշակ են հ. էդվարդ Հյուրմուղի թարգմանությունները: Վեհաշունչ է հ. Ղևոնդ Ալիշանի «Զայլդ Հարուղը»: Գողտրիկ է Թերզյանի անակրեոնյան տողերու հայացումը: Զմայլելի է Պեշիկթաշլյանի թարգմանությունը Հյուկոյի «Ուրվականք»-ին, և մարդ կափսոսա, որ անոր հայացուցած «Ռուան» հրդեհի մեջ կորած ըլլա:

Առաջին գեղեցիկ թարգմանությունը արևմտյան աշխարհաբարով կամարթինի «Ռաֆայել»-ն է՝ Գրիգոր Օտյանի ձեռքով հայացած, և անոր կհետևի Լյուդովիգ Հալևիի «Աբբա Քոնսթանթեն»-ին թարգմանությունը՝ օր. Եվփիմե Օտյանի կողմէ կատարված և որուն մեջ Գրիգոր Օտյանի մատը կը դգացվի: Սիրուն են Մամուրյանի թարգմանությունները: Հ. Արսեն Ղազիկյան ճոխացուց մեր նոր գրականությունը դասական հրաշակերտներու աշխարհաբար մեծարժեք թարգմանություններով, որ ճարտար են ու վայելուչ, թեպետ մերթ տաղաչափությունն իր հաճախակի շրջումներով և տողանցումներով ու լեզուն գրաբար անսովոր բառերուն ծայրահեղ

կիրարկմամբ բռնագրոսիկ կը դառնան. անոնց մեջ ամենեն սահունն ու բնականը Տասսոյի «Երուսաղեմ Ազատյալ»-ին թարգմանութիւնն է: Գեղեցիկ են և Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի թարգմանութիւնները ֆրանսիական բանաստեղծներու:

Համեղ ու սիրուն է Կոիլովի առակներուն հայացումը՝ հ. Գաբրիել Այվազովսկիէ և «Աղբար Թովմասի տնակ»-ին վենետիկյան պարզուկ թարգմանութիւնը:

Արևելյան հայոց մեջ Բարխուդարյան սկսած է թարգմանական հարգելի ճիգ մը, զոր մեծապես զարգացուցած են Աղայան, Հովհ. Թումանյան, Հովհաննիսյան:

Այս շարքը, զոր դեռ կարելի է երկարել քանի մը ոչ բազմաթիվ անուններով, վերջին ատեններս ահա ճոխացավ Բայրոնի «Մանֆրեդ»-ին և Շեքսպիրի հրաշակերտներուն ոմանց թարգմանութիւններով, զոր հրատարակեց Հովհաննես խան Մասեհյան, և վաղամեռիկ Վահան Տերյանի ձեռքով Օսկար Ուալդի «Սալոմե»-ին ու պ. Մակինցյանի ձեռքով Հաուպտմանի «Ջրասույզ զանգին» թարգմանութիւններով, որ նոր լույս տեսան:

Այս կարևոր նորութեանց վրա մեր մամուլը շատ քիչ բան ըսավ, և ատիկա պակաս մըն է, զոր կուզեմ լրացնել, անփութութիւն մը, զոր կուզեմ դարմանել ներկա հոգովածով:

Ճիգը, որուն նվիրված է Մասեհյան՝ դժվարագույններեն ու մեծագույններեն մին է: Տարիներ առաջ ան արդեն իր մտավոր կյանքին նպատակ ընտրած էր Շեքսպիրի գլխավոր գործերը հայացնել, 1894-ին հրատարակած էր Համլետի թարգմանութիւն մը, որուն նվիրած եմ «Ծաղիկ» ամսագրին մեջ գնահատական հոդված մը: Թերութիւններէ զերծ չէր այդ առաջին փորձը, բայց արդեն բարձր էր մինչև այդ րոպեն արևելյան հայերենով կատարված բոլոր թարգմանութիւններէն. հոն կգտնենք մաքուր ու վայելուչ հայերեն մը, խնամյալ տաղաչափութիւն մը, թեպետ շափը գեշ ընտրված, բնագրին ուշադիր ուսումնասիրութիւն, բայց կային տկարութիւններ, ոտանավոր մասերուն մեջ թռիչքի քնարերգութեան

պակաս, արձակունակ բառերու, տափակ տողերու հաճախություն, բնագրին ղորությունեն շատ վար մնացող կամ մերթ անոր իմաստն ու տարողությունը եղծանող միջակ կամ թլուր փոխադրություններ: Իր նոր հրատարակության մեջ Մասեհյան մեծապես բարեփոխած է իր աշխատանքը, դայն գրեթե ամբողջապես բարենորոգած, վերածուլած է. լեզուն աղնիվ հայերեն, միշտ պարզ ու բնական, ավելի ճկուն ու ճոխ է հոս, ավելի ալլազան ու կորովի, տաղաչափությունը՝ ավելի նվագավոր ու սահուն է, և շափը (5—5 կամ 5—5—5)-ը, լավ ընտրված է, ավելի լայն է ու ճապուկ՝ իր կշռույթով, ավելի բեմական է: Կարելի չէ ըսել, թե այս անգամ Մասեհյան հասած է բնագրին բարձրության, Շեքսպիր հսկաներեն մին է մարդկային գրականության, անոր ոճի ամբողջ հրաշազան գեղեցկությունը օտար լեզվի մեջ համարժեք ղորությամբ փոխադրելու համար անհրաժեշտ է բանաստեղծ ու մեծ բանաստեղծ ըլլալ. բայց հոգ կա արդեն, ինչպես և «Օթելլո»-ի և «Վենետիկի վաճառական»-ին թարգմանությանց մեջ, որ նույնպես լույս տեսան վերջերս, խղճամիտ ու ճաշակավոր վերարտադրում մը, որ անգլիերենի անգիտակ հայ ընթերցողները կը գտնեն հանճարեղ քերթողին հարազատ մտածումը և կը զգան անոր հզոր շունչը: Այլ ավելի հաջող է սակայն Բայրոնի «Մանֆրեդ»-ին թարգմանությունը, ղոր Մասեհյան հրատարակեց Բեռլինի «Արեգ» ամսագրին մեջ, ուր կը գտնենք տողերու թեթև թեթևութիւնը և ներդաշնակ քնարականություն մը, որ բնագրին ավելի մոտ կը կացուցանե հայացումը:

...Ավելի բարերար, ավելի ղորացուցիչ, նորոգիչ մտավոր սնունդ անհնար է տալ մեր մատաղ սերունդին, քան անոր մատչելի դարձնելով մարդկային սրտի մեծագույն պատկերահանին այդ հայացած հրաշակերտները:

«Սալոմե»-ի թարգմանությունը Տերյանեն ու «Ջրասույզ գանգ»-ին թարգմանությունը Մակինցյանեն իմ վրաս կը թողուն— չհաշվելով քանի մը մանր մունր բիծեր,— իրենց տեսակին մեջ «կատարյալ» արտադրությանց տպավորությունը:

Վահան Տերյան հայոց նոր բանաստեղծության ամենեն նուրբ ու ինքնատիպ վարպետներեն մին է. շնորհիվ իր ազնւ-վական խառնվածքին և իր գրական բազմակողմանի հմտու-թյան, մասնավորապէս ֆրանսական մշակույթի խոր ծանո-թության, ինքը հասցուց արևելյան հայոց մեջ զեղջւն բա-ռաչափությունը նրբերանգ հղկումի մը, անթերի փափկու-թյան մը, որ այդ աստիճանով դեռ չէր տեսնված անոնց մեջ, ուրիշ բանաստեղծներ Կովկասի մեջ հայտնվեցան ավելի հզոր, ավելի այլազան, կամ ավելի «հայ», ոչ մին իրեն չափ նուրբ քնարերգություն մը արտադրեց ու իրեն չափ երևան բերավ ձևի կատարելություն. այդ տեսակետով, իբր խոսքի արվես-տագետ ան արևելյան հայոց Պեշիկթաշլյանն է: Բնական է, որ Օսկար Ուայլդի պէս ծայրագույն քաղաքակրթության բարդ ու խտացյալ բանաստեղծի մը ամենեն վրդովիչ գործը, «Սա-լոմե»-ն, Տերյանի մեջ պիտի գտներ հոյակապ հայացնող մը, և արդարև այդ թարգմանությունը զմայլելի է. կարելի է ըսել, որ ան հավասարած է ֆրանսերեն բնագրին՝ լեզվի նրբու-թյամբ, գունագեղությամբ, բառերի հյուսքին երաժտականու-թյամբ ու մերթ շնորհիվ այդ տեսակ գրականության համար հայերենի բնիկ հատկությանց՝ գերազանց է դայն: Տերյան գիտցած է օգտվիլ արդի հայերենի ընտանի պարզ ու ճկուն շնորհներեն, առույգ, կտրուկ դարձվածքներեն, աստվածա-շընչական ոճով բուռն ու եղերական կամ խորհրդավոր ու մե-ծավայելուչ հատվածներուն մեջ՝ գրաբարի պերճ բառամթեր-քեն, ու կերտած է այն հարուստ, կենդանի ու ներդաշնակ բարբառը, որ պետք է այդ նշանավոր գործը հայացնելու համար:

Ինչ որ տարօրինակ է, նույնքան մեծ հաջողության մը հայտնումն է Հաուպտմանի «Ջրասուլզ զանգ»-ին թարգմա-նության մեջ, հակառակ որ պ. Մակինցյան բանաստեղծ մը չէ և տաղաչափյալ ունէ գործ չէր արտադրած մինչև ցայդ:

Պ. Մակինցյան իր Առաջաբանին մեջ թարգմանության եր-կու գլխավոր մեթոդներու սահմանումն ընելէ հետո, կը հայ-տարարե, թե ինք կողմնակից ըլլալով հանդերձ առաջին մե-թոդին, այսինքն՝ ուրիշ լեզվով «վերաստեղծման», համար-

ժեքներով վերարտադրութեան, ղեկավարվել է տառական հա-
 րադատութեան սկզբունքով՝ հետևյալ պատճառներով: «Մի
 բանաստեղծական երկ ուրիշ լեզվով վերստեղծելու համար
 անհրաժեշտ է ոչ միայն պոետ լինել, այլև հեղինակի շափ
 տաղանդավոր պոետ: Բնավ պոետ լինելու հավակնութիւն
 չունենալով, մենք աշխատել ենք «Ջրասուզ դանգ»-ը թարգ-
 մանել հայերեն, ձգտելով մեր կարյաց շափ ներկայացնել
 հայ ընթերցողին այդ հեքիաթ-դրամայի ճշգրիտ լուսանկա-
 րը»: Այս համեստ տողերն անարդար են. այդ թարգմանու-
 թիւնը լուսանկար չէ, այլ արվեստագետի ձեռքով կատար-
 ված կենդանի վերարտադրութիւն մը: Ընթերցողը հոն կու-
 նենա զգայութիւնը Հաուպտմանի մը, որ կարծես իր գործը
 հայերեն գրած ըլլա, այնքան բնական, սահուն, հարազատ է
 հոն հայերեն լեզուն, այնքան ներդաշնակ և այլազան տաղա-
 շափութիւնը, լիովին պահպանված ըլլալով հանդերձ այդ
 պաշտելի հրաշակերտին գերման ոգին, ազգային գույնը,
 ֆոլքլորական համն ու հոտը և հեղինակին ինքնուրույն ոճը:
 Պ. Մակինցյան ծանոթ էր արդեն իբր հմուտ ու նրբամիտ
 գրական քննադատ: այս թարգմանութեամբ ան կապացուցանե
 անգամ մը ևս, ու շատ փայլուն կերպով, իր քննադատ գրա-
 գետի իրական տաղանդը, իր այդ աշխատութիւնը մեր թարգ-
 մանական գրականութեան ամենեն թանկագին և անկորուստ
 դարգերեն մին պիտի մնա: Մասնավորապես դժվար էր թարգ-
 մանութիւնը այդ գործին, ուր իրականութիւնն ու երազը,
 հասարակ կյանքի երևույթներու սուր. դիտողութիւնը, մարդ-
 կային ճակատագրի եղերական առեղծվածին խորհրդանշական
 տեսողութիւնն ու բնութեան մոայլ խորհուրդին հետախու-
 զումը, ուր վեպն ու հեքիաթը, քնարերգութիւնն ու երգի-
 ծանրը իրարու կը խառնվին ու կը կազմեն Ալբեր Դյուրերյան
 բազմատարր, մոայլ, խորունկ ամբողջութիւն մը՝ դյուրեական
 ու խոտվիշ, ինչպես ոգիներով բնակված հինավուրց անտառի
 մը արևու ճառագայթով մը թափանցված խորքին տեսիլը
 հրաշախառն: Պ. Մակինցյան գիտցած է հեղինակին ոճին
 այլազանութիւնները ճշգրիտ ու բնական վերարտադրումով
 հայացնել, «Հեթանոս աշխարհի, մայր-հողի պատկերացում»
 պառավ Վիտտեխընին ռամկական գերմաներենին տեղ (Շլեզ-
 վիգի բարբառ) դնելով Փամբակի գավառաբարբառը, որ մո-

տիկ է Թումանյանի ժողովրդականացած կոռիի բարբառին, միստիկական վերացմանց հատվածներու մեջ դասական հայերենի վեհուխոսունը փոխ առնելով, քնարերգական կտորներուն մեջ գրեթե հավասարելով Տերյանին կամ Իսահակյանին տողերու թեթև կամ օրորուն նվագավորութունը, երգիծական ու վիպական էջերուն մեջ Թումանյանի կուռ, առույգ, հստակ լեզուն յուրացնելով:

Ահա հատվածներ հանգավոր թարգմանության.

Հա՛յնրիխ, սեր իմ կաթոգին,
Ի՞նչ ես նստել իմ ջրհորի եզերքին,
Վեր կաց գընա, թե չէ դու իմ հեգ հոգում
Մի հին վերք ես նորոգում...

...Ահավոր աղետներու վաղորդայնին, մեր բզկտված ազգին ծոցեն՝ այսպիսի գեղարվեստական մեծարժեք արտագրությանց երևումը հպարտացուցիչ ու սրտապնդիչ երևույթ մը ևս է, որ կուգա ավելցնել վերջերս հայտնված նմանօրինակ ուրիշ երևույթներու և ցույց կուտա, որ հակառակ այն բոլոր դժբախտությանց, զոր քանդիչ տարրերու կույր, բիրտ ուժը, նենգ դիվանագիտության դավերը և ներհակ ճակատագրի մը անգութ հալածանքը տեղացուցին մեր ժողովուրդին վրա, ան կը շարունակե Արևելքի մեջ բարձրագույն քաղաքակրթությունը ներկայացնող արվեստագետ տոհմիկ ցեղի իր գեղեցիկ ու բեղմնավոր դերը⁸:

Գրական հունձքը առատ չէ այս վերջին ամիսներս: Պոլսեն գրեթե ոչինչ՝ նոր հրատարակված: Մեկ քանի գրքուկները, որոնք երևցան, ռուսահայերեն կուգային մեզի:

Ատոնց մեջ առաջին տեղը կը բռնե, արժանիքով և կարևորությամբ, Համլեթի թարգմանությունը մը, պարսկահայե մը, պ. Մասեհյանե...

Այսչափ ճաշակով և հմտությամբ կատարված թարգմանություն մը առաջին անգամ է, որ կը տեսնեմ արևելյան բարբառով: Թարգմանիչը այն հազվագյուտ հատկությունն ունի նախ, որ հայերեն գիտե, զայն շատ ճարպկությամբ կը

գործածե, առանց երբեք զայն բարեկենդանելու օտար բա-
ռերու խեղկատակ ծպտումներով: Ինչ որ ամենեն ավելի գո-
վելի է, այն արվեստագետի հոգին է, որով թարգմանիչը ջա-
նացած է կարելի եղածին շափ բնագրին բոլոր երանգները
տալ իր տողերուն ու բառերուն մեջ: Շատ գեղեցիկ գաղափար
մը ունեցած է, բնագրին զմայլելի այլազանությունը պահելու
համար, անգլիերեն անհանգ և շեշտավոր ոտանավորին տեղ
ազատ և անկանոն ձև մը ընդունելով տաղաչափության (ընդ-
հանրապես 6—5 վանկով, երբեմն 5—5, երբեմն 5—6, և
ուրիշ ձևեր ալ), այդ ձևը քնարերգության բնավ հարմար չէ,
որովհետև կաղ և աններդաշնակ է, բայց խոսակցության ու
բանաստեղծության միջև փոխանցական ձև մըն է, որ շատ
ավելի բեմական կըրնա ըլլալ, քան կանոնավոր ու միօրինակ
տաղաչափությունը: Բայց այդ ձևը շատ դժվար է, շատ կիրթ
ականջի մը պետք ունի, որ բառերուն ճարտար շարքովը տո-
ղերուն կաղությունը շղգացնե: Մասեհյան հաջողած է ընդ-
հանրապես. օրինակ սապես տողեր.

«Քառասուն հազար եղբոր միացած սերը — չեն կարող
գոյացնել գումարն իմ սիրուս»:

Կամ սա սկզբնավորությունը առաջին արարին հոյակապ
մենախոսության.

«Ա՛խ, երանի այս պինդ, խիստ պինդ մարմինը — հալ-
վեր, լուծվեր կազմից, փոխարկվեր ցողի»:

Կամ Համլետին աղաղակը.

«Սերովբե՛ք և միջնո՛րդք երկնային շնորհի»:

Վերջերս Բաղմավեպին մեջ Մխիթարյան վարդապետ մը
աշխարհաբարով թարգմանած էր Համլետին և Ուրվականին
տեսարանը. թարգմանությունը անհաջող էր, մանավանդ հա-
յերենի տեսակետով, որ, հակառակ դուտ աշխարհաբար ըլլա-
լու ականքը ճիգի մը, գրաբարի հետքեր կը պահեր դեռ: Մա-
սեհյանի թարգմանությունը ավելի կը շահի՝ անոր բաղադա-
վելով: Կը հիշեմ, որ այդ տեսարանին մեջ, սարսափի տողը
(O horrible, o horrible, most horrible) Մխիթարյան թարգ-
մանության մեջ սա ծիծաղաշարժ ձևն առած էր.

«Ո՛վ ահագին, ո՛վ ահագին, սարսափելի՛ ահագին»:

Մասեհյան կը թարգմանե.

«Սոսկալի, սոսկալի, օ՛հ, խի՛ստ սոսկալի»:

Բայց հանգավոր ու համաշափ ոտանավորներուն մեջ, ուր ներդաշնակութունը առաջին պայմանն է, նվազ հաջող կը գտնեմ Մասեհյանի թարգմանությունը. իր տողերը կորով ունին, բայց սահունություն չունին, և գիտենք, որ Շեքսպիրի տուները հրկուքն ալ ունին. կը կարծեմ, թե Մասեհյանի տողերի կարծրությունը և դանդաղությունը հառաջ կուգա իր ը-երու առատ և անճաշակ գործածությունեն...

Բայց Օֆելիայի երգերուն մեջ սա տունը ազվոր է իր ընթացքով.

«Մորուք ուներ ձյան պես սպիտակ,— ել գանգուրներ խարտյաշ սիրուն.— Գընաց, գընաց.— Զուր է մեր լաց:— Ողորմիր, տեր, նորա հոգուն»:

Թարգմանության ճշտությանը գալով, կարելի է ըսել, թե թարգմանիչը ամեն ջանք ըրած է բնագրին հավատարիմ մնալու. անոր բացատրության բոլոր հանդգնություններն ու ջիղը պահելու ձգտումը ակներև է իր մեջ: Քանի մը պզտիկ դիտողություններ միայն. ինչո՞ւ «ճարտար գեղարվեստ» թարգմանել piece of work-ը, փոխանակ ըսելու՝ «Ի՞նչ գեղակերտ առարկա մըն է մարդը»: Օֆելիայի մահվան նկարագրության մեջ, weeping բառը թարգմանված է արտասովալից, «արտասովալից գետ», անիմաստ է. լավագույն չէ՞ր, «լացող» կամ գոնե «արտասովահոս» բառը: Ու ինչո՞ւ այդ հատվածին մեջ թարգմանիչը վերցուցեր է երեք տող՝ անոնցմե մեկուն մեջ պարունակված շատ իրապաշտ նմանության համար: Շեքսպիրը պետք է ընդունել ինչպես որ է, վսեմ ու գոհհիկ, կյանքին պես. և «պես պես ծաղիկներից, սիրուն տունեկերից» տողը, փոխանակ ծաղիկներու անուններ պարունակող տողերուն, անդույն, անորոշ տող մըն է, բնավ Շեքսպիրյան: Պակաս մըն է նաև, որ թարգմանիչը հայերենով չէ ջանացած զգացնել վերջին արարին մեջ Օզրիկի և Համլետի խոսակցության մեջ տիրող euphuism-ի իմաստակությունը, որ Շեքսպիրի ատեն ի պատվի էր և որ սպանիական cultisme-ին կամ իտալական marinisme-ին համապատասխան գրական հիվանդություն մըն էր: Կան քանի մը բառեր ալ, որոնք մեզի ճիշտ բառերը չեն թվիր բնագրին իմաստը բացատրելու համար...

Այս բիծերը սակավաթիվ են: Գործը հաջողված է իր ամբողջության մեջ: Գլխավոր թերությունը թարգմանիչինը չէ,

լեզվինն է. այդ լեզուն կորով ունի, բայց փափկությունե, նրբությունե զուրկ է, երաժշտական չէ, կարծր, անկյունավոր, և՛ իր ում-երով, ից-երով՝ միօրինակ: Նորեն, պ. Մասեհյան ամեն ճիգ թափած է դայն կարելի եղածին շափ ավելի ձկուն և նվազ աններդաշնակ ընելու՞:

...Վերհարն այն քերթողներեն է, որմե բազմաթիվ էջեր պետք էր թարգմանված ըլլային հայերեն, քանի որ ազնիվ ուժի, առողջ ու հավատավոր ներշնչման, բարձրացող մտածման ու սիրտը կազդուրող ու լուսավորող երևակայության քերթող մըն էր ան: Ու թերևս, իր գերեզմանին վրա, հարգանքի լավագույն արտահայտությունը, սուգի ու կորովի հարազատագույն ընծան՝ իմ կողմես այս դժգույն ու կցկտուր տողերեն ավելի՛ իր հզոր ու վեհ քերթության մեկ քանի շեշտերը հայեցի բարբառով հայ ժողովրդին լսելի ընելով, հայության հոգիին մեջ հանգուցյալին մեծութենեն շող մը արձակելն է¹⁰...

...Հյուկոյի արձակեն շատ բան թարգմանված է հայերեն (թատրերգություններն ամենամեծ մասամբ, վեպերեն՝ «Թըշվառները», «Նոթր-Դամ դը Փարին» և «Իննսուներեքը») և ատիկա պատվաբեր է մեր ցեղին, որովհետև այդ թարգմանությունները, թեպետ թերություններե ոչ զերծ, առաջին փորձերն են որ կատարված են ամբողջ Արևելքի մեջ: Բայց քերթվածներեն դեռ շատ քիչ բան ունինք հայերեն թարգմանված: «Ուրվականների» թարգմանությունը Մ. Պեշիկթաշլյանի ձեռքով հրաշալիք մըն է (կան և կտորներ, թարգմանված Թերզյանի, Ալփասուլանի, Եղիշե պատրիարք Դուրյանի, տիկին Սիպիլի, Թորգոմ պատրիարք Գուշակյանի ձեռքով). այդ պակասը պետք է լրացնել... Այդպիսի գիրքերու ընթերցումը թանկագին նպաստ մը կրնա բերել մեր նորերուն մտքին ու սրտին զարգացման, բարոյական ու գեղեցկագիտական կարողությանց ճոխացման¹¹:

...Հյուսիսն թարգմանելու համար մարդ ոչ միայն ֆրանսերեն և հայերեն գիտնալու է, այլև բանաստեղծ ըլլալու է¹²...

...Պուշկինի «Ճամփորդություն ի Կարին» թարգմանված չէ, կարծեմ, հայերենի. շահեկան ըլլալու է հայոց համար. չէի՞ք ուզենար, արդյոք, «Անահիտի» ընթերցողներուն ճանչըցնել այդ գործը, կամ գոնե անոր գլխավոր հատվածները:

Կհաճի՞ք ինծի ղրկել Ձեր՝ Տուրգենևի «Արձակ բանաստեղծութեանց» հայերեն թարգմանությունը¹³:

...Ձեզի կղրկեմ Գրիգոր Նարեկացիի մասին իմ մեկ ուսումնասիրությունս: Շատ երջանիկ պիտի ըլլամ, եթե հաճիք այն թարգմանել ուսերեն և հրատարակել Ձեր երկրին խոշոր պարբերականներեն մեկուն մեջ... Շատ պիտի ցանկայի, որ իմ ուսումնասիրությունս թարգմանված ըլլար Ձեր իսկ կողմե, որ Ձեր լեզվով այնքան հավատարմութեամբ, այնքան ջերմութեամբ արտահայտած է հայ բանաստեղծներու հոգին և ոգին¹⁴...

...Միսթրալ* մեր դարուն ամենեն հատկանշական և ամենեն գեղեցիկ դեմքերեն մին է... Իր «Միրեյո» գեղջկական դյուցազներգությունը բացարձակ հրաշակերտ մըն է... Շատոնց ի վեր կհիփագեի հայերեն խնամյալ թարգմանությամբ մը զայն ծանոթացնել մեր հասարակության, որուն համար մասնավորապես հրապուրիչ և օգտակար գործ մըն է. նույնպես մրցանակի շնորհումը այժմեություն կուտա այդ գործին, և վայրկյանը առավել քան երբեք պատեհ կնկատեմ մտադրությունս իրագործելու¹⁵...

...«Միրեյո» մտադիր եմ թարգմանել ոտանավոր, ազատ ոտանավոր: Կուզեմ պահպանել բնագրին թարմությունը: Շատ դժվար է¹⁶...

* Յր. Միսթրալ, ֆրանսիացի բանաստեղծ (1830—1914), 1904-ին արժանացել է Նոբելյան մրցանակի: Չոպանյանը թարգմանություն է կատարել նրա «Միրեյո» դյուցազներգությունից, ուսումնասիրություն է գրել նրա մասին (տե՛ս «Լուսա», 1905, № 6, 7):

...Յար, Այ և այլն շնչեցի, ատոնք եղանակին համար են, կավրեն poemé-ին rythme-ը* և քնքշությունը¹⁷...

...ստացած եմ... Ֆիրդուսիի Երգիծականին թարգմանությունը... Թարգմանությունը, կհավատամ, հարազատ է և, հայտնապես, խնամյալ է, բայց լեզուն շափազանց գրաբարխառն է. այդ երկակենցաղ հայերենը այսօր գոյություն չունի այլևս, անցյալի հիշատակ է¹⁸...

...Աշխարհաբարն իր ուրույն նկարագիրը, ոգին, քերականությունը, գնացքն ունի, կրնա և պարտի օգտվիլ գրաբարի ճոխ գանձարանեն, բայց շափով, առանց իր նկարագիրն եղծելու¹⁹...

...Կընդունիմ նաև ուրիշ պակասություն մը զոր ունեցած ենք և զոր ինքզինքիս ալ կմեղադրեմ — այն է, որ մեր պատմագրության, բանաստեղծության, վեպին ու վիպակին օտար լեզուներով թարգմանությանց կողքին ոչինչ ըրած ենք թարգմանություններով ճոխացնելու համար այդ մեծ ազգերուն հայ երգիծաբանության վարպետներուն (Պարոնյան, Օտյան և հաջորդները)... լավագույն էջերը, որոնք ամենեն դժվարահաճ եվրոպացի և ամերիկացի ընթերցողներու մոտ ապահովապես հաջողություն պիտի գտնեին²⁰...

...Ես ուրիշ բան չեմ ըրած, բայց եթե քանի մը ծաղիկ ավելցնել մեր գրականության բազմադարյան մշտաթուրմ բուրաստանին, ու նաև բոլոր կրցածս ընել մարդկային ընտրանիին ճանչցնելու և սիրցնելու համար մեր մշակույթին ամենեն արժեքավոր գանձերեն գեթ մեկ քանին²¹...

* Poémé—բանաստեղծություն, rythme—չափ (Ֆր.):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ «Հայ ազգը և իր մշակութային արժեքը» գրքից (Փարիզ, 1946, էջ 24):
- ² Նամակ Դ. Վարուժանին, 1905, դեկտեմբեր (Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 225):
- ³ Նամակ Մ. Իզմիրլյանին, 1909, հունիս (Ա. Չոպանյանի անտիպ նամակներից, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1965, № 2, էջ 56):
- ⁴ Նամակ Սուբիաս արքեպիսկոպոս Պարզյանցին, 1912, հունվար (նույն տեղում, էջ 57):
- ⁵ «Թուսիա և հայերը» հոդվածից («Անահիտ», 1906, № 3—4—5, էջ 83):
- ⁶ Նամակ Ն. Բյուզանդացուն, 1906, դեկտեմբեր («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1965, № 2, էջ 54):
- ⁷ «Թարգմանության արվեստը» հոդվածից («Անահիտ», 1903, № 12, էջ 215):
- ⁸ «Թարգմանական գրականությունը մեր մեջ» հոդվածից («Արևիկ», 1923, № 271, 272, 274):
- ⁹ «Մեր գրքերը» հոդվածից («Ծաղիկ», 1895, № 1, էջ 17):
- ¹⁰ «Էմիլ Վերհարն» հոդվածից, 1916 (Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1966, էջ 506):
- ¹¹ Վ. Հյուգոյի մահվան 50-ամյակին նվիրված հոդվածից, 1935 (նույն տեղում, էջ 523):
- ¹² Ն. Բյուզանդացուն գրած նամակից, 1905, դեկտեմբեր («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1965, № 2, էջ 53):
- ¹³ Նամակ Ալ Մատուրյանին, 1899, հուլիս (Ա. Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 59):
- ¹⁴ Նամակ Յու. Վեսելովսկուն, 1900, հոկտեմբեր (նույն տեղում, էջ 70):
- ¹⁵ Նամակ Գ. Աղանյանին, 1904, դեկտեմբեր (նույն տեղում, էջ 75):
- ¹⁶ Նամակ Գ. Աղանյանին, 1905, հունվար (նույն տեղում, էջ 76):
- ¹⁷ Նամակ Թ. Աղատյանին, 1931, հոկտեմբեր (նույն տեղում, էջ 203):
- ¹⁸ Նամակ Մ. Թիրյաքյանին, 1933, դեկտեմբեր (նույն տեղում, էջ 225—226):
- ¹⁹ Նամակ Մ. Թիրյաքյանին, 1934, մարտ (նույն տեղում, էջ 231):
- ²⁰ Նամակ Ա. Հանչերին, 1949 (նույն տեղում, էջ 333):
- ²¹ Ամերիկահայությանը, 1950, դեկտեմբեր (նույն տեղում, էջ 355):

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ*
(1875—1957)

Անցած տարվա ընթացքին ունեցանք երկու թարգմանություն պարսիկ աշխարհահռչակ բանաստեղծ Օմար Խայամի քառյակներից: Առաջինը արևմտահայ լեզվով՝ պ. Լ. Մեսրոպի կողմից, երկրորդը արևելահայ լեզվով՝ պ. Հ. Միրզայանի կողմից, երկուսն էլ անմիջական պարսիկ բնագրից:

Պ. Հ. Միրզայանը Խայամի գրքին միացրել է և նշանավոր քնարերգու Բաբու թահիրի քառյակները և հատվածներ պարսիկ զանազան բանաստեղծներից, որոնք բռնում են գրքի մեկ երրորդ մասը, վերջին 110—115 էջերը. այսպիսով կրկնակի շահեկան գործ է դառնում նրա համար:

Այս թարգմանությունները, առանց իրար հետ համեմատելու կարդալով, առաջին ակնարկով, հետևյալ տպավորությունն ենք ստանում. պ. Լ. Մեսրոպի լեզուն ավելի մաքուր է, կիրթ, բառամթերքը ճոխ, իսկ պ. Միրզայանինը ավելի քնարական, բայց աղքատ, խճողված հնաբանություններով, օրինակ՝ առ իս, սիրյալ, սիրեցյալ, և գոհհաբանություններով, օրինակ, բող, խրտնած և այլն, սակայն և մի արժեքավոր առաքինությամբ՝ սեղմ է ու սահուն:

* Ավ. Իսահակյանը թարգմանություններ է կատարել Հաֆիզի, Ակիհիրո էնսինարիի, Բհար Թարհարի, Լերմոնտովի, Նեկրասովի, Նիկիտինի, Նադսոնի, Բուսսի, Հեովեգի, Մայերի, Գորկու, Մերեթելու, Գրիշաշվիլու, Ռիսկու, Զիտելվադի, Կոպպեի, Սկարոնի և ուրիշների ստեղծագործություններից: Թարգմանել է նաև Կնուտ Համսունի «Պան, Լեյտենանտ Թոմաս Գլանի թղթերից» վեպը, շինական մի հին զրույց և այլ գործեր:

Օմար Խայամի անունով, ինը դար հետո, հասել է մեզ երգերի մի տետրակ, որ պարունակում է մոտ 1000 քառյակ, սակայն իր մոտիկ ժամանակակիցները նրա գրչին վերագրում են 50—80 քառյակ, ավելի հետագայի գրագետները՝ շուրջ 300 քառյակ. մնացածները նրա աշակերտների գրածներն են, ավելի կամ նվազ հաջող նմանություններ՝ դարերի մեջ խառնելած հանճարեղ վարպետի գործերին, և սրանով կարելի է բացատրել Խայամին վերագրած քառյակների մեջ անթիվ կրկնություններ... հետևապես բոլոր թարգմանիչները ընտրությունը կատարել են իրենց ճաշակի համաձայն, ինչպես և մեր թարգմանիչները...

Այդ 1000 քառյակից միայն 110 հատ է ընտրել անգլիացի համբավավոր թարգմանիչ Ֆիցճերալդը, նույնչափ գերմանացիները... 158՝ հայերեն անդրանիկ թարգմանիչը՝ Գ. Փառնակ, 242՝ Լ. Մեսրոպ, 193՝ պ. Միրզայան:

Հարցը հիմա այն է, թե Խայամի անունով քառյակների մեր թարգմանիչներն ինչքան չափով հարազատ ու հավատարիմ կարողացել են հայերեն ձևի տակ արտահայտել նրանց մեջ ձուլված զգացումների ու խոհերի ոճն ու գույնը, ուժն ու ինքնությունը:

Մենք պարսկերեն չգիտենք, հետևապես անկարող ենք այդ մասին մեր առարկայական կարծիքն ունենալ, սակայն նկատի ունենալով, հայ թարգմանիչների պարսկագիտությունը, և մանավանդ պ. Հ. Միրզայանին, որ հմուտ պարսկագետ է, հին և կարող թարգմանիչ, պետք է a priori ընդունել գոնե նրա ձեռնահասությունը:

Փորձում ենք մի բաղդատություն անել, ավելին անկարելի՝ թերթին սուղ էջերի համար:

Չեռքիս տակ ունեմ r. Fitzgerald, Les Rubaiyat d'Omar Khayyam-ի ֆրանսերեն թարգմանությունը՝ Ch. Grolle an և գերմաներեն՝ P. Tausig, die Rubayat des Omar Chayyam.

Jei, avec un morcean de pain sous les branches,
Un flacon de vin, un livre de vers... et Toi
Devant moi chantant dans le desert...
Et le desert sera mon Paradis.

Ein wenig Brot hier untern Strauch für mich,
Ein Fläsche Wein, ein Liederbuch und dich.
Die in der Wildnis singt an meiner Seite,
Zum Paradiese wandelt wildnis sich.

Գ. Փառնակիներ

Կ'ուզեմ տիկ մը սուտակ գինի և տիվան մը,
Օրապահիկ մը և կես փնակ մը հացի,
Եվ թե ես ու դուն ավերակի մը վրա նստած ըլլայինք,
Ավելի քաղցր կ'ըլլար, քան պետութունը սուլթանի:

Լ. Մեսրոպիներ

Ուզածս ամեն՝ գինվո տիկ մը, երգի գիրք մը,
Պատառ մը հաց, և պետքերս ապրելու շափ,
Եվ անապատն, ուր մենք նստենք պիտի քեզ հետ
Կ' ըլլա շքեղ պուրակներեն սուլթանական:

Ձ. Միրզայանիներ

Թե ձեռք բերել ցորենի
Կարող լինիս երկու հաց,
Գինուց մեկ կամ երկու լիտր,
Եվ ոչխարի խորոված,
Մի կնոջ հետ գեղանի՝
Նստած մի տեղ ավերակ,
Հաճույք է սա, որ շունի
Նա, որ նույնիսկ ունի թագ:

Ընթերցողը կտեսնի, որ էապես նույնն են սրանք, բայց տարբեր նրբերանգներով, որոնց մեջ է. սակայն, գեղեցիկի հրաշքը, և ինչքան հեռու է Միրզայանիներ վերևի բոլոր շորսից, մանավանդ «խորովածով». բոլորովի՛ն անպատշաճ... կան և այնպիսի քառյակներ, մեկի կամ մյուսի մոտ, որ բնավ իրար նման չեն, հեռու իրարուց, կարծես ներշնչումներ են, մի տեսակ խայամական մոտիվներ (արդեն Ֆիցճերալդի թարգմանություններն այդ բնույթն ունին, որ հաճախ իսկ գերադանցում են բնագրից):

Սակայն և այնպես, հայ թարգմանիչները հաջող հայացումներ ունեն, մանավանդ պ. Միրզայանը:

Գալով հառաջաբան-ներածումներին երկուսն էլ ունեն
առավելություններ, պ. Մեսրոպինը մատենախոսական-պատ-
մական գրություն է, իսկ պ. Միրզայանինը՝ մի հետաքրքրա-
կան վերլուծումն է Օմար խայամի հոգեբանության:

Պ. Միրզայանի՝ խայամի դիվանին կցած Բաբու Թահիրի
և զանազան բանաստեղծների մոտ 160 ստեղծագոր-
ծումների մեջ կան հրաշալի, փոքրիկ բանաստեղծություններ,
ուր փայլում է պարսկական նուրբ ու սրամիտ ճաշակը:
Օրինակ.

Դու որ ինձ հետ, սիրուհիս,
ընկեր լինել շես ուլում,
Ամեն գիշեր էլ ինչո՞ւ
գալիս ես ինձ երազում:
Մեռնում եմ ես այս ցավից,
որ իմ մոտից գնացիր,
Կողքիս նստել շուղեցար,
շիրմիս վրա գեթ նստիր:

Հանձնարարում ենք հայ ընթերցողների ուշադրությանն
այս երկու գրքերը՝ ճաշակելու համար անհուն գեղեցկությունը
մեզ հարազատ Արևելքի բանաստեղծության՝:

...Շեքսպիրը ամենատարածված հեղինակն է աշխարհում,
և ճիշտ է բանասերների այն կարծիքը, թե՛ «ժողովրդի կուլ-
տուրայի շափանիշներից մեկն է իր լեզվով թարգմանված
Շեքսպիր ունենալը»:

Հայ ժողովուրդն արդարացի հպարտության զգացումով է
նշում, որ Շեքսպիրը դեռ մեկ դար առաջ է թարգմանվել հա-
յերեն, իսկ ավելի ուշ՝ դարիս քսանական թվականներին
բարձրարվեստ թարգմանություններով հանդես է եկել մեծա-
տաղանդ Հովհաննես Մասեհյանը, որ հայացրեց Շեքսպիրին,
հարազատորեն տալով մեզ մարդկային սրտի ու հոգու, երա-
զանքի ու տառապանքի այդ հանճարեղ կախարդին...

Հ. Մասեհյանը եզակի տեղ է գրավում հայ իրականության
մեջ... Նրա այս լեզվական աննման ընդունակությանն ենք

պարտական, որ նա կարողացել է հաղթահարել Շեքսպիրին, որի լեզուն աշխարհի մեջ բոլոր հեղինակներից, բացի Աստվածաշնչից, ամենաշատ բառ պարունակողն է:

Ավելի քան 30 տարի, գրեթե իր գիտակից կյանքի ողջ շրջանում, Մասեհյանն իր բազմազբազ պաշտոններին կից անընդհատ զբաղվել է Շեքսպիրի ուսումնասիրությամբ, մի զարմանալի տոկունություն, որ փառավոր կերպով վկայում է նրա հաստատուն նկարագիրը, մտավոր կյանքի սերը... Մասեհյանը ոչ միայն հայերիս մեջ միակ և առաջին շեքսպիրագետն է, այլև համաշխարհային մասշտաբով առաջնակարգ տեղ է գրավում, ինչպես այս ապացուցվեց Շեքսպիրի 300-ամյա հոբելյանական հանդեսին, երբ նա պատվով հրավիրվեց Լոնդոն:

...Նրա ներկա թարգմանությունները, իմ կարծիքով, անթերի են, կատարյալ, լավագույնը մենք չենք կարող ունենալ երկար ժամանակ, գուցեև ընդմիջտ, որովհետև դյուրին բան չէ գոտեմարտի բռնվել անգլո-սաքսոն հանճարի հետ... Դրժբախտաբար, ես չգիտեմ լանգերեն, որ կարողանայի թարգմանությունը բաղդատել բնագրի հետ, ավելի ճիշտ կարծիք հայտնելու համար, սակայն տարիների մեջ ես համեմատել եմ նրանք գերմանական կլասիկ դարձած Շլեգելի թարգմանության հետ, և հիացել եմ հայ թարգմանության կատարելության վրա:

Պրոֆ. Նիկ. Մառը, որ գիտականորեն գիտե հայերեն, կարողալով Մասեհյանի թարգմանությունները, անվերապահ զարմանք է հայտնել, թե Մասեհյանի շնորհիվ աշխարհաբար մանուկ հայերենը ինչ ճոխության ու ճկունության է հասել, որ անպակաս կերպով կարողացել է մի գծի վրա հավասար կանգնեցնել Շեքսպիրի լեզվին՝ մի փոքրիկ, տրոբված ազգի լեզու մի մեծ քաղաքակրթված ազգի լեզվի ընկեր:

Ի՞նչ կա սրանից ավելի պատվավոր մեզ համար²:

...Շեքսպիրի հետ զուգընթաց, որոշ ժամանակ տրամադրել էր* Գյոթեի Ֆաուստի ուսումնասիրությանը, ուզում էր թարգմանել Ֆաուստն ամբողջապես: Մի քանի փորձնական

* Խոսքը Հովհ. Մասեհյանի մասին է:

հատվածներին ծանոթ էի ես, և թվում էր ինձ, որ հաջողված էին: Թարգմանել էր Օմար Խայամից մի տասնյակ քառյակներ և մտադիր էր լրիվ թարգմանել. նաև ուներ Ռաբ. Թագորից մի քանի ոտանավորներ:

Ուզում էր Շեքսպիրը, որքան կարելի է, լրիվ թարգմանել. որքան հայտնի է ինձ, նա թարգմանել էր 10—12 պիեսները՝ «Համլետ», «Մակբեթ»... Բացի դրանցից պատրաստ ուներ «Ռոմեո Զուլիետան», «Լիր Արքան», «Ինչպես կուզեք», «Կեսարը»...

Սակայն մահը անկատար թողեց նրա իղձերի իրականացումը...

1916 թվին Շեքսպիրի 300-ամյակի հանդեսին նա հրավիրված էր, և նրա պատկերը Շեքսպիրի թանգարանում կախված է, որ մեծ պատիվ է:

Նրա անունը նշանավոր շեքսպիրագետների ցանկի մեջ է³:

...Նախքան Մասեհյանը կատարված թարգմանությունների մասին խոսելիս, դիտարկանալով տեղին գնահատելով թարգմանիչ ռահվիրաների մեծ, կուլտուրական գործը, ցույց է տվել նրանց հայացումների թերությունները լեզվի, ոճի տեսակետներից, ըմբռնման սխալները, սակայն նրանք ճանապարհ են հարթել իսկական թարգմանչի երևան գալուն: Նախապատրաստական աշխատանք են կատարել նրանք, և մենք միշտ ի նկատի ունենալով ժամանակի լեզվական հնարավորությունները, իհարկե, միայն երախտագիտական պարտք ունենք նրանց հանդեպ:

...Շեքսպիրին սիրելը և հասկանալը մի ժողովրդի կուլտուրական զարգացման չափանիշն է. նրա լեզվական ճկունության, կերպրնկալության և բառերի հարստության աստիճանացույցը: Մի ժողովրդի գեղարվեստական ճաշակի և մեծ խոհերի հասունության վկայականը:

Հայ ժողովուրդը ձեռք է բերել հասունության այդ վկայականը⁴...

...«Սիրանոյ»* թարգմանությունը ոճի, լեզվի, աֆորիզմների, սրախոսությունների տեսակետից և իբրև շափածո գեղարվեստական երկ, շափազանց դժվարին գործ է, եթե ոչ անկարելի, սակայն Արման Կոթիկյանը հաջողել է հաղթահարել դժվարությունները և ավել մեզ մի որակավոր գործ, որ արժանի է գովասանքի և դրական գնահատանքի: Չափը թեթև է. գրեթե ոչ մի բունահանգի շհանդիսպեցի ես: Համեմատելով ուսուսական թարգմանությունների հետ, շատ և շատ բարձր է նրանցից, հարազատ է և լրիվ:

Ավելացնենք, որ շատ ավելի հեշտ է մի արձակ կամ մի այլ շափածո երկ թարգմանել (հենց նույն Ռոստանի մյուս գործերից), քան «Սիրանո դը Բերժերակը»: Թարգմանիչն այս գործի վրա աշխատել է աղնվությամբ, սիրով և բարեխղճությամբ: Եթե հրատարակվի առանձին գրքով**, կդառնա մեր ընթերցողների սիրելի գրքերից մեկը:

«Սիրանոն» թարգմանված է գրեթե բոլոր կուլտուրական ժողովուրդների լեզուներով, և անշուշտ, պատիվ կարող է բերել մեզ նրա հայերեն թարգմանությունն ունենալ: Այդ մի բաց էր, որ կլցվի..

Իմիջիպայոց, պետք է ասել, որ Ռոստանը իր ծագումով հայ է. հորական պապի կողմից նա թոռն է Նապոլեոնի մամլյուկ զորավար Ռուստեմի (Ռուստամի), որը երևանցի հայ է եղել, գաղթած Եգիպտոս, ինչպես վկայում է ֆրանսիացի պատմիչ Գ. Дюлорие—ն՝ «Нынешние армяне», с. 63, Тифлис, 1856 г.»⁵

...Վ. Բրյուսովը սիրով, եռանդով, իրեն հատուկ համառ աշխատանքով սկսեց ծանոթանալ հայ լեզվին, հին, միջին և նոր գրականությանը, հայ պատմությանը և ստանձնեց «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի խմբագրությունը, ռուս անվանի տաղանդավոր բանաստեղծների գործակցությամբ:

* Նկատի ունի Ֆր. բանաստեղծ և դրամատուրգ էդմոն Ռոստանի (1868—1918) Սիրանո դը Բերժերակ շափածո պիեսը:

** է. Ռոստանի վերոհիշյալ պիեսը Ա. Կոթիկյանի թարգմանությամբ և Ավ. Իսահակյանի առաջաբանով Հայպետհրատը հրատարակեց 1951-ին:

Մի շատ ծանր, դժվարին գործ, որ պսակվեց փայլուն հաջողութեամբ:

Անթուրոգիան կազմվեց հայ գեղարվեստական խոսքի ընտիր նմուշներից՝ վերցված հնագույն ֆոլկլորից և էպոսից, միջին և նոր դարերի բանաստեղծություններից:

Այդ ստվար հատորի բանաստեղծությունների մեծագույն մասը թարգմանել է ինքը՝ Բրյուսովը իր անթերի տեխնիկայով և կոլորիտի զգացողութեամբ:

Բրյուսովը բարեխիղճ և մանրամասն ուսումնասիրությունից հանգեց այն եզրակացության, թե հայերի դարավոր հարուստ պոեզիան այն թանկագին ներդրումն է, որ Հայաստանը մուծում է ընդհանուր մարդկության գանձարանը:

...Բրյուսովից բավական բանաստեղծություններ կան հայերենի թարգմանված. Վահան Տերյանի կատարած թարգմանություններն սքանչելի են. թարգմանված է «Հայաստանի պոեզիայի» Առաջաբանը և «Հայոց պատմությունը» մենագրությունը⁶...

...Հայ ժողովուրդը միշտ սիրել է առակաների գրականությունը, այդ է պատճառը, որ Կոիլովի կենդանության ժամանակ իսկ սկսվեցին նրա առակաների հայերեն թարգմանությունները:

Վենետիկի Մխիթարյանները 1843 թ. թարգմանեցին մի քանի առականեր, այնուհետև՝ 1845 թ. Հ. Տեր-Ջաքարյանը՝ 11 առակ և 1849 թվականին՝ Հ. Քեռքչյանը: Սրանց բոլոր թարգմանությունները գրաբար լեզվով են: Իսկ սրանից առաջ անմահ հաշատուր Աբովյանը մի քանի թարգմանություններ է կատարել՝ աշխարհաբար, իր աշակերտների համար: Առակաների լիակատար թարգմանություն տվեց 60-ական թվականներին Գ. Այվազյանը՝ Ղրիմի հայերի բարբառով, կենդանի, աշխույժ ոճով ու կոլորիտով:

Տաղանդավոր առակագիր Աթաբեկ ինկոյանը կատարեց շատ գեղեցիկ փոխադրումներ, բավական մեծ քանակով՝ տալով կենդանի ժողովրդական շունչ, կոլորիտ, ինքնուրույնություն իր փոխադրումներին⁷...

Ադրբեջանական մեր եղբայրական ժողովուրդն ունի բանաստեղծության մի շքնաղ գանձ՝ բայաթիները:

...Գրաշին այդ հավաքածուից (խոսքը Հ. Ալիզադեի հավաքած մոտ 1000 բայաթիների մասին է, որ «Ազերնեշրը» հրատարակել էր 1938-ին) փոխադրել է 360 բայաթի:

...Բայաթիների փոխադրումը Ա. Գրաշին կատարել է միանգամայն շատ հաջող: Զգացված, ապրած վերարտադրանքներ են դրանք, այնքան սահուն, կարկաչուն: Պատահական էջերից բերենք մի երկու նմուշ.

Հե՛յ, սարեր, արնոտ սարեր,
Հալավոր, արնոտ սարեր,
Մեռնելիս շիրմիս վրա
Հա՛ց եղեք, արնոտ սարեր:

Ես սարում գառը տեսա,
Բուրդը դառ, վառը տեսա,
Բաց արի դրախտի դուռը,
Իմ սիրած յարը տեսա:

Նայեցե՛ք այս նուրբ, անզուգական քառյակը.

Աշուղ եմ, աչքի հետք կա,
Յա՛ր, սաղս միշտ ինձ հետ կա,
Օտար մարդ է քեզ նայել,
Երեսիդ աչքի հե՛տք կա:

Հայ ժողովուրդն էլ շատ է սիրում բայաթիներ, նա էլ սիրով երգում է հայի և ադրբեջանցու բայաթիները, իսկ հատկապես Ղարաբաղի և Զանգեզուրի հայերը ադրբեջանցու հետ համահավասար զգում են այդ բայաթիները և նրանց միջոցով արտահայտում իրենց սրտագին ապրումները: Յանկալի է, որ ընկեր Գրաշին, ժամանակի ընթացքում, ավելի մեծ քանակով տա մեզ մեր դարավոր սիրելի հարևանի այդ բանաստեղծական գոհարները⁸:

... թարգմանել կարող եմ գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներից: Հենց այժմս էլ պատրաստ ունիմ թ. Կարլեյլի կենսագրությունը՝ թարգմանաբար կազմած նրա գրքավածքներից ու կենսագրություններից. ունիմ և Ֆր. Նիցշեի կենսագրությունը, Իբսենից՝ «Հետագաբլեր», Հաուպտմանից՝ «Միայնակ մարդիկ» սքանչելի դրամաները: Իսկ եթե կուզեք, կարող եմ թարգմանել Ֆր. Նիցշեի «Also sprach Zarathustra» այս բանաստեղծական-միստիկական գոհարը... շատ հետաքրքիր է յուր տարօրինակ հանճարեղությամբ: Ես առանձնապես շեմ պարապել թարգմանությամբ, այլ իմ մասնագիտության ուսումնասիրությամբ⁹...

...«Աբու Լալայիս» ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթազնել մի հոգի, հայ մարդու հոգին¹⁰...

...Ուրախ եմ... շատ, որ Гослитиздат-ը նրան (Մարիետա Շահինյանին—Մ. Մ.) է հանձնել թարգմանելու «Մհերս»: Կարծում եմ, որ Մարիետան իբրև մեծ էրուզիցիայի տեր, խելոք, նուրբ և խորունկ՝ պիտի հասկանա իմ կոնցեպցիան և հնարավոր շափով աղեկվատ հասցնել ռուս հասարակությանը: Հավատացած եմ դրան և խնդրում եմ, որ գործին սրտով կպչի¹¹...

...Դեմիրճյանի հմուտ ճանաչողությունը Գոգոլի գրականության հետ՝ նրան մղեց թարգմանելու հանճարեղ «Մեռած հոգիների» առաջին հատորը, շատ գեղեցիկ, շատ հաջող կատարումով¹²:

...Շա՛տ և շա՛տ շնորհակալություն քո տարած արժեքավոր աշխատանքների համար՝ ի նպաստ հայ գրականության, նովելաների թարգմանությունը շատ մեծ գործ է, երախտավոր աշխատանք... «Знамя надежды» պատմվածքներիս ժողովածուն «ОГОНЁК»-ի հրատարակությամբ. սա արդեն նվաճում է հայ գրականության նվաճում¹³...

...Ծն շատ երջանիկ եմ, որ Դուք այդքան շատ ջանք ու եռանդ եք ներդրել, որպեսզի ուկրաինացի ընթերցողին ծանոթացնեք իմ պոեզիային:

...Ծն շատ էի ուզում, որ ինձ կարդային ժողովածուն (իսկ դրա համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որը տիրապետեր ուկրաիներեն լեզվին) և օգնեին ինձ Ձեզ նամակ գրելու Ձեր մայրենի լեզվով: Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Ձեր և իմ ընկերները իմ բանաստեղծությունները թարգմանել եք ճիշտ, լավ, կարողացել եք իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր:

Մեծ երջանկություն է ինձ համար, որ ուկրաինացի հերոսական ու բանաստեղծական ժողովուրդը կկարդա իմ բանաստեղծությունները և, ուզում եմ հուսալ, որ կսիրի դրանք¹⁴...

...լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի՝ քո թարգմանած «Եղիլություններ և խոհեր» անկրկնելի գործը:

Գերցենին դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի շունչ կա թարգմանությանդ մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու:

Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը¹⁵...

...Անչափ ուրախ եմ, որ իմ պոեզիան գրավել է Ձեր ուշադրությունը, և այժմ էլ Գուք նվիրված աշխատանք եք տանում իմ բանաստեղծությունները ներկայացնելու շինական լեզվով:

Մանուկ օրերից ես հեքիաթների, ճանապարհորդների գործերի և բազմաթիվ նկարների մեջ տեսել եմ շինացուն և նրա մեծ արվեստը, սիրել եմ ու հիացել դրանցով: Ժողովուրդները պիտի սիրեն իրար, իրար սիրելու համար պիտի ճանաչեն միմյանց, դրան հասնելու ամենաիմաստուն ճանապարհը միմյանց գրականության և արվեստների ճանաչումն է:

Մենք՝ գրական գործիչներս, վառված միևնույն գաղափարներով, իդեալով ու նպատակով, աշխատում ենք համաշխարհային խաղաղության և եղբայրության համար, համամարդկային երջանկության համար: Բոլոր սրտով ցանկանում եմ Ձեր գործին հաջողություն¹⁶...

...1901 թվականին ես գտնվում էի Արևմուտքում, երբ իմ ձեռքն ընկավ «Մրրկահավի երգը», Գորկու այդ սքանչելի ստեղծագործությունը, որ հենց նոր էր լույս տեսել: Ես անմիջապես թարգմանեցի, և այն տպագրվեց արտասահմանյան հայկական թերթերում: Այսպիսով, առաջին անգամ ես պատիվ ունեցա հայերեն թարգմանելու «Մրրկահավի երգը», և այդ փաստը ես հատուկ հպարտությամբ եմ նշում:

Այդ հիասքանչ ստեղծագործությունը լայն արձագանք գտավ հայ հասարակության մեջ, ես հիացական նամակներ էի ստանում, հայկական գրական երեկոներին ամենուրեք կարդում էին «Մրրկահավի երգը»¹⁷...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Օմար էայյամ և իր քառյակները» գրախոսականից («Բազմավեպ», 1924, մայիս, № 5, էջ 176—177):

² «Հովհաննես Մասեհյան» անտիպ հոդվածից, 1922—1924: Առաջին անգամ հրատարակվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1968, № 12, էջ 140:

³ «Մասեհյան» անավարտ հուշագրությունից, գրության թվականն անհայտ է (տե՛ս Ավ. Իսահակյան, Արվեստի մասին, կազմեց Ա. Ինճիկյան, Երևան, 1977, էջ 141—142):

⁴ «Վ. Թերզիբաշյանի դիսերտացիան» հոդվածից, 1945 (նույն տեղում, էջ 147—148):

⁵ «Է. Ռոստանի Սիրանո գը Բերթըրակը» գրախոսականից, 1949 (նույն տեղում, էջ 165):

⁶ «Վ. Բրյուսովի հիշատակին» հոդվածից, 1949 (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Վ. 4, Երևան, 1951, էջ 149—150):

⁷ «Կոռլովի առակները» գրախոսականից, 1943 (նույն տեղում, էջ 127—128):

⁸ «Ադրբեջանական բայաթիներ» հոդվածից, 1940 (նույն տեղում, էջ 155—157):

⁹ Նամակ Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության նախագահին, 1897 (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1979, էջ 21):

¹⁰ Հովհ. Ավագյանին գրած նամակից, 1926 (նույն տեղում, էջ 217):

¹¹ Թարգմանիչ Հ. Խաչատրյանին գրած նամակից, 1939 (նույն տեղում, էջ 334):

¹² Գրականագետ Գ. Հովնանին գրած նամակից, 1952 (նույն տեղում, էջ 300):

¹³ Հ. Խաչատրյանին գրած նամակից, 1948 (նույն տեղում, էջ 374):

¹⁴ Մաքսիմ Ռիլսկուն գրած նամակից, 1951 (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 375):

¹⁵ Թարգմանիչ Հ. Թուրշյանին գրած նամակից, 1954 (նույն տեղում, էջ 387):

¹⁶ Չին բանաստեղծ-թարգմանիչ Գև Բառ-Յյուանին գրած նամակից, 1955 (նույն տեղում, էջ 390):

¹⁷ «Великий друг», «Литературная газета», 1946, 15 июня.

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ*
(1877—1956)

...Ի՞նչ կա թարգմանած հայերեն՝ Պուշկինից: Այս է առաջին օրինական հարցը:

Դժբախտաբար, շատ քիչ բան: Եթե թվենք այստեղ՝ Ղ. Աղայանի թարգմանած «Ոսկե ձկնիկը», Հ. Թումանյանի՝ «Օլեգի երգը» և «Ջրահեղձը», ապա «Ժլատ ասպետը», «Պոլտավա»՝ Հակ. Տեր-Գևորգյանի ձեռքով, «Հավերժահարսը», «Քարե հյուրը»՝ Կ. Կրասիլնիկյանի ձեռքով, «Գնչուները»՝ Գ. Աստվածատրյանի ձեռքով ու մանր ոտանավորներ, որ թարգմանել են Ալ. Մատուրյան, Հ. Հովհաննիսյան և ուրիշներ, գուցե մի քանի բան ևս, որ այս վայրկյանին չենք հիշում — ահա աղքատիկ ցուցակը Պուշկինի թարգմանությունների: Այս շնչին բան է, անշուշտ, որով կարելի լիներ խոսել Պուշկինի՝ հայ գրականության վրա ունեցած ազդեցության մասին: Բայց սխալ կլիներ ազդեցության «փաստաթղթեր» որոնել թարգմանությունների ցանկի մեջ...

Շատ բան են ասում այս թարգմանիչների անունները: Դրանք որոշ շափով մեր անվանի բանաստեղծներն են՝ Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան և այլն, որոնց ինքնաբերաբար ղբաղվելն իսկ Պուշկինի թարգմանությամբ՝ արդեն բավական խոսում է այն ներքին թելադրանքի մասին, որ եղել է նրանցից ամեն մեկի մեջ դեպի իր սիրած բանաստեղծը, որովհետև ամեն հեղինակ թարգմանում է, կարելի է ասել, համաձայն «իրեն»՝ թարգմանելով իր սիրած, իր վրա

* Դ. Դեմիրճյանը թարգմանություններ է կատարել Պուշկինի, Գոգոլի, Չեխովի, Մոպսսանի, Լացիսի, Նևերովի և այլ բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործություններից:

ազդած բանաստեղծից հաճախ այն, ինչ որ ինքը կուղենար գրել...

Տողերիս գրողը չի հիշում որևէ գրական զրույց ուս գրականության մասին հանգուցյալ Հովհ. Թումանյանի հետ, որի ժամանակ Պուշկինի անունն առանձին ակնածանքով ու սիրով շարտասանվեր վերջինիս կողմից: Ավելի սակավ չէր թարգմանել Թումանյանը նաև Լերմոնտովից, ավելի քիչ չէր խոսում նաև այս բանաստեղծի մասին, բայց խիստ որոշ ակներև էր նրա նախասիրությունը դեպի Պուշկինը...

...Պուշկինն ազդել է ավելի շատ, քան մեր հեղինակները խոստովանում են, քան վերջապես թարգմանել են...

Ամենեին պատահական չէր Պուշկինի բանաստեղծությունների թարգմանությունը Մկրտիչ էմինի կողմից...

Ժողովրդական դեմոկրատ-գրող Ղազարոս Աղայանը իր մի հասարակ ակտով՝ «Ոսկե ձկնիկի» թարգմանությամբ հիանալի ցույց էր տալիս, թե ուր պետք է որոնել ժողովրդի համար գրելու արվեստն ու ուղղությունը: Աղայանն այդ թարգմանության մեջ կարծես ինքնուրույն հայ ժողովրդական հերիաթ էր գրում, իսկ բաղմամբանը Պուշկինի այլ քնարական մոտիվները Հովհ. Հովհաննիսյանին ներշնչում են ճշմարտության, արդարության կոչը հնչեցնելու հայ իրականության մեջ¹...

...«Ասքը» ուս ժողովրդի պատմական կյանքի հանճարեղ մի իլյուստրացիան է, նրա հոգեկան հարստության շքեղ փաստաթուղթը:

...«Ասքը» շունի ոչ տաղաչափություն, ոչ հանգավորում: Այս տեսակետից նա մոտենում է հին էպոսների, բիբլիական շարադրության, կիսատաղաչափական, անհանգ, կադենցիալ ոճին, պրոզայական շարահյուսության: Հենց նույն ոճի առանձնահատկությունները, մեր կարծիքով, կարողացել է պահպանել թարգմանիչը*: Հնարավորին չափ խուսափել է մի շարք սխալներից, որ դյուրին էր կատարել նման դեպքերում,

* «Ասք Իգորի ճակատամարտի մասին», Ե., 1964, Թարգմ.՝ Ս. Վահանի:

այն է՝ հանգավորել, տաղաչափել և որ ամենից մերժելին է՝ «գեղեցկացնել»: Խստորոշ ստիխը, ժլատ խոսքը, հաճախ «կոպիտ» պարզ ձևը զարդարում են թարգմանությունը, որ, ի դեպ է ասել, վերին աստիճանի դժվարին գործ է:

Այսպիսով, մեր թարգմանական գրականությունը ձեռք բերեց մի արժեքավոր գործ՝ «Ասքի» հայերենը, որի պակասը զգացվում էր վաղուց²:

...Թարգմանությունը մի փոքր պայմանական բան է. ամենահավատարիմ թարգմանությունն անգամ որոշ չափով փոխում է հեղինակի դեմքը, անկախ այն բանից, նվազեցնում, թե ավելացնում է բնագրի արժեքը³...

...Ռուս լեզվի միջոցով ենք ստանում ընդհանուր կուլտուրայի նվաճումները: Բոլոր ոուսերեն գիտական, տեխնիկական, փիլիսոփայական, գրական գրքերը ինքնուրույն, թե թարգմանական՝ մեզ բերում են նորանոր գաղափարներ, արվեստ և լեզու... Ռուսերեն բառը դրդում է մեզ նախ՝ ընդունել նոր գաղափարը, ապա և ստեղծել դրա բառը... Ռուսերեն լեզուն մեր լեզվի զարգացման մեջ մեծ դեր ունի կատարած: Հիշենք Նալբանդյանի լեզվաշինական գործը: Նա զարգացրեց մեր գրական լեզուն, բարձրացրեց նրա կուլտուրան ուս լեզվի զուգադրության և օգտագործման միջոցով: Ռուս լեզուն մեծ դրդիչ և օրինակ է ծառայել նրան և նրա հետնորդներին՝ հարստացնելու հայերենը... Առանց ոուսերենի օրինակի մեր լեզուն կմնար որպես սակավապետ, ինքնամփոփ, անզարգացած, հետամնաց լեզու: Մեր լեզուն... ոուսերենից հայերեն թարգմանելու միջոցով ստիպել է հայերենը բարձրացնել, հավասարեցնել ուս լեզվի աստիճանին...

Օտար լեզուներից օգտվել՝ չի նշանակում նայերենը թուլացնել, այլ՝ ուժեղացնել: Չմոռանալ, որ ինչ որ արդեն յուրացված է՝ որ կողմից ուզում է մտած լինի լեզվի մեջ՝ հալերեն է: Ազդեցություն՝ փոխառությամբ, յուրացում այդ փո-

խառության, սեփական ստեղծագործություն՝ այդ յուրացման օգնությամբ, փոխադրեցություն՝ ահա ողջ մարդկային կուտուրայի էությունը⁴:

Թերթեցի ընկ. Խիտարովայի կողմից խմբագրված իմ «Երկիր հայրենի» պիեսի թարգմանությունը. պետք է նշեմ, որ ձգտելով հերոսական պատմական պիեսի լեզուն ազատել հնաբանություններից, ընկ. Խիտարովան ընտրել է այլ մեթոդ՝ մոդեռնացրել է լեզուն, որի հետևանքով պիեսի լեզուն կորցրել է պատմականության բոլոր նրբերանգները:

Որոշ չափով ես համաձայն եմ այդ մեթոդին, մասնավորապես այնտեղ, ուր խոսում է զինվորը, արհեստավորը, գյուղացին:

Բայց գտնում եմ, որ դա ամբողջ պիեսի վրա տարածել չի կարելի, որ պետք է գտնել մի երրորդ՝ միջին ճանապարհ, որպեսզի, առանց պիեսը հնաբանություններով ծանրաբեռնելու նրա մեջ, այնուամենայնիվ, տանք ժամանակի կոլորիտը, այսինքն՝ ոչ մեր, այլ հեռավոր ժամանակների կյանքի և սովորույթների նրբերանգը:

Հատկապես կաթողիկոսը և Մագիստրոսը պետք է խոսեն ընդգծված գրքային լեզվով, իսկ մյուս նախարարները՝ ավելի նվազ: Ես համաձայն եմ ընկ. Խիտարովայի հետ, որ ժողովուրդը, արհեստավորները և զինվորները պետք է ավելի պարզ խոսեն, բայց, իհարկե, ոչ զուտ այժմեական լեզվով: Ձխտելով արդեն գոհակարանությունների մասին, որոնք անթույլատրելի են և ականջ են ծակում, երբ դրվում են թագավորի կամ նախարարների բերանը, իջեցնելով պիեսի ընդհանուր տոնը (подтек, тон, речета և այլն):

Բացի դրանից, ես շատ կիսնդրեի Ձեզ վերականգնել բոլոր հնագույն ծիսական արտահայտությունները և եկեղեցական ծիսակարգի բանաձևերը ըստ թարգմանության նախնական տեքստի, որովհետև դրանց մոդեռնացման հետ ես երբեք հաշտվել չեմ կարող:

Իսկ ընդհանրապես, ես կողմնակից եմ այն բանին, որ շրջադաս խոսքը մնա պիեսում, իհարկե, բացառությամբ այն

խոսքերի և արտահայտութիւնների, որոնք Ձեր կողմից կճանաչվեն արդեն շատ հնացած, որովհետև դրանով նշանակալից շահով հաղորդվում է խոսքի ութմը⁵...

...Ինչպես ամեն մարդ, առանձին վերցրած, նույնպես և ամեն ժողովուրդ այն դեպքում է հոգեկան բավարարութիւն չգտնում, երբ իր միտքը, իր զգացմունքները, ապրումները լրիվ, մինչև հատակը արտահայտում է, թեթևանում: Այդ կարելի է միայն և միմիայն շատ լավ գիտեցած լեզվով: Ուրեմն, մարդ մի լեզու գտնե պետք է շատ լավ գիտենա. իր գործն է, թե որ լեզուն է կամենում գիտենալ: Չի կարելի մի կերպ, մի քիչ հասկանալով ու հասկացնելով յուր գնալ: Հայերենը հարուստ, դժվար, կարևոր լեզու է, որը պետք է շատ լավ գիտենալ: Ամեն տեսակ գիրք, թե գիտական և թե գեղարվեստական, կարելի է հայերեն թարգմանել առանց որևէ դժվարութեան: Հայոց լեզուն հին, փորձված, կոփված լեզու է: Հայերեն լավ գիտենալը օգնում է ուսերենը լավ սովորելուն: Երկու լեզուների նրբութիւններն ու հարստութիւնները ամենից լավ կիմացվեն՝ համեմատվելով իրար հետ⁶...

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Պուշկինը և հայ կուլտուրան» հոդվածից, 1949 (Ռ. Դեմիրնյան, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 316—320):

² «Ասքի» մասին, 1950 (նույն տեղում, էջ 333, 337):

³ Էմինի «Նոր ճանապարհ» գիրքը, 1951 (նույն տեղում, էջ 355—356):

⁴ «Ժամանակակից հայ գրական լեզվի տեղեկանքները» հոդվածից, 1951 (նույն տեղում, էջ 431, 433):

⁵ Նամակ Ա. Ռոսսիխինային, 1948, փետրվար (բնագիրը ուսերեն է), «Գրական ժառանգութիւն», գիրք 7, Ռ. Դեմիրնյան, Անժանոթ էջեր, Երևան, 1974, էջ 273—274):

⁶ «Մայրենի լեզվի նշանակութիւնը», 1953 (նույն տեղում, էջ 187—188):

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ*
(1878—1945)

...Արվեստը բարեկամության միջնորդ մըն է, նույնպես, օտարներու միջև: Անոնք որ միևնույն քերթվածին, երաժըշտական կտորին, նկարին առջև նույն հուզումը կկրեն, դեպի իրար քայլ մը կառնեն, կկարծեմ նույն իսկ թե արվեստագետին հուզումեն զատ՝ իրարու հուզումովն ալ կթափանցվին: Արվեստը մեծ միացնող մըն է հոգիներու¹...

...Խնդրեմ... ըսեք ինձի Ձեր հառաջիկա մեկ նամակովը, թե որո՞ւ կողմն է Հայնեն թարգմանված է հայերենի և կարելի՞ է արդյոք գտնել զայն: Մեկ քանի քերթվածներ ունիմ թարգմանած ֆրանսերենն, ինչ որ խեղճ բան է, և մտադրած եմ գերմաներեն սորվիլ, բնագրեն կարդալու, թարգմանելու համար²...

* Վ. Թեքեյանը թարգմանություններ է կատարել Շեքսպիրի, Բողլերի, Վեպլենի, Սամենի, Դեպորտ-Վալմոռի, Պրյուդոմի, Հյուգոյի, Ռոնսարի, Գոթիևի, Ռընարի, Բարրյեի, Ռենյեի, Բեքի, Լը Քոնթ դը Լիլի, Առվեռի, Իփտի, Արագոնի, Ուայլդի և այլ գրողների ստեղծագործություններից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Լ.— Զ. Սյուրմելյանին գրած նամակից, 1924, սեպտեմբեր (Լ.— Զ. Սյուրմելյան, Լույս-Ջվարթ, Նյու-Յօրք, 1950, էջ 65):

² Ա. Չոպանյանին գրած նամակից, 1900, մարտ («Արևմտահայ գրողների նամականի, Գրական ժառանգություն», գիրք 6, Երևան, 1972, էջ 320):

ՍԻԱՄԱՆԹՈՒ
(1878—1915)

...Դուք միակն եք, որ կարող եք իմ գրվածքներս թարգմանել գերմաներենի, միակ լեզուն, որ ուժի maximum-ը պիտի կարենար պահել: Շատ են թարգմանված ֆրանսերենի և մանավանդ անգլերենի, բայց իմ կարծիքով գերմաներենը շատ կորսնցնել պիտի շիտար, իմ համեստ կարողություններես¹...

...Գերմաներենը, կարծեմ, միակ լեզուն է, որ պիտի կրնա rendre* ընել իմ գրելու ձևս և ոգին: Անգլերեն ունիմ թարգմանած շատ մը քերթվածներ²...

Ձեր հատորը** ստացած եմ և սքանչացումով է, որ այդ հրաշալի ֆրանսերենը կկարդամ, ավելի քան հայերենը: Շնորհակալություններս³...

* Վերարտադրել (ֆրանսերեն):

** հոսքը Ա. Զոպանյանի կազմած և թարգմանած «Poemes» «Հայ հին և արդիական բանաստեղծություններ» ժողովածուի մասին է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Նամակ Ռ. Պազարճյանին, 1914, մարտ («Արևմտահայ գրողների նամականի. Գրական ժառանգություն», գիրք 6, Երևան, 1972, էջ 299):

² Նամակ Ռ. Պազարճյանին, 1914, ապրիլ (նույն տեղում):

³ Նամակ Ա. Զոպանյանին, 1908, օգոստոս (նույն տեղում, էջ 295):

ԳԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ*
(1884—1915)

...Հ. Թիրյաքյանի «Շահնամե»-ի այս մեկ կտորին թարգմանությունը ներդաշնակ գտա, բայց քիչ մը շատ գրաբարայտառն և թույլ լեզվով. բայց պետք չէ մոռնալ, որ արևելյան լեզուներեն թարգմանելը ավելի դժվար է արևմտյանեն: Եթե հիշյալ պարոնը «Շահնամե»-ն ամբողջապես թարգմանե քիչ մ' ավելի ջղուտ և մաքուր լեզվով՝ իրավցնե պատվաբեր և անմահանալի գործ մը արտադրած պիտի ըլլա: Ուղղաբերձ բազուկներով մեր Եվրոպա՝ աղաղակելը շա՛տ լավ, բայց քիչ մըն ալ մեզ և մեր դրացիները հարկ է ճանչնանք¹:

...Հոս արդեն քերթվածներես քանի մը անտիպ հատ թարգմանած եմ, որոնցմե մեկ փոքր մ' ալ Ալմանախի մեջ կհրատարակվի այս օրերս: Մեկդի թողլով իմ տակավին անվարժությունս՝ իրապես մեծ դժվարություն կգտնամ հայերեն գաղղիներեն թարգմանությանց մեջ: Երբ գրությունը պատկերոտ և միանգամայն խիզախ ձևերով է՝ դժվարությունը կկրկնապատկվի. անբար համար է, որ Հյուսիսն և մեր մեջ Ալիշանը գրեթե անթարգմանելի նկատված են: Մեր աշուղներուն խոսքը չեմ ընե: Իրենց գրությունները որքան որ պատկերավոր են, բայց կտրուկ են նաև, հետո վախ չկա զիրենք gongorisme-ի (ոճաղարդման) մեջ ձգելու, քանի որ մեծ մասամբ այնպես են արդեն:— Գաղղիական լեզուն չափված է,

* Գ. Վարուժանը թարգմանություններ է կատարել Մետեոլիսկի, Միցկևիչի, Իսկուհի Մինասի (ծագումով հայ, ֆրանսագիր բանաստեղծուհի, նովելիստ) և ուրիշ գրողների ստեղծագործություններից:

ձևված և նույնիսկ իր պատկերներով, գրեթե բյուրեղային է, և անդոր մեր հանդուգն նկարները գրելու. այս մասին անցյալ օր պելճիքցի մեկ բարեկամի մը կըսեի. «Մեկ խոսքով, մեր Աստղիկը Ձեր հայելիին մեջ խափշիկ կցուլա»: Գեթ ես ատանկ կգտնեմ...

...Ձեր որոշումին «Սարսուռներ»-են թարգմանելու՝ շնորհակալությունս և բարեհաջողության մաղթանքներս: Եթե կարենաք մեր հին ու նոր հեղինակներեն բավական բան թարգմանել, շատ օգտակար պիտի ըլլաք: Գերմանիա մեզ չի ճանչնար որչափ կճանչնան մյուս պետութայունները. կմտածեմ, թե այդ միակ միջոցը չէ՞ այդ շահախնդիր ազգը համակրության հակելու. սերը անմիջականորեն ծնունդն է ծանոթության, եթե այս վերջինին ենթակա է մանավանդ առավելութայունները անձին²:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Ա. Չոպանյանին գրած նամակից, 1906, մարտ (Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 63):

² Ի. Պաղարճյանին գրած նամակից, 1906, ապրիլ (նույն տեղում, էջ 68—69):

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ*
(1885—1920)

...Հայ ընթերցողը պետք է ունենար իր գրադարանում հայերեն լեզվով բոլոր ոուս գրողների գրվածները՝ և՛ Գոգոլի, և՛ Պուշկինի, և՛ Տոլստոյի, և՛ Չեխովի — դո՛ւնե նրանց «լավագույն» գրվածների ժողովածուները...

...Ձի կարելի պահանջն էլ Հայ ընթերցողից, որ միայն Րաֆֆիով և Պոռչյանով սնվի: Որքան և բարձր գնահատելու լինենք մեր հեղինակներին, այնուամենայնիվ, նրանք չեն կարող բավարարություն տալ ընթերցողին: Եվ ո՛չ միայն մեր գրականությունը. ոուս գրականությունը չի գոհացնում ոուս ընթերցողներին, և թարգմանական գրականությունը Ռուսաստանում աճում է և առաջ գնում հսկայական քայլերով:

Եվ ո՞վ կարող է ուրանալ թարգմանական գրականության ահագին նշանակությունն ազգային գրականության զարգացման համար: Թեկուզ հենց Ռուսաստանում այդ ազդեցությունը շատ է մեծ և պետք է ուսանելի լինի մեզ համար: Այդ ազդեցությանը նվիրվում են բազմաթիվ գիտական հետազոտություններ, այնքան անհերքելի է այն և նշանակալից:

Եվ մեր գրականության զարգացման ամենամեծ գրավա-

* Վ. Տերյանը թարգմանություններ է կատարել Սաֆոյի, Հայնեի, Ուայլդի, Ռուսթավելու, Վերհարնի, Բոզլերի, Բրյուսովի, Շնիցլերի, Թագորի, Սոլոգորի, Մերեթելու, Վյաչ. Իվանովի և ուրիշների ստեղծագործություններից:

Թարգմանել է նաև Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» աշխատությունը, «Կարլ Մարքս» հոդվածը:

Հայերենից ռուսերեն է թարգմանել Րաֆֆու «Կայծեր» վեպի I հատորը, Շիրվանզադեի «Ցավագարը», Սունդուկյանի «Պեպոն» (վերջինը՝ Մ. Գորկու համագործակցությամբ), հատված՝ «Սասունցի Դավիթ» էպոսից:

կանը կլինի թարգմանական գրականության զարգացումը մեզանում:

Թարգմանական գրականությունը կլայնացնե ընթերցողի աշխարհայացքը, շնորհիվ նրա աճում է ընթերցողի գրասիրությունը և հետաքրքրությունը, զարգանում է ընթերցողի ճաշակը:

...Ինչ ասել կուզի, թե որքան մեծ է թարգմանական գրականության ազդեցությունը լեզվի զարգացման համար¹...

...Լեզուն զարգացնել չի նշանակում խուսափել եվրոպական բառերից, նրանց տեղը հայերեն հնացած կամ բոլորովին անտեղի մեռած բառեր դնել:

...Ժողովրդական բնազդը այս դեպքում ավելի առողջ է և զորեղ...

Եվ դրա համար է, որ պոլսական լեզուն միայն պոլսեցու համար է հասկանալի, ինչպես և Մխիթարյանների լեզուն, իսկ մենք այդ լեզուն հասկանալու համար պիտի ուժ գործ դնենք, պիտի մտածենք դեռ, թե ինչ խոսքերից է կազմված այդ բառը, ասենք՝ «ընկերաբանություն», մինչդեռ «սոցիոլոգիան» բոլորի համար հասկանալի է, քանի որ ոչ միայն մենք, այլև բոլոր եվրոպական ազգերը այդպես են ասում: Մխիթարյանների և պոլսեցոց թեորիաներն ու ձևերը, դժբախտաբար, մեր՝ ուսաստաններիս մեջ էլ սկսում է գործածության մեջ մտնել, հիշեցնում են այն մարդկանց, որ Շիշկով ադմիրալի ղեկավարությամբ պաշտպանում էին ուսաց լեզվի մաքրությունն ու գեղեցկությունը Կարամզինի և այլոց դեմ: Նրանք էլ «գալոշի» տեղ առաջարկում էին «МОКРОСТУПЫ» ասել, իսկ «տրոտուարի» տեղ՝ «ТОПАЛИЩЕ» և այլն:

...Լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է և ազգը. կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը: Իսկ այդ օտարաբանությունների ներմուծումը ցույց է տալիս, որ լեզուն դեռ կենդանի է և կենսունակ... Ինչպես անհատն է առանձնության մեջ քարանում ու մեռնում, այնպես էլ ազգը: Ազգերի զարգացումն ու առաջընթացը պայմանավորված է փոխադարձ հարաբերություններով, փոխադարձ ազդեցությամբ:

...Եթե լեզուն ընդունակ է ժամանակի հասկացողությունների ու զգացմունքների թարգման հանդիսանալու, ուրեմն նա կենդանի լեզու է և դեռ կենսունակ: Ինչպես անհատի հոգեկան ուժերի շափը երևում է այն ժամանակ, երբ նա բախվում է արտաքին աշխարհի հետ, երբ նա հարաբերության մեջ է մտնում ուրիշ մարդկանց հետ, այնպես էլ լեզվի զորությունը երևում է, երբ նա բախվում է ուրիշ լեզուների հետ: Ինքնամփոփ ու վայրի ցեղերի լեզուն, որքան և ուժեղ թվա իր վայրի առանձնության մեջ, անզոր է դառնում, երբ բախվում է ավելի կուլտուրական մի ազգի լեզվի հետ: Ինչպես անձնամոռացության հասնող քաջությունն ու ըմբոստությունը չի օգնում լեռնականներին դիմադրելու կուլտուրական մի ազգի արշավանքին, նույնպես ինքնամփոփությունը և տգիտությունը չեն օգնի նրանց լեզուն պահպանելու²:

...մեր հետնորդները կտեսնեն, հավատանք դրան, որ մեր գրականությունը թարգմանվում է մյուսներին հավասար ոչ թե բարեգործական կամ այլ նպատակով, այլ միայն նրա համար, որ նրանով հետաքրքրվում են, նրա մեջ հայտնվել են այնպիսի արժեքավոր գործեր, որ կարող են սնել և օտարների:

...կարող է լավ դուրս գալ թարգմանությամբ այն, ինչ հայերեն ավելի թույլ է թվում, և ընդհակառակը, և հետո դու իբր թարգմանիչ գիտես, որ մեկ բան հաջողվում է թարգմանել, մյուսը՝ ոչ³...

...Եթե «Պեպո»-ն ուսացնես, նա հետաքրքրական չէ ուսին՝ այդպես է ասում ամենից առաջ Գորկին...

Քո առաջարկած մեթոդով «Պեպո»-ն թարգմանել է վեսելովսկին, և Գորկին ասաց, որ իմ թարգմանությունն անհամեմատ ավելի լավ է... Ուրիշ ուսաների կարծիքներ չեմ հարցրել, բայց աչքի առաջ ունեցիր, որ Գորկին էլ ուս է:

Իհարկե, եթե թարգմանածս լիներ Մետեռլինգը, ես այդ «վայ» ու «վուշը» չէի պահպանի գուցե, բայց երբ մանրա-

մասն նկարագրում ես գործող անձանց հագուստը, երբ գրրվածքը նույնիսկ ընդհանուր հայ կյանքի պատկեր չէ, այլ Թիֆլիսի հայերի, երբ այդ հանգամանքը իշխող դեր է կատարում գրվածքում՝ սխալ կլիներ շեշտել դա և թարգմանության մեջ: Ահա Պողոսը* թարգմանել է «Գիքորը» քո ասած մեթոդով, այսինքն ռուս դարձվածներով է փոխարինել հայկականը, և Գորկին ասաց, որ շարժե դա տպել, որովհետև ռուս պատմվածք է և ոչ հայ: Եվ սխալ է, իհարկե, երբ Պավղը* ասում է «OH»-ի տեղ «ЭН» կամ մի այլ այդպիսի բան, դա սխալ է, մանավանդ երբ շափից դուրս շատ է լինում դա:

...Իհարկե, ես հավակնել չեմ կարող կարծելու, որ «Պեպո»-ն արտահայտել էմ ռուսերեն, դա հիմարություն կլիներ իմ կողմից: «Պեպո»-ն անթարգմանելի է, ինչպես անթարգմանելի են այդօրինակ գրվածքներն առհասարակ: Կուռեի ես կարդալ ЧЕХОВ-ի որոշ գրվածքների անգլերեն, մանավանդ ճապոներեն թարգմանությունները, մինչև անգամ ֆրանսերենը:

Ես կամեցել եմ միայն գաղափար տալ «Պեպո»-ի մասին, և ավելի մոտ ու լավ գաղափար, քան Վեսելովսկին՝ ուրիշ ոչինչ⁴...

...Նա կարծում է, որ թարգմանիչը պիտի սրբություն համարի հեղինակի ամեն մի ասածը և բառացի թարգմանե, մինչդեռ ամեն մի թարգմանություն ունի իր կոնկրետ նպատակը և բնավ չի լինելու անպատճառ ակադեմիական: ...այն «Դոն Գիշտը», որ նա է կարդացել՝ կրճատ է թարգմանված... այն «Ռոբինզոնը», որ մենք բոլորս ենք կարդացել բավականաչափ... կրճատ է, այդպես են և՛ Դիկկենսը, և՛ Բայրոնը, և՛ Սվիֆտը, և էլ որն ասեմ, որովհետև ամեն թարգմանիչ մի նպատակ է ունեցել, և նույնիսկ լիակատար թարգմանություններում շատ գլուխներ, չեմ ասում երեսներ, կրճատվում են, երբ նրանք անթարգմանելի են կամ անհասկանալի այն մարդկանց, որոնց լեզվով թարգմանվում է գրվածքը: Օրինակ...

* Խոսքը Պ. Մակինցյանի մասին է:

կարողում ես Ուելսի վերջին վեպը և չգիտես իսկ, որ նրա 21 թերթը դարձել է ուսաներեն 14 թերթ... Հեղինակը, թույլատրելով թարգմանել, հույսն ամբողջովին դնում է թարգմանիչների ըմբռնողության, ճաշակի վրա, գիտենալով, որ այն, ինչ Անգլիայում շատ հետաքրքիր և պիտանի է, Ռուսաստանում անհասկանալի է, անհետաքրքիր և ոչ պիտանի:

...Բայց մտածիր. Չեխովի և Գորկու երկերը թարգմանված են ճապոներենն ու չինարենն: Հիմա մտածիր՝ արդյոք կարելի՞ է Չեխովին լիակատար թարգմանել չինարենն, արաբերենն, ճապոներենն: Կարելի է՞ «Հատակումը» թարգմանել ֆրանսերենն, անգլերենն, իտալերենն, առանց այդ սովորական կրճատումների: Իհարկե, ոչ:

...Իսկ մի՞թե ժողովածուում իմ բանաստեղծությունները թարգմանված են այնպես, ինչպես ես կուզենայի: Բնավ ոչ: Դեռ ավելին. մի բանաստեղծության մեջ ես ասում եմ. «Եվ գուցե նա (Աստված) մեր վիշտն (ցավն) ղզա»: Բրյուսովը դա թարգմանել է այսպես.

— и другой

Всю нашу боль почувствует, быть может.

Տեսեք, թե ի՞նչ մեծ դժբախտություն է պատահել՝ աշխարհը զրկվել է այդպիսի մեծ մտքից... Եթե ես երբևէ գրեմ որևէ իրոք արժանի բան, չեմ վախենում՝ աշխարհը կիմանա, կհայտնաբերի⁵...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Անունը կա ամանումը չկա» հոդվածից, 1911 (Վ. Տերյան, Իրկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 217):

² «Հայ գրականության գալիք օրը» ղեկուցումից, 1914 (նույն տեղում, էջ 243):

³ Ալ. Մատուրյանին գրած նամակից, 1915 (Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 376):

⁴ Յ. Խանզադյանին գրած նամակից, 1916 (նույն տեղում, էջ 426):

⁵ Յ. Խանզադյանին գրած նամակից, 1916 (նույն տեղում, էջ 436):

ՄՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ*
(1890—1967)

...Մեսրոպը (Մեսրոպ Մաշտոցը) նախաձեռնում է նաև կարևոր գրքերի թարգմանություն և ինքը թարգմանում է Սողոմոնի առականերից, դառնում է մեր առաջին քարգվանիչը, իրեն նշանաբան ընդունելով. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

...Գիրն ու գիրքը պահպանում, զարգացնում են լեզուն ու մարդկանց: Եվ կարճ ժամանակում այնքա՛ն է խորանում գրի ու գրքի սերը, որ ժողովուրդը, իր երախտագիտական մեծաբանքի համար այլ արտահայտություն չգտնելով՝ մեծագործ հեղինակներին, Մեսրոպից սկսած մինչև Խորենացի, Եղիշե, Նարեկացի, համարում է սուրբ, ինչպես այսօր մենք իրոք բազմավաստակ գործիչներին տալիս ենք ժողովրդական կոչում: Սահմանվում է անգամ թարգմանչաց տոն (ինչպիսին, որքան գիտեմ, չունի և ոչ մի ժողովուրդ), և այդ տոնը յուրաքանչյուր տարի տոնվում է հինավուրց Օշական գյուղում՝ Մեսրոպի գերեզմանի վրա:

Քաղաքականապես անապահով, բռնի ձուլվելու վտանգին ենթակա ժողովուրդը, ապավինելով իր գրին ու գրքին, կարճ միջոցում, կատարում է թուիչքներ՝ թարգմանական ճոխ գրականության հետ միասին ստեղծում է ինքնուրույն պատմագրություն, գիտություն, ստեղծում է հայրենասիրական գրքեր ու երգեր, որոնք և դարերի մեջ պահեցին մեր պապերի ինքնություն ու ազատության ոգին՝...

* Ստ. Զորյանը թարգմանություններ է կատարել Տոլստոյի, Տուրգենևի, Պրիշվինի, Մարկ Տվենի, Սենկևիչի, Յվայգի, Բիչեր-Նիթուի և ուրիշների ստեղծագործություններից:

...Երբ ես... թարգմանում էի Սենկևիչի «Երաժիշտ Յանկոն», Ռոմանոսը* ինքնակամ իր մասնակցությունը բերեց այդ թարգմանության, որպեսզի կարողանանք երաժշտական բովանդակություն ունեցող, իր սիրած այդ նովելի թարգմանության մեջ հայ լեզուն գործածել այնպես, որ ստացվի առավելագույն ուժի և էմոցիա: Երբ նրա առաջարկով սկսեցի թարգմանությունս կարգալ, հանկարծ նկատեցի, որ նա մատները խաղացնում է, հետո սկսեց դրանք խփել սեղանին:

...Լինելով հնչյունների նուրբ վարպետ, նա պոեզիայից պահանջում էր նվագայնություն, պրոզայից՝ ուժի²...

...Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերությունը Աբեղյանին (Մանուկ Աբեղյանին) առաջարկում է թարգմանել Գոգոլի «Տարաս Բուլբան»: Ո՞ր վարիանտը, — հարցնում է Աբեղյանը: «Իհարկե, վերջինը, ընդարձակը»: — «Ոչ, ես վերջինը չեմ թարգմանի... Վերջին վարիանտում Գոգոլը փառաբանում է ուս թագավորին... Ուստի և կարիք չկա, որ մեր դպրոցները փակող, մեր կուլտուրան ճնշող ուս թագավորների գովքը տանք մեր ժողովրդին: Իսկ առաջին վարիանտում այդ փառաբանությունը չկա...»: Համաձայնում են և Աբեղյանը և ալիս է մի լավ թարգմանություն, որ ի դեպ, այսօր էլ շատ ուսանելի կողմեր ունի³...

...Թարգմանել «Պատերազմ և խաղաղությունը»... Դա ինձ թվաց ահռելի մի բան⁴...

...Որպես և Տոլստոյի «Պատերազմ և խաղաղության», «Կողակներին» և մի քանի այլ մանր գործերի թարգմանիչ՝ անհրաժեշտ եմ զգում ընդգծել այստեղ մի հանգամանք. շնայած նրա երկերի թարգմանության դժվարության, ես ստեղծագործական մեծ ուրախություն էի ապրում՝ այնքան խոր

* Խոսքը կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի մասին է:

հայտնագործությունների էի հանդիպում ու շատ բան էի սովորում: Թափանցելով նրա մեթոդի ու արվեստի մեջ՝ մարդավելի է զգում նրա վարպետութունը. սակավ խոսքերով շատ բան ասել և քիչ, բայց բնորոշ խոսքերով կենդանացնել պերսոնաժներին՝ շոշափելի լինելու աստիճան:

...Տոլստոյի հանճարեղ երկերից շատ բան կարող է սովորել յուրաքանչյուր մարդ, մանավանդ գրողը, առավել ևս՝ երիտասարդ գրողը⁵...

...Ինձ բարձր պատիվ է վիճակվել լինել Տոլստոյի թարգմանիչներից մեկը: Նրան ես թարգմանել եմ անխառն սիրով, գիտակցելով, որ իմ ժողովրդին եմ տալիս ուսսական մեծ հանճարի գանձերը: «Պատերազմ և խաղաղություն» էպոպեի, «Կաղակների» և մյուս վիպակների թարգմանության դժվարությունները խամրում էին այն անսահման գեղարվեստական հաճույքի դիմաց, որ ես զգում էի որպես թարգմանիչ: Ուրախ եմ, որ այժմ նույն հաճույքն զգում են բոլոր հայ ընթերցողները:

Հայ մտավորականութունը, հայ ժողովուրդը միշտ սիրել ու բարձր է գնահատել և Տոլստոյի հանճարը, որն այնքան հարազատ է իրեն⁶...

...Ընթերցողների հանդեպ պատասխանատվության մեծ զգացումով եմ ձեռնարկել «Պատերազմ և խաղաղության» թարգմանութունը: Ես ձգտել եմ այդ հանճարեղ ստեղծագործութունը թարգմանել հնարավորին չափ անթերի, այնպես, որ շիաթարվի Տոլստոյի ոճը: Նկարագրելով իր հերոսների բազմաբարդ հոգեկան ապրումները, պատկերելով ուսսական հասարակական-քաղաքական կյանքն ու կենցաղը, գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Տոլստոյը գրում է անպաճույճ ու պարզ լեզվով: Եվ ես, որպես թարգմանիչ, պարտավոր էի գտնել այնպիսի բառեր ու պատմելաոճ, որոնք մատչելի լինեին ընթերցողներին, և, միաժամանակ, պարզունակության չհասցնեին մեծ Տոլստոյի ոճը:

Իմ սկզբունքն էր՝ «Տոլստոյի ոչ մի բառ իսկ դուրս չլթողնել թարգմանությունից», և ամեն կերպ ջանում էի հավատարիմ մնալ այդ սկզբունքին...

Ավելորդ է խոսել այն հսկայական նշանակության մասին, որ մեր ժողովրդի համար ունի... «Պատերազմ և խաղաղություն» վեպի հրատարակությունը:

Հայ ընթերցողներն առաջին անգամն են ծանոթանում համաշխարհային գեղարվեստական գրականության լավագույն ստեղծագործություններից մեկի ամբողջական թարգմանությունը (վեպի կրճատ տարբերակը լույս էր տեսել Կոստանդնուպոլսում, մինչև պատերազմը*): Սակայն վեպը խիստ կրճատված էր. օրինակ, շորրորդ հատորից թարգմանվել էր միայն մի քանի գլուխ:

Ընթերցողը բացառիկ հետաքրքրություն է հանդես բերում ի. ն. Տոլստոյի ստեղծագործությունների նկատմամբ...:

...Ըստ իս, ամեն մի թարգմանչի խնդիրն է ոչ միայն ստույգ վերարտադրել բնագիրը, այլև պահպանել հեղինակի ոճի, գրելաձևի, ստեղծագործական հնարանքների առանձնահատկությունները: Ընթերցողը պետք է կարդա ոչ թե սոսկ թարգմանական հետաքրքրաշարժ մի պատմություն, այլև զգա հեղինակի շունչը, նրա վարպետությունը, նրա արվեստի նորերանգները: Օրինակ, «Լյուցերնը» և «Կովկասի գերին» Տոլստոյը գրել է տարբեր ոճերով: Թարգմանիչը պարտավոր է ընթերցողին հասցնել այդ տարբերությունը, հակառակ դեպքում, թարգմանությունը կկորցնի իր գեղարվեստական ուժն ու արժանիքները:

...Ի. ն. Տոլստոյի ստեղծագործությունների թարգմանությունը, չնայած դժվարություններին, ինձ ստեղծագործական մեծ հաճույք բերեց. թարգմանելու պրոցեսում ես շատ բան էի սովորում Տոլստոյից... Խոսքի հանճարեղ վարպետ ի. ն. Տոլստոյից ուսանելու շատ բան ունի ամեն ոք, առանձնապես՝ գրողը: Ես գիտեմ, թե մեր հասարակայնությունը ինչպես է

* Խոսքը Առաջին համաշխարհային պատերազմի մասին է:

սիրում Տոլստոյի երկերը և վստահ եմ, որ մեծ գրողի ստեղծագործությունների ուշադիր ընթերցումը շատ բան կտա մեր երիտասարդ գրողներին՝ գրական վարպետության տիրապետելու գործում⁸...

Եթե ազգային ձևը լիներ միայն լեզուն, մենք չէինք զգա թարգմանության մեջ այս կամ այն հեղինակի ազգային առանձնահատկությունները, որոնք փայլ ու երանգ են տալիս նրանց երկերին⁹...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Մեր մեծ լուսավորիչը» հոդվածից, 1955 (Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. X, Երևան, 1964, էջ 278):

² «Ռոմանոս» հոդվածից («Հուշերի գիրք», Երևան, 1958, էջ 312, 313):

³ «Աբեղյան» հոդվածից (նույն տեղում, էջ 292):

⁴ «Տերյան» հոդվածից (նույն տեղում, էջ 195):

⁵ «Հգոր կաղնին» հոդվածից, 1958 (Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. X, էջ 391—392):

⁶ «Гениальный художник» («Коммунист», 1940, 20 ноября):

⁷ Моя работа над романом «Война и мир», Л. Н. Толстого (беседа с писателем Ст. Зорьяном, «Коммунист», (1938, 8 апреля).

⁸ «Лев Толстой в армянских переводах» («Коммунист», 1950, 24 декабря).

⁹ «Ինքնակենսագրությունից», 1957 (Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. X, էջ 546—547):

ԵՂԻՇՆ ՉՍՐԵՆՑ*
(1897—1937)

...խորհրդային Միութեան մեջ ապրող բոլոր ժողովուրդների բանաստեղծական ժառանգութեան լավագույն մասի քրննադատական յուրացումը՝ խորհրդային բանաստեղծների կողմից, միայն կարող է նպաստել խորհրդային պոեզիայի աճին և զարգացմանը: Ինչ վերաբերում է ներկայումս մեր առջև դրված խնդիրներին, ապա մենք, խորհրդային Միութեան արդի բանաստեղծներս, պետք է ճանաչենք միմյանց ոչ միայն երկու-երեք պատահական թարգմանությունների միջոցով, այլ, որ ամենակարևորն է, ստեղծագործական փորձի կենդանի փոխանակման, փոխադարձ թարգմանությունների միջոցով: Ես գիտեմ, որ, թարգմանելով ռուս կամ ուկրաինական լավագույն բանաստեղծներին, ես ոչ միայն օժանդակում եմ նրանց ազդեցութեան ոլորտի լայնացմանը, այլև ինքս եմ սովորում նրանցից: Ինչո՞ւ հապա նույնը չասել նաև ռուս, ուկրաինացի, վրացի և խորհրդային մյուս բանաստեղծների մասին:

Դա ոչ միայն մեղ թարգմանելու առաջարկ է մեր ավագ կոլեգաներին, այլև ստեղծագործական փորձի ընդլայնման և խորացման մեթոդներից մեկի առաջարկություն, որը ես ուղղում եմ խորհրդային Միութեան բոլոր բանաստեղծներին: Բացի դրանից, բանաստեղծական փորձի փոխանակման այս մեթոդը արդյունավետ կլինի նաև նրանով, որ խորհրդային

* Ե. Չարենցը թարգմանություններ է կատարել Գյոթեի, Հայնեի, Պուլկինի, Լերմոնտովի, Հյուգոյի, Վերհարնի, Ուիտմենի, Բոմաս Հուգի, Բալմոնտի, Բլոկի, Բունինի, Մայակովսկու, Եսենինի, Ռիլկեի, Գորկու, Մարշակի, Սսենի, Ռեմարկի, Կուզմիևի, Օգնիվցևի և այլ գրողների շափածո ու արձակ ստեղծագործություններից:

ընթերցողի տրամագրութեան տակ կղրվի ոչ միայն այն, ինչ գրվում է նրա մայրենի լեզվով, այլև բարձրորակ թարգմանություններով կներկայացնի այն լավագույնը, ինչ ստեղծում է ողջ խորհրդային գրականությունը բոլոր լեզուներով:

Նույնը պետք է ասել նաև արձակի վերաբերյալ: Մեզ մոտ սովորութիւն է դարձել ազգային գրողների արձակ ստեղծագործութիւնները ընթերցողին մատուցել վատ թարգմանութեամբ, որ կատարում են երբեմն գրականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող անձիք: Մինչև այժմ ես չգիտեմ ազգային արձակի որևէ նմուշ, որ թարգմանած լինի ռուս առաջնակարգ մի վարպետ: Ինչո՞ւ Տուրգենևը կարող էր թարգմանել Մոլիերին*, Տոլստոյը՝ Մոպսանին**, Բլոկը՝ Համսոնին***, իսկ մեր լավագույն վարպետները չեն կարող թարգմանել միմյանց: Եթե այդ բոլորը արված լիներ ժամանակին, մենք այս համագումարում ականատես չէինք լինի մի այնպիսի տխուր պատկերի, երբ ազգային գրականութեան հարցերի շուրջը հանդես են գալիս միայն և միայն ազգային գրողները¹...

...Պուշկինի հիշատակը հավերժացնելու ուղղութեամբ ծրագրով նախատեսված միջոցառումների շարքում ամենադժվար բաժինը նրա երկերի թարգմանութեան հարցն է: Նախահեղափոխական տարիների Պուշկինի բոլոր թարգմանութիւններից ժամանակակից պահանջներին բավարարում են միմիայն Հովհաննես Թումանյանի թարգմանութիւնները:

Այսպիսով, Հայաստանի խորհրդային գրողների առջև կանգնած է մեծ ու պատասխանատու խնդիր. հարստացնել

* Որքան հայտնի է, Տուրգենևը Մոլիերից չի թարգմանել:

** Լև Տոլստոյը թարգմանել է Գի դը Մոպսանի պատմվածքներից, առաջաբան է գրել նրա երկերի հրատարակութիւնների համար:

*** «Բլոկ» ստորագրութեամբ տպագրվել են Կ. Համսոնի «Սիրո սարուկները», «Հաղթողը», «Հայր և որդի», «Կյանքի ձայնը» պատմվածքների թարգմանութիւնները, որոնք կատարել է բանաստեղծի կյնը՝ Լ. Գ. Բլոկը:

հայ գրականությունը ուս մեծ բանաստեղծի ստեղծագործությունների նոր, բարձրորակ թարգմանություններով: Կասկած չի կարող լինել, որ բանաստեղծների և վարպետ թարգմանիչների համատեղ ջանքերով հաջողությամբ կլուծվի այդ խնդիրը²...

Մեկ տարուց ավելի է, ինչ ձեզ մոտ է գտնվում իմ բանաստեղծությունների ժողովածուն՝ տողացի թարգմանություններով և առանց դրանց՝ 4500 տող, ուսերեն թարգմանվելու և հրատարակվելու նպատակով... Ձեզ մոտ գտնվող նյութը ծայր աստիճան անփույթ վիճակում է, քանի որ չկա տառադարձություն և չի նշված բանաստեղծությունների տաղաչափական-ռիթմիկական առանձնահատկությունները: Խընդրում եմ... բոլոր տողացիները պատվիրել (հանձնարարել) խորհրդային գրող ընկ. Կարեն Միքայելյանին, որը ոչ միայն անթերի տիրապետում է հայերեն և ուսերեն լեզուներին, այլև քաջատեղյակ է հայ տաղաչափական արվեստի ռիթմիկային ու տնտամանը, որ ծայրահեղ բարդ է ու յուրօրինակ...

Իմ խնդրանքը կոնկրետ կայանում է հետևյալում.

Նկատի առնելով իմ կողմից մշակվող բանաստեղծական ժանրերի ու ձևերի առանձնահատուկ բարդությունը, ժանրեր ու ձևեր, որոնք իրենց արմատներով գալիս են հայկական միջնադարի պոետիկայի խիստ բարդ մշակույթից, ինչպես նաև արևմուտքի բանաստեղծական նորագույն կուլտուրայից, անհրաժեշտ է ինչպես տողացի թարգմանության գործը, այնպես էլ ուսերեն լեզվով գեղարվեստական բանաստեղծության փոխադրումը հանձնարարել անհրաժեշտ որակավորում ունեցող անձանց... Ավելորդ չեմ համարում խոստովանել, որ ցարդ ես ամեն կերպ խոչընդոտել եմ ուսերեն լեզվով իմ բանաստեղծությունների հրատարակությունը, քանի որ ինձ վհատեցնում էին իմ ազգային գործընկերների (ուկրաինացիների, հայերի և այլոց) ժողովածուները, որոնք մեծ մասամբ շատ վառ բնագրերի, մեղմ ասած, անգույն պատճեններ են հիշեցնում: Գեղարվեստական գրականության պետական հրատարակչության վերջին ժամանակներս հրատարակած մի

շարք ժողովածուներում, անկասկած, կան հիանալի թարգմանիչների ու խմբագրների ստեղծագործական աշխատանքի հիասքանչ օրինակներ: Եվ ես շատ կցանկանայի ռուսերեն լեզվով առաջին անգամ հանդես գալ հենց այդպիսի տեսքով: Ոչ մի կասկած չունեմ, որ ձեր՝ ըստ հարկի համագործակցությամբ ինչպես ընկ. Միքայելյանը, այնպես էլ ընկ. Պոստոլայալսկին կանեն իրենցից կախված ամենը, որպեսզի իմ բանաստեղծությունների ռուսերեն առաջին գիրքը թարգմանական որակով լինի գեղարվեստական գրականության հրատարակչության լույս ընծայած լավագույն գրքերից մեկը³...

Մեծագույն բավականությամբ կարդացի իմ բանաստեղծությունների և պոեմների Ձեր թարգմանությունները* և, առաջին հերթին պետք է Ձեզ ասեմ, որ ուղղակի հիացած եմ թարգմանություններից մի քանիսով, դրանք գրեթե համազոր են բնագրերին: Դուք զարմանալի լավ ղգացել ու կարողացել եք թարգմանաբար տալ ոչ միայն իմ բանաստեղծությունների գրեթե տառացի իմաստը, տողառտող, այլև (որը ամենագլխավորն է) իմ գրվածքների իսկական ոճն ու ոգին (ընդգծվածը հեղինակինն է — Մ. Մ.), որի համար անսահման շնորհակալ եմ Ձեզնից՝ ընկերոջ ու պոետի բարձր շնորհակալությամբ:

Առանձնապես ինձ դուր եկան՝

1. Յոթ խորհուրդը

2. Մանկությունը

3. Ռուբայիներից առաջինը, երրորդն ու չորրորդը, հատկապես առաջինը, որը հնչում է ուղղակի որպես բնագիր: Մնացածները փոքր-ինչ ծանրաքաշ են, որը, թերևս, կախված է այդ գործերի բուն կառուցվածքից: Անկախ դրանից, ռուբայիներում ամենագլխավորը (ձեի տեսակետից) այն է, որ հանգերը, հատկապես չորրորդ, եզրափակիչ տողում, առանձնապես դիպուկ հնչեն, հակառակ դեպքում հանգը կորչում է կրկնություններում և դրանով իսկ քառատողից ստացվում է թերավարտ, աղոտ տպավորություն:

* Ռուս բանաստեղծ-թարգմանիչ Ա. Գատովն այդ թարգմանությունները գետեղել էր «Поэты Армении» գրքում, Մոսկվա, 1934:

4. Անպայմանորեն լավ են «Ars Poetica»-ի բոլոր ֆրագմենտները:

Ինչ վերաբերում է «Դաշնակներին» և «Հանդիպմանը», ապա անկեղծ ասած, դրանք ինձ դուր չեկան, թերևս միայն այն պատճառով, որ թարգմանված են առանց հանգերի... Բանաստեղծություններն ինքնին պետք է գրեթե հանճարեղ լինեն, որպեսզի հնչեն առանց հանգի, — արդյոք այդ չի՞ պատճառը, որ շատ քչերին է հաջողվում սպիտակ ոտանավորը...

Ձեր թարգմանություններն ինձ այնքան դուր եկան, որ ես չէի ուզենա իմ ժողովածուների համար գործ ունենալ ուրիշ թարգմանիչների հետ... Ինձ շատ հետաքրքիր է, թե արդյոք Ձեր թարգմանությունները, ավելի ճիշտ՝ իմ բանաստեղծությունները չե՞ք կարդացել ոուս պոետների մոտ. արդյոք տեղ հասնո՞ւմ են, ազոտ ու շաբլոն չե՞ն հնչում: Ես շատ եմ վախենում դրանից. պոեզիան, ախր, խարդախ բան է. եթե նա մի լեզվով հնչում է խոր ու ինքնօրինակ, դա դեռ երաշխիք չէ, որ մի այլ, ավելի կուլտուրական լեզվով թարգմանված էլ, կարող է տպավորություն գործել: Ես շատ եմ վախենում դրանից⁴...

...սխալ է... ոուս ժողովրդական ժարգոնը թարգմանել ապարանցու կամ մի այլ ժարգոնով, որը խախտում է պիեսի գեղարվեստական ամբողջությունը: Բացի դրանից, նույնպես սխալ է... ոուսական ստուգաբանության հետեկելը⁵...

Շատ երախտապարտ եմ քեզ, որ իմ ստեղծագործությունների թարգմանության գործում ներգրավել ես Աննա Ախմատովային: Ինձ վաղուց հայտնի այդ մեծ ոուս բանաստեղծուհու թարգմանությունները անչափ ուրախացնում են: Խնդրում եմ, պատե՛հ առիթով իմ երախտագիտությունը հայտնես նրան: Ես ինքս էլ կգրեի, բայց առայժմ մի տեսակ անհարմար է: Շնորհակալություն⁶:

...Ես առանձնապես հիացա, երբ Սամեդ Վուրդունը սկսեց կարդալ «Եվգենի Օնեգինի» իր թարգմանությունը:

Երբ Վուրդունը կարդում էր, ես զգում էի, թե ինչպիսի խորությամբ է նա հասկանում Պուշկինին, իսկ հասկանալ Պուշկինին, նշանակում է կանգնած լինել Պուշկինի մակարդակի վրա⁷...

Այս թարգմանություններն* իրենց ամբողջության մեջ մոտ են բնագրին և բանաստեղծական. այսուհանդերձ անհրաժեշտ է կատարել որոշ լեզվական խմբագրություն, համեմատելով բնագրի հետ, ճշտելու համար թարգմանությանց մոտիկությունը բնագրին և շտկելու համար որոշ ոճական անհարթություններ⁸:

* Խոսքը Ի. Ա. Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունների»՝ Գ. Բեսի կատարած թարգմանության մասին է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Խորհրդային գրողների համամիութենական I համագումարում արտասանած ճառից, 1934 (Ն. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6. Երևան, 1967, էջ 274—275):

² Հայաստանի Պուշկինյան հանձնաժողովում, 1936 (նույն տեղում, էջ 363):

³ Նամակ Մոսկվայի գեղարվեստական գրականության պետական հրատարակչության տնօրեն Նակորյակովին, 1935 (բնագիրը ռուսերեն է):

1934 թ. Մոսկվայի գեղարվեստական գրականության պետական հրատարակչության առաջարկով Չարենցը պատրաստում է իր ստեղծագործությունների ժողովածուն՝ ռուսերեն հրատարակելու համար: Մինչ այդ ռուս ընթերցողը նրան ճանաչում էր «Երկիր Նայիրի» վեպով, որ տպագրվել էր Մոսկվայում, 1926 թ., Ն. Խաչատրյանցի թարգմանությամբ և մամուլում տպագրված մի քանի բանաստեղծություններով (Ն. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, կազմեց Անահիտ Չարենց, Ե. 1983, էջ 463):

⁴ Բանաստեղծ-թարգմանիչ Ա. Գատովին գրած նամակից, 1934 (նույն տեղում, էջ 440—441, բնագիրը ռուսերեն է):

⁵ Բ. Լավրենյովի «Բեկում» պիեսի և նրա շուրջ ծավալված դիսկուսիայում Չարենցի ելույթից, 1923 (նույն տեղում, էջ 542):

⁶ Գրականագետ-թարգմանիչ Ի. Պոստուպալսկուն գրած նամակից, 1935 (նույն տեղում, էջ 465, բնագիրը ռուսերեն է): Հանգամանքների բերումով,

Չարենցի բանաստեղծությունների ուսերեն առաջին ժողովածուն լույս տեսավ միայն 1956-ին՝ թարգմանիչներ՝ Վ. Բրյուսով, Ա. Ախմատովա, Մ. Կուզմին, Ի. Պոստուպակի, Օ. Ռոմեր և ուրիշներ: Ա. Ախմատովան Չարենցի լավագույն թարգմանիչներից էր: Նրա թարգմանությամբ ժողովածուում տեղ գտան «Հայրենիքում», «Մորս համար գազել», «էսլիբական լոսաբաց», «Չմեռային սլալատի ներքնահարկում», «Մեր լեզուն», «Տաղ, ձոնված մեռյալներին», «Տաղ սիրո՝ ձոնված ապագայի պարմանիներին» գործերը (տե՛ս Ե. Չարենց, Անտիպ և շհավաքված երկեր, էջ 693—694):

⁷ Ելույթ Ադրբեջանի Ժողկոմխորհում, 1935 (Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 351—352):

⁸ Ի. Ա. Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունների»՝ Գ. Բեսի կատարած թարգմանության մասին, 1934 (Ե. Չարենց, Անտիպ և շհավաքված երկեր, էջ 471):

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ*
(1899—1937)

...Իմ կարծիքով... մեր գրականության հայկական ջոկատը, ինչպես և վրացական ու մյուս ջոկատները, պետք է օգտագործեն իրենց ամբողջ ստեղծագործական հարստությունը, որպեսզի Չարենցի, Զավախիշվիլու և մյուսների գրքերի միջոցով այդ հարստությունը մուծվի ընդհանուր սովետական գրականության մեջ:

...Մի դիտողություն լեզվի մասին՝ թարգմանությունների կապակցությամբ: Եթե ազգային լեզուներն այժմ զարգանում են ուսաց լեզվի ազդեցությամբ, որը ես համարում եմ լիովին նորմալ, որովհետև դա Հոկտեմբերյան հեղափոխության լեզուն է, ապա ուսերեն լեզվով թարգմանությունների ժամանակ վերջինիս տարողունակությունն ընդլայնելու համար անհրաժեշտ է նրա մեջ մտցնել ազգային լեզուների բոլոր նվաճումները: Թուսաց լեզուն նույնպես փոփոխվում է՝ հարստանալով նոր դարձվածքներով ու բառերով¹...

...Պետք է դնել մաքուր լեզվի, կենտրոնաձիգ լեզվի խնդիրը, և ես գտնում եմ, որ այդ լեզուն խարսխված պետք է լինի ժողովրդական լեզվի վրա: Դրա համար մենք պետք է ուսումնասիրենք Թումանյանի լեզուն, հասկանանք, թե իր ժամանակին Թումանյանն ինչպես է կարողացել օգտագործել բարբառները և ժողովրդական լեզուն, գրաբարը, զանազան պատ-

* Ա. Բակունցը թարգմանել է Գոգոլի «Տարաս Բուլբան», Այգեկցու «Աղվեսագիրքը» (թարգմ. գրաբարից), Ֆրիդոլինի «Տասը պատգամ անասնապահին» (փոխադր. ուսերենից): Խմբագրել է Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վիպակի, Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունների» հայերեն թարգմանությունները և այլ գործեր:

կերներ և այլն, և ստեղծել այնպիսի լեզու, որը հանդիսանում է, ես կասեի, նախահոկոտեմբերյան պոեզիայի լեզուն²...

...Թարգմանելիս շատ անգամ ստիպված են լինում հնարել բառ, իրար կցել ու նոր խոսք ստեղծել այն ժամանակ, երբ մեր գյուղերում հազար տարիներ գործ են ածվում որոշ տերմիններ ու բառեր... մեր գյուղը այդ մի կողմից ետ չի մնում: Բառեր շատ ունի նա պահած, բառեր, որոնք շատ ճիշտ տալիս են գաղափար այս կամ այն գործողության, հատկություն, մարմնի մասի, բույսի և այլնի մասին:

Որովհետև մենք ստեղծում ենք և հանրացնում գյուղատնտեսական տերմիններ, վատ չէր լինի գյուղացու ունեցած փորձն օգտագործել: Այդ փորձն անկողմից ունենք: Հարկավոր է կազմել յուրաքանչյուր ճյուղի այն բառերի ու դարձվածքների ցանկը, որոնց հայերենը դժվարանում ենք կազմել: Այդ ցուցակը կուղարկվի մեր գավառական գյուղատնտեսներին, տեղերում հարց ու փորձի միջոցով ստուգելու այս կամ այն բանն ու դարձվածքը:

Տեղական անուններն ու դարձվածքները հավաքելուց հետո, այդ ամենը կարելի է ի մի գումարել, ջոկել ավելի շատ գործածականը և հարմարը ու աստիճանաբար հիմք դնել մի ժողովածուի, գյուղատնտեսական բառերի տերմինների հավաքածուի:


Այդ կլինի պարտադիր ամբողջ երկրի համար, միևնույն ժամանակ և անսպառ աղբյուր՝ գալիք գյուղատնտեսական պրակտիկայի համար: Այդ դեպքում էլ չեն կրկնվի անճիշտ թարգմանությունների դեպքերը, կհեշտանա գյուղատնտեսական գիտելիքների հանրացման գործը³:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Սովետական գրողների I համագումարում արտասանած ճառից, 1934 (Ա. Բակունց, Գրականության մասին, Երևան, 1959, էջ 134, 136):

² Հայաստանի սովետական գրողների I համագումարում արտասանած ճառից, 1934 (նույն տեղում, էջ 123):

³ «Մի թարգմանության առիթով» գրախոսականից, «Գյուղատնտեսական կյանք» հանդես, 1925, № 4, էջ 47—48 (ստորագրված է՝ Ա. Բ.):



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արեւյան Հովն. 110
 Արեւյան Մ. 192
 Արուստյան Խ. 7, 15, 35, 37, 110, 141, 143, 171
 Արուստյան Գ. 62
 Արուստյան Թ. 163
 Արանաս Ալեքսանդրացի 6, 45
 Ալեքսանդր Մակեդոնացի 75
 Ալիզադե Հ. 172
 Ալիշան Գ. 16, 17, 58, 59, 141, 152, 184
 Ալփատյան 160
 Ալֆիերի 42
 Ախամատովա Ա. 200, 202
 Ալիքնիբա Է. 164
 Անարանյան 141
 Աղայան 16, 34, 92, 101, 153, 177, 178
 Աղանյան Գ. 163
 Առատունի Էդ. 29
 Ամատունյանց Ե. 43
 Ալվազովսկի Գ. 153, 171
 Անակրեոն 152
 Անդերսեն 18, 98
 Աովեո 132
 Ասեկ 196
 Աստղիկ 185
 Աստվածատրյան Գ. 177
 Ավագյան Հ. 176
 Արագոն 182
 Արամյան Ճ. 72
 Արիստիդես 58, 59
 Արիստոտել 7, 46, 61
 Արսենյան Ա. 140
 Արիլլես 54, 102
 Բաբազյան Գ. 139
 Բագրատունի Ա. 16, 17, 102, 141, 152
 Բագրատունի Ա. 95
 Բալզակ 8, 107
 Բակունց Ա. 34, 203, 204
 Բալմոնտ 138, 196
 Բալյուն 17, 38, 40, 41, 58, 84, 107, 112, 125, 129, 141, 149, 153, 154, 189
 Բատյուշկով 74
 Բարաբաշվիլի 110, 129
 Բարբյե 182
 Բարխուդարյան Գ. 17, 115, 153
 Բարխուդարյան Մ. 101, 127
 Բարսեղ Մեծ 45
 Բաուեն 98
 Բերանձև 8, 61, 74
 Բերբերյան Մ. 91, 128
 Բենիկ վարդապետ 116
 Բերնարդին դը Սեն Պիեռ 42, 72
 Բես Գ. 201—202
 Բեխ 182
 Բիչեր-Արոու 191
 Բլեկի Զ. Ա. 98
 Բլոկ Ա. 129, 196, 197
 Բլոկ Է. Գ. 197
 Բիստ Թարհար 164
 Բյորեն 129
 Բյորենտոն 107
 Բյուզանդացի Ե. 163
 Բյուֆեն 55
 Բոդլեր 17, 26, 141, 145, 151, 182, 186
 Բամարչև 17, 82
 Բոնսար 42
 Բոխլ 42
 Բրյուսով 26—28, 106, 135, 140, 141, 170, 171, 176, 186, 202
 Բրոսե Մ. 59
 Բուխանան Կ. 6, 61
 Բունին 196
 Բուսե 164, 202
 Գարբիելի Ա. 98
 Գարբիելյան Թ. 117
 Գալֆայան Խ. 9, 70, 102
 Գամառ-Քաթիպա 8, 13, 63—65, 73, 78, 81, 110, 137
 Գատով Ա. 199, 201

Գարշին 125
 Կե Քառ-Յյուան 176
 Կերցեն Ա. 174
 Կյոսթ 5, 7, 17, 35, 51, 82, 84,
 85, 98, 107, 115, 118, 129,
 132, 140, 149, 168, 196
 Կազոլ 14, 91, 107, 173, 177, 186,
 192, 203
 Կոքին 17, 141, 182
 Կոնկուր 151
 Կորկի Մ. 28, 106, 129, 164,
 175, 186, 188—190, 196
 Կրաշի Ա. 172
 Կրիմ եղբայրներ 129
 Կրիշաշվիլի 164
 Կրովտիոս 38
 Կրուրե 97
 Կուրակյան Բ. 160

 Կազլի? Ռ. 29
 Կանան 17, 114, 146
 Կավքյան Վ. 34
 Կավիք 94
 Կավիք Եննադր 42, 47
 Կեյսար 61
 Կեմիրեյան Գ. 34, 173, 181
 Կեպորո-Վալմոո 182
 Կերժավին 18
 Կեֆո Գ. 12, 74, 81
 Կիկկենս Չ. 16, 91, 189
 Կիոնիսիոս Ալեքսանդրացի 45
 Կիոնիսիոս Թրակացի 7
 Կյուլորիե Գ. 170
 Կյումա 17, 82, 84, 115, 116, 141
 Կյուրեր Ա. 156
 Կոզե 107, 114, 126, 127
 Կոստանեկի 106, 128
 Կուրյան Ն. 153, 160
 Կուրյան Պ. 16, 18, 110, 141

 Եզնիկ Կողբացի 42, 152
 Եզովպոս 74
 Ելիազարյան Ա. 24
 Եղիշե 18, 51, 55, 142, 191
 Եղիշե Ամատունեաց 43

Եպիփանոս 6, 45
 Եսայի 59
 Եսենին 196
 Եվագրոս Պոնտացի 45
 Եվեբիոս Կեսարացի 6, 36, 45,
 61
 Եվրիպիդես 46
 Եվրեմ Ասորի (Նդեսացի) 6, 45,
 61, 62

 Զախեր-Մագոս Լ. 86, 87, 90
 Զարդարյան Ռ. 141
 Զաֆարյան Տ. 127
 Զիտելվալ 164
 Զուլա 107, 113
 Զոհրապ Գ. 16, 19, 113
 Զորյան Ստ. 15, 29—32, 191, 195
 Զրադաշտ 62
 Զուրավ Պ. 86, 90
 Զուղերման Հ. 124

 Էմին Գ. 34, 181
 Էմին Մ. 13, 57—59, 80, 178
 Էսֆիկս 17, 20, 118
 Էրկման-Շատրխան 114

 Թագոր 26, 114, 115, 117, 129
 169, 186
 Թահիր Բ. 164, 167
 Թաղիաղյան Մ. 16, 38, 41
 Թեոդորոս Մապունեսացի 62
 Թերզիբաշյան Վ. 176
 Թերզյան 152, 160
 Թերովալլովա 129
 Թեֆեյան Վ. 16, 141, 182
 Թիրյաֆյան Մ. 163, 184
 Թյուկիտիոս 83
 Թոմսենեան 55
 Թորոսյան 72
 Թումանյան Հովհ. 21, 23—25, 34,
 109, 112, 129, 130, 139—141
 153, 157, 177, 178, 197, 203
 Թամսենյան Նվ. 140
 Թուրջյան Հ. 176
 Ժյուլ Վեռն 17, 82
 Ժուկովսկի Վ. Ա. 7, 37, 129

Իրսեն 106, 107, 173
Իգմիրյան Մ. 18, 163
Իիտ 182
Իննիկյան Ա. 175
Իսահակյան Ավ. 21, 34, 141, 157,
164, 170, 175, 176
Իսկուհի Մինաս 184
Իվանով Վյաչ. 26, 186
Լալարյան Խ. 10, 57
Լալիրոզ 6, 61
Լամարքին 9, 17, 70, 71, 107,
141, 152
Լաշամբուլ 125
Լավրենյով Բ. 201
Լադիս 177
Լ'Ապպե 84
Լաֆոնտեն 141
Լեմ Չարլզ 15
Լենին Վ. Ի. 186
Լրինոք դր Լիլ 141, 182
Լեմունտով 20—22, 26, 42, 61,
74, 107, 118, 125, 126, 129,
164, 178, 196
Լեոպարդի 114, 146
Լևասինգ 42, 82
Լի Ժայ Պո 129
Լոմոնոսով 74
Լոնգֆելլո 125, 129, 141
Լուրեր 97
Լուկիանոս 102
Խայամ 18, 164, 165, 167, 169,
175
Խանգաղյան Յ. 29, 126, 190
Խանդամյան 79
Խաչատրյան Հ. 176, 201
Խաֆանի 129
Խեմնիցեր 35, 125
Խիտարովա 180
Խեկոյան Ա. 171
Խուսովիկ 42
Խորենացի Մ. 6, 18, 42, 43, 46,
51, 55, 64, 93—95, 101,
142, 191
Խորեն Սաեփանե 101

Մատուրյան Ալ. 28, 123, 125—127
163, 177, 190
Մերեթեի 20, 26, 110, 118, 164
186
Մերենց 141
Կալդերոն 42
Կապուտիկյան Ս. 34
Կարամզին 35, 77
Կարապետյան 120
Կարլեյլ Թ. 173
Կիկերոն 42
Կլեմանս 61
Կյուրեղ Երուսաղեմցի 45
Կորիկյան Ա. 170
Կոլոմբոս 98
Կոլցով Ա. 24, 125, 129, 138
Կոպպե 164
Կորնել 131
Կոստանդյան Գ. 16
Կորյուն Մֆանչելի 42, 43, 152
Կորշ 97
Կոստանդին Երզնկացի 18
Կորոյենկո 106
Կոիլով Ի. 7, 35, 92, 153, 171, 176
Կրասիլնիկյան Կ. 177
Կուզմին 196, 202
Հալեվի Լ. 152
Հակոբ Մծբնա 62
Հայկ Երզնիշ 152
Հայկունի Ա. 16
Համսուն Կ. 116, 164, 197
Հայնե 8, 20, 61, 86, 92, 118,
125, 129, 145, 182, 186, 196
Հանչեր Ա. 163
Հարտման 125
Հաուպտման 110, 155, 156, 173
Հաֆիզ 18, 136, 164
Հեովեզ 164
Հիմենս 129
Հյուգո 17, 20, 84, 86, 107, 115,
118, 125, 141, 149, 152, 160,
161, 163, 182, 184, 196
Հյուրմազ Է. 153
Հոմբոս 7, 14, 17, 20, 35, 45, 46

54, 76, 77, 81, 83, 102, 103,
114, 118, 152
Հովհաննիսյան Հովն. 20—23, 34,
118, 124, 141, 153, 177, 178
Հովհաննիսյան Հր. 34
Հովհան Ոսկերեան 45, 58, 59,
61, 151
Հովհան Գ. 176
Հովսեփ 43
Հովսեփ Պաղնացի 44
Հոֆման 42
Հուդ Թ. 129, 196
Հոս 3ան 97
Ղազիկյան Ա. 114, 152
Ղևոնդ 43
Հովնապետ 110, 129
ձիւնգոյան Կ. 17
Մագիստրոս Գ. 152, 180
Մագմանյան Հ. 15
Մալարմե 17
Մալխասյան Ստ. 130, 132
Մակինցյան Պ. 106, 107, 149,
153—156, 189
Մահմեդ 97
Մամբրե Վերժանոդ 42
Մամին-Սիբիրյակ 129
Մամուրյան Մ. 16, 17, 82, 85,
104, 115, 152
Մայակովսկի 196
Մայեր 164
Մալկով 125
Մանես 62
Մառ Նիկ. 168
Մասենյան Հովն. 17, 119, 129—
133, 139, 149, 153, 154,
157—160, 167—170, 175
Մարշակ 196
Մախլեր Զ. 141
Մախապետյան Մ. 34, 117
Մելիֆյան Ռ. 192
Մեծարենց Մ. 16, 141
Մեսրոպ Մաշտոց 6, 7, 34, 41—
44, 93, 94, 191

Մերյե 114
Մեսրոպ Լ. 164—167
Մեստոյինկ 120, 184, 188
Մերյե 114
Միլտոն 17, 114, 146, 152
Միխայել Տիեզերական 62
Միսախյան 104
Միսրալ 141, 161
Միրզայան Հ. 164—167
Միցկևիչ 20, 118, 129, 184
Միխայելյան Կ. 198, 199
Մխիթարյաններ 9, 10, 15—17, 34,
47, 65—67, 92, 158, 171, 187
Մյուսս 17, 115, 129, 141
Մոլիեր 17, 60, 197
Մոպսսան 177, 197
Մոր Թ. 35
Յակոբովիչ 20, 118
Յոհանն Եկեղեցային 43
Յուզկովիչ Ս. 118, 120, 121, 124
Նազոս 20, 118, 125, 129, 164
Նազարյան Ստ. 9—12, 34, 42,
56, 57
Նալբանդյան Մ. 8—10, 21, 50,
56, 61, 73, 179
Նակորյակով 201
Նապոլեոն I 75
Նար-Դոս 126, 128
Նարեկացի 18, 51, 142, 161, 191
Նարիմանով 114
Նեկրասով 20, 74, 125, 129, 164
Նեստոր 53
Նելեմին Պ. 124
Նելերով 177
Ներսես ՄԵԺ 42
Ներսիսյան Վ. 11
Նիկիտին 125, 164
Նիցշե 173
Նուպարյան Մ. 16
Շահագիզ Մ. 21
Շահբուղայյան Գ. 98
Շանինյան Մ. 173
Շանթ 141

Շատորբիան 9, 107, 141
Շեյլի 17, 129, 141
Շեֆալի 14, 15, 17, 20, 23, 51,
75, 92, 98, 107, 115, 118, 119,
129—133, 139, 141, 146, 149,
153, 154, 159, 167—169, 182
Շիլլեր 7, 17, 35, 42, 51, 58, 92,
98, 107, 115, 118, 129,
Շիշկով 187
Շիրվանզադե 18, 28, 34, 90, 106,
112, 186
Շլեզել 149, 168
Շմիդտ Ֆ. 81
Շնիցլեր 186
Շնորհալի 18, 142, 152
Շոլոխով 29
Շչեկորին 100, 125
Շվոպ Մ. 149
Չարենց Ա. 201
Չարենց Ե. 34, 196, 201—203
Չեխով 29, 177, 186, 189, 190
Չերեխովսկի Ն. 31
Չիլիենկիրյան Գր. 16, 17, 104, 115
Չոպանյան Ա. 16—20, 34, 112,
126, 141, 161, 163, 182, 183,
185
Պագարեյան Ռ. 183, 185
Պատկանյան Ռ. 12, 13, 15, 21,
74, 80, 81, 110
Պարզյանց Ս. 18, 163
Պարբեյան Հ. 16, 102, 104, 105,
128, 141, 162
Պեթկիրաշյան Մ. 110, 141, 152,
155, 160
Պեստել Պ. Ի. 33
Պեսեֆի 20, 118
Պերգո Լ. 116
Պլատոն 7, 46, 61
Պլեչչևս 20, 118, 125
Պլին 83
Պո Է. 17, 98, 145, 151
Պոլոնսկի Յա. 135
Պոստոլպալսկի Ի. 199, 201, 202
Պոռշյան 13—16, 91, 186

Պրևո 17
Պրիշվին 191
Պրյուդոմ Ս. 125, 182
Պուշկին 13, 20, 23—25, 61, 74,
92, 107, 118, 120, 124, 125,
129, 161, 177, 178, 180, 186,
196, 197, 201, 203
Ջավախիշվիլի 203
Ջիվանի 142
Ջրբաշյան Էդ. 8
Խասին 107, 146, 152
Խասպե 129
Խեմարկ 196
Խենյե 182
Կրեան 58
Կրևար 182
Կիլկե 196
Կիլսկի 164, 176
Կյուկերու 129
Կոմեր Օ. 202
Կոնսար 182
Կոսսիսինա Ա. 181
Կոստան Է. 170, 176
Կովետտի 110
Կուսրավիլի 26, 138, 186
Կուստ 7, 35
Կուստեմ (Կուստամ) 170
Սաադի 10, 11, 18, 38, 42, 52—
54, 56
Սադաթյան Մ. 17, 138
Սահակ Պարբե 6, 7, 41—44, 93,
94
Սահյան Հ. 34
Սամեն 182
Սալաթ-Նովա 135, 140
Սանդ 17
Սաֆո 20, 26, 118, 186
Սենկևիչ 191, 192
Սենկովսկի Օ. Տ. 61
Սևակ Պ. 34
Սերվանտես 98
Սիամանթո 103
Սիպիլ 160
Սկարոն 164

Սմայլս 97

Սյու է. 10, 56, 61, 66, 73, 82,
84, 116

Սյուրմեյան Լ.-Ջ. 182

Սոլոգուր 26, 186

Սողոմոն 191

Սոֆոկլես 20, 118, 152

Սվանյան Հ. 116

Սվիֆտ 92, 99, 189, 1203

Սշվանձայան Գ. 90

Սունդուկյան Գ. 28, 60, 79, 109,
123, 124, 141, 186

Սեֆ 17, 40, 41, 82, 84, 85, 115,
141

Վահունի Ս. 178

Վաչինգտոն 97

Վարդապարտյան Փ. 140

Վարզան Այգեկցի 203

Վարդանյան Փ. 12, 17, 57, 76,
81, 89, 97, 98, 101, 140

Վարուժան Գ. 16, 141, 163, 184,
135

Վեդլեն 17, 26, 141, 182

Վեսելովսկի Յու. 28, 91, 101, 108,
123, 128, 153, 188, 189

Վերհարն 17, 26, 160, 163, 186,
196

Վլադիս 141

Վիրգիլիոս 17, 83, 114, 152

Վոլտեր 17, 82, 97, 98, 107

Վոսմաշապուհ 44

Վուրդոն 200, 201

Տակիտոս 83

Տասոս 17, 153

Տեմիրեխաչյան Չ. 15

Տեր-Անդրեասյան Մ. 133

Տեր-Գրիգորյան Հ. 177

Տեր-Չափարյան Հ. 171

Տերյան Վ. 26—29, 34, 106, 141,
153—155, 157, 171, 186, 190

Տեռեյան Ա. Կ. 17

Տեռեյան եղբայրներ 16, 17

Տիչինա 20, 118, 124

Տոլստոյ Լ. 13—16, 29—32, 91,
92, 114, 125, 128, 129, 186,
191—195, 197

Տոմսոն 116

Տվեն Մ. 191

Տուրգենև 86, 109, 125, 129, 140,
161, 191, 197, 201, 202

Րամբոսոն ժ. 98

Րաֆֆի 18, 28, 86, 90, 110, 111,
141, 186

Յվայզ 191

Ռայդ 26, 151, 153, 155, 182,
186

Ռեյս 190

Ռիտմեն 196

Ռյանդ 20, 118, 125

Ռուպենսկի 109

Փառհայ Գ. 165, 170

Փերպեցի Ղազար 43, 51

Փափազյան Վրբ. 34, 114, 117

Փիլոն 36, 61

Փլավելա 20, 118

Քալանթար Լ. 107

Քանանյան Գ. 81

Քեշիշ օլլի 35

Քեոբլյան Հ. 171

Քսենոֆոն 83

Քուչակ Նահապետ 135, 140, 142

Օգնիվցև 196

Օմեշկո է. 16, 91

Օլլիփե Ֆ. 61

Օսսիան 114

Օստրովսկի 14, 91, 106

Օվայաննիկով 86

Օլբատիոս 83

Օռյան Գր. 152

Օռյան Նվգ. 152

Օռյան Նով. 16, 141, 162

Օրբելիանի 110

Ֆեներյան Գ. 19

Ֆիրդուսի 129, 138, 162

Ֆիցցերալդ է. 165, 166

Ֆլոբեր 17, 107

Ֆրանկլին 75, 97

Ֆրանս 17, 141

Ֆրիդոլին 203

Ֆրիկ 18

Ֆրուզ 125

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասական սովանդայքներ	5
Խաչատուր Աբովյան	35
Մեսրոպ Թաղիադյան	38
Ստեփանոս Նազարյան	42
Ղևոնդ Ալիշան	58
Դաբրիել Սունդուկյան	30
Միխայել Նալբանդյան	61
Ռաֆայել Պատկանյան	74
Մառթնոս Մամուրյան	82
Բաֆֆի	86
Պերեն Պոռշյան	91
Ղազարոս Աղայան	92
Հակոբ Պարոնյան	102
Ալեխանդր Շիրվանզադե	106
Գրիգոր Զոհրապ	113
Վերանես Փափազյան	114
Հովհաննէս Հովհաննիսյան	118
Ալեխանդր Մատուրյան	125
Նար-Դոս	128
Հովհաննէս Թումանյան	129
Արշակ Զոպանյան	141
Ավետիք Իսահակյան	164
Դերենիկ Դեմիրճյան	177
Վահան Թևեկյան	182
Սիամանթո	183
Դանիել Վարուժան	184
Վահան Տերյան	186
Ստեփան Զորյան	191
Եղիշե Զարենց	196
Ակսել Բակունց	203
Անձնանունների ցանկ	205



ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Շաղգամյան: Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալ-
յան: Տեխ. խմբագիր՝ Լ. Կ. Հարությունյան: Սրբագրիչ՝ Է. Ա. Սոխիկյան.

ИБ № 1090.

Հանձնված է շարվածքի՝ 22.10.1984 թ.: Ստորագրված է տպագրության
5.05.1985 թ.: ՎՖ 06690: Չափը 84×108¹/₃₂: Թուղթ № 1: Տառատեսակ
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: Պայմ. 11,13 մամ., տպագր.
13,25 մամուլ: Ներկ. մամուլ 11,13, հրատ. հաշ. 9,0 մամ.: Տպաքանակ՝
1000: Հրատ. № 6270: Պատվեր՝ 4345: Գինը՝ 1 ա. 65 կոպ.:

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի . գործերի
պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան—82, Աղմի-
րալ Իսահովի պողոտա, 48:

Типография цветной печати Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР,
Ереван-82, пр. Адмирала Исакова, 48.

1 n. 65 4.

A $\frac{\bar{11}}{72809}$